

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳԱԼՈՒՄՏ ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ARMENIAN LIBRARY OF THE CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ԼԵԻՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԽԼԶԱԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՆԱՅԵՐԸ

ՀԱՏՈՐ Ա

ՈԼՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԵՐԵՒԱՆ 2005

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Տ – 506

LEVON TER-PETROSSIAN

THE CRUSADERS AND THE ARMENIANS
Volume I:
A Study and Translations
Erevan 2005

Տեր-Պետրոսյան Լ.
Տ – 506 Խաչակիրները եւ հայերը. – Եր.: Նախագահ Տեր-Պետրոսյանի
արխիվի եւ գրադարանի հիմնադրամ, 2005. – 552 էջ:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-78-91-3

© Լևոն Տեր-Պետրոսյան, 2005

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԽԱԶԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՀԻՄՆՎԱԾ ԼԱՏԻՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1095 թ. նոյեմբերի 27-ին, Ֆրանսիայի Կլերմոն ֆաղափում, դիմելով բացօթյա լսարանում հավաքված բազմահազար ունկնդիրներին, Հռոմի պապ Ուրբանոս II-ը կոչ արեց օգնության գնալ մահմեդականների լծի տակ հեծող արեւելյան ֆրիստոնյաներին, դրանով փաստորեն սկզբնավորելով մի զանգվածային շարժում, որը հետագայում հայտնի պիտի դառնար խաչակրություն անունով: Խաչակրություն բառը (ֆրանս. Croisade, անգլ. Crusade, գերմ. Kreuzzug) «խաչակրաց արշավանք» նշանակությամբ եվրոպական լեզուներում սկսել է գործածվել XVIII դարից: Թեև միջնադարյան լատին հեղինակներին անծանոթ չեն եղել croiseries/croisades (ֆրանս.), cruzada (իսպ.), cruzeta (իտալ.) եւ cruce signati (լատ.) բառերը, սակայն նրանց երկերում խաչակրաց արշավանքները սովորաբար կոչվել են **հանապարհորդություն** (expeditio, iter), **անցում** (passagium, passage) կամ **ուխտագնացություն** (peregrinatio)^a: Իսկ Արեւելքում խաչակիրները հայտնի էին **ֆրանկ** անունով, ինչը բացատրվում է նրանով, որ առաջին խաչակրաց արշավանքի մասնակիցները հիմնականում ֆրանսիացի էին, եւ նույնիսկ այդ արշավանքի գլխավոր դերակատարներից մեկը հանդիսացող իտալական նորմանները ֆրանսախոս էին: Հայկական աղբյուրներում խաչակիր բառը հանդիպում է մեկ անգամ **խաչընկալ** (XII դ.)^b եւ մի քանի անգամ

^a Մանրամասն տե՛ս Hindley, The Crusades, p. 2–3.

^b Տե՛ս Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 572; Մաթեոսյան, Ե–ԺԲ դդ. Նիշատակարաններ, էջ 250: Հմմտ. Thomson, The Crusaders, p. 73.

խաչազգեստ (XIII դ.)^a ձեռով, իսկ խաչակրաց արշավանքի իմաստով երբեմն գործածվում է հին ֆրանսերենից փոխառված **բասան** (= passage, անցում) բառը^b :

Ուրբանոսի կոչը, Կլերմոնի ժողովից հետո ծավալված եռանդուն ֆարզության շնորհիվ, լայն արձագանք գտավ արեւմտյան հասարակության բոլոր շերտերում, եւ բազմահազար կամավորներ պատրաստակամություն հայտնեցին զինվորագրվելու ազդարարված արբազան պատերազմին: Ոգետությունն այնքան համատարած էր եւ ցանկացողների թիվն այնքան մեծ, որ Ուրբանոսն ստիպված էր նույնիսկ որոշ սահմանափակումներ մտցնել հավաքագրվողների կազմում, մասնավորապես շիրախուսելով ծերերի, կանանց եւ երեխաների մասնակցությունը: Եվ ահա, 1096 թ. գարնանից ի վեր՝ խոշոր բարոններից, ասպետներից, եկեղեցականներից, հողագուրկ գյուղացիներից ու թափառաշրջիկներից կազմված խաչակրաց խայտաբղետ բազմությունը, տարբեր ժամկետներում ու տարբեր նանապարհներով, շարժվեց դեպի Արեւելք, այդպիսով ծնունդ տալով մի փոթորկալից գործընթացի, որը պիտի տևեր շուրջ 200 տարի եւ ունենար հետեյալ գլխավոր հանգրվանները.

1. Առաջին խաչակրաց արշավանք (1096-1099 թթ.), որը գլխավորում էին ֆրանսիական ու նորմանական խոշոր բարոնները, եւ որի արդյունքում Արեւելքում ստեղծվեցին չորս լատինական պետություններ՝ Երուսաղեմի թագավորությունը, Անտիոքի իշխանապետությունը, Եդեսիայի եւ Տրիպոլիի կոմսությունները:

2. Երկրորդ խաչակրաց արշավանք (1147-1149 թթ.), ձեռնարկված Մոսուլի արաբեկ Ջանգիի կողմից Եդեսիայի գրավման (1144 թ.) վրեժը լուծելու նպատակով: Լիակատար ձախողությամբ ավարտված այս արշավանքի առաջնորդներն էին գերմանական կայսր Կոնրադ III-ը եւ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս VII-ը:

3. Երրորդ խաչակրաց արշավանք (1189-1192 թթ.), որի նպատակն էր վերանվանել Սալահեդդինի կողմից 1187 թվականին գրավված Երուսաղեմ

^a *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 178, 195, 229:*

^b *Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 132; Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 74-75; հտ. 2, էջ 58: Հմմտ. նաեւ՝ Աճառյան, Լեզվի պատմություն, հտ. 2, էջ 299; Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 114-115:*

ֆաղափր: Այդ արշավանքը, որի հրամանատարներն էին Ֆրիդրիխ Շիկամորուս կայսրը, Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասիրտը եւ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ-Օգյուստը, թեւ չհասավ իր բուն նպատակին, բայց նրա շնորհիվ վերականգնվեց Երուսաղեմի թագավորությունը՝ Աֆֆա կենտրոնով, ինչպէս նաեւ հիմնադրվեց Կիպրոսի լատինական թագավորությունը:

4. Չորրորդ խաչակրաց արշավանք (1204 թ.), որն, ի տարբերություն նախորդ երկուսի, առաջնորդում էին ոչ թե եվրոպական մեծ երկրների թագավորները, այլ մի ֆանի խոշոր բարոններ: Այդ արշավանքը Մահմեդական Արեւելք ուղղվելու փոխարեն, շրջվեց դեպի Բյուզանդիա եւ ավարտվեց նրա մայրաքաղաքի գրավմամբ ու Կոստանդնուպոլսի լատինական կայսրության հիմնադրմամբ:

5. Հինգերորդ խաչակրաց արշավանք (1217-1221 թթ.). Երուսաղեմի թագավոր Հովհաննէս Բրիենացու, Ավստրիայի դուքս Լեոպոլդ VI-ի եւ պապական նվիրակ Պելագիոսի առաջնորդությամբ իրականացված այս արշավանքի արդյունքում գրավվեց Եգիպտոսի Դամիատ նավահանգիստը, որը սակայն գրեթե անմիջապէս կրկին ընկավ Այուբյան սուլթանների ձեռքը:

6. Վեցերորդ խաչակրաց արշավանք (1228-1229 թթ.), որը միայնակ գլխավորում էր Ֆրիդրիխ II գերմանական կայսրը: Վերջինիս հաջողվեց զուտ դիվանագիտական միջոցներով Եգիպտոսի Այուբյաններից կորզել Երուսաղեմ ֆաղափր, որն այս անգամ խաչակիրների ձեռքում մնաց 15 տարի (1229-1244 թթ.)^a:

7. Յոթերորդ խաչակրաց արշավանք (1248-1254 թթ.), որի ընթացքում այն առաջնորդող Ֆրանսիայի Լյուդովիկոս IX թագավորը, հինգերորդ արշավանքի օրինակով, գրավեց Դամիատ ֆաղափր, բայց շտաոյով չախաչախչ պարտություն կրելով, կրկին կորցրեց այն:

8. Ութերորդ խաչակրաց արշավանք (1270 թ.), որը նույնպէս իրականացվեց Լյուդովիկոս IX-ի հրամանատարությամբ, սակայն Արեւելք ճանապարհվելու փոխարեն ուղղվելով դեպի Թունիս, ձախողության մատնվեց, եւ թագավորն ինքն էլ այնտեղ կնքեց իր մահկանացուն, հետագայում դասվելով սրբերի շարքը:

^a Որոշ հետազոտողներ երբեմն միավորում են հինգերորդ եւ վեցերորդ արշավանքները:

1096-ից մինչև 1291 թվականը, այսինքն՝ մինչև լատինական Արեւելքի անկումն ընկած տարիները, պատմագիտության մեջ համարվում են, արդ, խաչակրաց արշավանքների դասական ժամանակաշրջանը: Սակայն արդի պատմաբաններից ոմանք հակված են ընդլայնելու խաչակրաց արշավանքների այդ հստակ շրջանակը եւ նրա մեջ ընդգրկելու Հռոմի պապերի կողմից նախաձեռնված բազմաթիվ այլ ուղղության գործողություններ՝ իրականացված այլ վայրերում, այլ հակառակորդների դեմ, եւ բոլորովին այլ նպատակներով^ա: Դրանց շարքին են դասվում, այսպես կոչված, **խաչանական խաչակրությունները**, այսինքն Իբերական թերակղզու վերանվանման ժամանակ (Reconquista) արաբների դեմ մղված պատերազմները, **հակահերետիկոսական խաչակրությունները**՝ ուղղված եվրոպայում տարածված գանազան աղանդների, մասնավորապես Ալբիցիների (Albigeois) կամ Կաթարների դեմ, **հակահեթանոսական կամ միսիոներական խաչակրությունները**՝ ձեռնարկված Բալթյան ժողովուրդներին դարձի բերելու նպատակով, **ֆաղափական խաչակրությունները**՝ ուղղված Հռոմի պապի հակառակորդների՝ գերմանական կայսրերի եւ Արագոնի թագավորների դեմ, **հակասումնյան խաչակրությունները**, որոնց տակ հասկացվում են օսմանյան առաջխաղացումը կանխելուն միտված Նիկոպոլի (1396 թ.) եւ Վառնայի (1441 թ.) հակատամարտերը եւ այլն:

Քանի որ խաչակրության նշված տարատեսակները մեր աշխատության հետ անմիջական առնչություն չունեն, մենք բնականաբար պիտի սահմանափակվենք խաչակրաց արշավանքների համընդհանուր հանաչում գտած շրջանակով:

1. ԽԱԶԱԿԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Խաչակրության պատճառների ֆննդայինը նվիրված է հսկայական հետազոտական գրականություն. չկա խաչակիրների պատմության ուսումնասիրմանը ձեռնարկած որեւէ պատմաբան, որն այս կամ այն կերպ չառնչվի այդ խնդրին: Դա բացառվում է ինչպես երեւոյթի ներկայացրած բացառիկ հետաքրքրությամբ, այնպես էլ նրա բարդությամբ ու հակասականու-

^a Ներկայումս այս տեսակետի հիմնական ջատագովը բրիտանացի պատմաբան Ջոնաթան Ռայլի-Սմիթն է. տե՛ս մասնավորապես Riley-Smith, The Crusades, 1978.

թյամբ: Հետազոտողների կողմից առաջ են փառվել խաչակրության պատճառներին վերաբերող բազմաթիվ տեսակետներ, տարվել են արշավանքների զանազան, հանախ իրարամերժ, սահմանումներ ու որակումներ, ինչպես, օրինակ. «սրբազան պատերազմ», «ֆրիստոնեական մոլեռանդության արտահայտություն», «զինված ուխտագնացություն», «արեւմտյան գաղութատիրության հանգրվան», «եվրոպական իմպերիալիզմի դրսևորում», «խլամական վտանգի հակազդեցություն», «Արեւելի եւ Արեւմուտի մշտնջենական պայքարի դրվագ», «զավթողական պատերազմ», «ֆրիստոնեական պարաֆի կատարում», «արեւելյան ժողովուրդների հարստահարում», «արեւելյան ֆրիստոնեության ազատագրում», «պապականության համաշխարհային տիրապետության հավակնություն», «մարդկության պատմության ամենամեծ արկածախնդրություն», «խելահեղություն», նույնիսկ՝ «խաղաղասիրական ձեռնարկ» եւ այլն: Դժվար չէ նկատել, որ նշված սահմանումներից յուրաքանչյուրն իմենին արդեն երեւոյթի պատճառները բացահայտող տարր է պարունակում, թերեւս զուրկ չլինելով նաեւ ճշմարտության որոշ հատիկից: Բայց բոլոր դեպքերում, կարծիքների այս ապշեցուցիչ զանազանությունը չի կարող տարակուսանք չառաջացնել: Դրանում, մեր համոզմամբ, որոշակի դեր են խաղացել թե՛ խաչակրաց պատմության աղբյուրների խայտաբղետությունը, թե՛ երեւոյթի միջնադարյան ընկալումները, եւ թե՛ մանավանդ ժամանակակից հետազոտողների գաղափարախոսական դիրքորոշումները^ա: Մատերիալիստը բնականաբար խաչակրության խորքում փորձել է հայտնաբերել նյութական շահագրգռություններ, իդեալիստը՝ գաղափարների ու հավատի դրսևորում, ֆրիստոնյան՝ կրոնական սխրանք եւ առաքինություն, մահմեդականը՝ թշնամական ակտ, մարքսիստը՝ դասակարգային պայքար եւ այլն: Տպավորություն է ստեղծվում, թե խաչակրաց արշավանքների պատճառների բացահայտման ուղղությամբ արդի հետազոտողների թափած ահռելի ջանքերն ու նրանց կողմից շրջանառության մեջ դրված նորանոր փաստարկները ոչ միայն չեն կարողացել հստակեցնել առաջադրված խնդիրը, այլեւ ավելի են խնկել այն: Շփոթը թերեւս մասամբ առաջացել է նրանից, որ շատ հանախ իրարից չեն տարանջատվել խաչակրության սոցիալ-տնտեսական ու փառաքանական նախադրյալ-

^ա Հմմտ. Заборов, Историография, с. 14.

ները, արշավանքի մասնակիցների անձնական կամ դասային շահագրգռությունները (մոտիվացիան), խաչակրության անմիջական դրդապատճառներն ու խթանները, նախաձեռնության հեղինակի բուն մտադրությունները, եւ վերջապես, ձեռնարկի հայտարարված պաշտոնական նպատակները: Մենք կփորձենք դրանց անդրադառնալ առանձին-առանձին:

Նախադրյալները. Խաչակրության սոցիալ-տնտեսական նախադրյալների շարքում հետազոտողներից շատերը գլխավոր տեղ են հատկացնում XI դարում Արեւմտյան Եվրոպայում արձանագրված ընդհանուր վերելքին, որն իր դրսևորումն էր գտել նրա հասարակական կյանքի համարյա բոլոր բնագավառներում: Ավարտվել էին ծայրամասային ժողովուրդների ներխուժումները, նորմաններն ու հունգարացիները ֆրիստոնեություն էին ընդունել, զգացնել էր տալիս բնակչության անի միտումը, վերականգնվել էին միջերկրածովյան ֆաղափները եւ դրա շնորհիվ աշխուժացել էր միջազգային առևտուրը, 1030 թվականից սկսվել էր իսպանացիների ագատագրական պայքարն արաբների դեմ (Reconquista), Կլունիական վանականության տարածումը նպաստել էր հոգևոր կյանքի առողջացմանն ու բարերի մաքրմանը, Գրիգոր VII պապի իրականացրած արմատական վերափոխումները, որոնք միավորված էին բարձրացնելու Հռոմեական եկեղեցու հեղինակությունը եւ ապահովելու նրա գերակայությունը աշխարհիկ իշխանությունների նկատմամբ, որոշ չափով հասել էին իրենց նպատակին, եւ նույնիսկ Սրբազան Հռոմեական կայսրության եւ եկեղեցու միջեւ այդ հողի վրա առաջացած հակամարտությունը ոչ թե վերջինիս թուլության, այլ հզորության արտահայտությունը պետք է համարել: Այս ամենի հետ մեկտեղ, Կարոլինգյան կայսրության ֆայֆայման հետեւանքով ընկել էր պետական հաստատությունների հեղինակությունը: Դրության տերն էին դարձել խոշոր ավատատերերն ու ռազմատենչ ասպետները, որոնք շարունակ զբաղված էին միմյանց դեմ մղվող արյունալի կռիվներով եւ հակառակորդ ավատատերերին, եկեղեցուն, վանական հաստատություններին պատկանող կալվածքների հափշտակմամբ ու գյուղերի կողոպուտով: Ավերածություններն այնպիսի անավոր չափերի էին հասել, որ եկեղեցին ստիպված էր հայտարարել Աստծու խաղաղության կամ Աստծու զինադադարի օրեր, որոնց ընթացքում արգելվում էր մարտական գործողություններ իրականացնել: Հատկապես անհանգստացնող էր ասպետական դասի ազդեցության տարածումը՝ որ-

պես հետեւանք, այսպես կոչված, «մայորատի» կամ անդրանիկության (primogeniture) ինստիտուտի կիրառման, որի համաձայն՝ ավատատիրոջ ողջ սեփականությունը ժառանգաբար անցնում էր ավագ որդուն, իսկ կրտսերները, զրկվելով սեփականություն ունենալու հնարավորությունից, ստիպված էին լինում համալրել հոգեւորականության կամ ասպետության շարքերը: Սեփականագորկ ասպետների կողմին, հողային կալվածքների խոշորացման եւ վերը նշված ավերածությունների հետեւանքով, ավելացել էր նաեւ հողագորկ գյուղացիների թիվը: Նրանց դրությունն ավելի էր ծանրացել XI դարի վերջին տասնամյակում Արեւմտյան Եվրոպային բաժին հասած երաշտի ու սովի տարիների պատճառով: Այսպիսով, խաչակրության նախօրյակին Արեւմուտքում գոյացել էր սեփականության կարոտ ասպետների ու հողագորկ գյուղացիների որոշակի ավելցուկ, որն ունակ էր լինելու հայրենի բնակավայրերը եւ բախտ որոնելու հեռավոր եզերքներում:

Դրա համար նախապատրաստված էր նաեւ անհրաժեշտ հոգեբանական եւ գաղափարախոսական մթնոլորտը: Ժամանակի ընթացքում Արեւմուտքում ձեւավորվել էր դեռեւս սուրբ Ավգուստինոսի կողմից (IV-V դդ.) առաջ քաշված արդար պատերազմի հասկացությունը, որի նպատակը աստվածաշնչական «մի՛ սպանաներ» պատվիրանի հաղթահարումն էր, եւ որի տակ հասկացվում էր զուտ պաշտպանական պատերազմ: Այդ հասկացության բնական զարգացումը ի վերջո պիտի հանգեցնէր սրբազան պատերազմի գաղափարին, որի ձեւավորմանը մասնավորապես նպաստել էին հեթանոս նորմանների եւ հունգարացիների դեմ մղված երկարատեւ պատերազմները, ինչպես նաեւ Իսպանիայում, հարավային Ֆրանսիայում եւ Սիցիլիայում արաբների դեմ ձեռնարկված ռազմական գործողությունները: Ըստ այդմ, արդար եւ սրբազան էին համարվում այն հարձակողական պատերազմները, որոնք մղվում էին հանուն քրիստոնեական ոլորտների պաշտպանության եւ ժամանակին քրիստոնյաներին պատկանած տարածքների վերանվանման: Միջնադարյան մարդու պատկերացմամբ՝ սրբազան պատերազմները հրահանգվում էին Աստծու կողմից եւ նվիրագործվում Հոմի պապի շուրթերով, իսկ պատերազմի մասնակիցները դիտվում էին որպես Քրիստոսի զինվորներ: Սրբազան պատերազմի կարեւորագույն բաղկացուցիչ մասերից մեկն էլ, որը հատկապես հրապուրում էր զինվորագրյալներին,

պապի կողմից հռչակված մեղքերի համընդհանուր թողությունն ու հավիտենական կյանքի արժանանալու երաշխիքն էր^a:

Հոգեբանական մթնոլորտի նախապատրաստման տեսակետից խաչակրության կարեւոր նախադրյալ է համարվում նաեւ XI դարում մեծ թափ հավաքած ուխտագնացության շարժումը դեպի Սուրբ Երկիր, որի ծավալների մասին կարող են պատկերացում տալ թեկուզ միայն հետեւյալ երկու փաստերը. 1026/7 թ. ուխտագնացների խումբը բաղկացած էր շուրջ 700, իսկ 1064/5 թ. բազմությունը՝ 7000 հոգուց: Ի՞նչն էր, արդ, այս զանգվածային շարժման պատճառը, որը, չնայած ուխտավորների առջեւ ծառայած հսկայական դժվարություններին եւ նանապարհորդության հետ կապված մեծ ծախսերին, ոչ միայն ժամանակի հետ չէր մարում, այլեւ ավելի ու ավելի ծավալվելու միտում էր դրսևորում: Հասկանալի է, որ Կաթոլիկ եկեղեցու սրբավայրերի շարքում, Հռոմի եւ իսպանական Սանտյագո դե Կոմպոստելայի կողքին, Երուսաղեմն զբաղեցնում էր կենտրոնական դիրք, որպես Քրիստոսի շարչարանների ու հարության վայր, եւ որպես նրա գերեզմանի սրբատեղի: Հաջորդ հանգամանքը, որ ուխտավորներին ձգում էր դեպի Երուսաղեմ, աշխարհի վերջի մասին գոյություն ունեցող այն վախճանաբանական (էսխատոլոգիական) հավատամքն էր, որ Քրիստոսի երկրորդ գալուստը տեղի է ունենալու այդ ֆաղափում, ուստի պետք է ներկա գտնվել այդ եզակի իրադարձությանը: Երկրորդ գալուստն սպասվում էր առաջին հազարամյակի վերջում, բայց երբ դա տեղի չունեցավ, հավատացյալները դրա հույսը կապեցին տասնմեկերորդ դարի ավարտի հետ: Սակայն ուխտագնացության տարածման գլխավոր իրաւանը հանդիսացավ այն իրողությունը, որ բարեպաշտության ցույցից առավել, այն սկսեց դիտվել որպես ապաշխարության ակտ: Թեեւ մեծ մասամբ կամավոր՝ բայց շատ հաճախ այն նույնիսկ պարտադրվում էր եկեղեցու կողմից, որպես մեղքերի թողության նախապայման: Ուխտագնացությունների շնորհիվ Եվրոպան հաղթահարեց Արևելքի հետ շփվելու հոգեբանական արգելքը, որոշ գիտելիքներ ձեռք բերեց Սուրբ Երկրի ու հարակից շրջանների մասին, ինչն, անշուշտ, որոշ դեռ խաղաց խաչակրության գաղափարը կյանքի կոչելու հարցում: Ավելին, բազմաթիվ պատմաբանների կարծիքով՝ խաչակրությունն, ըստ էության,

^a Արդար եւ սրբազան պատերազմների մասին մանրամասն տե՛ս վերջերս լույս ընծայված հետեւյալ ուսումնասիրությունը. Tyerman, Fighting, p. 95–124.

նույն ուխտագնացությունն էր, բայց արդեն լինելով վերջինիս զինված տարատեսակը: Հ. Է. Մայերի դիպուկ արտահայտությամբ՝ «Խաչակրությունը ուխտագնացության տրամաբանական շարունակությունն էր. ոչ մեկի մտով չէր անցնի նվանել Սուրբ Երկիրը, եթե մարդիկ դարեր շարունակ ուխտի շգնային այնտեղ»^a:

Խաչակրության նախադրյալները քննելիս չպետք է անտեսել նաև հակառակորդի նամբարում տիրող իրավիճակը: IX դարի կեսերին դուրս հորդավով միջինասիական տափաստաններից, սելջուկ-թուրքերի փոշվորական ցեղերը կարճ ժամանակի ընթացքում ծնկի բերին Արաբական խալիֆաթն ու Բյուզանդական կայսրությունը: 1055 թվականին սելջուկյան զորագլուխ Տողրուկ-բեգը, խալիֆից ստանալով սուլթանի կոչում, վավերացրեց իր փաստական իշխանությունը և հիմնադրեց թուրքական աշխարհակալ պետությունը: Խալիֆաթի հետ իրենց հաշիվները մաքրելուց հետո, 1071 թվականին, թուրքերը Մանազկերտի ճակատամարտում շախջախիչ պարտության մատնեցին Բյուզանդական կայսրությանը, և վերջինս փաստորեն դուրս մղվեց Մերձավոր Արևելքի պատմության թատերաբեմից: Սելջուկյան կայսրությունն իր հզորության գագաթնակետին հասավ Ալփ-Արսլան (1063-1072 թթ.) և Մելիքշահ (1072-1092 թթ.) սուլթանների օրոք՝ տարածվելով Զինաստանի սահմաններից մինչև Միջերկրական ծով և Այսրկովկասից մինչև Հնդկական օվկիանոս: Մելիքշահի և հատկապես նրա վեզիր Նիզամ ալ-Մուլքի եռանդուն միջոցառումների շնորհիվ սելջուկյան պետությունը, աստիճանաբար վերականգնելով մերձավորարևելյան ֆաղափալթության նախկին ավանդները, սկսեց ամրապնդվել ու կայունանալ նաև ներքինապես՝ հասարակական-ֆաղափական հարաբերությունների բնագավառում: Մելիքշահից հետո սելջուկյան աշխարհակալ պետությունը ներքին երկպառակությունների պատճառով սկսեց արագորեն փայփայվել: Նրա սահմաններում առաջացան բազմաթիվ կիսանկախ էմիրություններ, թեև անվանապես պահպանվում էր Սելջուկյան սուլթանների իշխանությունը: Անատոլիայում ստեղծվեց Ռումի սուլթանությունը, որը նախ՝ Նիկիա, իսկ այնուհետև՝ Իկոնիա մայրաքաղաքով, գոյատևեց 1077-1307 թթ.: Սերաստիայում և Մելիտենեում իշխում էին Դանիշմենյան էմիրները (1071-1178 թթ.):

^a *St u Mayer*, Kreuzzüge, S.19.

Ասորիֆին, այն է՝ Սիրիային տիրում էին Սելջուկյան սուլթանների կրտսեր ճյուղի ներկայացուցիչները (1078-1117 թթ.): Սուրբ Երկիրը եւ հարավային Լիբանանը Արտուֆյանների կարճատե տիրապետությունից հետո կրկին անցել էին Եգիպտոսի Ֆաթիմյանների ձեռքը (1098 թ.): Արտուֆյանները դրանից հետո հաստատվել էին Հյուսիսային Միջագետքում եւ իշխում էին Հիսն-Քեֆա, Ամիդ, Մարդին եւ Նփրկերտ քաղաքների վրա (1098-1408 թթ.): Մեծ Հայքի կենտրոնական նահանգները, Խլաթ մայրաքաղաքով, գտնվում էին Շահարմենների ձեռքում (1110-1207 թթ.): Սելջուկյան աշխարհակալության արեւելյան նահանգները՝ Իրանը եւ Միջին Ասիան, նույնպես բաժանված էին զանազան էմիրությունների ու արաբեկությունների միջեւ: Թուրքական այս պետությունները մշտական պայքարի ու պատերազմների մեջ էին իրար հետ: Յուրաֆանչյուր էմիր ձգտում էր հաստատել իր գերիշխանությունը, սակայն նրանցից ոչ մեկին չհաջողվեց վերականգնել Սելջուկյան կայսրության նախկին միասնությունը: Բնականաբար մահմեդականների այս մասնատվածությունն ու անմիաբանությունը պարարտ հող էին խաչակրության նպատակներն իրականություն դարձնելու համար:

Մասնակիցների շահագրգռությունները (մոտիվացիան). Միանգամից պետք է նշել, որ խաչակրության մասնակիցների դասային կամ անձնական շահագրգռություններին վերաբերող բազմաթիվ պնդումները, բացառությամբ մի քանիսի, արդյունք են զուտ արտածական (դեդուկտիվ) մտավոր ժամկետների: Մասնակիցներից ոչ ոք չի խոստովանել իր բուն մտադրությունները, ոչ մի միջնադարյան աղբյուր չի բացահայտել դրանք, ոչ մի դատարան չի ապացուցել մարդկանց հետին մտքերը: Այնուամենայնիվ դա չի խանգարել, որպեսզի արդի պատմաբանները առաջ քաշեն խնդրին վերաբերող բազմապիսի հավանական ու անհավանական վարկածներ: Այս դեպքում էլ, բնականաբար, մատերիալիստները շեշտը դնում են նյութական, իսկ իդեալիստները՝ հոգեւոր եւ գաղափարական գործոնների վրա: Այսպես, օրինակ, եթե Մ. Զաբորովի կարծիքով՝ «խաչակրության հիմքում ընկած էին տնտեսական եւ սոցիալ-ֆաղափական գործոններ»^a, ապա Զ. Ռայլի-Սմիթի համոզմամբ՝ նրա «գլխավոր մոտիվացիան անկեղծ իդեա-

^a М. Заборов, Крестовые походы, с. 8.

լիզմն էր»^a, կամ ըստ Ժ. Ռիչարի՝ «հիմնական շարժիչ ուժը ֆրիստոնեական հավատն էր»^b: Իհարկե, այս բաժանումը բացարձակ չէ, եւ տարբեր տեսակետների կողմնակիցները փոխադարձաբար մասամբ ընդունում են նաեւ միմյանց փաստարկների նշմարտացիությունը: Խաչակիրների նյութական եւ մասնավոր շահագրգռությունների շարժում հետազոտողների կողմից մատնանշվում են. մարդկանց հարստանալու տենչը, կողոպուտի գայթակղությունը, ընչագուրկ գյուղացիների եւ հասարակ ասպետների մոտ արտահայտված հողի ծարավը, խոշոր բարոնների փառասիրությունն ու նոր տիրույթներ ձեռք բերելու ձգտումը, ասպետների ռազմասիրությունը, արկածախնդրական ոգին, մահմեդականներից վրեժ լուծելու (վենդետայի) ցանկությունը, իտալական ծովային հանրապետությունների առետուրային շահերը եւ այլն: Հակառակ տեսակետին հակված հեղինակներն ընդգծում են. խաչակրության մասնակիցների կրոնական մոտիվները, ֆրիստոնեական պարտի գիտակցությունը, նվիրումն Աստծո գործին, տառապյալ հավատակիցներին օգնելու պատրաստակամությունը, մեղքերի թողության ու հավիտենական կյանքի արժանանալու ակնկալիքը եւ, ինչպես արդեն ասվեց, անկեղծ իդեալիզմը: Ոչ ոք չի կարող ժխտել, իհարկե, որ բոլոր թվարկված շարժառիթներն էլ այս կամ այն կերպ առկա են եղել խաչակրության ակունքներում: Ինչպես ցանկացած մեծ գործում՝ լինի դա սոցիալական հեղափոխություն, ազգային-ազատագրական պայքար, ժողովրդավարական շարժում եւ այլն, միշտ էլ գաղափարակիրների կողքին հայտնվել են պատեհապաշտներ ու ստորին բնագոյներով առաջնորդվող մարդիկ, որոնք չեն խորշել, առիթից օգտվելով, լուծելու իրենց անձնական խնդիրները: Խաչակրությունն այս առումով բացառություն չէր կարող լինել: Սակայն կարեւորն այդ կողմնակի երեւոյթները չեն, այլ այն, թե անկախ որոշ մարդկանց հետապնդած հետին նպատակներից, ինչպես էր համընդհանուր գործն ընկալվում նրա մասնակիցների մեծամասնության կողմից: Դատելով միջնադարյան աղբյուրների վկայություններից եւ նկատի ունենալով գաղափարական շարժումներին բնորոշ օրինաչափությունները, պետք է արձանագրել, որ խաչակրությունը նրա մասնակիցների մեծամասնության կողմից գի-

^a Riley-Smith, The Crusades, p. 11.

^b Richard, Histoire des Croisades, p. 7.

տակցվել է որպես նվիրական գործ, որպես Աստծո կամքով հայտարարված սրբազան պատերազմ: Բոլորովին այլ հարց է, թե այդ նվիրական գործը հետագայում ինչպիսի աղետներ պիտի բերեր Արեւելի ժողովուրդների գլխին, եւ խաչակիրներն ինչպիսի բարբարոսություններ ու ավերածություններ պիտի գործեին նվաճված երկրներում: Իրադարձությունները այսօրվա հեռավորությունից դիտող մարդու համար, իհարկե, դժվար է պատկերացնել խաչակիրների բիրտ վարքն առաջնորդող որեւէ գաղափարական կամ բարոյական սկզբունք, բայց դա ընդամենը պատմությանը ետին թվով վերաբերվելու հոգեբանական վիճակ է:

Քանի որ, ինչպես ասվեց, խաչակրությունը սրբազան պատերազմ էր, եւ հետեւաբար նրան մասնակցելու հանգամանքը հավիտենական կյանքի արժանանալու միջոց, ուստի զինվորագրյալների շահագրգռությունների շարքում կենտրոնական տեղ է ձեռք բերում մեղքերի թողության ակնկալիքը: Մեղքերի թողություն ստանալը միջնադարյան մարդու կյանքի գերագույն խնդիրն էր, քանի որ որքան էլ նա բարեպաշտ լիներ, որքան էլ օժտված քրիստոնեական բոլոր առաքինություններով, միեւնույն է, առանց ապաշխարության ու մեղքերի թողության չէր կարող ժառանգել երկնային արքայությունը: Այս պահին օգտագործելու մեջ էր, որ առավելագույնս դրսեւորվեց Ուրբանոս պապի ֆաղափական հանճարը, իսկ ամեն ինչի ետեւում ստորին մտքեր փնտրողների տեսակետից՝ նրա երկերեսանիությունը: Անխտի կերպով մեղքերի թողություն խոստանալով խաչակրության բոլոր մասնակիցներին, Ուրբանոսն այդ գերագույն շնորհը փաստորեն վերածեց գործարքի. ով ուզում էր ազատվել իր մեղքերից եւ արժանանալ հավիտենական կյանքի, կարող էր զինվորագրվել Աստծո բանակին^ա: Դատելով արդյունքներից, պետք է ընդունել, որ գործարքը գլուխ եկավ, թեւեւ բացի մեղքերի թողությունից, պապը ստիպված եղավ խաչակիրներին շնորհել նաեւ այլ արտոնություններ: Դրանք էին՝ խաչակիր ասպետի բացակայության ընթացքում նրա ընտանիքի եւ ունեցվածքի ապահովության երաշխավորումը, պարտքերի մարման ու տոկոսների վճարման սառեցումը, ազատումը հարկերից ու

^ա Ճիշտ է, սրբազան պատերազմի մասնակիցներին Հռոմի պապերի կողմից մեղքերի թողություն էր շնորհվում նաեւ Ուրբանոսից առաջ, բայց դա մասնակի բնույթ էր կրում, օրինակ, իսպանական Ռեկոնկիստայի սկզբնական շրջանում մեղքերի թողություն էին ստանում միայն մարտի դաշտում ընկածները:

տուրքերից եւ այլն: Ժամանակի ընթացքում այս ցանկն ընդարձակվեց, ներմուծելով մի շարք նոր արտոնություններ: Ընդլայնվեց նաեւ մեղքերի թողության արժանացողների շրջանակը: Այսպես, եթե սկզբնական շրջանում խաչակրի երդումը խախտողները ենթակա էին բանադրանքի, ապա XIII դարում մեղքերի թողությունն արդեն տարածվում էր նաեւ նրանց վրա, ովքեր այս կամ այն պատճառով չկարողանալով կատարել իրենց երդումը, դրա փոխարեն դրամ էին վճարում եկեղեցուն: Այս ամենը նկատի ունենալով, կարելի է հասկանալ, թե ինչու են խաչակրության մասնակիցների շահագրգռություններն ուսումնասիրող պատմաբաններն այդքան տեղ հատկացրել մեղքերի թողության հանգամանքին, որն, ըստ Հ. է. Մայերի՝ «սովորում է բոլոր մնացած մոտիվները»^a: Մնում է ավելացնել միայն, որ խաչակրության մասնակիցներից ոչ բոլորն էին այդ ֆայլին դիմել կամավոր կերպով. մասնավորապես, իրենց բարոններին ուղեկցող ասպետներից շատերը պարզապես կատարում էին վարձու զինվորի իրենց պարտքը, իսկ շատ կանայք ու երեխաներ իրենց խաչակիր ամուսիններին ու հայրերին միացել էին հարկադրաբար: Ուստի այսպիսիների դեպքում ընդհանրապես ավելորդ է խոսել ոչ միայն մեղքերի թողության ակնկալիքի, այլևս որեւէ այլ անձնական շահագրգռության մասին:

Անմիջական դրդապատճառներն ու խթանները. Առաջին խաչակրաց արշավանքի գլխավոր դրդապատճառ է համարվում բյուզանդական կայսր Ալեքսիոս Կոմնենոսի դիմումը Ուրբանոսին, որով նա Արեւմուտքից զինական օգնություն էր խնդրում՝ սելջուկյան ներխուժումները դիմագրավելու նպատակով: Կայսեր պատվիրակները 1095 թ. մարտին ներկայանալով իտալական Պիաչենցա ֆաղաֆում պապի գումարած եկեղեցական ժողովին, այդ խնդրանքը հիմնավորել էին արեւելյան քրիստոնյաների կրած ծանր տառապանքներով եւ սելջուկների գործած սոսկալի ավերածություններով: Ի դեպ, սա նորություն չէր: Մանագլեերոյի հակատամարտից անմիջապես հետո նման խնդրանքով Գրիգոր VII պապին էր դիմել նաեւ Միխայել VII բյուզանդական կայսրը, որին ի պատասխան, 1174 թվականին, Գրիգորը մտահոլացել էր արշավանք կազմակերպել սելջուկների դեմ, նույնիսկ անձամբ գլխավորել այն, բայց ինչ-ինչ պատճառներով չէր կարողացել

^a Mayer, Kreuzzüge, S. 28.

իրականացնել իր ծրագիրը: Նախաձեռնելով առաջին խաչակրաց արշավանքը, Ուրբանոսն, արդ, հանդիսացավ Գրիգոր VII պապի մտահղացման իրական գործադրողը: Իրակա՞ն էր արդյո՞ք այս դրդապատճառը, թե մտացածին, մենք կտեսնենք քիչ հետո, ծանոթանալով դրա նկատմամբ դրսևորված տարբեր մոտեցումներին, մանավանդ որ որոշ հետազոտողների ծայրահեղ կարծիքով՝ սելջուկների ձեռքից արեւելյան ֆրիստոնյաների կրած տառապանքները ոչ միայն խաչակրության անմիջական դրդապատճառ, այլև անգամ պատրվակ չէին կարող հանդիսանալ^ա:

Խաչակրության գաղափարի հղացման եւ իրականացման երկրորդ խթան են դիտվում սելջուկյան արշավանքներից հետո ուխտագնացության համար առաջացած դժվարությունները եւ ուխտավորների կյանքին սպառնացող վտանգները: Մենք արդեն տեսանք, թե ինչ հսկայական նշանակություն ունեն ուխտագնացությունը Արեւմտոփի հավատացյալ հասարակության համար: Ուխտագնացությունները անցյալում էլ ուղեկցվել էին որոշակի դժվարություններով, վտանգներով եւ տարբեր բնույթի ցավալի պատահարներով: Խաչակրության գաղափարի հասունացման շրջանում հավանաբար դեռես մոռացված չէին 1009 թվականին Եգիպտոսի խալիֆ Հաֆիմի կողմից Երուսաղեմում գործված վայրագությունները, որոնց ընթացքում պղծվել եւ ավերվել էին ֆաղափ բոլոր սրբավայրերը, այդ թվում՝ Քրիստոսի գերեզմանը: 1054 թվականին երեք հարյուր ուխտավորներ մահմեդականների կողմից արտաբաղվել էին Երուսաղեմից: 1064/5 թվականին յոթ հազար հոգուց կազմված ուխտավորների բազմությունը Պաղեստինի Ռամլա ֆաղափի մոտ հարձակման էր ենթարկվել եւ մի ֆանի օր պաշտպանական կռիվներ մղել: Բացառված չէ, որ Մանազկերտի հակատամարտից եւ Անատոլիայում ու Սիրիայում սելջուկյան տիրապետության հաստատումից հետո նման պատահարները ավելի հաճախակի էին դարձել, ինչը չէր կարող իրական անհանգստություն չառաջացնել Եվրոպայում եւ ինչ-որ կերպ չազդել խաչակրության գաղափարի ձեւավորման վրա: Համենայն դեպս, Ուրբանոսի կլերմոնյան ֆարոգում ուխտավորների անվտանգության խնդիրը, արեւելյան ֆրիստոնյաների ազատագրման կողքին, նշվում է որպես խաչակրության անհրաժեշտության հիմնավորման երկրորդ կովան: Սակայն,

^ա Հմմտ. Заборов, Крестовые походы, с. 43.

ըստ երեւոյթին, այս կովաններից ոչ մեկն էլ բավարար չէր ունկնդիրների մեջ պահանջված ոգետորություն առաջացնելու համար, քանի որ արեւելյան քրիստոնյաների վիճակը նրանց առանձնապէս չափաի հուզե^a, նկատի ունենալով, որ Արեւմուտքում նրանք համարվում էին հերետիկոսներ, իսկ ուխտավորների փորձությունների մասին տեղեկություններն էլ այնքան առատ չէին, որպէսզի ցնցեին նրանց:

Ուստի անհրաժեշտ էր փնտրել միջնադարյան մարդու հոգու վրա ազդող ավելի զորեղ փաստարկներ: Հավանաբար առաջին խաչակրաց արշավանքի քարոզչության ամիսներին էր, որ գտնվեցին նաեւ այդ փաստարկները, կամ, եթէ կարելի է ասել, խաչակրության գլխավոր կարգախոսները: Դրանք երկուսն էին՝ Երուսաղեմի վերանվանումն ու Սուրբ Գերեզմանի ազատագրումը, գաղափարներ, որոնք ակնհայտորեն ի վիճակի էին զորաշարժի ենթարկելու զանգվածներին: Արեւմտյան հասարակության համար Երուսաղեմի ներկայացրած նշանակության մասին, կապված մանավանդ վախճանաբանական պատկերացումների հետ, մենք արդէն խոսեցինք ուխտագնացություններին նվիրված հատվածում: Այստեղ պետք է ավելացնել հետեւյալը: Սուրբ Երկիրը համարվում էր «Քրիստոսի թագավորությունը», ուստի Արեւմուտքի համար անհանդուրժելի էր, որ այն գտնվում էր «անհավատների» ձեռքում^b: Բացի այս երկրային իմաստից, Երուսաղեմն Արեւմուտքում ուներ նաեւ հոգեբանական նշանակություն, զուգորդվելով Վերին Երուսաղեմի հոգեհարազատ գաղափարի հետ^c: Ավելին, եվրոպացիների տեսակետից, Երուսաղեմի վերանվանումը նաեւ լիովին համապատասխանում էր սրբազան պատերազմի սկզբումներին, քանի որ մինչեւ VII դարը այն պատկանել էր Հռոմեական կայսրությանը եւ գտնվել քրիստոնյաների տիրապետության տակ: Այսպիսով, ներառելով նաեւ այս նոր փաստարկները, զորաշարժի նախօրյակին վերջնականապէս հստակեցվեց խաչակրության հայտարարված նպատակը, այն է՝ **արեւելյան քրիստոնյաների ազատագրումը սելջուկյան լծից եւ Երուսաղեմի ու Սուրբ Գերեզմանի վերանվանումը մահմեդականների ձեռքից**: Թերեւս ավելորդ չէ նշել, որ տարօրինակ կերպով, միջնադարյան աղբյուրների շարքում միայն Մատթեոս

^a Հմմտ. Praver, The Crusaders' Kingdom, p. 10.

^b Հմմտ. Richard, Histoire des Croisades, p. 35.

^c Հմմտ. Mayer, Kreuzzüge, S. 16.

Ուոհայեցի հայ ժամանակագիրն է, որը ավել է այդ նպատակի նշգրիտ ձեւակերպումը, այն էլ ընդամենը մեկ նախադասությամբ. «Ելեալ գային իշխանն ազգին Փռանգաց, եւ իւրաքանչիւր զօրօքն գային յօգնութիւն քրիստոնէից եւ առ ի փրկել յայլազգեաց զսուրբ քաղաքն Երուսաղէմ եւ ազատել ի Տանկաց զսուրբ Գերեզմանն աստուածընկալ»^a:

Նախաձեռնողի մտադրությունները. Արդյոք ազնի՞վ էր հայտարարված նպատակը, եւ արդյոք այն քողարկուկոյս չէ՞ր խաչակրոյթյան նախաձեռնողի՝ Ուրբանոս պապի բուն մտադրությունները թաքցնելու համար: Ահա հարցեր, որոնք ամենաշատ ուշադրութեան են արժանացել հետազոտողների կողմից, որովհետեւ դրանց պատասխանից է կախված երեսույթի իրական պատճառների վերհանումը: Այստեղ նույնպէս, ինչպէս խաչակրոյթյան մասնակիցների անձնական շահագրգռությունների պարագայում, պետք է նշել, որ Ուրբանոսի բուն մտադրություններին վերաբերող բազմապիսի տեսակետներն ընդամենը ենթադրությունների եւ տրամաբանական դատողությունների վրա հիմնված վարկածներ են, որոնք, բացառությամբ մեկ-երկու դեպքի, չեն հաստատվում միջնադարյան աղբյուրների վկայություններով: Խաչակրոյթյան պատմութեանը նվիրված ծովածավալ գիտական գրականութեան մեջ այս հարցի վերաբերյալ արտահայտվել են հետեւյալ հիմնական տեսակետները.

1. Նախաձեռնելով խաչակրոյթումը, Հռոմի պապը ձգտում էր իր ենթակայութեան տակ գցել արեւելափրիստոնէական եկեղեցիները:

2. Ընդառաջելով Ալեքսիոս կայսեր խնդրանքին, Ուրբանոսն ուզում էր մեղմել հարաբերությունները Բյուզանդիայի հետ, եւ հաղթահարելով 1054 թվականի խզումը, վերականգնել լատինական եւ հույն-ուղղափառ եկեղեցիների միութիւնը Հռոմի գերակայութեան ներքո:

3. Հռոմի պապի նպատակն էր վերացնել հույն-ուղղափառ եկեղեցու ինքնուրույնութիւնը եւ տիրել նրա հարստութեաններին:

4. Որոշ իմաստով Ուրբանոսի ձեռնարկած արշավանքը Իսլամի չորս-դարյա առաջխաղացման եւ քրիստոնյաների կրած նվաստացման հակազդեցութիւնն էր^b: Սակայն սա պատմական ավելի լայն կտրվածքի վե-

^a Մատթէոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 254:

^b Այս թեզի հիմնավորմանը Ռ. Գրոսսէն նույնիսկ մի ամբողջ գիրք է նվիրել. տե՛ս René Grousset, L'empire du Levant, Paris, 1949.

րաբերող գնահատական է եւ անմիջականորեն չի առնչվում պապի մտադրությունների հետ:

5. Պապը երազում էր իր աշխարհիկ իշխանությունը տարածել Արեւել-
 քում նվաճված երկրների վրա: Փ. Ռիշարը հերքում է այս տեսակետը, ար-
 դարացիորեն նշելով, որ Արեւելքում հիմնված լատինական պետություննե-
 րից ոչ մեկը իրեն Սուրբ Աթոռի վասալ չի նանաչել^ա:

6. Եկեղեցին, լինելով խոշոր տնտեսավարող, շահագրգռված էր իր ապ-
 րանքների արտահանամամբ, ուստի խաչակրության միջոցով ձգտում էր
 պաշտպանվել մահմեդական արտադրողների մրցակցությունից: Փ. Ռիշա-
 րը առաջնություն է նաեւ այս պնդմանը, հիշեցնելով, որ եկեղեցական տիրույթ-
 ների տնտեսությունը գլխավորապես հողագործական էր, որի արտադ-
 րանքն սպառվում էր ներքին շուկայում^բ:

7. Հռոմի պապն ուզում էր Արեւմուտքն ազատել ասպետների գործած
 ավերածություններից եւ նրանց ռազմատենչ եռանդը շեղել այլ ուղղու-
 թյամբ: Ի դեպ, սա այն եզակի տեսակետներից մեկն է, որը առաջին հայաց-
 քից կարծես թե հաստատվում է աղբյուրների տվյալներով: Ուրբանոս պա-
 պը, կլերմոնյան ֆարոզում դիմելով ունկնդիրներին, դատապարտում է աս-
 պետների գործած բռնությունները եւ հորդորում դրա փոխարեն օգնության
 գնալ իրենց հավատակիցներին, ովքեր «անհավատների» ձեռքից տառա-
 պում են Արեւելքում: Բայց սա ավելի շուտ լսարանի հոգու վրա ազդելուն
 ուղղված ճարտասանական հնարք, քան թե հետին միտք պետք է համարել:

8. Քանի որ XI դ. վերջին տասնամյակում սելջուկյան առաջխաղաց-
 ման վտանգն այլեւս իրական չէր, եւ արեւելյան ֆրիստոնյաներն էլ
 առանձնակի հալածանքների չէին ենթարկվում թուրքերի կողմից, բացի
 Զիմմիի կարգավիճակին բնորոշ սահմանափակումներից, ուստի դա չէր
 կարող խաչակրության պատճառ հանդիսանալ: Հետեւաբար Ուրբանոսը
 հետապնդում էր բոլորովին այլ նպատակ, որը վերաբերում էր Արեւմուտ-
 քի ներքին խնդիրներին, այն է՝ գերմանական կայսեր դեմ մղված պայքա-
 րում բարձրացնել պապականության հեղինակությունը եւ ապահովել
 եկեղեցու գերակայությունը աշխարհիկ իշխանությունների նկատմամբ:

^ա *St u Richard, Histoire des Croisades*, p. 25.

^բ *St u նույն տեղում*, էջ 26:

Այս տեսակետի հանգամանակից հիմնավորումը ավել է Կ. Կաենը դեռևս 1950 թվականին^a:

Եթե մի կողմ դնենք արդեն հերժված կամ աղբյուրների տվյալներով չհաստատվող վարկածները (1, 3, 4, 5, 6, 7), ապա մնում են միայն 2-րդ եւ 8-րդ համարները կրող տեսակետները, որոնց հարկ է անդրադառնալ ավելի մանրամասնորեն:

2-րդ տեսակետի վերաբերյալ, որը թեև նույնպես գուրկ է աղբյուրագիտական հիմնավորումից, կարելի է ասել հետեւյալը: Որ Հոռմի պապն առաջնորդվել է բացառապես այլասիրական (ալտրոիստական) մղումներով, այն է՝ Արեւելի տառապյալ ֆրիստոնյաներին օգնելու ցանկությամբ, այսօր, իհարկե, ֆշերին է համոզում, ուստի հավանականությունից հեռու չէ, իսկապես, որ Ալեքսիոս կայսեր խնդրանքին ընդառաջելով, Ուրբանոսն իր մտքում ունեցել է նաև եկեղեցիների միությունը վերականգնելու խնդիրը, մանավանդ որ վերջինս երբեք դուրս չէր եկել պապականության օրակարգից: Բայց այս երկու պարագաներն ամենեփն չեն հակասում միմյանց եւ չեն բացառում, որ Արեւելի ֆրիստոնյաներին օգնելու մղումը կարող էր համատեղվել եկեղեցիների միության վերականգնման ցանկության հետ:

Նույնը կարելի է ասել նաև 8-րդ կետի վերաբերյալ, չբացառելով, որ Արեւելի ֆրիստոնյաներին պաշտպանելու պատրաստակամությունը կարող էր համատեղվել նաև պապականության հեղինակությունը բարձրացնելու մտադրության հետ: Բայց դա դեռևս չի նշանակում, որ այդ մտադրությունը արշավանքի ձեռնարկման բուն պատճառը պետք է համարել, եթե անգամ ճիշտ էր այդ պահին թուրքական վտանգի իրական չլինելու պարագան: Կարող ենք համաձայնել Կ. Կաենի հետ, որ խաչակրության նախօրյակին սելջուկյան առաջխաղացման թափն արդեն կտորվել էր, որ Բյուզանդիան նույնիսկ ի վիճակի էր վերանվանելու Փոքր Ասիայում կորցրած տարածքների մի մասը, որ թուրքերը սուկալի նեղություններ չէին պատճառում արեւելյան ֆրիստոնյաներին, որ ուխտավորները եւս առանձնապես չէին տուժում սելջուկների ներկայությունից, բացի թերեւս այն անհարմարությունից, որ Անատոլիայի ու Սիրիայի համապարհների շրջափակման պատճառով, ստիպված էին Սուրբ Երկիր հասնել ծովով: Կրկնում ենք, այս ամենը

^a *St u Cahen*, Turcobyzantina, p. B 6-29, C 118-125.

կարող էր միանգամայն իրական լինել, քանի որ Կ. Կաենն իր տեսությունը հիմնավորում է միջնադարյան աղբյուրներից ֆաղված առատ տվյալներով: Սակայն իրական լինելը մի բան է, իրական գիտակցելը՝ այլ բան: Ուստի եթե մեծ պատմաբանի ներկայացրած պատկերն անգամ բացարձակապես իրական էր, ապա դա ամենեւին չի նշանակում, որ այն նույնֆան իրական էր Ուրբանոսի կամ ընդհանրապես արեւմտյան հասարակության համար: Հոռոմի պապը ո՛չ Կենտրոնական հետախուզական վարչություն, ո՛չ ԿԳԲ, ոչ էլ դեսպանատներ ուներ, որպեսզի ստուգապես տեղյակ լիներ Արեւելիի իրական վիճակին: Նա պիտի ապավիներ կամ ուխտավորների պատմածներին, ովքեր, բոլոր ճանապարհորդների նման, չափազանցելու եւ իրադարձությունները գունազարդելու սովորություն ունեին, կամ էլ՝ Ալեքսիոս կայսեր հավաստիացումներին, որը Արեւմուտից օգնություն ստանալու համար նույնպես շահագրգռված էր չափազանցել իրավիճակի ծանրությունը: Ուստի ամենեւին էլ անհավանական չէ, որ Ուրբանոսն արշավանքի ձեռնարկման իր վիճակը կայացներ այս աղբյուրների տվյալներից ստացած սխալ պատկերացման հիման վրա:

Բայց սրանով հանդերձ, կա նաեւ շատ ավելի կարեւոր մի հանգամանք: Արեւելյան ֆրիստոնյաների տառապանքները, որքան էլ սարսուղազու ներկայացված, միեւնույն է, բավարար չէին շարժելու Արեւմուտի գույքը եւ նրան մղելու մի այնպիսի պատասխանատու գործողության, ինչպիսին իսաչակրաց արշավանքն էր: Ժողովուրդների տառապանքները ո՛չ անցյալում, ո՛չ էլ նորագույն ժամանակներում որեւէ կերպ չեն ազդել մեծ տերությունների կայացրած որոշումների վրա: Հետեւաբար Ալեքսիոսն իր խնդրանքը պիտի հիմնավորեր շատ ավելի լուրջ ֆաղափական փաստարկներով: Նա պիտի կարողանար Ուրբանոսին ապացուցել, որ հայցված օգնությունը ոչ այնֆան Բյուզանդիային է հարկավոր, որքան Արեւմուտին, ասելով մոտավորապես հետեւյալը. «Եթե դուք այսօր չօգնեք Բյուզանդիային, վաղը թորհերը կլինեն Հոռոմում»: Մի այնպիսի մակարդակի պետական այր, ինչպիսին Ալեքսիոս Կոմնենոսն էր, այլ կերպ չէր կարող վարվել: Իմիջիայլոց, այլ կերպ չի կարող վարվել ընդհանրապես որեւէ պետության ղեկավար, որովհետեւ դա ֆաղափականության այբուբենն է: Ալեքսիոսի նմանատիպ փաստարկը չէր կարող տպավորություն չգործել Արեւմուտի վրա, մանավանդ եթե նկատի ունենանք, որ ընդամենը մեկ սերնդի կյանքի ընթացքում

սելջուկները ապշեցուցիչ հաղթանակներ էին տարել Արաբական խալիֆաթի ու Բյուզանդիայի նկատմամբ եւ իրենց ռաֆերն արդեն լվանում էին Միջերկրական ծովում: Որ ասվածը սոսկ ենթադրություն չէ, եւ որ Արեւմուտքն իսկապես ուներ թուրքական առաջխաղացման վտանգի զգացողությունը^a, երեսում է նույնիսկ Ուրբանոսի կլերմոնյան ֆարոզից: Պապն իր ունկնդիրների ուշադրությունը հատուկ սեւեռում է այն փաստի վրա, որ թուրքերն արդեն գտնվում են Միջերկրական ծովի ափին, Բոսփորի մերձակայքում^b: Այնուամենայնիվ, անգամ այս պարագայում մենք չենք կարող միանշանակ պնդել, որ խաչակրության պատճառը թուրքական առաջխաղացման վտանգն էր, որովհետեւ մի այնպիսի բարդ պատմական երեւոյթ, ինչպիսին խաչակրությունն է, դժվար է բխեցնել առանձին պատճառից: Ամենայն հավանականությամբ Ալեքսիոս կայսեր խնդրանքին ինչ-որ կերպ ընդառաջած լինելու ցանկությունը, Հռոմի պապի հեղինակության բարձրացման խնդիրը եւ թուրքական վտանգի զգացողությունն են այն երեք հիմնական գործոնները, որոնց համակցությունը կշեռփի նժարը թե՛վէ է Ուրբանոսի որոշման կայացման կողմը:

2. ԱՌԱՋԻՆ ԽԱԶԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Առաջին խաչակրաց արշավանքի մասնակիցները բաժանվում էին չորս հիմնական խմբի^c:

Առաջին խումբը, որը կազմված էր հիմնականում լոթարինգացիներից, հյուսիսային ֆրանսիացիներից եւ գերմանացիներից, գլխավորում էր ներքին Լոթարինգիայի դուքս Գոդֆրուա Բոլոյնացին: Նրան ուղեկցում էին իր եղբայր Բալդուին Բոլոյնացին եւ ազգական Բալդուին Բուրգանցին: Հետագայում այլ ճանապարհով նրանց էր միացել նաեւ Գոդֆրուայի մյուս եղբայր Եվստաթիոսը:

Երկրորդ խումբը կազմված էր Իտալիայի նորմաններից, որոնց հրամանատարն էր Բոհեմունդ Տարենտացին՝ Ապոլիայի դուքս Ռոբերտ Գվիսկարի ավագ որդին: Բոհեմունդի հիմնական զինակիցը նրա ֆեոդոլի Տանկրեդոն էր:

^a Հմմտ. Bréhier, Les Croisades, p. 52–54.

^b Foucher de Chartres, Histoire, p. 17.

^c Առաջին խաչակրաց արշավանքի մասնակիցների, ներկա դրությամբ, ամենաամբողջական ցանկը տե՛ս Riley-Smith, The first Crusaders, p. 196–246.

Երրորդ եւ ամենաբազմամարդ խումբը ներկայացնում էին հարավային Ֆրանսիայի բնակիչները՝ Թուլուզի կոմս Ռայմոնը Սենժիլցու գլխավորությամբ:

Զորերոջ խումբը կազմված էր հյուսիսային ֆրանսիացիներից՝ դոմս Ռոբերտ Նորմանդացու, կոմս Ռոբերտ II Ֆլանդրացու եւ կոմս Ստեփան Բլուացու հրամանատարության ներքո:

Որոշ հետազոտողներ նշում են նաեւ մի հինգերորդ խումբ՝ Ֆրանսիայի քաղաքացի Ֆիլիպ I-ի եղբայր, Վերմանդուայի կոմս Հուգոյի գլխավորությամբ, բայց քանի որ այդ խումբը, հավանաբար սակավաթիվ լինելով, երկրորդական դեր է խաղացել խաչակրության մեջ, ուստի սովորաբար չի հիշատակվում հիմնական դերակատարների շարքում:

Թվարկված բարոնների շարքում իր հարստությամբ, ֆեոդալական նվիրապետության աստիճանակարգում զբաղեցրած դիրքով եւ զինված ուժերի թվաքանակով ամենաազդեցիկը Ռայմոնը Սենժիլցին էր: Նրա հեղինակության ամրապնդմանը նպաստում էր նաեւ այն հանգամանքը, որ նա Ուրբանոս պապի մտերիմ մարդկանցից էր, եւ որ նրա բանակում էր գտնվում պապական նվիրակ Ադեմար Մոնտելյացի եպիսկոպոսը, որն ըստ էության խաչակրության հոգեւոր առաջնորդն էր:

Առաջին խաչակրության մասնակիցների շրջանակը, սակայն, չէր սահմանափակվում միայն բարոնների եւ նրանց ուղեկցող ասպետների դասով: Նրանցից անկախ եւ ժամանակով նրանցից առաջ դեպի Սուրբ Երկիր նախապահ էր ընկել, այսպես կոչված, աղքատների կամ ամբոխի խաչակրությունը՝ ժողովրդական ֆարոզիչներ Պետրոս Ճգնավորի, Վալտեր Սանգավուարի եւ այլոց գլխավորությամբ: Այդ խումբը, կազմված մեծ մասամբ անզեն եւ չհավոր ուխտավորներից, որոնց Գերմանիայում միացել էին նաեւ որոշ մանր ֆեոդալներ եւ ասպետներ, ըստ մասնագետների, հասնում էր մոտավորապես 20000 հոգու^a:

Թեև աղբյուրները նշում են զանազան, հաճախ չափազանց ոտնացված թվեր, սակայն հետազոտողների մեծամասնության կարծիքով, առաջին խաչակրաց արշավանքի մասնակիցների ընդհանուր թվաքանակը չէր անցնում հարյուր հազարից՝ ներառյալ Պետրոս Ճգնավորի գլխավորած ամ-

^a *St u Runciman*, A History of the Crusades, I, p. 340.

բոխը եւ խաչակրաց բանակներին ուղեկցող ոչ զինյալ ուխտավորների՝ կանանց, ծեռերի, երեխաների բազմությունը: Բուն բանակի թվաքանակը, ըստ բարեխիղճ հաշվարկների, կազմում էր շուրջ 4200-4500 հեծյալ եւ 30.000 հետեակային:

1096 թ. ապրիլին ժողովրդական խաչակրությունը երկու ակիբով՝ նախ Վալտեր Սանգավուարի, ապա Պետրոս Ճգնավորի գլխավորությամբ, մեկնելով Ֆրանսիայից, Գերմանիայի եւ Հունգարիայի հանապարհով հասավ Բյուզանդիա, որի սահմանը կտրեց Բելգրադի մոտ: Հուլիս-օգոստոսին այդ խաչակրությունն արդեն ամբողջությամբ հասել էր Կոստանդնուպոլիս: Չսպասելով խաչակրաց բուն բանակների ժամանմանը, այդ խայտաբղետ ամբոխը անցավ Փոքր Ասիա եւ հոկտեմբերի 21-ին, թուրքերի հետ առաջին իսկ լուրջ բախման ժամանակ, Նիկիայի մոտերում, գլխովին ջախջախվեց: Փրկվեցին միայն ֆշերը, այդ թվում՝ Պետրոս Ճգնավորը, որը մնացել էր Կոստանդնուպոլսում:

1096 թ. նոյեմբերից մինչև 1097 թ. ապրիլն ընկած ժամանակամիջոցում տարբեր հանապարհներով Կոստանդնուպոլիս հասան նաև խաչակիրների մյուս խմբերը: Գոդֆրուա Բուլոյնացին ընտրել էր համարյա նույն երթուղին, որով ընթացել էր ժողովրդական խաչակրությունը: Ռայմունդ Սենծիլցին, կտրելով Ալպյան լեռնաշղթան, իջել էր հյուսիսային Իտալիա եւ Ադրիատիկ ծովի հյուսիսային ափերով մտել Բալկաններ: Նորմանդացիներն ու ֆլամանդացիները, նույնպես կտրելով Ալպերը, իջել էին մինչև հարավային Իտալիա եւ Բարիից ծովով անցել էպիրոս, իսկ այնուհետև հին հռոմեական Via Egnatia հանապարհով շարժվել դեպի Կոստանդնուպոլիս: Բնականաբար Բարիից-Կոստանդնուպոլիս համարյա նույն երթուղով էր ընթացել նաև Բոհեմունդ Տարենտացին^a:

Ճանապարհորդությունը դեպի Կոստանդնուպոլիս հարթուհանգիստ չէր անցել ոչ ժողովրդական խաչակրության, ոչ էլ խաչակրաց բուն բանակների համար: Այն ուղեկցվել էր ներքին կոռիվներով, գերմանական ֆաղափների հրեական համայնքների կոտորածներով, հունգարական բանակների եւ բյուզանդական սահմանային կայազորների հետ ունեցած բախումներով, տեղական բնակչության ունեցվածքի հափշտակություններով եւ այլն: Լուրջ

^a Նույն տեղում, էջ 339:

հակամարտության եւ նույնիսկ ռազմական առնակատման վտանգը բացառված չէր անգամ Կոստանդնուպոլսում, ուստի ինչպես Ալեքսիոս Կոմնենոս կայսրից, այնպես էլ խաչակիրների առաջնորդներից մեծ ջանքեր ու զսպվածություն պահանջվեցին դրանցից խուսափելու համար:

Դժվարին բանակցություններից եւ դիվանագիտական բազմաթիվ հնարների կիրառումից հետո, ի վերջո, 1097 թ. ապրիլին պայմանագիր կնքվեց մի կողմից Բյուզանդիայի, մյուս կողմից խաչակիրների միջեւ, որի համաձայն՝ Ալեքսիոս կայսրը պարտավորվում էր պարենավորել խաչակիրներին, նրանց ապահովել զինված ուղեկիցներով, իսկ հետագայում անձամբ միանալ դեպի Սուրբ Երկիր ընթացող արշավանքին: Խաչակիրներն իրենց կողմից երդվում էին՝ Բյուզանդիային վերադարձնել թորքերից գրավվելիք այն բոլոր տարածքները, որոնք սելջուկյան ասպատակությունների նախօրյակին պատկանել էին կայսրությանը: Պայմանագրի նկատմամբ որոշ վերապահում ունեցավ միայն Ռայմոնդ Սենժիլցին, իսկ Տանկրեդն ընդհանրապես հրաժարվեց ստորագրել այն:

Ապրիլի վերջին – մայիսի սկզբներին խաչակրաց բանակները մեկը մյուսի ետեւից մեկնեցին Կոստանդնուպոլսից, եւ կտրելով Բոսփորի նեղուցը, ռաֆ դրին Փոքր Ասիա: Մայիսի 6-ին նրանք սկսեցին Նիկիայի պաշարումը, որն այդ ժամանակ Փոքր Ասիայի Սելջուկյան սուլթանության մայրաքաղաքն էր: Հունիսի 19-ին, չդիմանալով ահագնացող ճնշմանն ու օգնություն չստանալով սուլթան Քիլիջ-Արսլանից, քաղաքն անձնատուր եղավ բյուզանդացիներին: Դրանից հետո խաչակիրները շարժվեցին դեպի հարավ-արեւելք եւ հուլիսի 1-ին Դորիլեոն (Էսկի-Շեհիր) քաղաքի մոտ վնոական հակատամարտ ավիւն սելջուկներին: Վերջիններս ջախջախիչ պարտություն կրեցին եւ փաստորեն հրաժարվեցին հետագա դիմադրությունից: Այնուհետեւ, մինչեւ Սիրիայի սահմանները ճանապարհին, ըստ էության, բաց էր խաչակիրների առջեւ: Դորիլեոնից հետո նրանց երթուղին ընթացավ Պոլիբոտոս – Ֆիլոմելիոն – Լաոդիկիա – Իկոնիա – Հերակլեա – Նիջդե (Տիանա) – Կեսարիա – Կոմանա – Կոկիսոն – Մարաշ – Անտիոք ճանապարհով: Հերակլեայում Տանկրեդը եւ Բալդուին Բուլոյնացին սեպտեմբերի կեսերին բաժանվեցին հիմնական բանակից եւ առանձին փոքրիկ զորախմբերով Կիլիկյան դռներով իջան դաշտային Կիլիկիա: Տանկրեդը, որը երեք օրով առաջ

Եւ ընկել Բալդուինից, ուներ միայն 100 ասպետ եւ 200 հետեակային, իսկ վերջինս՝ 500 ասպետ եւ 2000 հետեակային:

1097 թ. սեպտեմբերի կեսերից մինչեւ հոկտեմբերի կեսերը Տանկրեդի եւ Բալդուինի զորախմբերը, որոնց միացել էր նաեւ Մերսինի ծովածոցում ցամաքահանում կատարած Գինեմեր Բուլոյնացի ծովահենի երեք հարյուր հոգիանոց ջոկատը, թուրքական կայազորներից մաքրեցին եւ նվաճեցին դաշտային Կիլիկիայի բոլոր մեծ ֆաղաֆները՝ Տարսոնը, Ադանան, Մսիսը եւ Ալեքսանդրեթը: Նվաճումները հեշտացվեցին այդ ֆաղաֆների հայ եւ հույն բնակիչների օժանդակության շնորհիվ, որոնք կապի մեջ մտնելով խաչակիրների հետ, հանախ նրանց առջեւ բացում էին դարպասներ: Խաչակիրներին օգնություն ցուցաբերեց նաեւ Ադանայի հայ իշխան Ուսիմոսը, որին հետազոտողներից շատերը նույնացնում են Օշին Լամբրոնացու հետ: Խաչակիրների կիլիկյան արշավանքը, սակայն, ուղեկցվեց ներքին գժտություններով եւ նույնիսկ Տանկրեդի եւ Բալդուինի զորքերի միջեւ տեղի ունեցած արյունալի բախումներով: Ի հայտ եկավ սեփական տիրույթներ զավթելու խաչակիրների գիշատիչ մոլուցքը ի հաշիվ խաչակրության բուն առաքելության՝ Սուրբ Երկրի ազատագրման գաղափարի, միտում, որը պիտի շարունակվեր եւ անգամ ավելի անպարկեշտ մրցակցության վերածվեր հետագայում: Հոկտեմբերի կեսերին Բալդուինը հրաժարվեց Կիլիկիայում սեփական իշխանություն հաստատելու մտքից եւ գնաց Մարաշ՝ միանալու խաչակրաց հիմնական բանակին, որտեղ էին նաեւ նրա հիվանդ կինն ու երեխաները: Որոշ ժամանակ անց, գրավելով Ալեքսանդրեթը եւ այդպիսով ավարտելով Կիլիկիայի ազատագրումը թուրքերից, Տանկրեդը նույնպես լքեց երկիրը եւ Ամանոսի լեռնանցքներով ուղղվեց դեպի Անտիոխ: Կիլիկիայի երեք գլխավոր ֆաղաֆներում՝ Տարսոնում, Ադանայում եւ Մսիսում, պահպանվեցին միայն փոքրիկ ֆրանկ կայազորներ, որոնք Անտիոխի իշխանապետության ձեռավորումից հետո (1098 թ.) հանաչեցին նրա գերիշխանությունը:

Խաչակրաց հիմնական բանակը հոկտեմբերի կեսերին մեկնեց Մարաշից, եւ հոկտեմբերի 21-ին հասնելով Անտիոխ, սկսեց ֆաղաֆի ավելի քան յոթամսյա պաշարումը: Բալդուինը, Մարաշում կորցնելով իր կնոջն ու երեխաներին, նորից անշտովեց հիմնական բանակից եւ այս անգամ արդեն շատ ավելի փոքր զորախմբով շարժվեց դեպի մերձեփրատյան երկրամասի հայկական իշխանությունները: Դեռեւս Նիկիայից Բալդուինին ընկերացել

էր Բագրատ անունով մի հայ իշխան, որը հռչակավոր Գող Վասիլի՝ Քեսունի եւ Ռապանի տիրոջ եղբայրն էր: Ըստ երեսույթին, թե՛ դեպի Կիլիկիա տանող երթուղին ընտրելու, թե՛ դեպի մերձեփրատյան երկրամաս արշավելու գաղափարը Բաղդուինին ներշնչել էր այս Բագրատը:

Թուրքական կայագործներից առաջինն ազատագրվեցին Թլպաշարը եւ Ռավանդանը, այդ բերդաֆաղաֆների ապստամբած հայ բնակչության աշակցությամբ: Ռավանդանը Բաղդուինը հանձնեց Բագրատին, իսկ Թլպաշարը՝ Ֆեր անունով մի ուրիշ հայ իշխանի: Սակայն վերջինիս սադրանքով Բագրատը վտարվեց Ռավանդանից եւ ապաստան գտավ իր եղբայր Գող Վասիլին պատկանող լեռներում: Ստանալով Թլպաշարի ազատագրման լուրը, Բաղդուինին օգնության խնդրանքով դիմեց Եդեսիայի հայ կառավարիչ Թորոսը: Արձագանքելով այդ հրավերին, որն ըստ երեսույթին, համընկնում էր իր ծրագրերին, Բաղդուինը փետրվարի 6-ին 80 (ըստ այլ աղբյուրներին՝ 60) ասպետների ուղեկցությամբ ժամանեց Եդեսիա, եւ մի քանի ամիս անց, Թորոսին մատնելով ամբոխի հաշվեհարդարին, դավադրաբար գավթեց իշխանությունը: 1098 թ. մարտի 10-ին նա հռչակվեց Եդեսիայի կոմս, այդպիսով հիմնադրելով համանուն կոմսությունը, որը խաչակրաց առաջին պետությունն էր Արեւելքում:

Այդ ընթացքում խաչակրաց հիմնական բանակը շարունակում էր Անտիոքի հյուծիչ պաշարումը: Պարենի պակասի, ցրտի եւ անձրեւների պատճառով խաչակիրները հայտնվել էին ծանր դրության մեջ, օրեցօր ավելանում էր սովամահ լինողների եւ դասալիքների թիվը: Խաչակիրները որոշ պարենային օգնություն ստացան շրջակա գավառների հայ իշխաններից ու Սեւ լեռների հայ վանականներից, մինչ հայ վանատականները սննդամթերք էին վաճառում թե՛ խաչակիրներին, թե՛ ֆաղաֆում պաշարված թուրքերին: Վերջիններիս վիճակը նույնպես օրհասական էր: Քաղաքի էմիր Յադի-Սիանը սպասում էր Մոսուլի էմիր Կիրբուղայի, Հալեպի էմիր Ռիդվանի եւ Դամասկոսի էմիր Դուկակի օգնությանը, բայց մահմեդականների երկպառակությունների պատճառով այդ օգնությունը այդպես էլ գլուխ չեկավ: Երկարատե պաշարումից հետո, 1098 թ. հունիսի 3-ին, Անտիոքի պարիսպների աշտարակներից մեկի հրամանատարը, որը մահմեդականացած մի հայ էր՝ Փիրուզ անունով, բացեց դարպասները խաչակիրների առջեւ, եւ վերջիններս գրավեցին ֆաղաֆը: Երկու օր անց Կիրբուղայի գլխավորած բանակը

վերջապես հասավ Անտիոք, եւ երեկվա պաշարողները միանգամից հայտնվեցին պաշարչալի վիճակում: Այնուամենայնիվ հունիսի 28-ին խաչակիրները հանդուգն հակահարձակմամբ ջախջախեցին թուրքական գերակշիռ ուժերը, եւ մահմեդական աշխարհում անպարտելիների համբավ ձեռք բերեցին, ինչը որոշակի չափով նպաստեց նրանց հետագա հաջողություններին: Քաղաքին տիրելու հարցում Բոհեմունդ Տարենտացու եւ Ռայմունդ Սենժիլցու միջեւ ծագած հակամարտությունն ավարտվեց առաջինի հաղթանակով, որը եւ հռչակվեց Անտիոքի պրինց, դառնալով Արեւելքի երկրորդ խաչակրաց պետության հիմնադիրը:

Երկար սպասումից հետո, 1099 թ. հունվարին խաչակրաց բանակը վերջապես վերսկսեց դեպի Երուսաղեմ ընթացող արշավանքը: Այն գլխավորում էր Ռայմունդ Սենժիլցին, որին միացել էին Գոդֆրուա Բուլոյնացին, Տանկրեդը եւ այլ նշանավոր հրամանատարներ: Բալդուին Բուլոյնացին եւ Բոհեմունդ Տարենտացին, կարծես թե արդեն ավարտած համարելով խաչակրի իրենց առաքելությունը, մնացել էին իրենց նորաստեղծ պետություններում: Չհանդիպելով որեւէ լուրջ դիմադրության, այլեւ ընդհակառակը, երբեմն նաեւ օգնություն ստանալով Սիրիայի եւ Լիբանանի զանազան մահմեդական էմիրներից, խաչակրաց բանակը ամռան սկզբներին հասավ Երուսաղեմ եւ ավելի քան մեկամսյա պաշարումից հետո, հուլիսի 15-ին, այն գրավեց Ֆարսիմյան կառավարիչ Իֆթիխար ալ-Դաուլայի ձեռքից: Հետեւեց սուկալի մի նախնիր, որին զոհ գնացին ֆաղափ տասնյակ հազարավոր մահմեդական եւ հրեա բնակիչներ, ինչը թերեւս ֆրիստոնեական մոլեռանդության ամենասահմոկեցուցիչ դրվագն է ողջ պատմության ընթացքում: Քաղաքի գրավման ժամանակ հատկապես աչքի ընկավ Գոդֆրուա Բուլոյնացին, որը եւ բարոնների կամքով ընտրվեց Երուսաղեմի տիրակալ: Գոդֆրուան հրաժարվեց առաջարկված թագավոր տիտղոսից, պատճառաբանելով, որ չի կարող թագ կրել մի ֆաղափում, որտեղ Քրիստոսը փշե թագ է կրել, եւ բավարարվեց Սուրբ Գերեզմանի պաշտպան (Advocatus Sancti Sepulchri) տիտղոսով: Այսպիսով, Արեւելքում հիմնադրվեց խաչակրաց երրորդ պետությունը:

Եթե հաշվի առնենք, որ Տանկրեդն էլ իր հերթին ստացավ Երուսաղեմի պետության կազմի մեջ մտնող Գալիլեայի կոմսությունը, ապա սեփական պետություն հիմնադրելու հավակնություն ունեցող նշանավոր խաչակիր

առաջնորդների շարքում միակ չբավարարված անձը մնաց Ռայմոնդ Սեն-ժիլցին: Անտիոքում Բոհեմունդի դեմ խաղը տանույ տալուց հետո, Պաղեստինում նույնպես նրան չհաջողվեց իրականացնել իր երազանքը: Գողֆրուան նրան խանգարեց անգամ տիրել Ասկալոնին, որի մահմեդական բնակչությունը պատրաստ էր ֆաղաֆը զիջել Ռայմոնդին: Վերջինս, բոլորից խոտված, հավաֆեց իր զորքերը եւ շարժվեց դեպի Լիբանանի լեռները, ի հակադրություն մյուս խաչակիրների դառնալով բյուզանդական ֆաղաֆակա-նության լծորդը եւ հուսալով կայսրության օգնությամբ սեֆական պետու-թյուն հիմնադրել միջին Ռոմանեսի հովտում: 1099 թ. սեպտեմբերին նա ժա-մանեց դեռեւս Երուսաղեմի արշավանքի հանապարհին իր կողմից գրավ-ված Լաթաֆիա եւ Տարտուս ֆաղաֆները, որոնք նա կառավարում էր բյու-զանդական կայսեր անունից: 1101 թ. հունիսին Ռայմոնդը մեկնեց Կոս-տանդնուպոլիս եւ միացավ առաջին խաչակրաց արշավանքի երկրորդ հսկա-յազանգված ալիքին, որը կազմված էր հիմնականում լոմբարդացիներից, ֆրանսիացիներից ու գերմանացիներից: Ջինյալ խաչակիրների եւ ուխտա-վորների շուրջ հարյուրհազարանոց այդ բազմությունը, սխալ երթուղի ընտ-րելով, գլխովին ջախջախվեց հյուսիս-արեւելյան Անատոլիայի լեռներում: Ռայմոնդը, մի կերպ հողոպրելով, հասավ Կոստանդնուպոլիս, իսկ այնտե-ղից 1102 թվականին կրկին վերադարձավ Արեւելք: Ստիպված լինելով Լա-թաֆիան զիջել Անտիոքի իշխանապետությանը, փետրվարին նա վերագրա-վեց իր բացակայության ժամանակ մահմեդականների ձեռքն անցած Տար-տուսը, եւ Տրիպոլիի դեմ ձեռնարկած մի ֆանի անհաջող հարձակումներից հետո շարժվեց դեպի Հոմս, գրավելով որոշ բերդեր, որոնց թվում էր նշանա-վոր Հիսն ալ-Աֆրադը (Քրաֆ դե Շվալիե): Իսկ 1103 թվականին Տրիպոլիի դիմաց կառուցելով Ուխտավորների լեռ (Mons Peregrinus) կոչված բերդը եւ հաջորդ տարի գրավելով Տրիպոլիի եւ Բեյրութի միջեւ գտնվող Ջիբելյ (հնում՝ Բիբլոս) նավահանգիստը, նա փաստորեն հիմնադրեց մի նոր խա-չակրաց պետություն, որը հետագայում, Տրիպոլիի նվաճումից հետո (1109 թ.), պիտի կոչվեր Տրիպոլիի կոմսություն:

Խաչակրաց այս շրս պետությունները իրավական առումով բացարձա-կապես անկախ էին միմյանցից, եւ նրանց միջեւ նվիրապետական որեւէ են-թակայություն գոյություն չունեւ: Բոլոր պետություններն էլ ունեին իրենց սեֆական դրամը, սեֆական օրենսդրությունը, սեֆական դատական հա-

մակարգը եւ սեփական եկեղեցական կառույցը: Կարճ ժամանակով եւ որոշակի պատմական հանգամանքների բերումով Երուսաղեմի թագավորության գերիշխանությունն ընդունել էր միայն Տրիպոլիի կոմսությունը: Իսկ Երուսաղեմի թագավորների կողմից երբեմն ստանձնված Անտիոքի խնամակալությունը բացատրվում էր ոչ թե նրանց գերիշխանության իրավունքով, այլ Անտիոքի գահի ժառանգորդների հետ նրանց ունեցած սերտ ազգակցական կապի հանգամանքով: Ավելին, այդ պետությունները միմյանց հետ կապված չէին անգամ մշտական դաշնակցային պարտավորություններով եւ երբեմն հայտնվում էին տարբեր ֆաղափական նամբարներում: Նրանց անկախության ուշագրավ արտահայտություններից էր նաեւ այն, որ մահմեդական տիրակալների հետ նրանցից որեւէ մեկի կնքած զինադադարը չէր տարածվում խաչակրաց մյուս պետությունների վրա: Այնուամենայնիվ, շնայած իրավական հիմքերի բացակայությանը, Երուսաղեմի թագավորության բարոյական գերիշխանությունը խաչակրաց մյուս պետությունների նկատմամբ անառարկելի էր:

Արեւելում հիմնադրված խաչակրաց պետությունների պատմությունն այնքան փոխադրված է, որ արդի պատմագիտության մեջ սովորաբար ներկայացվում է համաժամանակյա շարադրանքի տեսքով: Դա ունի իր առավելությունները, որովհետեւ հնարավորություն է տալիս ըմբռնելու իրադարձությունների ծավալման ընդհանուր միտումները եւ խուսափելու ավելորդ կրկնություններից: Բայց մյուս կողմից, դրանով դժվարանում է յուրաքանչյուր պետության պատմական զարգացման ամբողջական պատկերացումը: Խաչակրաց պատմության թռուցիկ եւ տեղեկատվական բնույթ կրող շարադրանքում, ինչպիսին սույն ներածությունն է, կարծում ենք, ավելի նպատակահարմար է այդ պետություններին անդրադառնալ առանձին-առանձին, իրենց հիմնադրման թվականի հաջորդականությամբ:

3. ԵԴԵՍԻԱՅԻ ԿՈՄՄՈՒԹՅՈՒՆԸ^a

Ինչպես տեսանք, առաջին խաչակրաց արշավանքի նախօրյակին Եդեսիայի կառավարիչն էր Թորոսը: Քաղկեդոնական այդ հայ իշխանը տվյալ

^a *Եդեսիայի կոմսությունը նվիրված միակ մենագրությունը տե՛ս Amouroux-Mourad, Le Compté d'Édesse.*

պաշտոնին նշանակվել էր դեռևս 1170-ական թվականներին Փիլարոսի կողմից: Բյուզանդական կայսրությունը պաշտոնապես նանաչել էր այդ նշանակումը եւ Թորոսին շնորհել կուրոպալատ տիտղոսը: Երբ 1078 թվականին Սիրիայի սելջուկ տիրակալ Տուտուշը՝ Մելիֆշահ սուլթանի եղբայրը, գրավել էր Եդեսիան, Թորոսը կարողացել էր լեզու գտնել նրա հետ եւ պահպանել իր իշխանությունը, թեկուզեւ ֆաղափ միջնաբերդում տեղակայվել էր թուրքական մի կայսզոր՝ էմիր Բուզանի հրամանատարության ներքո: 1094 թվականին Թորոսը սպանել էր վերջինիս, եւ վտարելով թուրքական կայսզորը, կրկին դարձել էր ֆաղափի լիիրավ տերը:

Ըստ աղբյուրների՝ Բալդուինին ու նրա խաչակիրներին Թորոսը հրավիրել էր ընդամենը վարձկանի կարգավիճակով, որոնց միջոցով հույս ուներ դիմակայել թուրքերի ահագնացող ննշմանը եւ մասնավորապես ազատվել Սամոսատի էմիր Բալդուկի հաճախակի դարձած հրոսակային հարձակումներից: Այդ պատճառով թե՛ նա, թե՛ ֆաղափի երեւելիներն ու բնակչությունը, մեծ խանդավառությամբ ու հանդիսություններով դիմավորեցին խաչակիրներին, նրանց մեջ տեսնելով նախախնամության կամով հայտնված ազատարարների: Բալդուինը միանգամից չբացահայտեց իր հետին մտադրությունները, այլ ընդհակառակը, սկզբում բարեխղճորեն համագործակցեց Թորոսի հետ: Նրա առաջին գործը Եդեսիայում եղավ 1098 թ. փետրվարի երկրորդ կեսին Թորոսի խնդրանքով Սամոսատի դեմ ձեռնարկված մի արշավանքը, որին, բացի իր մի բոտ ասպետներից, մասնակցում էին նաեւ Եդեսիա ֆաղափի եւ երկրամասի հազարավոր հայ աշխարհագորայիներ, ինչպես նաեւ Կարկառի հայ իշխան Կոստանդինն՝ իր գորախմբով: Արշավանքն աղետալի վախճան ունեցավ, եւ հազարի չափ հայ աշխարհագորային արի ֆաշվեց: Չնայած դրան, Բալդուինին հաջողվեց Սամոսատի մերձակայքում գրավել ու ամրացնել մի գյուղ, որի շնորհիվ թուրքերի հրոսակային հարձակումները նվազեցին, եւ դա զգալիորեն բարձրացրեց նրա հեղինակությունը: Պարտության մեղքը բարդելով հայերի վրա եւ հավանաբար Թորոսի դիրքերը թուլացած համարելով, Բալդուինը պահանջեց իշխանությունը կիսել նրա հետ: Թորոսը, ամենայն հավանականությամբ աջակցություն չգտնելով իր հայրենակիցների միջավայրում, հարկադրված էր զիջել: Անզավակ լինելով, նա որդեգրեց Բալդուինին, նրան պաշտոնապես հռչակելով իր օրինական ժառանգորդը: Սակայն Բալդուինը, որի նպատակը

երկրամասի միահեծան տերը դառնալն էր, չբավարարվեց այդքանով: Օգտվելով Թորոսից դժգոհ տարրերի՝ ֆաղափ երեւելիների եւ Կարկառի իշխան Կոստանդնի սադրանով ծագած ժողովրդական խռովությունից, նա Թորոսին մատնեց ամբոխի հաշվեհարդարին, եւ մարտի 10-ին եղեսացիների կողմից հրավիրվեց ստանձնելու Եդեսիայի կառավարումը՝ կոմսի տիտղոսով:

Սկզբից եւեթ, եւ այնուհետեւ իր գոյության ողջ ընթացքում, Եդեսիայի կոմսությունն իր բնույթով էսպես առանձնանում էր իսաչակրաց մյուս պետություններից: Այն ոչ թե զուտ լատինական, այլ որոշակի առումով ֆրանկո-հայկական մի պետություն էր, եւ այդպես էլ կոչվում է շատ ուսումնասիրողների կողմից: Դա առաջին հերթին բացատրվում է այն հանգամանքով, որ երկրամասի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը: Բնակչության մյուս նշանակալից տարրը՝ հակոբիկ եւ նեստորական ասորիները, զուրկ լինելով ազնվական եւ զինվորական դասից, չունեին հայերի կշիռն ու ազդեցությունը: Անգամ իսաչակիրների տիրապետության շրջանում՝ բազմաթիվ հայ իշխաններ պահպանում էին սեփական կալվածքներն ու բերդերը եւ իրենց զորախմբերով մասնակցում ֆրանկների մղած պաշտպանական եւ հարձակողական պատերազմներին: Նշանակալից էր նաեւ հետեւակ հայ աշխարհագորայիների դերը, մանավանդ հակառակորդի կողմից իրենց ֆաղափների պաշարումների ժամանակ: Չնայած Եդեսիայում լատինական եւ ասորական եպիսկոպոսական աթոռների առկայությանը, մեծ էր նաեւ ֆաղափի հայ եպիսկոպոսի հեղինակությունը: Բացի այս ամենից, Եդեսիայի առաջին երեք կոմսերը, ինչպես կտեսնենք, ամուսնացած էին հայ իշխանադուստրերի հետ, իսկ չորրորդ կոմսը՝ Ժոսիկն Կրոսերը, կիսով չափ հայ էր, լինելով Կիլիկիո հայ իշխաններ Թորոս Ա-ի եւ Լեոն Ա-ի փրոջ որդին:

Բալդուինը հաջող սկսեց իր գահակալությունը եւ անմիջապես բավականին ընդարձակեց կոմսության տարածքը, ինչը նշանակալիորեն բարձրացրեց նրա հեղինակությունը իր նոր հպատակների աչքում: Բալդուինը սարսափած Եդեսիայում ֆրանկների իշխանության հաստատումից, Սամոսատ ֆաղափը վանառեց Բալդուինին, իսկ ինքը, ընտանիքի եւ թիկնապանների հետ միասին, ապաստան գտավ կոմսի արժունիքում: Այնուհետեւ Բալդուինը գրավեց Եդեսիայից հարավ-արեւմուտք ընկած զուտ մանվեղական Սրուն ֆաղափը եւ Եփրատի նշանավոր գետանցի վրա գտնվող Պիրե-

նիկ բերդաֆաղաքը, որը թողեց Ապլղարիպ հայ իշխանի տնօրինության տակ: Կարետոս ռազմավարական նշանակություն ունեցող այս ֆաղաֆների գրավումով Բաղդուինը փաստորեն ամբողջացրեց կոմսության ձեռավորումը եւ լիովին նվիրվեց երկրի ներքին խնդիրների լուծման գործին:

Նախեսառաջ նա կարգավորեց իր անձնական գործերը եւ ամուսնացավ շրջակա գավառներից մեկի մի հարուստ հայ իշխանի դստեր՝ Արդայի հետ: Լատին աղբյուրները այդ իշխանին տալիս են Taphnouz, Taffroc կամ Tatos անունը, որը արդի հետազոտողները նույնացնում են Մարաշի Թաթուլ իշխանի կամ Կոստանդին Ռուբինյանի ենթադրյալ եղբայր Թորոսի անվան հետ: Սակայն, ինչպես իր վերջերս լույս ընծայված գրքում, ասորական աղբյուրների հիման վրա, համոզիչ կերպով ապացուցել է Ժերար Տետեյանը, խոսքը վերաբերում է վերոհիշյալ Կոստանդին Կարկառացի իշխանի եղբայր Դավթուկին^ա: Բաղդուինի հաջորդ մտահոգությունը իր նորաստեղծ կոմսությունում լատինական տարրի ուժեղացումն էր: Նրա հաղթանակների համբավը սկսել էր դեպի Եդեսիա ձգել բազմաթիվ ազնվազարմ խաչակիր ասպետների, որոնք լքելով Անտիոքի պաշարումը, եկել էին իրենց բախտը կապելու հաջողակ կոմսի հետ: Բաղդուինը ֆաշալերեց այդ գործընթացը, նրանց շոյլ նվերներ բաշխելով եւ ընդարձակ կալվածքների արժանացնելով: Իսկ ֆանի որ, ինչպես տեսանք, երկրամասի տարածքների մեծ մասը գտնվում էր հայ իշխանների տնօրինության տակ, բնականաբար այդ շնորհներն արվում էին վերջիններիս հաշվին: Ուժեղացնելով լատինական տարրը, Բաղդուինը կամաց կամաց սկսեց երես թեֆել երեկվա իր հայ դաշնակիցներից եւ դադարեց անգամ խորհրդակցել նրանց հետ: Քաղաքի երեւելիները չափազանց արագ զղջացին Թորոսի հանդեպ գործած իրենց դավաճանության համար եւ 1098 թվականի վերջերին սկսեցին դավեր նյութել՝ Բաղդուինից ազատվելու նպատակով: Սակայն դավադրությունը բացահայտվեց, եւ Բաղդուինը դաժան հաշվեհարդար տեսավ նրա մասնակիցների նկատմամբ:

Իսկ մինչ այդ, արտաքին ճակատում Բաղդուինն արձանագրել էր եւս մեկ փայլուն հաջողություն՝ մայիս ամսին վանելով Մոսուլի էմիր Կիրբուդայի շուրջ ֆսանհազարանոց բանակի հարձակումները, երբ վերջինս Ան-

^a *St u Dédéyan*, Les Arméniens, p. 1036-1038, 1210-1217.

տիոբի մահմեդականներին օգնության գնալու հանապարհին որոշել էր վերացնել իր սահմանների մոտակայքում ստեղծված խաչակրաց պետությունը, այդ նպատակով երեք շաբաթով պաշարելով Եդեսիան: Կիրբոտլայի այս անհաշվենկատ հապաղումը թերևս վնասկան նշանակություն ունեցավ Անտիոբի նակատագրի հարցում եւ հանդիսացավ Բաղդուինի ինֆնագլուխ ձեռնարկի յուրօրինակ արդարացումը խաչակրության ընդհանուր գործի տեսակետից: Բաղդուինի գործունեության եղեսական շրջանի վերջին ուշագրավ դրվագը կապված է Մելիտենեի իրադարձությունների հետ: 1100 թ. հուլիսին վերջինիս հայ իշխան Գաբրիելի խնդրամբով ֆաղափն օգնության փութացող Անտիոբի պրինց Բոհեմունդ Տարենտացին գերի ընկավ Սեբաստիայի էմիր Մելիք Ղազի Գյումուշտեզին Իբն-Գանիշմենդի ձեռքը: Ստանալով այդ լուրը, Բաղդուինը հարյուր ֆառատն ասպետներով սուրաց դեպի Մելիտենե, բայց չկարողացավ փրկել Բոհեմունդին, քանի որ Գյումուշտեզինը, իր շրթայակապ գերու հետ միասին, նահանջել էր իր երկիրը: Այնուամենայնիվ նրա արշավանքը բոլորովին անօգուտ չանցավ: Գաբրիելը ճանաչեց Բաղդուինի գերիշխանությունը, եւ վերջինիս թողած ֆրանկ կայսզորի օգնությամբ մի քանի շաբաթ անց հաշողությամբ վանեց Գանիշմենդյանների մի նոր հարձակումը: Այս արշավանքի շնորհիվ, այսպիսով, Բաղդուինը Եդեսիայի կոմսության ազդեցությունը տարածեց մինչեւ պատմական Փոֆր Հայքի սահմանները: Վերադառնալով Մելիտենեից, նա Երուսաղեմից ստացավ իր եղբայր Գողթրուայի մահը ծանուցող մի նամակ, որը միաժամանակ իրեն հրավիրում էր ժառանգելու վերջինիս թափուր մնացած գահը: 1100 թ. հոկտեմբերի 2-ին Բաղդուինը Եդեսիայի կոմս նշանակեց իր ազգական Բաղդուին Բուրգացուն եւ մեկնեց Երուսաղեմ՝ դառնալու Սուրբ Երկրի առաջին օծյալ խաչակիր թագավորը:

Բաղդուին Բուրգացին կամ Եդեսիայի կոմս Բաղդուին II-ը, որը ոչ միայն իր նախորդի ազգականն էր, այլեւ նրա հավատարիմ զինակիցը, հաշողությամբ շարունակեց նրա գործը կոմսության ամրապնդման եւ տարածֆային ծավալման ուղղությամբ: Ներքին ֆաղափականության հարցերում նա թերևս ավելի նկուն էր, քան առաջին կոմսը, ավելի հանդուրժող բնիկ տարրերի՝ հայերի եւ ասորիների նկատմամբ: Շարունակելով իր նախորդի հաստատած ավանդույթը, Բաղդուին Բուրգացին, Եդեսիայի գահին բազմելուց անմիջապես հետո, նույնպես ամուսնացավ մի հայ իշխանուհու հետ, որը

Գաբրիել Մելիտենացու դուստր Մորֆիան էր: Ի դեպ, պետք է նկատի ունենալ, որ այս կարգի ամուսնությունները, բացի ֆաղափական նկատառումներից, այն է՝ հայերի դաշնակցությունը ապահովելու հրամայականից, հետապնդում էին նաև զուտ նյութական շահեր, քանի որ դրանք օժիտի ձևով հսկայական հարստություններ ու կալվածքներ էին բերում ֆրանկ իշխաններին: Իսկ ֆեոդալական սանդղակի ավելի ցածր աստիճանների վրա գտնվող լատին ազնվականների դեպքում այդ տիպի ամուսնությունները, որոնք շատ տարածված էին, հայկական տիրույթները ֆրանկներին փոխանցելու օրինական նանապարհն էին հանդիսանում:

Բաղդուին II-ի առաջին գործերից մեկը եղավ Եղեսիայի կոմսությունում մի նոր վարչատարածքային միավորի, այսպես կոչված, Թլպաշարի սենյորության ստեղծումը, որի կազմի մեջ էին մտնում Եփրատի արեւմտյան ափի գավառները՝ Թլպաշար, Տլոմ, Այնթապ, Ռավանդան, Կուրուս ֆաղափներով: Ռազմավարական առումով այս նոր տարածքային միավորի խնդիրն էր դիմակայել Հալեպի եւ Անատոլիայի թուրքերի ճնշումներին: Թլպաշարի սենյորության տնօրինումը Բաղդուին Բուրգանցին հանձնարարեց իր ազգականներից մեկին՝ Ժոսլին Կուրտենեցուն, որը նշանակալից դեր պիտի խաղար կոմսության հետագա պատմության մեջ: Նշենք, ի դեպ, որ Ժոսլինը նույնպես ամուսնացավ մի հայ իշխանադատեր՝ Կիլիկիո իշխաններ Թորոս Ա-ի եւ Լեոն Ա-ի ֆրոջ հետ: Այս հանգամանքը կարեւոր նշանակություն պիտի ունենար իսաչակիրների եւ հայերի հարաբերությունների տեսակետից, քանի որ, ինչպես կտեսնենք, Կիլիկիո հայկական իշխանության եւ Անտիոքի իշխանապետության միջեւ ծագած հակամարտությունների ընթացքում Եղեսիայի կոմսությունը համարյա միշտ հանդես եկավ հայերի դաշնակցի դերում:

Այսպիսով, Ժոսլին Կուրտենեցու զորակցությամբ ապահովվելով իր թիկունքը, Բաղդուին II-ն ամբողջությամբ ներհաշվեց կոմսության արեւելյան սահմաններին Դիարբեկի եւ Մոսուլի էմիրությունների դեմ մղվող պայքարի հորձանուտը: 1101 թ. հունվար-փետրվար ամիսներին, սկզբնական անհաջողությունից հետո, նա հաղթականորեն վանեց Հիսն-Քեֆայի Արտուխյան էմիր Սոմանի հարձակումը Սրուհի վրա: 1103 թ. նոյեմբերին արշավեց դեպի Ջազիրայի կողմերում գտնվող Կալա-Ջաբար ու Թակկա ֆաղափները, եւ այդ նակատում ծավալած եռանդուն գործողությունների արդյունքում բավականին ընդարձակեց կոմսության սահմանները: Նրա իշ-

խանությունը տարածվեց Մարդինի մերձակայքում գտնվող Թլմոզ եւ Թլկուրան ամրոցների, ինչպես նաեւ Շաբախտանի գավառի վրա: Այս հաջողություններին, իհարկե, նպաստեցին մահմեդականների համբարում առկա հակասություններն ու երկպառակությունները: Ժուլին Կուրտենեցին, իր հերթին, կարեւոր ավանդ ներդրեց կոմսության տարածքային ընդարձակման գործում: 1104 թվականին նա բյուզանդացիներից խլեց Մարաշ ֆաղաֆը, այդպիսով ստեղծելով Եդեսիայի խաչակրաց պետությանը ենթակա Մարաշի կոմսությունը: Ժուլինը եռանդուն գործողություններ ձեռնարկեց նաեւ Հալեպի էմիրության դեմ, անընդհատ ասպատակելով եւ ավարի մատնելով նրա հյուսիսային սահմանամերձ գավառները:

1104 թվականի գարնանը Բաղդուին Բուրզացին, Ժուլին Կուրտենեցին, ինչպես նաեւ նրանց միացած Անտիոքի պրինց Բոհեմունդը եւ Տանկրեդը, պատկառելի մի բանակով եւ հայ աշխարհագրայինների ընկերակցությամբ, հարձակվեցին Եդեսիայից շուրջ հիսուն կիլոմետր հարավ-արեւելք ընկած Խառան ֆաղաֆի վրա, որը չափազանց կարեւոր նշանակություն ուներ մահմեդականների համար, քանի որ այն, ըստ էության, Սիրիայի եւ հյուսիսային Միջագետքի հաղորդակցությունն ապահովող վերջին հուսալի հանգրվանն էր: Այդ պատճառով մահմեդական էմիրները, մի պահ մոռանալով իրենց ներքին երկպառակությունները, միասնական ճակատ կազմեցին եւ Բալիկ գետի ափին տեղի ունեցած վճռական ճակատամարտում ջախջախեցին ֆրանկներին: Բաղդուին II-ը եւ Ժուլինը գերի ընկան, իսկ Բոհեմունդի եւ Տանկրեդի բանակները, համեմատաբար փչ կորուստներ տալով, նահանջեցին: Ոգետրված այդ հաջողությունից, թուրքերը շարժվեցին դեպի Եդեսիա եւ հունիս-հուլիս ամիսներին շուրջ տասնհինգօրյա պաշարումով փորձեցին գրավել ֆաղաֆը: Սակայն Տանկրեդին հաջողվեց համախմբել խաչակիրների ու հայ աշխարհագրայինների ուժերը եւ վանել այդ հարձակումը, որից հետո մահմեդականները վերադարձան իրենց երկրները:

Բաղդուին Բուրզացու եւ Ժուլին Կուրտենեցու գերության ընթացքում, որը տևեց շուրջ չորս տարի, Անտիոքի պրինց Բոհեմունդի հանձնարարությամբ Եդեսիայի կառավարումն ստանձնեց նրա ֆեոդոդի Տանկրեդը: Երբ 1104 թվականի վերջերին Բոհեմունդը վերադարձավ Եվրոպա, Տանկրեդը դարձավ Անտիոքի իշխանապետության խնամակալը, իսկ Եդեսիայի կառավարումը նա փոխանցեց իր ազգական Ռիչարդ Սալերնացուն: Տանկ-

րեղն ու Ռիչարդը թեև ընդհանուր առմամբ բարեխղճորեն կատարեցին մահմեդականների մշտական հարձակումներից կոմսության պաշտպանության գործը, սակայն իրենց հարստահարություններով ու դաժան վարվեցողությամբ լուրջ դժգոհություններ առաջացրին տեղի բնակչության շրջանում:

1108 թվականին, հսկայական փրկագին վճարելով, Բալդուին II-ը եւ ժոսլինը վերջապես ազատվեցին գերությունից: Վերադառնալով հայրենիք, սակայն, նրանք անակնկալի մատնվեցին, տեսնելով, որ Տանկրեդն ամենեւին մտադիր չէ իրենց վերադարձնել Եդեսիայի կոմսությունը, որը նրան հսկայական հասույթ էր ապահովում: Ճարահատյալ, Բալդուին II-ը դաշնակցեց Մոսուլի արքայի Զավալիի եւ Քեսունի ու Ռապանի իշխան Գող Վասիլի հետ եւ փորձեց գեներալ ուժով վերականգնել իր իշխանությունը: Սակայն բախումը կանխվեց Անտիոքի պատրիարք Բեռնարդի միջնորդությամբ, եւ Տանկրեդը Եդեսիան վերադարձրեց Բալդուինին: Բայցեւայնպես հաշտությունը երկար չտևեց, եւ շուտով, 1108 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, Անտիոքի իշխանապետության եւ Եդեսիայի կոմսության միջև իսկական պատերազմ ծագեց, որի ընթացքում Տանկրեդը դաշնակցել էր Հալեպի էմիր Ռիդվանի, իսկ Բալդուին Բուրգացին՝ Մոսուլի արքայի Զավալիի հետ: Ֆրանկո-մահմեդական երկու բանակների վնասված անկատարմամբ տեղի ունեցավ Թլպաշարի մոտակայքում, եւ Տանկրեդը հաղթող դուրս եկավ: Ժոսլինը փակվեց Թլպաշարի իր բերդում, իսկ Բալդուինը ապաստան գտավ Տլուքի կամ Ռավանդանի կողմերում, սակայն Տանկրեդը շարունակեց նրանց հետապնդումը:

Լսելով Տանկրեդի հաղթանակի լուրը եւ կարծելով, որ Բալդուինի իշխանությունն ավարտված է, քանի որ ըստ շուկների նա նույնիսկ սպանված էր համարվում, Եդեսիայի հայերը որոշեցին թոթափել ֆրանկների լուծը, չկամենալով կրկին հայտնվել Տանկրեդի եւ Ռիչարդի վայրագ տիրապետության ներքո: Սակայն դավադրությունը դեռևս գործի չդրված, քաղաքում հայտնվեցին Բալդուինն ու ժոսլինը եւ խստագույն պատիժների ենթարկեցին նրա մասնակիցներին, ինչը ծանր անդրադարձ ունեցավ հայերի ու ֆրանկների սերտ համագործակցության եւ փոխադարձ վստահության վրա:

1110 թ. ապրիլին Մոսուլի նոր արքայի Մավդուդը, որը Սելջուկյան սուլթանի հանձնարարությամբ ստանձնել էր խաչակիրների դեմ մահմեդականների սրբազան պատերազմի առաջամարտիկի դերը, Խլաթի էմիր Սուլ-

ման ալ-Կուտբի Շահարմենի եւ Մարդինի Արտոմյան էմիր Իլ-Ղազիի բանակների աջակցությամբ, պաշարեց Եդեսիան եւ սկսեց ամայացնել շրջակա գավառները: Ի պատասխան Բաղդադին Բուրզացու օգնության խնդրանքի, որը Երուսաղեմի թագավորին էր փոխանցվել Սուրբ Երկիր փութացած ժուլին Կուրտենեցու կողմից, Բաղդադին I-ը շտապ համախմբեց Երուսաղեմի թագավորության, Տրիպոլիի կոմսության, Անտիոքի իշխանապետության, ինչպես նաեւ հյուսիսային Ասորիքի հայ իշխանների ուժերը եւ հունիսի վերջերին հասավ Եդեսիա: Խաչակրաց բանակի մոտենալուն պես Մավրոյը վերացրեց ֆաղափի պաշարումը եւ նահանջեց դեպի Խառան, հուսալով հակառակորդին ներֆաշել նոր արկածախնդրության մեջ եւ կրկնել մահմեդականների 1104 թ. հաջողությունը: Սակայն իրենց երկրներում ծագած խնդիրների պատճառով Տանկրեդը եւ Բաղդադին թագավորը ստիպված էին դադարեցնել թշնամու հետապնդումը եւ ետ վերադառնալ: Կոմսության անդրեփրատյան տարածքների պաշտպանությունն այլեւս անհույս համարելով, թագավորն ու կոմսը որոշեցին նրանց ողջ գյուղական բնակչությունը տեղափոխել Եփրատի արեւմտյան ափը, արեւելքում պահպանելով միայն ամրացված Եդեսիա եւ Սուրբ ֆաղափները, ինչպես նաեւ մի քանի բերդեր: Եվ այսպես, անդրեփրատյան գավառների ողջ բնակչությունը, հիմնականում հայ, նահանջող ֆրանկ բանակի հետ շարժվեց դեպի Եփրատ: Երբ բանակն արդեն անցել էր գետի մյուս կողմը, վրա հասած Մավրոյը սրի մատնեց անզեն ու անպաշտպան մարդկանց այդ հսկայական բազմությունը: Խաչակրաց պատմության նորագույն ուսումնասիրություններում այս աղետը երբեմն կոչվում է «հայկական կոտորածներ» բազմանշանակ անունով:

1111 թվականի գարնանը Մավրոյը, մի ավելի լայն մահմեդական կռաւիցիայի գլուխ անցած, ձեռնարկեց, այսպես կոչված, իր երկրորդ հակախաչակրությունը: Եդեսիայի եւ Թլպաշարի ապարդյուն պաշարումներից հետո մահմեդական բանակը շրջվեց դեպի Հալեպի էմիրության եւ Անտիոքի իշխանապետության սահմանամերձ գոտին: Երուսաղեմի Բաղդադին I թագավորին նորից հաջողվեց համախմբել խաչակրաց ուժերը, որոնց միացան նաեւ Թորոս Ռուբինյանի, Օշին Լամբրոնացու եւ Գող Վասիլի գորախմբերը: Մահմեդական եւ ֆրիստոնյա բանակների դիմակայությունը տեղի ունեցավ Որոնտես գետի ափին, Շայգար ֆաղափի դիմաց, 1111 թ. սեպտեմբեր ամսին: Սակայն գործը չհասավ վեհական հակառակմարտի, եւ ներքին տարա-

ձայնություններից ու Հալեպի էմիրի կրկնակի խաղերից թուլացած մահմեդական բանակը ետ դարձավ: 1112 թ. ապրիլին Մավդուդը երրորդ անգամ հարձակվեց Եդեսիայի կոմսության վրա, բայց չկարողանալով հանկարծակիի բերել ֆաղաֆը, շրջվեց դեպի հյուսիս, Հայոց Միջագետքի կողմերը, որից հետո նորից փորձեց պաշարել Եդեսիան: Այս անգամ ֆաղաֆի որոշ հայ բնակիչներ կապի մեջ մտան Մավդուդի հետ եւ նրա զինվորներին հանձնեցին Եդեսիայի պարսպի աշտարակներից մեկը: Ժոպլին Կուրտենեցու ետանդուն ջանքերի շնորհիվ վտանգը կանխվեց, եւ Մավդուդը նորից ձեռնունայն վերադարձավ իր երկիրը: Ինչպես նախորդ դեպքերում կասկածյալ հայերը դաժան պատիժների ենթարկվեցին, իսկ մյուս տարվա գարնանը, մահմեդականների հետ դավադրական կապի մեջ լինելու մի նոր ամբաստանությամբ, Եդեսիայի հայ բնակչության զգալի մասը աֆսորվեց Սամոսատ, միայն ամիսներ անց հնարավորություն ստանալով ետ վերադառնալու:

1112-1113 թվականներին Եդեսիայում եւ շրջակա երկրներում տեղի ունեցան որոշ իրադարձություններ, որոնք իրենց շոշափելի ազդեցությունը պետք է թողնեին կոմսության հետագա կյանքի վրա: Մեկը մյուսի ետեւից մահացան այնպիսի ընդգծված անհատականություններ, ինչպիսիք էին Քեսունի եւ Ռապանի իշխան Գող Վասիլը, Անտիոքի պրինց Տանկրեդը եւ Հալեպի էմիր Ռիդվանը: Իսկ Բալդուին Բուրգացին գժովեց ժոպլին Կուրտենեցու հետ եւ նրա հարուստ սենյորությունը յուրացնելու նպատակով նրան վռնդեց իր երկրից: Վերջինս ապաստան գտավ Երուսաղեմի թագավորությունում եւ Բալդուին I-ից որպես կալվածք ստացավ Գալիլեայի կոմսությունը: 1113 թ. սեպտեմբերին Դամասկոսում իսմայելացիների ձեռնով սպանվեց հակախաչակրության դրոշակակիր Մավդուդը, որն այս անգամ օգնության էր եկել ֆաղաֆի աթաբեկ Տուղտեզինին: Մավդուդի՝ թեկուզեւ մինչեւ վերջ իրենց նպատակին չհասած արշավանքները ապացուցեցին երկու բան՝ նախ, որ մահմեդականների մոտ սկսում էր հասունանալ խաչակիրների դեմ միասնական ճակատի ստեղծման եւ սրբազան պատերազմ մղելու գիտակցությունը, եւ երկրորդ, որ Եդեսիայի կոմսությունը ռազմական տեսակետից այլևս լուրջ խոչընդոտ չէր Սիրիայի եւ Հյուսիսային Միջագետքի մահմեդական էմիրությունների հաղորդակցության ու միավորման ճանապարհին:

1114 թ. մայիսին Մոսուլի նոր էմիր Ակ-Սունկուր Բուրսուկին, շարունակելով իր նախորդի ֆաղափականությունը, տասնհինգ հազարանոց մի զորաբանակով ներխուժեց Եդեսիայի կոմսության սահմանները, բայց նորից չկարողանալով գրավել երկրի գլխավոր ֆաղափները, բավարարվեց Եդեսիայի, Սրունի և Սամոսատի շրջակայքի ավերումով: Ռապանի և Քեսունի նոր իշխանը՝ Վասիլ Տղան, որը շարունակ ենթարկվում էր Անտիոքի իշխանապետության ոտնձգություններին, առիթը հարմար նկատեց ազատվելու ֆրանկների ճնշումից և ճանաչեց Բուրսուկիի գերիշխանությունը: Այս անգամ եւս մահմեդական բանակը ներքին տարածայնությունների հետեւանֆով չկարողացավ կատարել իր առաքելությունը և հեռացավ կոմսության սահմաններից: Վասիլ Տղան մնաց մեն-մենակ Բալդուին Բուրգացու վրեժխնդրության դեմ: 1116 թվականին նա հարկադրվեց իր իշխանությունը հանձնել Եդեսիայի կոմսին և ապաստան գտնել Կոստանդնուպոլիս արքունիքում: Բալդուինի հաջորդ գոհը դարձավ Պիրենիկի հայ իշխան Ապլդարիպը, որը մեկ տարի տեսած ֆաջարի դիմադրությունից հետո նույնպես հարկադրվեց իր իշխանությունը զիջել Բալդուինին և հեռանալ Կիլիկիա (1117թ.): Նույն տարվա ընթացքում Եդեսիայի կոմսը զավթեց նաև Գող Վասիլի եղբայր Բագրատին պատկանող Կուրուսի իշխանությունը և Կարկառի հայ իշխան Կոստանդնի տիրույթները, այսպիսով ըստ էության արմատախիլ անելով միջին Եվրոպայի հովտի վերջին հայկական պետական կազմավորումները: Ինչպես պատկերավոր կերպով նշում է Մատթեոս Ուռհայեցին, Բալդուինը «մի առ մի ֆակեաց զամենայն իշխանսն Հայոց կարգա՝ առաւել քան զտունն Պարսից, և այսպիսի օրինակաւ հալածականս արար զիշխանսն Հայոց՝ զայն, որ մնացեալ էին ի կատաղի ազգէն Թուրքաց»^a: Սմբատ Սպարապետին վերագրվող ժամանակագրությունն իր գնահատականի մեջ ավելի խիստ է. «Եւ այնպէս նեղեցին կոմսերն Ֆռանգաց զիշխանսն Հայոց, մինչեւ հանին ի գաւառաց և յամրոցաց իւրեանց, և ոչ ոք կարէ պատմել զդառնութիւն, զոր ածին Ֆռանգնին ի վերայ հայոց»^b: Մերձեվրատյան հայկական իշխանությունների վերացումը, սակայն, կողմնակիորեն նպաստեց Ռուբինյան իշխանության զորացմանը, որովհետև

^a *Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 338:*

^b *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 145:*

նրանց մարդկային զանգվածների և զինական ուժերի մի մասը տեղափոխվեց Կիլիկիա:

1118 թվականին, Բաղդուին I Բուլոյնացու մահից հետո, բարոնների որոշմամբ Երուսաղեմի նոր թագավոր ընտրվեց Եդեսիայի կոմս Բաղդուին II Բուրգացին: Եդեսիայի կառավարումը մի քանի ամսով հանձնարարելով Պիրենիկի տեր Գալերանին, Բաղդուինը փոքրաց Երուսաղեմ և ապրիլի 14-ին թագադրվեց Սուրբ Գերեզմանի եկեղեցում: Այդ ընթացքում նա հաշտվեց Ժուսլին Կուրտենեցու հետ և նրան իր փոխարեն Եդեսիայի կոմս նշանակեց: Ժուսլինն, ըստ երեւոյթին, անմիջապես հրաժարվեց հայերի նկատմամբ իր նախորդի վարած բիրտ ֆաղափականությունից, ինչի վկայությունն է մասնավորապես այն փաստը, որ արդեն 1122 թվականին Եդեսիայի կառավարչի պաշտոնում մենք տեսնում ենք Վասիլ անունով մի հայ իշխանի: Եդեսիայի արտաքին պարսպի աշտարակներից մեկի վրա պահպանվել է վերջինիս հետևյալ երկաթագիր հայերեն արձանագրությունը.

ՅԱՄԻ ՇՀ. ԵՐՈՐԳԻ ԱՌԱՋՆԵՐՈՐԳԻ ՇՐՋԱԳԱՌԻԹԵ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՅ
 ՅԱԻՈՒՐՄ//ԲԱՐԵՊԱՇՏ ՔԱՋ ԵՒ ԱՐԻԱՅԵԱԼ ԶԱԻՐԱԿԱՆԻՆ ՔԻ ՄԵԾ
 ԿՈՄՍԻՆ ՃՈՅՄԼՆԻՆ ԵՒ Ի ՎԵՐԱԿԱ//ՅՈՒԹԵ ԱԾԱՍԵՐ ԻՇԵԱՆԻՆ ՎԱՍԼԻՆ
 ՈՐ ՈՒՆԵՐ ԶՏԵՂԱՊԱՀՈՒԹԻ ՏՈՒԿՈՒԹԵ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԻՍ
 ԵԴԵՍԵԱ//ԿԱՏԱՐԵՅԱԻ ԱՄՐԱՊԱՀԵՍՏ ԴՂԵԱԿՍ ԱՅՍ ՄԵԾԱԶԱՆ
 ԾԱԽԻԻՔ ԸՆԴ ՈՐՈՒՄ ԵՒ ՊԱՀԵՍՅԷ ԱԾ Զ//ՇԻՆՈՂՍ ՍՈՐԱ ՅԱՂԹՈՂ ԵՒ
 ԱՆՍԱՍԱՆԵԱԼ ԵՒ Ի ԳԱԼՍՏԵԱՆՆ ԻԻՐՈՒՄ ՊՍԱԿԵՍՅԷ ՓԱՌԱԻՔ
 ԱՄՄԵՆ^a.

Ժուսլին Կուրտենեցին՝ այդ «ֆաջ և արիացեալ զարականը», սակայն, ձախողությամբ սկսեց իր պաշտոնավարությունը և նույն 1122 թվականին գերի ընկավ Խարբերդի Արտոմյան էմիր Բալակ իբն-Բահրամի ձեռքը: Նրա բացակայության ժամանակ Եդեսիայի կոմսության խնամակալությունն ստանձնեց Երուսաղեմի թագավոր Բաղդուին II-ը, բայց հաջորդ տարվա ապրիլին նա նույնպես գերվեց Բալակի կողմից: Օգոստոսին, մինչ Բալակը զանվում էր Հալեպի կողմերում, եղեսացի մի խումբ հայեր խիզախաբար

^a Արձանագրությունը հրաշալի մեկնաբանություններով և ծանոթագրություններով առաջին անգամ հրատարակել է բրիտանացի հայագետ Դոուսեթը. տե՛ս Dowsett, Armenian Inscription, p. 197-227.

գրավեցին Խարբերդի միջնաբերդը, որի գնդաններում բանաարկված էին Բալդուինը և Ժոսլինը: Բալակը, փութալով Հալեպից, սեպտեմբերի 16-ին վերագրավեց միջնաբերդը, բայց մինչ այդ Ժոսլինը հայ ուղեկիցների օգնությամբ կարողացել էր նեղել պաշարման օղակը, և ժամանելով Թլպաշար, սկսել էր համախմբել ֆրանկների ուժերը: Չհասցնելով օգնության գնալ Բալդուինին, Ժոսլինը շրջվեց դեպի Հալեպի էլիտության կողմը, որն այդ ժամանակ գտնվում էր Բալակի տիրապետության տակ, և 1123-1124 թվականների ընթացքում ակտիվ գործողություններ ծավալեց մահմեդականների սահմանամերձ գավառներում, ավերելով բազմաթիվ ամրոցներ, գյուղեր ու ավաններ, հրկիզելով դաշտերի բերքն ու կտրատելով այգիները: Հալեպին օգնության հասած Բալակը 1124 թ. մայիսին Մաբբուզ ֆաղաֆում սպանվեց ապստամբած միջնաբերդից արձակված մի նետից: Նրա հաջորդ Տիմուրտաշը, հսկայական փրկագին դիմաց, օգոստոսին ազատ արձակեց Բալդուին թագավորին, այդպիսով վերջակետ դնելով այս դրամատիկ դրվագին:

Օգտվելով Մոսուլի և Հալեպի էմիր Ակ-Սոնկուր Բուրսուկիի սպանությունից հետո (1126 թ.) մահմեդական համբարում առաջացած խառնաշփոթ դրությունից, Ժոսլինը նորից ակտիվացրեց իր գործողությունները հարավի ուղղությամբ և փորձեց գրավել Հալեպը: Նույն նկատառումներով դեպի այդ ֆաղաֆն արշավեց նաև Անտիոքի պրինց Բոհեմունդ II-ը: Փոխադարձ նախանձը, սակայն, թույլ չտվեց միավորել նրանց ուժերը, և Հալեպի նվաճման այդ հարմարագույն առիթը բաց թողնվեց: Ավելին, նրանց միջև անգամ պատերազմական գործողություններ ծավալվեցին, և 1127 թվականին Ժոսլինը, թուրքական վարձկանների օգնությամբ, ասպատակեց Անտիոքի իշխանապետության տարածքը, պատրվակ բռնելով այն իրողությունը, որ Անտիոքի նախորդ պրինց Ռիչարդ Սալերնացին՝ իր երկրորդ կնոջ եղբայրը, որպես օժիտ իրեն էր խոստացել Ազազ ֆաղաֆը: Չկարողանալով գրավել այդ ֆաղաֆը, Ժոսլինը ավարի մատնեց իշխանապետության սահմանամերձ շրջանները: Հակամարտությունը դադարեց միայն Բալդուին II թագավորի եռանդուն միջամտությունից և Ժոսլինի հանկարծահաս հիվանդությունից հետո:

1131 թվականի օգոստոսին Ժոսլինը, դեպի Հալեպի կողմերը ձեռնարկած մի նոր արշավանքի ժամանակ, մասնակցելով Հալեպի և Մաբբուզի միջև գտնվող մի փոքրիկ բերդի պաշարմանը, մնաց նրա հիմքում փորվող

գեանուդու փլատակների տակ եւ ծանր վերհերով տեղափոխվեց թիկունք: Այդ պահին Դանիշմենդյան էմիր Ղազին, իսկ ըստ այլ աղբյուրների՝ Իկոնիայի Սելջուկյան սուլթանը, թափանցելով Եդեսիայի կոմսության հյուսիսային սահմանները, պաշարել էր Քեսուն ֆաղաբը: Լսելով այդ լուրը, մահամերձ կոմսը հրամայեց իրեն պատգարակով տեղափոխել Քեսուն՝ թուրքերին վանելու համար: Ժուլիմի գլխավորած զորախմբի մտտենալուն պես, անակնկալի եկած հակառակորդը վերացրեց ֆաղաբի պաշարումը եւ վերադարձավ իր երկիրը: Ստանալով հաղթանակի ցնծալի լուրը, կոմսը գոհություն մատուցեց Աստծուն եւ հենց հանապարհի եզրին, պատգարակի վրա ավանդեց իր հոգին: Ժուլիմի եւ նրան նախորդած Բալդուին II-ի մահվամբ հրապարակից հեռացավ խաչակրության առաջին սերունդը, եւ նրան փոխարինելու եկան նոր սերնդի բոլորովին այլ խառնվածքի ու բարոյականության տեր ներկայացուցիչներ:

Եդեսիայի կոմսի գահին բազմեց ժուլիմի որդի Ժուլիմ Կրասերը, որը ինչպես նշեցինք, մոր կողմից հայ էր: Վերջինիս գահակալությունն սկսվեց կոմսության համար ստեղծված չափազանց վտանգավոր իրադրության մեջ: Դեռեւս 1128 թ. հունիսին Մոսուլի աթաբեկ Իմադեդդին Ջանգի իբն-Ակ-Սոնկուրը կարողացել էր միավորել Մոսուլի եւ Հալեպի էմիրությունները, մի բան, որ բազմաթիվ փորձերից հետո այդպես էլ չէր հաջողվել նրա նախորդներին: Դրանով Եդեսիայի կոմսությունը առնվում էր ամուր ամրացման մեջ եւ լուրջ նախադրյալներ էին առաջանում խաչակրաց պետությունների դեմ միավորյալ Սիրիայի ստեղծման համար, ինչը իրականություն պիտի դառնար Ջանգիի որդի Նուրեդդինի օրոք: Բայց միառժամանակ, ներհաշված լինելով Իրաֆում եւ Իրանում ընթացող գահակալական կռիվների մեջ, Ջանգին լուրջ ուշադրություն չէր դարձնում արեւմտյան հակառի գործերին, ուստի Ժուլիմ II-ը դեռեւս մի ֆանի տարի ազատ շնչելու ժամանակ ուներ: Սակայն երիտասարդ կոմսը ապաշնորհ գտնվեց օգտվելու համար ընձեռնված այդ պատենությունից, եւ պետական գործերը կարգավորելու ու երկրի պաշտպանունակությունը ուժեղացնելու փոխարեն, ամբողջությամբ տրվեց վայելքների ու ցոփության:

Ժուլիմ II-ը շարունակեց իր հոր վարած թշնամական ֆաղափականությունը Անտիոքի իշխանապետության հանդեպ, եւ ընդհակառակը, բարեկամական հարաբերություններ պահպանեց Կիլիկիո հայկական իշխանու-

թյան հետ, ինչը կարող է բացատրվել թե՛ Լեոն Ա-ի հետ նրա ունեցած մերձավոր ազգականության հանգամանքով, թե՛ ընդհանուր հակառակորդի դեմ դաշնակցելու անհրաժեշտությամբ: Այսպես, 1136 թվականին ժոսլինը Եղեսիայում ապաստան տվեց Անտիոքի պրինց Ռայմոնդ Պուատիեցուն հակադրված եւ նրա կողմից ֆաղափից արտաքսված Ռաուլ Դոմֆրոնտացի պատրիարքին: Նույն տարվա ընթացքում, Ռայմոնդի եւ Կիլիկիո իշխան Լեոն Ա-ի միջև ծագած հակամարտության ժամանակ, նա բռնեց վերջինիս կողմը: 1137 թվականին, Հովհաննես Կոմնենոս կայսեր կիլիկյան արշավանքի նախօրյակին, ժոսլինն իր գործուն միջնորդությամբ կարողացավ հաշտություն կայացնել Լեոն Ա-ի եւ Ռայմոնդ Պուատիեցու միջև: Իսկ նույն կամ հաջորդ տարի պատասպարեց Հովհաննես Կոմնենոսի հալածանքներից իր մոտ ապաստանած Մլեհ եւ Ստեփանե իշխանագաներին՝ Լեոն Ա-ի որդիներին, որոնք այդպիսով խուսափեցին Կոստանդնուպոլիս արքայազնի դեմ հակառակորդից: Հովհաննես Կոմնենոսի բուն արշավանքի ժամանակ ժոսլինը, մի կողմ թողնելով իր հակառակությունը Անտիոքի նկատմամբ, ըստ էության միացավ իշխանապետության եւ Կիլիկիայի հակաբյուզանդական դաշինքին:

Սակայն բյուզանդացիների կողմից Կիլիկիայի նվաճումից եւ Անտիոքի հնազանդեցումից հետո ժոսլին II-ը նույնպես հարկադրված էր ճանաչել կայսեր գերիշխանությունը, քանի որ Կոստանդնուպոլիսի 1097 թվականի ֆրանկո-բյուզանդական պայմանագիրը տարածվում էր նաեւ Եղեսիայի կոմսության վրա՝ որպես սելջուկյան արշավանքներից առաջ կայսրությանը պատկանած տարածքի: Այդ հանգամանքով 1138 թվականի գարնանը ժոսլինը եղեսական բանակի հետ մասնակցեց Հալեպի էմիրության սահմաններում Հովհաննես Կոմնենոսի ձեռնարկած ռազմական գործողություններին, որոնց ընթացքում թե՛ նա, թե՛ Անտիոքի պրինցը ոչ միայն աչքի չընկան որեւէ օգտակարությամբ, այլեւ վիժեցրին կայսեր ծրագրերը, մասնավորապես Շայգար ֆաղափի երկարատեւ պաշարման օրերին: Ժոսլինը նաեւ գլխավոր դերակատարություն ունեցավ Հովհաննես Կոմնենոսի դեմ Անտիոքում ժողովրդական խռովություն հրահրելու գործում, որի հետեւանքով կայսրն անմիջապես հեռացավ ֆաղափից, այդպես էլ անկատար թողնելով Արեւելի նվաճման իր հավակնոտ ծրագիրը: Սակայն 1142 թվականին, կրկին Արեւելք վերադառնալով, Հովհաննես Կոմնենոսը թափանցեց Եղեսիա-

յի կոմսության սահմանները եւ համբար խփեց Թլպաշարի դիմաց: Հաշվի առնելով իր նախորդ արշավանքի դառը փորձը եւ ապահովելու համար իր վասալի հավատարմությունը, կայսրը պատանդներ պահանջեց ժուլինից, եւ վերջինս ստիպված եղավ նրան հանձնել իր դուստր Իգաբելին: Այդպիսով ապահովելով Եդեսիայի կոմսի շեզոֆությունը, Հովհաննես Կոմնենոսը դրանից հետո հանգիստ զբաղվեց Անտիոքի գործերով: Ոգետրված Հովհաննես Կոմնենոսի արեւելյան արշավանքի վերջնական ձախողումից ու ֆրանկո-բյուզանդական դաշինքի վիժեցումից, ինչպես նաեւ ազատված լինելով իրաֆյան հոգսերից, Ջանգի աթաբեկը պատրաստվեց վճռական հարված հասցնել Եդեսիայի կոմսությանը, մանավանդ նկատի ունենալով նաեւ այն հանգամանները, որ նորից սրվել էին Ռայմոնդ Պուատիեցու եւ ժուլին II-ի հարաբերությունները, եւ որ վերջինս այդ պատասխանատու պահին փաստորեն բարձիթողի էր մատնել կոմսության մայրաքաղաք Եդեսիայի գործերն ու տեղափոխվել ավելի ապահով ու բարգավաճ Թլպաշարի շրջանը: Քաղաքի պաշտպանությունն, այսպիսով, այդ ժամանակ վստահված էր միջնաբերդում տեղակայված փոքրիկ ֆրանկ կայագորին եւ տեղի բնակիչներից՝ հայերից ու ասորիներից կազմված աշխարհագորայիններին: Ժուլինը ոչ միայն հոգ չէր տարել Եդեսիայի կայագորը թարմ ուժերով համալրելու մասին, այլեւ չէր լուծել անգամ քաղաքը պատշան կերպով պարենավորելու հարցը:

Ջանգին նախեստառաջ գրավեց կոմսության արեւելյան սահմաններում գտնվող բերդերը՝ Թլմոզը եւ Շաբաֆտանի գավառի ամրությունները, իսկ այնուհետեւ ուղղվելով դեպի Եդեսիա, 1144 թ. նոյեմբերի 28-ին սկսեց նրա պաշարումը: Քաղաքի պաշտպանության ղեկավարությունն ստանձնեց Եդեսիայի լատին արքեպիսկոպոս Հուգո II-ը, որին հավատարմորեն աջակցում էին հայերի Անանիա եւ Հակոբիկ ասորիների Բարսեղ Բար-Շումանա եպիսկոպոսները: Արքեպիսկոպոսի առաջին գործը բնականաբար եղավ օգնության խնդրանքով ժուլինին, Անտիոքի պրինցիպ եւ Երուսաղեմի խնամակալին ուղարկված դիմումը: Ժուլինն իր հերթին միեւնույն խնդրանքով դիմեց Անտիոքի պրինց Ռայմոնդ Պուատիեցուն եւ Երուսաղեմի խնամակալ-թագուհի Մելիսենդեին, բայց Ռայմոնդը կտրականապես մերժեց նրա խնդրանքը, իսկ Մելիսենդեի ուղարկած գործերը տեղ հասան միայն բանը բանից անցնելուց հետո: Չնայած բնակչության հերոսական դիմադրությանը, Եդեսիան շուրջ մեկամսյա պաշարումից հետո գրավվեց 1144 թ. դեկ-

տեմբերի 23-ին: Քաղաքի գրավման առաջին պահի բարբարոսություններից հետո Ջանգին դադարեցրեց կոտորածները, խնայելով մասնավորապես հայ եւ ասորի բնակիչների կյանքը, առանց որոնց հնարավոր չէր ապահովել նրա հետագա կենսագործունեությունը: Այնուհետեւ քաղաքի միջնաբերդում թողնելով մի փոքրիկ թուրքական կայազոր, Ջանգին գնաց ավարտելու Եդեսիայի կոմսության նվաճումը: Սակայն մինչեւ Եփրատ ընկած տարածքները գրավելուց հետո նա ստիպված վերադարձավ Մոսուլ՝ ննչելու այդտեղ ծագած խռովությունը:

1146 թվականին, օգտվելով Ջանգիի բացակայությունից, Եդեսիայի հայերը դավադրություն կազմակերպեցին՝ թուրքական կայազորը ոչնչացնելու եւ քաղաքը ժոպլինին հանձնելու նպատակով: Ըստ երեւոյթին, թուրքերի համար վտանգն այնքան լուրջ էր, որ Ջանգին անձամբ վերադարձավ ու ննչեց այդ դավադրությունը, խստագույնս պատժելով նրա մասնակիցներին: Մի հանի ամիս անց, 1146 թ. սեպտեմբերի 15-ին, Ջանգին իր ծառաների ձեռքով սպանվեց Միջագետքի Կալա-Ջաբար բերդաքաղաքի մոտակայքում: Լսելով այդ լուրը, Եդեսիայի հայերը կրկին ապստամբեցին եւ հոկտեմբերի 21-ին կամ, ըստ այլ աղբյուրների, 27-ին բացեցին քաղաքի դարպասները ժոպլին II-ի եւ Մարաշի կոմս Բալդուինի առջեւ: Ֆրանկ զորքերը գրավեցին քաղաքը, բայց միջնաբերդը մնաց թուրքական կայազորի ձեռքում: Ջանգիին հաջորդած նրա որդին՝ Նուրեդդինը, հսկայական մի բանակով փութալով Հալեպից, պաշարեց Եդեսիան, եւ նոյեմբերի 3-ին թուրքական զորքերը ներխուժեցին քաղաք: Դեռ նախորդ օրը ժոպլին II-ը կարողացել էր նեղել պաշարման օղակը եւ նողոպրել Թլպաշարի կողմերը, կորցնելով սակայն իր զորքերի մեծ մասն ու իր խիզախ զինակից Բալդուին Մարաշացուն: Նուրեդդինն այս անգամ շինայեց ոչ մեկին: Եդեսիայի ողջ ֆրիստոնյա բնակչությունը՝ հայ թե ասորի, սրի մատնվեց կամ էջվեց ստրկության:

Եդեսիայի առումը լայն արձագանք գտավ թե՛ մահմեդական, թե՛ ֆրիստոնյա աշխարհում: Շուրջ հիսունամյա դիմակայության ընթացքում դա փաստորեն մահմեդականների տարած առաջին խոշոր հաղթանակն էր իսլամականների նկատմամբ, որի հետեւանքները վճռորոշ նշանակություն պիտի ունենային Մերձավոր Արեւելքում ուժերի հետագա դասավորության առումով: Արաբական պատմագրությունը արժանին մատուցեց մահմեդա-

կանության համար հիշարժան այդ հաղթանակին եւ նրա կերտիչը հանդիսացող Չանգի արքային: Մյուս կողմից, ասորի եւ հայ հեղինակները մի շարք ուշագրավ ստեղծագործություններ նվիրեցին այդ ողբերգական իրադարձությանը, որոնց թվում են Ներսես Շնորհալու հռչակավոր «Ողբ Եդեսիոն» եւ Բաղդուին Մարաշացու հայ խոստովանահայր Բարսեղի հրաշալի դամբանանաոր: Եվ վերջապես, դա այնպիսի ցնցում առաջացրեց Եվրոպայում, որ կայծակնային արագությամբ կազմակերպվեց երկրորդ խաչակրաց արշավանքը: Սակայն, ինչպես հետագայում կտեսնենք, այդ խաչակրությունը Եդեսիայի ազատագրմանը ծառայելու փոխարեն իր առջեւ դրեց բոլորովին այլ խնդիրներ եւ խայտառակ վախճան ունեցավ:

Եդեսիայի անկումից հետո կոմսությունն ամփոփվեց Եփրատի արեւմտյան ափին, ընդգրկելով Թլպաշար, Սամոսատ, Մարաշ, Քյահթա, Կուրխ, Կարկառ, Հիսն-Մանսուր, Պեհեսնի, Քեսուն, Ռապան, Հոռովլա, Տլուք, Ռավանդան, Այնթապ, Կուրուս ֆաղաֆները, եւ եւս հինգ տարի շարունակելով իր գոյությունը, որոնք սակայն եղան նրա հոգեվարժի տարիները: Կարճ ժամանակի ընթացքում կոմսության մահմեդական հարեւանները՝ հյուսիսից Իկոնիայի սուլթան Մասուդ I-ը, հյուսիս-արեւելից՝ Խարբերդի Արտուֆյան էմիր Կարա-Արսլանը, արեւելից՝ Մարդինի Արտուֆյան էմիր Տիմուրաշը եւ հարավից՝ Հալեպի էմիր Նուրեդդինը, բառացիորեն բզկտեցին նրա տարածքները, յուրաքանչյուրը հափշտակելով իրեն հասանելի բաժինը: Այսպես, 1149 թվականին Մասուդը գրավեց Մարաշը, եւ պաշարելով Թլպաշարը, հարկադրեց ժողովին նանաչել իր գերիշխանությունը: Տարվա վերջում կամ հաջորդ տարվա սկզբին Կարա-Արսլանը գրավեց Կարկառը, Հիսն-Մանսուրը եւ Քյահթան, գերելով նրանց հայ իշխաններ Վասիլ Պահլավունուն եւ Գրիգորին, որոնք Եդեսիայի կոմսի վասալներն էին: 1150 թվականին, Անտիոք գնալու նանապարհին, ժողովը գերի ընկավ դարանակալած թուրքմենների ձեռքը եւ տարվեց Հալեպ, որի զնդաններում էլ պիտի գտներ իր թշվառ վախճանը ինը տարի հետո: Մնալով մենակ, նրա կինը՝ Բեատրիսը, փորձեց իր որդու՝ ժողովն III-ի անունից պաշտպանել կոմսության մնացուկները, բայց բնականաբար դա չհաջողվեց: Իկոնիայի սուլթանը շուտով գրավեց Քեսունը, Պեհեսնին եւ Ռապանը:

Հարահատյալ, 1150 թվականին, Բեատրիսը, Երուսաղեմի թագավոր Բաղդուին III-ի համաձայնությամբ, կոմսությունից մնացած վերջին տա-

րածմները վաճառեց Բյուզանդիայի կայսր Մանուել Կոմնենոսին: Այսպիսով, Թլպաշարը, Սամոսատը, Տլուբը, Այնթապը եւ Ռավանդանը անցան բյուզանդացիներին, իսկ Հոռովկան կոմսուհին նվիրեց կամ, ըստ այլ աղբյուրների, վաճառեց Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն, որն այնտեղ տեղափոխեց կաթողիկոսական նստավայրը: Բյուզանդացիներին հանձնված ֆաղաֆների բնակչության մի զգալի մասը՝ լատին, հայ, թե ասորի, չկամենալով մնալ հույների տիրապետության տակ, ֆրանկ զորքերի հետ նահանջեց դեպի Սիրիա: Բյուզանդական կայսրությունը, սակայն անկարող գտնվեց պահպանելու իր նոր տարածքային ձեռքբերումները, եւ մեկ տարի էլ չանցած, ընկրկեց մահմեդական բանակների առաջխաղացման դեմ: 1151 թվականի հուլիսին Նուրեդդինը գրավեց Թլպաշարը, Տլուբը, Այնթապը եւ Ռավանդանը, իսկ Մարդինի էմիրը գավթեց Սամոսատը, եւ այսպիսով Եդեսիայի կոմսության ողջ նախկին տարածքը հայտնվեց մահմեդականների ձեռքում:

Բախտի փմահանույֆով, Արեւելքում առաջինը հիմնադրված խաչակրաց պետությունը առաջինն էլ դադարեցրեց իր գոյությունը, որ բնական էր, քանի որ մահմեդականների հողում սեպի պես խրված այդ խորթ կազմավորումը չէր կարող երկար կյանք ունենալ: Եդեսիայի կոմսության անկումը մերկացրեց խաչակրաց պետությունների պաշտպանական համակարգի հյուսիս-արեւելյան թելը եւ մասնավորապես խոցելի դարձրեց Անտիոքի իշխանապետությունը: Այն իր բացասական ազդեցությունն ունեցավ նաեւ Կիլիկիո հայկական իշխանության վրա, քանի որ մահմեդականները ընդհուպ մոտեցան նրա արեւելյան սահմաններին:

4. ԱՆՏԻՈՔԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ^a

1098 թ. հունիսին Բոհեմունդ Տարենտացին հռչակվեց Անտիոքի պրինց, եւ այդ տիտղոսին համապատասխան, նրա հիմնադրած պետությունը կոչվեց պրինցիպատ (Principes, Principauté), որը հազվագյուտ տարածքային միավոր էր անգամ Եվրոպայում, եւ այդ պատճառով չունի իր

^a Կլոդ Կանենի *Հիմնարար աշխատությունն առայժմ մնում է Անտիոքի իշխանապետությանը նվիրված միակ մենագրությունը. տե՛ս Cahen, La Syrie du Nord, Paris, 1940.*

հայերեն համարժեքը: Հայ պատմագիտության մեջ այն երբեմն վերատադրվում է դստություն անվանմամբ, որ սխալ է, ուստի խաչակրաց մյուս պետական կազմավորումներից Անտիոքը զանազանելու համար մենք նախընտրում ենք պայմանական իշխանապետություն հորոշողումը: Ինչ վերաբերում է պրինց տիտղոսին, ապա այն մենք հանգիստ խղճով օգտագործում ենք, քանի որ այդ բառը լատիներենից կամ հին ֆրանսերենից փոխառված է միջին հայերենում՝ **բրինձ** կամ **բրինձ** ձևով:

Բռնեմունդ I-ը նախեստաջ հարկ համարեց կարգավորել իր իշխանապետության իրավական հարաբերությունները բյուզանդական կայսրության հետ, քանի որ Կոստանդնուպոլսի 1097 թվականի ֆրանկո-բյուզանդական պայմանագրի համաձայն, նա պարտավոր էր այդ երկիրը հանձնել կայսրին: 1098 թ. հոկտեմբերի սկզբներին Անտիոքում տեղի ունեցած բարոնների ժողովը որոշեց պատվիրակներ ուղարկել Ալեքսիոս Կոմնենոսի մոտ, հրավիրելով նրան տեր կանգնելու իրեն հասանելիք տարածքներին եւ մասնակցելու դեպի Երուսաղեմ ընթացող խաչակրաց արշավանքին: Սա խոսում է ոչ այնքան ֆրանկների կողմից իրենց պարտավորությունների նկատմամբ ունեցած հավատարմության, որքան թերես այն մասին, որ նրանք, չգիտենալով մահմեդական աշխարհի իրական կարողությունը, վստահ չէին, թե միայնակ ի վիճակի են իրականացնել խաչակրության գլխավոր առաքելությունը: Ալեքսիոսի օժանդակությունն այդ խնդրում, ըստ երեւոյթին, ֆրանկների համար այնքան անհրաժեշտ էր, որ բյուզանդացիներին սիրաշահելու նպատակով նրանք Անտիոքում միառժամանակ հանդուրժեցին անգամ հունական պատրիարհական աթոռի գոյությունը: Կայսրը, սակայն, ինչ-ինչ պատճառներով հրաժարվեց մասնակցել խաչակրաց արշավանքին, որը Բռնեմունդի համար ձեռական պատրվակ հանդիսացավ՝ իրեն ազատ համարելու Կոստանդնուպոլսի պայմանագրով ստանձնած պարտավորություններից: Այս առումով հատկանշական է, որ երկու տարի անց նա արդեն վերացրեց Անտիոքի հունական պատրիարհական աթոռը, դրա փոխարեն հաստատելով լատինականը: Անտիոքի իրավական կարգավիճակի եւ պատրիարհական աթոռի պատկանելության հարցերն այնուհետեւ պիտի դառնային իշխանապետության եւ Բյուզանդիայի հարաբերությունների բարեկարգման ամենալուրջ խոչընդոտները:

Անտիոքի արինցի հաջորդ գործը եղավ իշխանապետության տարածքի ընդարձակումը: Այդ նպատակով 1099 թվականի ամռանը, մինչ խաչակրաց հիմնական բանակն զբաղված էր Երուսաղեմի նվաճման գործով, նա փորձեց բյուզանդացիներից խլել Լաթաֆիա նավահանգիստը, եւ այդ հողի վրա կրկին լուրջ բախում ունեցավ Ռայմունդ Սենժիլցու հետ: Վերջինիս համառությունը Բոհեմունդին թույլ չտվեց տիրել Լաթաֆիային, եւ նա, վերացնելով ֆաղաֆի պաշարումը, վերադարձավ Անտիոք: Այս անհաջողությունից հետո Բոհեմունդն իր հայացքն ուղղեց դեպի անդրորոնտյան հողերը, որոնք պատկանում էին Հալեպի Սելջուկյան էմիրությանը: 1100 թվականի ամռանը ձեռնարկած արշավանքի ժամանակ նա Կելլա բնակավայրի մոտ պարտության մատնեց Հալեպի էմիր Ռիդվանի զորքերին, որից հետո գրավեց Հադիր-Քաֆարթաբ գծից արեւմուտք ընկած բոլոր տարածքները, այդպիսով ընդհուպ մոտենալով հյուսիսային Սիրիայի մայրաքաղաքի մատույցներին: Դժվար է ասել, թե ինչով կավարտվեւ հաղթական նորմանների եւ բարոյաված հալեպցիների այդ առաջին լուրջ դիմակայությունը, եթե Բոհեմունդը նույն տարվա օգոստոսին, Ռիչարդ Սալերնացու հետ միասին, գերի շընկներ Սեբաստիայի Դանիշմենդյան էմիր Գյումուշտեգինի ձեռքը, որի մասին մենք արդեն խոսեցինք Եդեսիայի կոմսությանը նվիրված բաժնում:

Բոհեմունդի գերեվարումից հետո Անտիոքի բարոնները իշխանապետության խնամակալությունն իրականացնելու համար հրավիրեցին նրա ֆեոդոդի Տանկրեդին, որը 1101 թ. մարտին, վերադառնալով Գալիլեայի իր տիրույթից, ստանձնեց այդ պաշտոնը: Ինչպես հիշում ենք, Տանկրեդը առաջին խաչակրաց արշավանքի գլխավոր դերակատարներից միակն էր, որ կտրականապես հրաժարվել էր նանաչել Կոստանդնուպոլսի 1097 թվականի պայմանագիրը: Այդ պատճառով հասկանալի է, թե ինչու Անտիոքի խնամակալությունն ստանձնելուն պես, նա ընդգծված թշնամական դիրքորոշում որդեգրեց Բյուզանդիայի հանդեպ: Մինչ խաչակիրներն զբաղված էին Սիրիայի գործերով, բյուզանդացիները վերագրավել էին Կիլիկիայում նրանց նվաճած ֆաղաֆները: Ուստի Տանկրեդն անմիջապես արշավեց այդ երկիր եւ ետ խլեց Մսիսը, Ադանան ու Տարսոնը: Մեկ տարի անց, 1102 թվականի կեսերին, երկարատե պաշարումից հետո, նա բյուզանդացիներից գրավեց նաեւ Լաթաֆիա ֆաղաֆը, այդպիսով մի հրաշալի նավահանգիստ ապահովելով ռաֆի կանգնող իշխանապետության համար:

1103 թվականի գարնանը, հսկայական փրկագին վճարելով, Բոհեմունդն ազատ արձակվեց եւ վերադարձավ Անտիոք: Ի դեպ, այդ գործում կարեւոր դեր էր խաղացել եւ փրկագնի մի մասն էլ հատկացրել էր Քեսունի ու Ռապանի հայ իշխան Գող Վասիլը: Վերստանձնելով Անտիոքի պրինցի պարտականությունները, Բոհեմունդը շարունակեց իր նախկին ֆաղափականությունը Բյուզանդիայի եւ Հալեպի էմիրության նկատմամբ: 1104 թվականին, ինչպես տեսանք, Տանկրեդի հետ միասին, նա մասնակցեց Խառանի դեմ Բաղդուին Բուրգացու ձեռնարկած անհաջող արշավանքին, եւ վերջինիս գերեվարումից հետո Տանկրեդին նշանակեց Եդեսիայի խնամակալ: Խառանի աղետը անհետեւանք չմնաց ոչ միայն Եդեսիայի կոմսության, այլեւ Անտիոքի իշխանապետության համար: Ոգետրված այդ հաջողությունից, մահմեդականները կարճ ժամանակի ընթացքում ետ վերցրին Որոնտեսի արեւելյան ափին Բոհեմունդի եւ Տանկրեդի նվաճած համարյա բոլոր ֆաղափներն ու բերդերը: Բյուզանդացիներն իրենց հերթին, օգտվելով ֆրանկների նեղ դրությունից, 1104 թվականին վերագրավեցին դաշտային Կիլիկիայի գլխավոր ֆաղափները՝ Տարսունը, Ադանան եւ Մսիսը, ինչպես նաեւ Լաթափա նավահանգիստը:

Այսպիսով, Բոհեմունդի եւ Տանկրեդի հնգամյա ջանքերի գնով ստեղծված Անտիոքի իշխանապետությունը կորցրեց իր տարածքների համարյա կեսը: Վիճակն անելանելի համարելով, Բոհեմունդը որոշեց վերադառնալ Եվրոպա՝ նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու նպատակով: Նա նորից Անտիոքի խնամակալ կարգեց Տանկրեդին եւ 1104 թվականի վերջերին մեկնեց Իտալիա: 1107 թվականին Բոհեմունդը փորձեց կրկնել իր հոր՝ Ռոբերտ Գվիսկարի 1081 թվականի բալկանյան արշավանքը, եւ ցամաքահանում կատարելով Ալբանիայում, հարձակվեց բյուզանդական Դյուրաֆիոն ֆաղափի վրա: 1108 թվականին դառը պարտություն կրելով, նա ստիպված էր այդ ֆաղափում ստորացուցիչ պայմանագիր կնքել Ալեքսիոս կայսեր հետ, որը փաստորեն ի չիք էր դարձնում Անտիոքի իշխանապետության անկախությունը: Սակայն այդ պայմանագիրը մնաց թղթի վրա, քանի որ Բոհեմունդը, այդպես էլ արեւելք չվերադառնալով, մեռավ 1111 թվականին, իսկ Տանկրեդն ամենեւին մտադիր չէր ենթարկվելու դրան, մասնավաճառ որ Բոհեմունդի բացակայության ժամանակ, ըստ էության, կարողացել էր վերականգնել իշխանապետության նախկին սահմանները: 1104-1108 թվական-

ների ընթացքում նա Հալեպի էմիրության տարածքում վերագրավել էր անդրորոնտյան բոլոր հողերը, իսկ բյուզանդացիներից նորից խլել էր Լաթաֆիան եւ Մսիսը, որն այդ ժամանակ գտնվում էր կայսրության վասալը հանդիսացող հայ իշխան Օշին (Ուրսինոս) Լամբրոնացու տնօրինության տակ:

1108 թվականին Անտիոքի իշխանապետության եւ Եդեսիայի կոմսության միջեւ ծագած հակասությունների մասին մենք խոսեցինք վերջինիս նվիրված բաժնում: Հաջողության չհասնելով այդ կողմում, Տանկրեդը նույն թվականին փորձեց իր ազդեցությունը տարածել Տրիպոլիի կոմսության վրա, խառնվելով այդ երկրի գահակալական խնդիրներին: Սակայն Բալդուին I-ի վնասկան միջամտության շնորհիվ այդ խնդիրները կարգավորվեցին, եւ Տրիպոլիում գումարված 1109 թվականի ժողովի արդյունքում Անտիոքն ու Տրիպոլին ինչ-որ առումով նանաչեցին Երուսաղեմի թագավորության գերիշխանությունը: Տրիպոլից տուն դառնալու նանապարհին Տանկրեդը Իբն-Ամմար էմիրից խլեց Լաթաֆիայի հարավում գտնվող Ջիբեյլ նավահանգիստը, այդպիսով վերջնականորեն որոշակիացնելով Անտիոքի իշխանապետության հարավային սահմանը: Իսկ հաջորդ տարի նա լուրջ հաջողություններ արձանագրեց Հալեպի էմիրության սահմաններում, գրավելով Աթարիբ եւ Ջերդանա բերդերը եւ հարկատու դարձնելով Ռիդվան էմիրին: Տանկրեդի գահակալության օրոք տեղի ունեցած վերջին հիշարժան իրադարձությունը եղավ նրա բախումը Գոդ Վասիլի հետ, որի ընթացքում կողմերը միմյանցից որոշ տարածքներ գրավեցին, բայց այնուհետեւ հաշտություն կնքելով, վերականգնեցին հակամարտությանը նախորդած իրավիճակը: Տանկրեդը, որը հանդիսացավ Անտիոքի իշխանապետության իրական հիմնադիրը, մահացավ 1112 թ. դեկտեմբերի 12-ին:

Մի ֆանի օր անց Անտիոքի պրինց հոշակվեց նրա ազգականներից մեկը՝ Ռոջեր Սալերնացին, որը վերը հիշված Եդեսիայի խնամակալ Ռիշարդ Սալերնացու կամ Պրինցիպատոս որդին էր: Ի դեպ, հարգելով իշխանության լեգիտիմության կանոնները, նա նախապես երդվել էր՝ Բոհեմունդի որդու չափահաս դառնալուն պես, Անտիոքի գահը հանձնել նրան: Ի տարբերություն իր նախորդի, Ռոջերը լուրջ հակասություններ չունեցավ Արեւելի մյուս խաչակրաց պետությունների հետ եւ իր ողջ եռանդը ծախսեց մահմեդականների դեմ մղվող պատերազմների վրա: 1115 թվականին նա, միանալով Դամասկոսի, Հալեպի եւ Դիարբեհի կոալիցիային, վանեց Համա-

դանի էմիր Բուրսուկ իբն-Բուրսուկի արշավանքը, բայց Քաֆարթաբ ֆաղաֆը կորցնելու գնով: Դրան ի պատասխան, սեպտեմբերի կեսերին, Թել-Դանիա բնակավայրի մոտ նա ծանր պարտության մատնեց Բուրսուկին, եւ շարդուպիշուր անելով նրա զորքերը, ոչ միայն ետ նվանեց այդ ֆաղաֆը, այլեւ տիրեց հսկայական ավարի:

Այս տպավորիչ հաղթանակից հետո Ռոջերի հեղինակությունն անչափ մեծացավ մահմեդական աշխարհում, եւ 1118 թվականին Հալեպի էմիրությունը նորից ճանաչեց Անտիոքի իշխանապետության գերիշխանությունը: Բայց երբ Հալեպի բնակիչները, ընդվզելով այդ իրողության դեմ, իրենց ֆաղաֆը հանձնեցին Մարդինի Արաուֆյան էմիր Իլ-Ղազիին, Ռոջերը վերսկսեց իր հարձակողական գործողությունները եւ շուտով Կիլիկիո իշխան Թորոս Ա-ի եղբայր Լեոնի օգնությամբ, գրավեց Ազազ ֆաղաֆը, իսկ դրանից հետո նաեւ Հալեպի հյուսիսային տարածքներում գտնվող Թել-Հիրակ եւ Բիզաս քերդերը: 1117-1118 թվականների ընթացքում նա Անտիոքի իշխանապետությանը կցեց նաեւ Տրիպոլիի կոմսության սահմանների մոտակայքում գտնվող Մարկաբ եւ Բալատոնոս ամրոցները: Չբավարարվելով այդ նվաճումներով, 1119 թվականին Ռոջերը որոշեց գրավել նաեւ Հալեպը: Քաղաքի բնակիչները նորից օգնության կանչեցին Իլ-Ղազիին: Չպատկերվել Երուսաղեմի թագավորությունից եւ Տրիպոլիի կոմսությունից ուղարկված համալրումների ժամանմանը, Ռոջերը հունիսի 28-ին վճռական հակառակորդ տվեց Մարդինի էմիրի գերակշիռ ուժերին, Աթարիքից հյուսիս ընկած մի ամայի վայրում, որը հետագայում պատկերավոր կերպով կոչվեց Արյան դաշտ (*Ager sanguinis*): Ֆրանկների շուրջ չորսհազարանոց բանակից փրկվեցին միայն հատուկենտ մարդիկ: Անտիոքի իշխանապետության ազնվական դասի ողջ ընտրանին պրինց Ռոջերի հետ միասին, սրի մատնվեց:

Թուրքմենները չկարողացան օգտվել Անտիոքի իշխանապետությունը վերացնելու այս պատեհ առիթից: Նրանց դանդաղկոտությունն ու անվճարկանությունը Անտիոքի պատրիարք Բեռնարդ Վալանսացուն հնարավորություն տվին դադարեցնելու ֆրանկների համբարում առաջացած խուճապը եւ ապահովելու իշխանապետության տարրական կենսագործունեությունը: Օգոստոսին Անտիոք հասած Երուսաղեմի թագավոր Բաղդուին II-ը, բարոնների ժողովի որոշմամբ, ստանձնեց իշխանապետության խնամակալությունը, եւ անմիջապես հակահարձակման անցնելով, Թել-Դանիոտի մոտ

տեղի ունեցած հակաամարտում հաղթեց Իլ-Ղազիի եւ Հալեպի աթաբեկ Տուղտեզինի միացյալ զորքերին: Այս հաղթանակը վերականգնեց ուժերի նախկին հարաբերակցությունը, իսկ 1120-1123 թվականների ընթացքում Բալդուինի ձեռնարկած եւս չորս հաջորդական արշավանքների շնորհիվ լիովին վերականգնվեց նաեւ Անտիոքի իշխանապետության տարածքային ամբողջականությունը: Երբ Երուսաղեմի թագավորը 1123 թվականի ապրիլին գերի ընկավ հարբերդի էմիր Բալակի ձեռքը, Անտիոքի կառավարումը նորից ստանձնեց Բեռնարդ Վալանսացի պատրիարքը: Մեկուկես տարի անց ազատ արձակվելով, Բալդուինը վերականգնվեց իշխանապետության խնամակալի պաշտոնում:

1126 թվականի հոկտեմբերին վերջապես իր երկիր ժամանեց Անտիոքի գահի օրինական ժառանգորդը՝ Բոհեմունդ Տարենտացու որդի Բոհեմունդ II-ը: Տասնութամյա պատանին մեծ խանդավառությամբ ընդունվեց իր հպատակների կողմից, եւ Բալդուինը ոչ միայն անմիջապես նրան փոխանցեց իշխանապետության ղեկը, այլեւ նրան կնության տվեց իր դուստր Ալիսին, այսպիսով ազգակցական դաշինքով ամրապնդելով Անտիոքի եւ Երուսաղեմի հարաբերությունները: Կարճատե գահակալության ընթացքում Բոհեմունդ II-ը հասցրեց վերագրավել թուրքերի կողմից իշխանապետությունից իլված Քաֆարթաբ ֆաղաբը եւ լրջորեն գծավել Եդեսիայի կոմս Ժուլին I-ի հետ: Այդ գծտությունն, ինչպես տեսանք, հանգեցրեց անգամ պատերազմական գործողությունների: 1130 թվականի փետրվարին, փորձելով օգտվել Կիլիկիայում նոր գահակալած Լեոն Ա իշխանի անկայուն վիճակից, նա արշավեց դեպի այդ երկիր, բայց Ջիհուն գետի հովտում անսպասելի կերպով հանդիպեց նույնպես Կիլիկիա ներխուժած Կապադովկիայի Դանիշմենդյան էմիր Ղազիի զորքերին: Անտիոքի բանակը ջախջախիչ պարտություն կրեց, եւ Բոհեմունդ II-ն արժանացավ Ռոջեր Սալերնացու բախտին: Նրա արկածախնդրությունը ոչ միայն նորից վտանգեց Անտիոքի գոյությունը, այլեւ ծանր հարված հասցրեց իշխանապետության եւ Կիլիկիո հայկական իշխանության միջեւ հաստատված ֆիչ թե շատ բարեկամական հարաբերություններին:

Ամուսնու մահից հետո Ալիսը, որն, ինչպես հիշում ենք, Բալդուին II-ի դուստրն էր եւ մոր կողմից հայ, փորձեց իր մանկահասակ դստեր՝ Կոնստանսի անունից ստանձնել Անտիոքի իշխանապետության խնամակալու-

թյունը: Իշխանությունը զավթելու նպատակով նա շխորշեց անգամ դիմելու Մոսուլի եւ Հալեպի էմիր Իմադեդդին Ջանգիի օգնությանը: Սակայն Բաղդադի եռանդուն միջամտության շնորհիվ Ալիսը զրկվեց իշխանությունից եւ ախորժեց Լաթաֆիայի ու Ջիբեյլի իր կալվածքները, իսկ Անտիոքի խնամակալությունը նորից անցավ Երուսաղեմի թագավորին: Այդ պատճառով Ջանգին չհասցրեց օգտվել Անտիոքը նվաճելու այդպիսի բարեպատեն առիթից: Ալիսը, սակայն, չէր հրաժարվել իր հավակնություններից եւ հոր մահից հետո (1131 թ.) նորից փորձեց տիրել Անտիոքի գահին, այս անգամ արդեն Տրիպոլիի կոմս Պոնսի եւ Եդեսիայի կոմս Ժոսլին II-ի աջակցությամբ: Անտիոքի բարոնները օգնության խնդրանքով դիմեցին Երուսաղեմի նոր թագավոր Ֆուկ Անժուացուն, որն իր նախորդի օրինակով ստանձնելով Անտիոքի խնամակալությունը, կարողացավ վեոական միջոցառումներով հարթել իշխանապետությունում ծագած խռովությունը: 1135 թվականին, Ալիսի նկրտումներին վերջ դնելու եւ երկրում օրինական իշխանություն հաստատելու համար, նույն բարոնները թագավորին խնդրեցին հարմար ամուսին փնտրել գահի ժառանգորդ Կոնստանսի համար: Ֆուկի ընտրությունը կանգ առավ Ֆրանսիայի ազդեցիկ տոհմերից մեկի ներկայացուցիչ Ռայմոնդ Պուատիեցու վրա, որը մեկ տարի անց, ամուսնանալով դեռես անչափահաս Կոնստանսի հետ, հռչակվեց Անտիոքի պրինց:

Ռայմոնդն իր գահակալությունն սկսեց անհիմն եւ անհեռատես գծություններով: Նախ նա բախվեց Անտիոքի պատրիարք Ռաուլ Դոմֆրոնտացու հետ, որն իրեն մեծ ծառայություն էր մատուցել Կոնստանսի հետ ամուսնությունը գլուխ բերելու գործում: Այնուհետեւ խարդախությամբ գերեց Կիլիկիո իշխան Լեոն Ա-ին, եւ նրան ազատ արձակեց միայն այն բանից հետո, երբ վերջինս Անտիոքին զիջեց Սարվանդիբար, Ադանա եւ Մսիս քաղաքները: Նրա իշխանության սկզբնավորման շրջանի ամենամեծ փորձությունը հանդիսացավ, սակայն, Հովհաննես Կոմնենոսի 1137-1138 թվականների արեւելյան արշավանքը, որի ընթացքում նորից իր ողջ սրությամբ արծարծվեց Անտիոքի իշխանապետության իրավական կարգավիճակի հարցը, եւ Ռայմոնդը ստիպված եղավ ճանաչել Բյուզանդիայի գերիշխանությունը: Այնուհետեւ վասալի հանգամանքով նա մասնակցեց Հովհաննես Կոմնենոսի կողմից Հալեպի էմիրության դեմ ձեռնարկված արշավանքին, բայց իր անգործությամբ այնպիսի հիասթափություն պատճառեց

կայսրին, որ վերջինս որոշեց գրավել Անտիոքը: Այդ փորձն, ինչպես տեսանք, Ժուլին II-ի հրահրած ժողովրդական խռովության պատճառով ի դերեւ ելավ, եւ Հովհաննէսը վերադարձավ Բյուզանդիա: Իրեւի դրությունը չփոխվեց նաեւ Հովհաննէսի երկրորդ արեւելյան արշավանքի արդյունքում (1142-1143 թթ.), որովհետեւ դեռ վնասական գործողություններ չձեռնարկած, կայսրը մահացավ Կիլիկիայում՝ որսի ժամանակ ստացած վերքի հետեւանքով: Սակայն հանգամանքների ննջման տակ Ռայմոնդը 1145 թվականին այցելեց Կոստանդնուպոլիս եւ վերահաստատեց իր հավատարմությունը բյուզանդական կայսրության նկատմամբ:

Ռայմոնդ Պուստիեցին չափազանց ստոր դեր խաղաց Զանգիի կողմից Եդեսիայի գրավման ժամանակ, այդպես էլ օգնության չգնալով պաշարյալ ֆաղափին, չնայած իրեն ուղղված բազմաթիվ թախանձանքներին: Սակայն շուտով նա իր մաշկի վրա պիտի զգար այդ անհեռատեսության ողբալի հետեւանքները: Եդեսիայի կոմսության հետ իր հարցերը լուծելուց հետո Զանգիի որդին՝ Հալեպի էմիր Նուրեդդինը, 1147-1148 թվականների ընթացքում Անտիոքի իշխանապետությունից խլեց Արտահ ֆաղափը եւ Բասարֆուտ ու Քաֆարլաթա բերդերը: Դրանք վերագրավելու եւ նույնիսկ Հալեպը նվաճելու հույսեր արթնացան, երբ երկրորդ խաչակրության մնացորդները 1148 թվականին հասան Անտիոք, բայց խաչակրության առաջնորդները չհամաձայնեցին Ռայմոնդի առաջարկած այդ ծրագրին եւ շարժվեցին դեպի Երուսաղեմ: Երկրորդ խաչակրաց արշավանքի ձախողումից ոգետրված, Հալեպի թուրքերը վերսկսեցին իրենց հարձակողական գործողությունները Անտիոքի իշխանապետության ուղղությամբ: Մի ֆանի հաջող ասպատակություններից հետո, 1149 թ. հունիսի 29-ին, Մասարաթայի մոտ տեղի ունեցած նակատամարտում, նրանք ջախջախիչ պարտության մատնեցին Անտիոքի զորքերին, կոտորելով նրանցից շատերին, որոնց թվում էր նաեւ Ռայմոնդ Պուստիեցին: Զարգացնելով այդ հաջողությունը, Նուրեդդինը մեկ տարվա ընթացքում գրավեց Հարիմ, Ապամեա եւ Ազազ ֆաղափները, այդպիսով ֆրանկներից լիովին մաքրելով Անտիոքի անդրորոնայան տարածքները, որից հետո արդեն իշխանապետության եւ Հալեպի էմիրության սահմանն անցնում էր Ռոնտես գետով եւ Ամանուսի լեռներով:

Անտիոքի իշխանապետության խնամակալությունն ստանձնած Երուսաղեմի Բալդուին III թագավորը փորձեց հարմար ամուսին գտնել այրիա-

ցած Կոնստանսի համար, բայց վերջինս, մերժելով նրա առաջարկած թեկնածուներին, 1153 թվականին ինքնագլուխ կերպով ամուսնացավ անհայտ մի բախտախնդրի՝ Ռեյնալդ Շատիյոնցու հետ: Լինելով ֆաջ պատերազմող, բայց գուրկ ֆաղափական և պետական մտածողությունից, վերջինս իր ողջ եռանդը ծախսեց հրոսակային հարձակումների, կողոպուտների և արկածախնդրական ձեռնարկների վրա, որոնք ճակատագրական դեր պիտի խաղային ոչ միայն Անտիոֆի իշխանապետության, այլև հետագայում նաև Երուսաղեմի թագավորության կյանքում: Անտիոֆի նոր պրինցի առաջին գոհը դարձավ ֆաղափ պատրիարք էմերի Լիմոժացին, որն ընդդիմացել էր նրա ամուսնությանը Կոնստանսի հետ: Բանտարկությունից և անմարդկային խոշտանգումներից հետո պատրիարքը ստիպված էր հեռանալ Անտիոֆից և ապաստան գտնել Երուսաղեմում: 1155 թվականին Ռեյնալդը, մեծ վարձատրության խոստման դիմաց, դարձավ Մանուել Կոմնենոս կայսեր գործիքը Կիլիկիո իշխան Թորոս Բ-ի հակաբյուզանդական ապստամբությունը ճնշելու գործում: Սակայն Կիլիկիայի դեմ ձեռնարկած որոշ թշնամական գործողություններից հետո, շտամալով կայսեր կողմից խոստացված գումարը, նա հաշտություն կնքեց Թորոսի հետ, և ամեն դեպքում իրեն հասանելի վարձատրությունը բյուզանդացիներից կորզելու նպատակով բարբարոսաբար ավերեց ու կողոպուտի մատնեց Կիպրոս կղզին^ա:

Ռեյնալդ Շատիյոնցու գոռոզությունը ճզմվեց Մանուել Կոմնենոսի 1158-1159 թվականների արևելյան արշավանքի ժամանակ: Մինչ կայսրը, հեշտությամբ նվաճելով դաշտային Կիլիկիան, ճամբար էր խփել Մսիսի մոտակայքում, Անտիոֆի պրինցը խոնարհաբար եկավ նրա մոտ, և բազմաթիվ նվաստացումների ենթարկվելուց հետո ոչ միայն հանաչեց Բյուզանդիայի գերիշխանությունը, այլև խոստացավ լատինական պատրիարքական աթոռը փոխարինել հունականով: Ավելին, Անտիոֆի իշխանապետությունը պարտավորվեց նաև պահանջված պահին գորհեր տրամադրել բյուզանդական բանակին: 1159 թ. ապրիլի 12-ին Մանուել Կոմնենոսը հանդիսավորությամբ մտավ Անտիոֆ, և ութ օր մնալով այդ ֆաղափում, ամեն ֆայլափոխում ձգտեց ցուցադրել վեհապետի իր իրավունքները: Այնուհետև կայսրը

^ա *Ըստ Սմբատ Սպարապետի՝ Ռեյնալդ Շատիյոնցու 1156 թ. այդ արշավանքի բուն նախաձեռնողն ու ակտիվ մասնակիցը Հայոց իշխան Թորոս Բ-ն էր. տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 176; Փարիզ, էջ 98:*

ձեռագրեց, թե մտադիր է գրավել Հալեպը, բայց անմիջապես բանակցությունների մեջ մտավ Նուրեդդինի հետ, եւ բավարարվելով միայն Հալեպում պահվող Բրիտանոնյա գերիների ազատ արձակմամբ, վերադարձավ իր երկիրը, խոր հիասթափություն պատճառելով նրա արշավանքի հետ մեծ հույսեր կապող արեւելյան Բրիտանոնյաներին: Չհրաժարվելով իր հոռի բարբերից, Ռեյնալդ Շատրյոնցին 1160 թ. նոյեմբերին մի հրոսակային արշավանք կազմակերպեց Մարաշի ուղղությամբ, բայց հսկայական ավարով բեռնված տուն դառնալիս, Ռավանդանի մոտակայքում գերի ընկավ թուրքերի ձեռքը եւ տասնվեց տարի անցկացրեց Հալեպի բանտերում:

Անտիոքի գահի օրինական ժառանգորդը Բոհեմունդ III-ն էր՝ Ռայմունդ Պուատիեցու եւ Կոնստանսի տասնվեցամյա որդին: Սակայն պատրվակ բռնելով որդու անշահախառնությունը, Կոնստանսը փորձեց բյուզանդացիների օգնությամբ զավթել իշխանությունը: Այդ վտանգը հակակշռելու համար Բոհեմունդի կողմնակիցներն իրենց հերթին դիմեցին Կիլիկիո իշխան Թորոս Բ-ի օգնությանը^ա: Իրադրությունը փրկեց Երուսաղեմի Բաղդուին III թագավորը, որը գահի օրինական ժառանգորդի անունից ստանձնելով Անտիոքի խնամակալությունը, հանդարտեցրեց կրքերը: 1161 թվականին Մանուել Կոմնենոսն ամուսնացավ Կոնստանսի դստեր՝ իշխանուհի Մարիայի հետ, հույս ունենալով, ըստ երեւոյթին, ապագայում Անտիոքի պատկանելության խնդիրը լուծել ժառանգական իրավունքի շրջանակներում: 1163 թվականին Բոհեմունդ III-ը պաշտոնապես հռչակվեց Անտիոքի պրինց եւ միանգամից ենթարկվեց լուրջ փորձությունների: Հաջորդ տարվա օգոստոսին Նուրեդդինը, մահմեդական ուժերի մի պատկառելի կոալիցիայի գլուխ անցած, հարձակվեց Հարիմ բերդաբաղախի վրա, որը նորից անցել էր անտիոքացիների ձեռքը: Նրանց դիմակայեց Ֆրանկո-բյուզանդա-հայկական միավորված բանակը, որը գլխավորում էին Անտիոքի պրինց Բոհեմունդ III-ը, Տրիպոլիի կոմս Ռայմունդ III-ը, Եդեսիայի տիրոջսակիր կոմս Ժոսլին III-ը, Հուզո Լուսինյանը, դաշտային Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ Կոստանդին Կալոմանը, Կիլիկիո իշխան Թորոս Բ-ը եւ նրա եղբայր Մլե-

^ա Բարճեբրեոսը, որի աղբյուրը Միքայել Ասորու «Ժամանակագրութեան» կորած հատվածն է, այդ մասին գրում է հետեւյալը. Թորոսը «մտավ Անտիոք, տիրուհուն (Կոնստանսին) վտարեց քաղաքից, եւ նրա որդուն (Բոհեմունդ III-ին) հաստատեց գահին». տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 288.

հը: Մրանց տեսնելուն պես Նուրեդդինը վերացրեց Հարիմի պաշարումը եւ նահանջեց դեպի Արտան: Չանսալով Թորոսի խորհրդին, խաչակիրները ոգետրված հետապնդեցին նրանց, եւ ծուղակն ընկնելով, գլխովին ջախջախվեցին: Թորոսից ու Մլեհից բացի, ֆրիստոնյա բանակի բոլոր առաջնորդները գերի ընկան: Դրանից հետո Նուրեդդինը հեշտությամբ գրավեց Հարիմը, բայց բյուզանդացիների միջամտության ահից շհամարձակվեց հարձակվել Անտիոքի վրա:

1165 թվականի ամռանը Նուրեդդինը, Երուսաղեմի թագավոր Ամորի I-ի միջնորդության շնորհիվ եւ խոշոր փրկագնի դիմաց, ազատ արձակեց Բոհեմունդ III-ին, որն անմիջապես գնաց Կոստանդնուպոլիս՝ իր հավատարմության տուրքը մատուցելու Մանուել Կոմնենոսին: Այդ այցելության ընթացքում ձեռքբերված պայմանավորվածությունների արդյունքում Բոհեմունդը վերականգնեց Անտիոքի հունական պատրիարհական աթոռը, որից զայրացած, լատինական պատրիարհ էմերի Լիմոժացին հեռացավ ֆաղափից: Սակայն հինգ տարի անց հույն պատրիարհը երկրաշարժի զոհ դարձավ, եւ էմերին վերստացավ իր աթոռը: Բյուզանդիայի հետ հարաբերությունների սերտացումը Անտիոքի պրինցին չազատեց Նուրեդդինին նոր սպասակությունները դիմադարձելու հոգսից: Իսկ 1171 թվականին նա ձեռք բերեց եւս մի վտանգավոր հակառակորդ՝ հանձին Կիլիկիո իշխան Մլեհի: Փորձելով զսպել վերջինիս ծավալապաշտական նկրտումները, Բոհեմունդ III-ը պատերազմական գործողություններ սկսեց Կիլիկիայի դեմ, բայց նեղ դրության մեջ ընկնելով, օգնության կանչեց Երուսաղեմի թագավոր Ամորի I-ին, որի միջամտությունը, սակայն, նույնպես չփոխեց իրերի վիճակը: 1177 թվականին, օգտվելով Եվրոպայից նոր ժամանած Ֆլանդրիայի կոմս Ֆիլիպ էլզասցու աջակցությունից, Բոհեմունդ III-ը պաշարեց Հարիմ բերդաֆաղափը, բայց չորս ամիս անց ստիպված էր ձեռնունայն տուն վերադառնալ: Այդ արշավանքին, ի դեպ, մասնակցում էր նաեւ հայկական մի զորախումբ՝ Կիլիկիո իշխան Ռուբեն Գ-ի հրամանատարության ներքո, ինչը ցույց է տալիս, որ Անտիոքի իշխանապետության եւ Կիլիկիայի միջեւ Մլեհի օրոք ծագած հակամարտությունը այդ ժամանակ մարել էր:

Հարաբերությունների ջերմացումը, սակայն, երկար չտևեց: 1181 թվականին Անտիոքի հոգետրականներն ու ազնվականությունը ըմբոստացան Բոհեմունդ III-ի դեմ, շհանդուրժելով վերջինիս ամուսնությունը կասկածելի

բարեբերի տեր մի կնոջ՝ Սիրիլի հետ: Պրինցը դաժան հալածանքների ենթարկեց իր հակառակորդներին, եւ Անտիոքի ազնվականներից շատերը ապաստան գտան Կիլիկիո իշխան Ռուբեն Գ-ի արժունիքով: 1185 թվականին Լամբրոնի իշխան Հեթումի խնդրանքով Բոհեմունդը միջամտեց նրա եւ Ռուբենի միջեւ ծագած հակամարտությանը եւ խարդախությամբ գերեց Կիլիկիո իշխանին: Ռուբենի եղբոր՝ Լեոնի եռանդուն ջանքերի շնորհիվ Անտիոքի պրինցն այնուամենայնիվ ազատեց իր գերյալին, թեւ պահանջելով խոշոր փրկագին եւ որոշակի տարածֆային զիջումներ: Շուտով, սակայն, ուժերի հարաբերակցությունը Անտիոքի իշխանապետության եւ Կիլիկիո իշխանության միջեւ կտրուկ պիտի փոխվեր հոգուտ վերջինիս: Երուսաղեմի անկումը (1187 թ.) բնականաբար ծանր անդրադարձ ունեցավ Անտիոքի իշխանապետության վիճակի վրա: Պաղեստինում իր գործերն ավարտելուց հետո Սալահեդդինը 1188 թվականին շարժվեց դեպի հյուսիս եւ առանց դիմադրության հանդիպելու գրավեց ինչպես Տրիպոլիի կոմսությանը, այնպես էլ Անտիոքի իշխանապետությանը պատկանող գրեթե բոլոր ֆաղաֆներն ու բերդերը: Անտիոքն այդ ժամանակ մեկը մյուսի ետեփց կորցրեց Ջաբալան, Լաթաֆիան, Սահյունը, Բալատոնոսը, Ֆիհան, Բակասը, Շուդը, Բուրգեն, Պադրասը եւ Դարպասկը: Այսպիսի ծանր տարածֆային կորուստներից հետո Անտիոքի իշխանապետությունն այլևս չէր կարող չափվել Կիլիկիո հայկական իշխանության հետ, մանավանդ որ վերջինս, Միրիոկեֆալոնի ճակատամարտում (1176 թ.) հույների նկատմամբ սելջուկների տարած վճռական հաղթանակից ի վեր վերջնականապես ազատված լինելով իր ամենաահարկու թշնամուց՝ Բյուզանդիայից, ապրում էր իր վերելքի շրջանը:

1190-ական թվականներից սկսած եւ մինչեւ իր վախճանը իշխանապետությունը պիտի դիմագրավեր Կիլիկիո իշխանության, այնուհետեւ թագավորության կողմից Անտիոքի վրա գերիշխանություն հաստատելու չթուլացող ձգտումը: 1191 թվականին Կիլիկիո իշխան Լեոն Բ-ը գրավեց Սալահեդդինի կողմից լքված Պադրաս ամրոցը, որը մշտապես պատկանել էր Անտիոքի իշխանապետությանը եւ գտնվել Տաճարականների տնօրինության տակ: 1193 թվականին Լեոնը, խաբեությամբ Պադրաս հրավիրելով Բոհեմունդ III-ին, գերեց նրան եւ պահանջեց իրեն հանձնել Անտիոքը: Վերջինս հրահանգեց իր ենթականերին՝ կատարել այդ պահանջը: Բայց Անտիոքի բնակիչները, պատրիարք էմերի Լիմոժացու գլխավորությամբ, ֆաղաֆային

ինքնավարություն կամ կոմունա ձեռավորեցին, եւ զենքի դիմելով, վանեցին հայկական ստորաբաժանումները: Լեւոնն, իր գերյալին վերցրած, վերադարձավ Սիս: Խնդրին միջամտեց Երուսաղեմի (Աֆֆայի) թագավոր Հենրի Շամպայնացին, որն այցելելով Կիլիկիա, կարողացավ հաշտություն կայացնել Լեւոնի եւ Բոհեմունդի միջեւ: Վերջինս, սակայն, իր ազատագրման դիմաց ստիպված էր ճանաչել Հայոց իշխանի գերիշխանությունը, ինչպես նաեւ Կիլիկիային զիջել Պորտելայից մինչեւ Այաս ընկած վիճելի տարածքները: Եվ վերջապէս, երկու երկրների բարեկամությունն ամրապնդելու նպատակով Բոհեմունդի ավագ որդի Ռայմոնդը ամուսնացավ Լեւոնի զարմուհու՝ Ռուբեն Գ-ի դուստր Ալիսի հետ: Այս ամուսնությունը հնարավորություն էր պարունակում հետագայում միավորելու Կիլիկիո հայկական իշխանությունը եւ Անտիոքի իշխանապետությունը, քանի որ Ռայմոնդի եւ Ալիսի արու զավակը, լինելով Անտիոքի գահի օրինական ժառանգորդը, հանգամանքների բերումով կարող էր ժառանգել նաեւ Կիլիկիայի գահը: Ինչպէս ստորեւ կտեսնենք, Անտիոքի գահի ժառանգության հարցը շատով պիտի դառնար երկու երկրների հարաբերությունների անկյունաքարը:

Բոհեմունդ III-ը մահացավ 1201 թվականին, իսկ դրանից մի քանի տարի առաջ մահացել էր նաեւ Անտիոքի գահի ժառանգորդ Ռայմոնդը: Այսպիսով, օրինական կարգով Անտիոքի պրինց պետք է հռչակվեր վերջինիս որդի Ռայմոնդ-Ռուբենը: Այդ պատճառով, Լեւոն Բ թագավորը^ա, վերցնելով վերջինիս, փութաց Անտիոք: Բայց մինչեւ նրա տեղ հասնելը, անտիոքացիները երկրի գահին բազմելու էին հրավիրել Բոհեմունդի կրտսեր որդուն՝ Բոհեմունդ IV Միակնանուն, որը 1189 թվականից ի վեր Տրիպոլիի կոմսն էր: Լեւոնը, հարկադրված վերադառնալով Կիլիկիա, պատրաստվեց պատերազմի: 1203 թվականին նա հարձակվեց Անտիոքի վրա, բայց լսելով, որ Բոհեմունդ IV-ն օգնության է կանչել Հալեպի էմիր Մելիք ալ-Ջահիրին, խոհեմաբար խուսափեց բախումից ու ետ քաշվեց: Սակայն Հայոց թագավորն աստիճանաբար լուրջ դաշնակիցներ ձեռք բերեց Անտիոքում՝ հանձինս լատին պատրիարք Պետրոս Անգուլեմացու, Հիվանդախնամների միա-

^ա Քանի որ սույն գրքում ընդգրկված հեղինակները՝ Ռ. Գրուսեն, Ս. Ռանսիմենը եւ Ս. Տեր-Ներսեսյանը հետեւում են Կիլիկիո Հայոց թագավորների ոչ վաղ անցյալում տարածում գտած համարակալմանը, ապա ընթերցողին շփոթության մեջ չզցցելու համար մենք նույնպէս հարկադրված ենք պահպանել այն:

բանության եւ մի շարք ազդեցիկ բարոնների: Իսկ նրա հիմնական հակա-
 ակորդն այնտեղ մնում էին Տաճարականները, որոնց նա գրկել էր Պաղ-
 րաս ամրոցից: Ռայմոնդ-Ռուբենի եւ Լեոն Բ-ի համակիրների կուսակցու-
 թյունը թուլացնելու նպատակով Բոհեմունդ IV-ը վերականգնեց Անտիոքի
 հունական պատրիարքական աթոռը: Պետրոս Անգուլեմացին ու նրա կողմ-
 նակիցներն ապստամբեցին Բոհեմունդ IV-ի դեմ եւ 1207 կամ 1208 թվա-
 կանին բացեցին Անտիոքի դարպասները Լեոն թագավորի գլխավորած
 հայկական բանակի առջեւ: Ռայմոնդ-Ռուբենը պատրիարքի կողմից անմի-
 ջապես հռչակվեց Անտիոքի պրինց: Սակայն շուտով Բոհեմունդ IV-ը եւ Տա-
 ճարականները, որոնք փակվել էին միջնաբերդում եւ նորից դիմել էին Հալե-
 պի էմիրի օգնությանը, հակահարձակման անցան, եւ Լեոնն ու Ռայմոնդ-
 Ռուբենը այս անգամ եւս ստիպված եղան հեռանալ ֆաղափից: Բոհեմունդ
 IV-ի հաշվեհարդարի ահից կիլիկյան արհունիք տեղափոխվեցին նաեւ
 Ռայմոնդ-Ռուբենի կողմնակից բազմաթիվ ֆրանկ բարոններ:

1216 թվականին Լեոն Բ թագավորը վերջապես իրականացրեց իր երա-
 զանքը՝ ֆրանկ բարոնների աջակցությամբ եւ հայկական բանակի միջա-
 մտությամբ Ռայմոնդ-Ռուբենին հռչակելով Անտիոքի պրինց: Հոռմի Հոնո-
 րիոս III պապը ողջունեց Ռայմոնդ-Ռուբենի գահակալումը եւ իր հպատակ-
 ներին կոչ արեց հնազանդվել ու պաշտպանել նրան: Սակայն 1219 թվակա-
 նին Բոհեմունդ IV-ը եւս մեկ անգամ վերականգնեց իր իշխանությունը եւ
 դաժան հաշվեհարդար տեսավ իր հակառակորդների, հատկապես Հիվան-
 դախնամների նկատմամբ: 1222 թվականին, ձգտելով մեղմել Կիլիկիայի եւ
 Անտիոքի խորացած թշնամանքը, Կիլիկիայի պալլ Կոստանդին Լամբրոնա-
 ցին Լեոն Բ-ի դուստր Զապելին ամուսնացրեց Բոհեմունդ IV-ի կրտսեր որ-
 դու՝ Փիլիպոսի հետ, սակայն երկու տարի անց թունավորել տվեց նրան: Որ-
 դու վրեժը լուծելու նպատակով Բոհեմունդը դաշնակցեց Իկոնիայի սուլթա-
 նության հետ, բայց երբ դրան ի պատասխան Կոստանդինն էլ իր հերթին
 դաշնակցեց Հալեպի Այուբյանների հետ, Անտիոքի պրինցը եւս կանգնեց իր
 մտադրությունից: Բոհեմունդ IV-ը մահացավ 1233 թվականին, եւ Անտիոքի
 ու Տրիպոլիի գահերին նրան փոխարինեց իր որդին՝ Բոհեմունդ V-ը:

Բոհեմունդ V-ն անմիջապես փորձեց հայերին հիշեցնել, որ չի մոռացել
 իր եղբոր՝ Փիլիպոսի ողբերգական ճակատագիրը: Տաճարականներն էլ,
 որոնք Լեոն Բ-ի մահից հետո նորից տիրել էին Պաղրասին, իրենց հերթին

միաժամ շունեին հաշտվելու հայերի հետ, քանի որ վերջիններս չէին հրաժարվում այդ ամրոցի նկատմամբ ունեցած նկրտումներից: Ընդհանուր առեւության այս հողի վրա Բոհեմունդ V-ը եւ Տանարականները 1233 թվականին որոշեցին համատեղ ուժերով արշավել դեպի Կիլիկիա: Սակայն Հեթում Ա թագավորը եւ Կոստանդին պայլը, Տանարականներին արված որոշ զիջումների գնով, փայփայեցին այդ դաշինքը, եւ Բոհեմունդ V-ը հրաժարվեց ծրագրված արշավանքի մտքից: Տանարականներն իրենց պատերազմական եռանդն ուղղեցին Հալեպի էմիրության կողմը եւ 1237 թվականին փորձեցին գրավել Դարպասկ ամրոցը, բայց դառը պարտություն կրելով, ֆիչ մնաց կորցնեին նաեւ Պաղարսը:

Բոհեմունդ V-ի գահակալության շրջանը ընդհանուր առմամբ բնութագրվում է լնացման միտումներով: Անտիոքի իշխանապետությունը, կամովին ինքնամեկուսանալով, փաստորեն դուրս էր մնացել ժամանակի գլխավոր իրադարձություններից, որոնք հիմնականում ընթանում էին եգիպտա-պաղեստինյան տարածաշրջանում: Իշխանապետության ներքին կյանքը նույնպես աչքի չէր ընկնում հիշարժան անցուդարձերով: Բոհեմունդ V-ը որպես իր հիմնական նստավայր էր ընտրել համեմատաբար ապահով Տրիպոլի ֆաղաքը, Անտիոքի գործերը հանձնարարելով մի խնամակալի: Պրինցի իտալունի կնոջ ազդեցությամբ թե՛ Անտիոքի իշխանապետությունում, թե՛ Տրիպոլիի կոմսությունում սկսել էր բազմանալ եւ շնորհներ ձեռք բերել իտալական տարրը, ինչը բնականաբար լուրջ դժգոհություններ էր առաջացնում տեղի բարոնների մոտ, դժգոհություններ, որոնք ավելի ուշ պիտի հանգեցնեին վտանգավոր ցնցումների: Ըստ էության չֆացել էր Այուբյանների ննշումը, քանի որ վերջիններս այդ ժամանակ հիմնականում զբաղված էին խորեզմցիների ու մոնղոլների առաջխաղացումը դիմագրավելու հոգսերով: Որոշ անհանգստություն էին պատճառում միայն Անտիոքի հյուսիսային սահմանների մերձակա տարածքներում խաշնարածությամբ զբաղվող թուրքմենական ցեղերը: Ինչ վերաբերում է Կիլիկիո թագավորության եւ Անտիոքի իշխանապետության հարաբերություններին, ապա թեեւ թշնամական գործողությունները նրանց միջեւ դադարել էին, բայց նախկին ֆենը դեռեւս չէր վերացել: 1248 թվականին, Կիպրոսում գտնված ժամանակ, յոթերորդ խաչակրաց արշավանքի առաջնորդ, Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ը կամ սուրբ Լյուդովիկոսը վերջապես կարողացավ հաշտեցնել Հե-

թում թագավորին և Բոհեմունդ V-ին: Ավելին, վերջիններիս խնդրանքով նա վեց հարյուր նետաձիգ տրամադրեց՝ Անտիոքի սահմանները թուրքմենական ցեղերի հրոսակային հարձակումներից պաշտպանելու համար: Բոհեմունդ V-ի մահից հետո (1251 թ.) Անտիոքի և Տրիպոլիի գահը ժառանգեց նրա որդին՝ Բոհեմունդ VI-ը:

Գահակալման պահին Անտիոքի նոր պրինցն ընդամենը տասնչորս տարեկան էր: Ուստի նրա մայրը՝ Լյուսին դե Կոնտին, որը Հռոմի ազդեցիկ տոհմերից մեկի շտապվիդն էր, ստանձնեց նրա խնամակալությունը: Բայց կոմսունին, մշտապես բնակվելով Տրիպոլիում, բոլորովին ուշադրություն չէր դարձնում Անտիոքի գործերին, որտեղ, օգտվելով իշխանության թուլությունից, սկսել էին գլուխ բարձրացնել տեղական տարրերը, մանավանդ հունական համայնքի ներկայացուցիչները՝ իրենց պատրիարքի գլխավորությամբ: Անտիոքի արհունիքը անգործության էր մատնվել, ընկել էր նաև ֆաղաֆային ինֆնավարության հեղինակությունը: Բացի այդ, ինչպես արդեն նշեցինք, տեղական բարոնները չափազանց դժգոհ էին կոմսունուց՝ իտալացիների հանդեպ նրա ցուցաբերած հովանավորության պատճառով: Մտահոգված այս վիճակից, Բոհեմունդ VI-ը 1252 թվականին դիմեց Ֆրանսիայի Լյուդովիկոս IX թագավորի օգնությանը, որն այդ ժամանակ գտնվում էր Պաղեստինի Յաֆա ֆաղաֆում: Նա խնդրեց իրեն ազատել մոր խնամակալությունից, և հորդորել կոմսունուն, որպեսզի դրամ տրամադրի Անտիոքի գործերը կարգավորելու համար: Լյուդովիկոսը պատվով կատարեց միջնորդական այդ առաքելությունը, և Բոհեմունդն իր իշխանությունը գործադրելու հնարավորություն ստացավ:

Բոհեմունդ VI-ը ոչ միայն պահպանեց բարիդրացիական հարաբերությունները Կիլիկիայի հետ, այլև դրանք էլ ավելի ամրապնդելու նպատակով 1254 թվականին ամուսնացավ Հեթում Ա թագավորի դուստր Սիբիլի հետ^a: Դրանից հետո մինչև իր անկումը Անտիոքի իշխանապետությունը ամբողջությամբ գործեց Կիլիկիո հայկական թագավորության ֆաղաֆական

^a Ըստ Ս. Ռանսիմենի՝ այդ ամուսնությունը, որից հետո Բոհեմունդը որոշ առումով դարձավ Հեթումի վասալը, նույնպես գլուխ էր բերել Լյուդովիկոս IX-ը, այդպիսով իր տրամաբանական վախճանին հասցնելով Կիլիկիո թագավորության և Անտիոքի իշխանապետության հաշտեցման իր առաքելությունը. տե՛ս **Runciman**, A History of the Crusades, vol. III, p. 248.

համակարգում: Ֆրանկո-հայկական համագործակցության բազմաթիվ օրինակների շարքում այդ դաշինքը փաստորեն եղավ ամենակայունն ու տեսականը, որում Հայոց թագավորն, ըստ էության հանդես էր գալիս Անտիոքի իշխանապետության հովանավորի դերում: Ինչպես գրում է Գրուսեն՝ «Ծառայություն չմնաց, որ Հայոց մեծ միապետը շմատուցեր իր փեսային»^a: 1259 թվականին նա Բոհեմունդ VI-ին հաշտեցրեց Հիվանդախնամների հետ, որոնք վերջապես ետ ստացան Անտիոքի իշխանապետությունում եւ Տրիպոլիի կոմսությունում տարիներ առաջ իրենցից բռնազավթված կալվածքները: Նույն թվականին Հեթումի միջնորդության շնորհիվ վերջ տրվեց Բոհեմունդի դեմ Տրիպոլիի կոմսությունում ծագած ապստամբությանը: Իսկ 1263 թվականին Հայոց թագավորն օգնեց Բոհեմունդին՝ Անտիոքից վտարելու հունաց պատրիարհին:

Հեթումի ազդեցության ամենակարեւոր արտահայտությունը, սակայն, Բոհեմունդի ներաշունչն էր հայ-մոնղոլական դաշինքի մեջ: Անտիոքի պրինցը խաչակրաց առաջնորդների շարքում միակն էր, որ կողմնորոշվեց դեպի մոնղոլները, մինչ մյուս ֆրանկ իշխանավորները սատարում էին մամլյուֆներին կամ լավագույն դեպքում չեզոքություն պահպանում: «Գործք Կիպրացոց» կոչվող ժամանակագրությունը հատուկ շեշտում է Հեթումի դերն այս գործում, ասելով. «Բոհեմունդն արժանացավ հզոր տիրակալ Հուլավուի բարեհաճությանը, քանի որ այդ պրինցը Հայոց թագավորի փեսան էր»^b: Որպես մոնղոլների դաշնակիցներ Հեթում Ա-ը եւ Բոհեմունդ VI-ն իրենց գործախմբերով մասնակցեցին Հուլավու խանի 1260 թվականի սիրիական արշավանքին, իրենց նպաստը բերելով Հալեպի եւ Դամասկոսի գրավմանը: Այդ համագործակցության շնորհիվ Հայոց թագավորությունը վերստացավ իր անդրամասնոսյան տիրույթները, իսկ Անտիոքի իշխանապետությունը՝ անդրորոնտյան տարածքները: Սակայն Կիլիկիայի եւ Անտիոքի համար այս բարենպաստ վիճակը կտրուկ կերպով փոխվեց այն բանից հետո, երբ նույն թվականին Եգիպտոսի մամլյուֆները Գալիլեայի Այն-Ջալուղ բնակավայրի մոտ ծանր պարտության մատնեցին մոնղոլներին, եւ վերջիններս դուրս մղվեցին Սիրիայից: Կիլիկյան թագավորությունը եւ Անտիոքի

^a Grousset, Histoire des Croisades, vol. III, p. 515.

^b Gestes des Chiprois, p. 751.

իշխանապետությունը դարձան մամլյոմների վրեժխնդրության թիրախը: 1261 թվականին Եգիպտոսի սուլթան Բայբարսը ասպատակեց Անտիոքի իշխանապետության տարածքները եւ հսկայական ավարով տուն դարձավ: 1262 թվականին մամլյոմյան բանակը թափանցեց մինչեւ Սելեկիա նավահանգիստը ու այնուհետեւ պաշարման մեջ առավ Անտիոք ֆաղաբը: Սակայն երբ Հեթում թագավորը, մոնղոլական մի ստորաբաժանման եւ հայկական զորքերի հետ, օգնության հասավ, մամլյոմները հեռացան իշխանապետության սահմաններից: Ըստ երեւույթին, հաշվի առնելով այս դասը, Բայբարսը որոշեց նախ ծնկի բերել կիլիկյան թագավորությունը, որպեսզի այն այլեւ ի վիճակի չլինեւ օգնելու Անտիոքին, եւ միայն դրանից հետո լուծել իշխանապետության հարցը: 1266 թվականին, ներխուժելով Կիլիկիա, մամլյոմները կործանիչ հարված հասցրին Հայոց թագավորությանը, իսկ երկու տարի անց, 1268 թվականին, հեշտությամբ գրավեցին Անտիոքը, այդպիսով վերջ տալով իշխանապետության շուրջ հարյուր յոթանասուն տարի տեւած փոթորկալից կյանքին:

5. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ^a

1099 թ. հուլիսի 22-ին ընտրվելով Սուրբ Գերեզմանի պաշտպան, Գոդֆրուա Բուլոյնացին անմիջապես հայտնվեց լուրջ դժվարությունների առջեւ: Օգոստոսի սկզբներին Եգիպտոսի Ֆաթիմյանները առաջին փորձը կատարեցին վերագրավելու Պաղեստինում կորցրած իրենց տարածքները եւ դուրս մղելու խաչակիրներին: Եգիպտոսի հայազգի վեզիր ալ-Աֆդալը, հսկայական բանակի գլուխ անցած եւ հզոր նավատորմի աջակցությունից օգտվելով, նամբար խփեց Ասկալոնի մոտակայքում: Գոդֆրուային հաջողվեց համախմբել խաչակիրների ուժերը եւ օգոստոսի 12-ին ծանր պարտության մատնել հակառակորդին: Ալ-Աֆդալը հազիվ կարողացավ հողոպրել Եգիպտոս, իսկ Ասկալոնի բնակիչները հայտնվեցին անելանելի վիճակում:

^a *Բացի խաչակրաց արշավանքների պատմությանը վերաբերող ընդհանուր բնույթի աշխատություններից, որոնց ծավալի մեծ մասը նվիրված է Երուսաղեմի թագավորությանը, տե՛ս նաեւ հետեւյալ հատուկ մենագրությունները. Reinhold Röhrich, Geschichte des Königreichs Jerusalem (1100-1291), Berlin, 1897. – Jean Richard, Le royaume latin de Jérusalem, Paris, 1953. – J. Prawer, Histoire du royaume Latin de Jérusalem, t. 1–2, Paris, 1975*

Նրանք պատրաստակամություն հայտնեցին անձնատուր լինել, բայց միայն այն պայմանով, որ քաղաքը հանձնվի Ռայմոնդ Սենժիլցուն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Թուլուզի կոմսը միակն էր, որը Երուսաղեմի կոտորածի ժամանակ խնայել էր մահմեդականներին: Գողթրուան խափանեց այդ գործարքը, եւ դրանից սրտնեղած, Ռայմոնդ Սենժիլցին հեռացավ Սուրբ Երկրից: Այսպիսով, խաչակիրների նեղմտության ու ներքին գծտությունների պատճառով բաց թողնվեց այդ կարեւորագույն նավահանգիստը գրավելու հրաշալի առիթը, եւ Ասկալոնը եւս հիստուն տարի մնաց Ֆաթիմյանների գլխավոր հենակետը խաչակիրների դեմ մղած նրանց պայքարում: Բացի այդ, Ռայմոնդ Սենժիլցու եւ նրա դաշնակիցների հեռանալով, չափազանց թուլացավ Գողթրուայի զինական ուժը, եւ խաչակրաց նորաստեղծ պետությունը միանգամից բավականին խոցելի դարձավ:

Սակայն Ասկալոնի ճակատամարտից հետո եգիպտացիներին պատած հուսալքությունն այնքան մեծ էր, որ անգամ սակավաթիվ ուժերով Գողթրուան այդ ընթացքում կարողացավ զգալիորեն ընդարձակել իր երկրի սահմանները: Տվյալ ոլորտում նրա միակ գործոն օգնականը եղավ Տանկրեդը, որի ջանքերի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում գրավվեց ողջ Գալիլեայի շրջանը: Գողթրուայի հաջորդ մտահոգությունը Երուսաղեմի համար հուսալի ծովային ելքի ապահովումն էր, քանի որ բացի Ֆաթիմյից, պաղեստինյան ծովափի բոլոր նավահանգիստները պատկանում էին Եգիպտոսին: Այդ նպատակով նա նախեստուաջ ամրացրեց Ֆաթան, ապա ուժեղ մնշում գործադրելով Արսուֆի վրա, նրա բնակիչներին ստիպեց ճանաչել իր գերիշխանությունը եւ տարեկան հարկ վճարել: Հետեւելով Արսուֆի օրինակին, Գողթրուային հարկատու դարձան նաեւ Աֆա, Կեսարիա եւ Ասկալոն նավահանգստային քաղաքները: Դրանից հետո Գողթրուան եւ Տանկրեդը իրենց արդեն այնքան վստահ զգացին, որ սկսեցին ռոննգություններ կատարել նաեւ Դամասկոսի Սելջուկյան էմիրի գերիշխանության տակ գտնվող տարածքների նկատմամբ, եւ բազմաթիվ ավերումներից ու ավարառություններից հետո հարկատու դարձրին Տիբերիական լճից արեւելք ընկած Սավադ բարեբեր գավառը, որի էմիրն անգամ իրեն ճանաչեց Տանկրեդի վասալը:

Այս ամենով հանդերձ, Գողթրուայի գործունեության շուրջ մեկամյա շրջանի ամենալուրջ խնդիրը հանդիսացավ պետության աշխարհիկ եւ հո-

գետր իշխանությունների իրավասությունների սահմանումը: Ադեմար ար-
 քեպիսկոպոսի մահից հետո (1098 թ.) Սուրբ Երկրում պապական նվիրակ էր
 նշանակվել Դեմբերտ Պիզացին: 1099 թ. դեկտեմբերին, իրենց ուխտագնա-
 ցությունն իրականացնող Բոհեմունդ Տարենտացու և Բալդուին Բուլոյնա-
 ցու ուղեկցությամբ, նա հասավ Երուսաղեմ և Բոհեմունդի հզոր աջակցու-
 թյամբ ընտրվեց այդ ֆաղափի պատրիարհ: Շատ շանցած, նորընտիր պատ-
 րիարհը բացահայտեց իր իրական հավակնությունները, որոնց էությունը
 Սուրբ Երկիրը թեոկրատական պետության վերածելն էր: 1100 թ. փետրվա-
 րին նա Գողթրուայից պահանջեց իրեն հանձնել Երուսաղեմ և Յաֆա ֆա-
 ղափներ: Թեև դժկամությամբ, Գողթրուան համաձայնեց կատարել նրա
 պահանջը, պայմանով որ այդ ֆաղափներն իր ձեռքում մնան մինչև իր մահը
 կամ մինչև այն պահը, երբ ինքը կկարողանար մահմեդականներից գրավել
 երկու համարժեք ֆաղափներ: Հետագոտողները Գողթրուայի այդ ֆայլը բա-
 ցատրում են կամ նրա բարեպաշտությամբ, կամ էլ այն հանգամանակով, որ
 նա այնքան կարիքն ուներ պատրիարհին ուղեկցող պիզայական նավատոր-
 մի օգնության, որ չէր կարող մերժել նրան: Գողթրուան, սակայն, շուտով մա-
 հացավ (1100 թ. հուլիսի 18), և աշխարհիկ ու հոգեւոր իշխանությունների
 իրավասությունների հարցը ամենայն սրությամբ վերարժարծվեց Երուսաղե-
 մի հաջորդ գահակալի կառավարման սկզբնական շրջանում:

Համաձայն Գողթրուայի թողած կտակի՝ Երուսաղեմը պետք է դառնար
 Դեմբերտ պատրիարհի սեփականությունը: Սակայն Գողթրուայի կողմնա-
 կիցները, հիմնականում լոթարինգացիներ, անտեսելով այն, անմիջապես
 գրավեցին ֆաղափի Դավթի աշտարակ կոչվող միջնաբերդը և մի պատվի-
 րակություն ուղարկեցին Եդեսիա, հրավիրելով Բալդուինին փոխարինելու
 իր եղբորը: Երուսաղեմի բանակն այդ ժամանակ, պատրիարհի և Տանկրե-
 դի գլխավորությամբ, զբաղված էր Աֆայի պաշարմամբ: Այստեղ հանդի-
 պելով ուժեղ դիմադրության, նրանք վերացրին ֆաղափի պաշարումը և դրա
 փոխարեն հարձակվեցին Հայֆա նավահանգստի վրա, որը գրավեցին վե-
 նետիկյան նավատորմի օգնությամբ: Տեղեկանալով Եդեսիայի կոմսին ար-
 ված առաջարկի մասին, պատրիարհն ու Տանկրեդը իրենց հերթին միեւնույն
 խնդրանքով դիմեցին Անտիոքի պրինց Բոհեմունդին: Բայց ո՛չ ուղարկված
 նամակը, ո՛չ էլ նամակաբերը տեղ չհասան, իսկ Բոհեմունդն էլ, շատ շան-
 ցած, գերի ընկավ Դանիշմենդյանների ձեռքը: Բալդուինը Պաղեստինի մայ-

րաֆաղաֆ հասավ 1100 թ. նոյեմբերի 9-ին, եւ երկու օր անց ստանձնեց Երուսաղեմի թագավորի տիտղոսը: Դրության հետ հարկադրաբար հաշտված պատրիարքը դեկտեմբերի 25-ին թագադրեց նրան Բեթղեհեմի սուրբ Ծննդյան եկեղեցում: Բայց աշխարհիկ եւ եկեղեցական իշխանությունների պայքարը դրանով չավարտվեց: Շուրջ մեկ տարի անց Բաղդուին I-ը Դեմբերտին գրկեց պատրիարքական աթոռից եւ արտասուեց Երուսաղեմից: Գահագուրկ պատրիարքը գնաց Անտիոք՝ ապաստան գտնելու Բաղդուինի հակառակորդ Տանկրեդի արժունիքով: Այսպիսով, մեկանգամընդմիշտ հաղթահարելով թեոկրատիայի հաստատման վտանգը, Բաղդուինն արձանագրեց միապետական իշխանության հաղթանակը, հանդիսանալով Երուսաղեմի թագավորության իրական հիմնադիրը:

Բաղդուին I-ի գահակալության տասնութ տարիները (1100-1118 թթ.) թերեւս իրադարձություններով ամենահագեցածն են Երուսաղեմի թագավորության ողջ պատմության մեջ: Այդ իրադարձությունների պարզ թվարկումն անգամ կարող էր տասնյակ էջեր զբաղեցնել, ուստի մենք այստեղ կբավարարվենք միայն նշելով նրանցից ամենակարեւորները: Երուսաղեմի առաջին թագավորի առջեւ կանգնած էին հետեւյալ բարդագույն խնդիրները. թագավորության տարածքի ընդարձակումը, Ֆաթիմյանների ճնշման դիմագրավումը, ծովափնյա ֆաղաֆների ապաշրջափակումը եւ երկրում լատինական տարրի ուժեղացումը: Այս բոլոր ուղղություններով էլ նա հասավ շոշափելի արդյունքների, որոնք ժամանակի ընթացքում Երուսաղեմի թագավորությունը վերածեցին բավականին պաշտպանված եւ կենսունակ պետության: Ինչպես տեսանք, մինչեւ Բաղդուինի գահակալումը Միջերկրական ծովի պաղեստինյան ափին խաչակիրներին էին պատկանում միայն Յաֆա եւ Հայֆա նավահանգիստները: Մի ֆանի տարիների ընթացքում Բաղդուինը դրանց ավելացրեց Արուֆը (1101 թ.), Կեսարիան (1101 թ.), Աֆան (1104 թ.), Բեյրութը (1110 թ.) եւ Սիդոնը (1110 թ.): Առաջին երեք ֆաղաֆները նա գրավեց ճեմովական, Բեյրութը՝ ճեմովական եւ պիզայական, իսկ Սիդոնը՝ վենետիկյան եւ նորվեգական նավատորմների օգնությամբ: Իրենց ծառայության դիմաց իտալական ծովային հանրապետությունները զգալի սեփականություններ եւ արտոնություններ ձեռք բերեցին նվաճված ֆաղաֆներում: Բաղդուինի այս նվաճումների շնորհիվ պաղեստինյան ափի շրջափակումն, ըստ էության, վերացած կարելի էր համարել, ֆանի որ Ֆաթիմ-

յանների ձեռքում էին մնացել միայն Տյուրուս և Ասկալուն նավահանգստային ֆաղաֆները:

Բացի հարձակողական բնույթի այս գործողություններից, Բալդուինն իր գահակալության առաջին տարիներին ստիպված էր նաև ծանր պաշտպանական պատերազմներ մղել Ֆաթիմյանների դեմ, որոնք ամենեւին չէին հաշտվել Պաղեստինը կորցնելու մտքի հետ: 1101 թ. սեպտեմբերին Ռամլայի մոտ նա կասեցրեց եգիպտական զորքերի ներխուժումը և պարտության մատնեց նրանց: 1102 թ. մայիսին Ֆաթիմյան բանակը, ալ-Աֆդալ վեզիրի որդու գլխավորությամբ նորից Ասկալունից շարժվեց դեպի Ռամլա: Այս անգամ եգիպտացիները շախչախեցին ֆրանկներին և գրավեցին այդ բերդաբերդը: Բազմաթիվ անվանի ասպետներ սպանվեցին, իսկ Բալդուինը հազիվ կարողացավ միայնակ հողոպրել Յաֆա: Զարգացնելով իրենց հաջողությունը, եգիպտացիները պաշարեցին նաև այդ ֆաղաֆը, բայց Բալդուինին հաջողվեց համախմբել ֆրանկների ուժերը և վանել նրանց: 1105 թ. օգոստոսին Եգիպտոսի վեզիր ալ-Աֆդալը կատարեց Պաղեստինը վերագրավելու վերջին փորձը: Ճակատամարտն այս անգամ եւս տեղի ունեցավ Ռամլայի մոտակայքում, և եգիպտացիները, նորից մեծ կորուստներ տալով, նահանջեցին դեպի Ասկալուն: Երուսաղեմի թագավորության մյուս հակառակ Դամասկոսի Սելջուկյան էմիրությունն էր, որը մասնավորապես նեղություն էր պատճառում Գալիլեայի շրջանին: Երկու հակառակ միաժամանակ պայքարելու անկարող, Բալդուին I-ը շանաց ապահովել Դամասկոսի չեզոքությունը, և 1108/9 թվականին, որոշ զիջումների ու նվերների գնով, տասնամյա զինադադար կնքեց Տուղտեզին արթաբեկի հետ: Ավելին, Մոսուլի արթաբեկ Մավդուդի 1111 և 1113 թվականների, ինչպես նաև Համադանի էմիր Բուրսուկի 1115 թվականի հակախաչակրությունների կամ սիրիական արշավանքների ժամանակ Երուսաղեմի թագավորությունը և Դամասկոսի էմիրությունը հանդես եկան որպես դաշնակիցներ և համատեղ ուժերով հաղթահարեցին այդ ընդհանուր վտանգները:

Դամասկոսի էմիրության չեզոքության ապահովումը և պաղեստինյան ծովեզերքի նվաճումը Բալդուինին հնարավորություն տվեց Ֆաթիմյանների դեմ պայքարում նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և թագավորության տարածքն ընդարձակել հարավային ու հարավ-արևելյան ուղղությամբ: Թագավորության հարավային սահմանները պաշտպանելու և Եգիպտոսի

ու Սիրիայի ցամաքային հաղորդակցության միակ նանապարհը վերահսկելու նպատակով Բաղդադին 1115 թվականին Նեգեի անապատի Շաուբակ բնակավայրում կառուցեց նշանավոր Քրաֆ դե Մոնրեալ բերդը, իսկ հաջորդ տարի գրավեց Աֆաբայի ծոցի էյլաթ նավահանգիստը: 1118 թվականին նա արշավեց արդեն բուն Եգիպտոսի տարածքներ, հասնելով մինչև Ֆարամա ֆաղաֆը, իսկ ըստ որոշ աղբյուրների՝ անգամ մինչև Նեղոսի նյուղավորումներից մեկը: Երուսաղեմի թագավորության եւ Եգիպտոսի երկարատև պայքարը Պաղեստինի համար, այսպիսով, Բաղդադին I թագավորի օրոք ավարտվեց առաջինի լիակատար հաղթանակով, որից հետո, մինչև 1170-ական թվականները Ֆաթիմյան Եգիպտոսը, ըստ էության, դադարեց տարածաշրջանում գործոն դեր խաղալուց:

Երկրի ներսում Բաղդադին I-ի ամենամեծ մտահոգությունը ժողովրդագրական վիճակն էր, նկատի ունենալով մասնավորապես ֆրանկ գաղութարարների սակավաթվության հանգամանքը, ինչն ի դեպ հատուկ էր խաչակրաց բոլոր պետություններին: Երուսաղեմի թագավորության համարյա ողջ գյուղական բնակչությունը կազմված էր մահմեդական, մասամբ էլ արեւելաֆրիստոնեական դավանանքների արաբախոս տարրերից: Երկիրը որոշ մարդկային համալրումներ ստանում էր ուխտավորների, իտալացի վանահանականների եւ այս երկու խմբերին ուղեկցող ասպետների փոփոխ ջոկատների ձեւով, սակայն դա ամենեւին բավարար չէր ժողովրդագրական վիճակը փոխելու համար եւ հազիվ էր բավականացնում մահացության կորուստը ծածկելուն: Այս հարցում վիճակն այնքան անմխիթարական էր, որ անգամ երկրի մայրաքաղաք Երուսաղեմը բնակեցնելու համար Բաղդադինն ստիպված էր 1115-1118 թթ. ընթացքում այստեղ զգալի թվով հունադավան եւ ասորի ֆրիստոնյաներ տեղափոխել Հաուրանից ու Անդրհորդանանից: Մարդկային եւ մանավանդ զինական ուժի պակասը որոշ չափով փոխհատուցվում էր խաչակրաց շրս պետությունների միջև հաստատված համերաշխության եւ փոխօգնության յուրօրինակ համակարգի շնորհիվ, որի ձեւավորման մեջ եւս Բաղդադին I-ն ուներ իր որոշակի ավանդը: Այս առումով հատկապես նշանակալից պետք է համարել նրա գլխավորությամբ տեղի ունեցած 1109 թվականի Տրիպոլիի ժողովը, որի ընթացքում Բաղդադինը, հաշտարարի դեր ստանձնելով, ոչ միայն հարթեց Անտիոքի պրինցի եւ Եդեսիայի ու Տրիպոլիի կոմսերի հակասությունները, այլեւ ըստ էության, հաս-

տասեց Երուսաղեմի թագավորության բարոյական գերիշխանությունը խաչակրաց մյուս պետությունների վրա, գերիշխանություն, որը Տրիպոլիի կոմսության դեպքում ուներ նաև իրավական բովանդակություն: Երուսաղեմի առաջին թագավորի բռուն կյանքն ավարտվեց մարտական դիրքում՝ եգիպտական արշավանքից տուն դառնալու հանապարհին, 1118 թ. ապրիլի 2-ին:

1118 թ. ապրիլի 14-ին, առանց լուրջ բարդությունների, Երուսաղեմի թագավոր օծվեց Նդեսիայի երկրորդ կոմսը՝ Բալդուին II Բուրգացին, որը, ինչպես հիշում ենք, Գոդֆրուա և Բալդուին Բուլոյնացիների մերձավոր ազգականներից էր: Ինչպես Նդեսիայի կոմսությունում, այնպես էլ Երուսաղեմի թագավորությունում Բալդուին II -ը հանդիսացավ իր նախորդի գործի արժանի շարունակողը: Նրա գահակալության տարիները կարելի է բնութագրել որպես Երուսաղեմի թագավորության ամրապնդման, պետական հաստատությունների բարեկարգման, հարեւան երկրների հետ համեմատաբար կայուն հարաբերությունների հաստատման ժամանակաշրջան: Դամասկոսի էմիրությունը և Ֆաթիմյան Եգիպտոսը ընդամենը մեկ անգամ լքշորեն սպառնացին թագավորության սահմաններին, այն էլ Բալդուին II-ի գահակալության ամենակարգում և կարծես թե միայն նոր թագավորի դիրքերի ամրությունը ստուգելու նպատակով: 1119 թվականին Դամասկոսի աթաբեկ Տուլտեգինը հարձակվեց Գալիլեայի շրջանի վրա, ավերելով ու ավարի մատնելով նրա բնակավայրերը, միաժամանակ եգիպտացիները որոշ ռազմական ակտիվություն դրսևորեցին Ասկալոնի մերձակայքում: Սակայն Բալդուին II-ը շատ արագ վերականգնեց նախկին վիճակը, իր հակառակորդներին ցույց տալով, որ գործ ունեն վնասական պետական գործչի հետ: Թագավորության պաշտպանունակությունն ստուգելու երկրորդ փորձը եգիպտացիները համարձակվեցին կատարել միայն այն ժամանակ, երբ Բալդուին II-ը գտնվում էր գերության մեջ, բայց այս անգամ ես նրանք հուսախաբ եղան: Ի դեպ, նոր թագավորի կարողությունները շոշափելու մի փորձ ձեռնարկեց նաև Տրիպոլիի կոմս Պոնսը, որը 1119 թվականին ուզեց ազատվել Երուսաղեմի գերիշխանությունից, սակայն Բալդուինի կողմից ուժի պարզ ցուցադրումը բավական էր, որպեսզի կոմսը նորից ենթարկվեր Տրիպոլիի 1109 թվականի ժողովում սահմանված կարգին:

Բալդուին II-ի գահակալության ամենահատկանշական կողմը, սակայն, այն է, որ հանգամանքների բերմամբ նա ավելի շատ գործեց ոչ այն-

քան սեփական թագավորության ներսում, որքան երկրի սահմաններից դուրս, ըստ էության հանդես գալով որպես Լեւանտի խաչակրաց պետությունների պատասխանատու առաջնորդ եւ հովանավոր: Դեռեւս Երուսաղեմի առաջին թագավորի օրոք ձեւավորված համերաշխության եւ փոխօգնության համակարգը կամ ֆաղափական ավանդույթը լավագույնս դրսևորվեց հատկապես Բաղդադի II-ի իշխանության ժամանակահատվածում: Գահակալումից ընդամենը մեկ տարի անց, Ռոջեր Սալերնացու սպանությունից հետո (1119 թ.), Բաղդադի հարկադրված էր ստանձնել Անտիոքի խնամակալությունը, որը պիտի պահպաներ մինչև 1126 թվականը: Այդ ընթացքում նա կարգավորեց իշխանապետության գործերը, չեզոքացրեց նրա սահմաններին սպառնացող վտանգները, ավելին, անգամ վերանվաճեց նրա կորցրած տարածքների մի մասը եւ Բոհեմունդ II պրինցին փոխանցեց բավականին կենսունակ մի պետություն: Ժուլյան I-ի գերեվարումից հետո (1122 թ. սեպտեմբեր), շուրջ յոթ ամիս Բաղդադի II-ն ստանձնեց նաեւ Եդեսիայի կոմսության խնամակալությունը, այսպիսով միաժամանակ վարելով երեք պետությունների գործերը: Այս դաշնակցային պարտավորությունների կատարման ընթացքում էլ հենց նա իր հերթին գերի ընկավ Խարբերդի Արտուրյան էմիր Բալակի ձեռքը (1123 թ. ապրիլ) եւ շուրջ մեկուկես տարի դուրս մնաց ակտիվ գործունեությունից: Այդ պահը, երբ խաչակրաց շուրս պետություններից երեքը՝ Երուսաղեմի թագավորությունը, Անտիոքի իշխանապետությունը եւ Եդեսիայի կոմսությունը, փաստորեն մնացել էին անգլուխ, դարձավ նրանց կենսունակության ու ամրության փորձաշրջանը: Կյանքը ցույց տվեց, որ նրանք ոչ միայն դիմացան այդ փորձությանը, այլեւ արտաբնատ այդպիսի հուսահատական վիճակում նույնիսկ կարողացան նշանակալից հաղթանակներ տանել հակառակորդների նկատմամբ, որոնցից ամենատպավորիչը ֆրանկների կողմից Տյուրոս նավահանգստի գրավումն էր 1124 թ. հուլիսին:

Բավականին բուռն անցավ նաեւ Բաղդադի II-ի գահակալության երկրորդ շրջանը, որն սկսվեց գերությունից նրա ազատվելուց հետո (1124 թ. օգոստոս): Դեռ իր երկիրը չվերադարձած, նույն թվականի աշնանը նա դաշինք կնքեց Զազիրայի բեդուինների էմիր Դուբայսի հետ, եւ ֆրանկո-արաբական միացյալ ուժերը պաշարեցին Հալեպը: Սակայն ֆաղափին օգնության հասած Մոսուլի էմիր Ակ-Սոնկուր Բուրսուկին վիժեցրեց դաշնակիցներ

րի այդ ծրագիրը: 1125 թ. ապրիլին, հագիվ Երուսաղեմ հասած, Բաղդուինը լսեց, որ Բուրսուկին եւ Դամասկոսի աթաբեկ Տուղտեգինը գրավել են Քաֆարթաբը: Նա ստիպված կրկին վերադարձավ Անտիոք եւ հունիսի սկզբներին Ազազի մոտ պարտության մատնեց մահմեդականների միացյալ ուժերին: 1126 թ. մարտին Երուսաղեմի թագավորն օժանդակեց Տրիպոլիի կոմսին Ռաֆանիա բերդաֆաղաֆը գրավելու գործում: Ամուսնը նա նորից օգնության եկավ Անտիոքին եւ Եդեսիայի կոմս Ժոսիին I-ի աշակցությամբ վանեց Աթաբիբը պաշարած Բուրսուկիին: 1128 թ. սկզբին Բաղդուին II-ը, որպես միջնորդ հանդես գալով Անտիոքի պրինցի եւ Եդեսիայի կոմսի միջեւ ծագած հակամարտության կարգավորման գործում, կարողացավ հաշտեցնել նրանց: 1130 թվականին, Անտիոքի պրինց Բոհեմունդ II-ի սպանությունից հետո, Բաղդուին II-ը նորից ստանձնեց իշխանապետության խնամակալությունը եւ կարողացավ կանխել ներքին ցնցումները:

Բաղդուին II-ի օրոք ուշագրավ շրջադարձ ապրեցին Երուսաղեմի թագավորության հարաբերությունները Դամասկոսի Սելջուկյան էմիրության հետ: Ինչպես տեսանք, նրա նախորդը Ֆաթիմյան Եգիպտոսի դեմ մղած իր երկարատե պայքարի ընթացքում, մեծապես շահագրգռված էր Դամասկոսի էմիրության չեզոքության ապահովմամբ: Մինչդեռ այժմ, երբ ֆաթիմյան սպանակալիքը բավականին թուլացել էր, այդ չեզոքությունն, ըստ երեւոյթին, արդեն կորցրել էր իր հրատապությունը: Թերեւս այդ էր պատճառը, որ Բաղդուին II-ն իրեն թույլ տվեց հարձակողական գործողություններ ձեռնարկել այդ ճակատում: 1126 թ. հունվարին, հարավից ներխուժելով էմիրության տարածքը, նա Թել-Շակհաբ բնակավայրի մոտ հաղթեց հակառակորդին, բայց չհամարձակվելով շարունակել առաջխաղացումը դեպի Դամասկոս, մեծ ավարով ետ դարձավ: Դամասկոսը գրավելու լուրջ հնարավորություն ստեղծվեց 1129 թվականին, երբ ֆաղաֆի իսմայելիտներն ու նրանց համակրող վեզիրը դավադրական կապի մեջ մտան ֆրանկների հետ, խոստանալով նրանց առջեւ բացել դարպասները: Սակայն դավադրությունը բացահայտվեց, եւ իսմայելիտները դաժան հալածանքների ենթարկվեցին: Այնուամենայնիվ Երուսաղեմի թագավորությունն այս դրվագից որոշակի օգուտ ֆաղեց. Բանիաս ֆաղաֆի իսմայելիտ կառավարիչ Իսմայիլը հրավիրեց Բաղդուին II-ին եւ իր ֆաղաֆը հանձնեց նրան: Բանիասն զբաղեցնելուց հետո իսաչակիրների միավորված ուժերը՝ Երուսաղեմի թագավոր Բաղդուին

II-ի, Անտիոքի արինց Բոհեմունդ II-ի, Եդեսիայի կոմս Ժուլին I-ի եւ Տրիպոլիի կոմս Պոնսի գլխավորությամբ, պաշարեցին Դամասկոսը, բայց հորդառատ անձրեւների պատճառով 1129 թ. դեկտեմբերի 5-ին նրանք ստիպված ետ ֆաշվեցին:

Բաղդադին II-ի գահակալության օրոք Երուսաղեմի թագավորության ներքին կյանքում տեղի ունեցած իրադարձություններից ուշադրության արժանի են հասկապես լատինական տարրին շնորհված արտոնություններն ու առեւտրային ազատությունները (1120 թ.), ռազմա-կրոնական միաբանությունների կամ, այսպես կոչված, ասպետական օրդենների ձեւավորումը, եւ վերջապես թագավորական գահի սահուն փոխանցման ապահովումը: Արու գավակ չունենալով, Բաղդադին II-ը կանխապես Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս VI-ին խնդրեց հարմար փեսացու գտնել իր ավագ դստեր՝ Մելիսենդիեի համար, որը գահի օրինական ժառանգորդն էր: Ֆրանսիայի թագավորն ընտրեց Անժուի կոմս Ֆուկ V-ին, որը 1129 թվականի գարնանը գալով Երուսաղեմ, հունիսի 2-ին ամուսնացավ արքայադստեր հետ: Պետական գործչին վայել այս հեռատես ֆայլով Բաղդադին II-ն իր երկիրը զերծ պահեց հնարավոր գահակալական պայքարից, որից հետո հանգիստ խղճով հեռացավ աշխարհից 1131 թ. օգոստոսի 21-ին:

Ֆուկ Անժուացու եւ Մելիսենդիեի թագադրությունը նոխ հանդիսություններով տեղի ունեցավ երեք շաբաթ անց, 1131 թ. սեպտեմբերի 14-ին: Ֆուկի գահակալությունը համընկավ համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանի, երբ մերձավորարեւելյան հիմնական իրադարձությունները, ինչպես օրինակ, Հովհաննես Կոմնենոսի արեւելյան արշավանքներն ու Իմադեդդին Ջանգիի միջագետյան պատերազմները, ծավալվում էին Երուսաղեմի թագավորության սահմաններից հեռու: Առաջին լուրջ խնդիրը, որին նա բախվեց իր գահակալման ամենասկզբում, կապված էր թագավորության եւ խաչակրաց մյուս պետությունների հարաբերությունների հստակեցման հետ: Օգտվելով թագավորի փոփոխությունից, Անտիոքի իշխանապետությունը եւ Եդեսիայի ու Տրիպոլիի կոմսությունները անմիջապես փորձեցին բոթափել Երուսաղեմի փաստացի գերիշխանությունը: Սակայն Ֆուկը եռանդուն գործողությունների միջոցով ոչ միայն կարողացավ պարտադրել իր հեղինակությունը, այլև որոշ ժամանակ անց նվաճեց ապստամբների բարեկամությունը: Շարունակելով իրականացնել Անտիոքի խնամակալությունը,

նա չափավորեց Բոհեմունդ II-ի այրի Ալիսի հավակնությունները (1131-1132 թթ.), վանեց Հալեպի մահմեդականների կողմից իշխանապետությանն սպառնացող վտանգները (1133 թ.), փրկեց Մոնֆերանի բերդում թուրմենների կողմից պաշարված Տրիպոլիի կոմս Պոնսին (1133 թ.), լուծեց Անտիոքի գահակալության խնդիրը՝ Բոհեմունդ II-ի դուստր Կոնստանսին ամուսնացնելով Ռայմոնդ Պուատիեցու հետ (1135 թ.): Հարաբերական խաղաղությունը Ֆուկ թագավորին հնարավորություն տվեց զբաղվելու նաև երկրի ներքին բարեկարգման հարցերով: Մասնավորապես նրա օրոք կառուցվեցին Իբելին, Բլանշգարդ, Գիբելին եւ Քրաֆ դե Մոսթ բերդերը, որոնց շնորհիվ հուսալի պաշտպանական համակարգ ստեղծվեց եգիպտական ճակատում, որը թեև առայժմ խաղաղ էր, բայց ապագայում, ինչպես կատենենք, լուրջ խնդիրներ պիտի հարուցեր:

Սակայն Ֆուկի գահակալության օրոք արձանագրված ամենամեծ նվաճումը Դամասկոսի էմիրության հետ դաշնակցային հարաբերությունների վերականգնումն էր, այս անգամ արդեն հզորացող Իմադեդդին Ջանգիի դեմ ընդհանուր ճակատ կազմելու հողի վրա: 1130-ական թվականների կեսին Ջանգին տիրում էր ոչ միայն Մոսուլին, այլև Սիրիայի համարյա բոլոր խոշոր ֆաղաֆներին՝ Հալեպին, Համային, Հոմսին, Բաալբեկին եւ նույնիսկ Բանիասին, որը դեռևս 1132 թվականին նորից անցել էր դամասկացիների ձեռքը, սակայն այնուհետև նանաշել էր Մոսուլի արաբեկի գերիշխանությունը: Ամբողջացնելու համար հյուսիսային Միջագետքի եւ Սիրիայի միավորումը՝ Ջանգիին մնում էր միայն վերացնել Դամասկոսի էմիրության անկախությունը: Այդ նպատակով 1140 թվականին նա հսկայական բանակով շրջապատեց Դամասկոսը եւ պատրաստվեց վճռական գրոհի: Քաղաքի խնամակալ Մուիներդդին Ունուրը, այլ ելք չգտնելով, որոշեց դաշինք կնքել Երուսաղեմի թագավոր Ֆուկի հետ, նրա մոտ ուղարկելով նշանավոր արաբ մատենագիր եւ ֆաղաֆական գործիչ Ուսամա իբն-Մունկիդին: Ռազմական օգնության դիմաց Ունուրը Երուսաղեմի թագավորին խոստանում էր հոգալ նրա արշավանքի բոլոր ծախսերը եւ նրան վերադարձնել Բանիաս ֆաղաֆը: Ֆուկի առաջխաղացումը դեպի Գալիլեա բավական էր, որպեսզի Ջանգին վերացներ Դամասկոսի պաշարումը եւ հեռանար էմիրության սահմաններից: Հավատարիմ իր խոստմանը, Մուիներդդին Ունուրը 1140 թ. հունիսի կեսերին օգնեց Ֆուկին՝ գրավելու Բանիաս ֆաղաֆը, որից հետո Ուսամայի

նույնպես անհաջողակ էր նաև 1143 թ. նոյեմբերի 10-ին, որսի ժամանակ ստացած վերերից:

Երուսաղեմի հաջորդ թագավոր հռչակվեց Ֆուկի տասներեքամյա որդի Բաղդուին III-ն, իր մոր՝ Մելիսենդեի խնամակալության ներքո: Բաղդուինը եւ Մելիսենդեն միասին թագադրվեցին 1143 թ. դեկտեմբերի 25-ին: Մելիսենդեի խնամակալության շրջանը, որը տեսնելով Բաղդուինը (1143-1152 թթ.), համարվում է Երուսաղեմի թագավորության լնացման, միապետական իշխանության թուլացման, պետական ռազմավարության բացակայության ժամանակաշրջան: Գտնվելով Երուսաղեմի պատրիարքի, անպատասխանատու բարոնների եւ հատկապես Մանասե Գունդստաբլի ազդեցության տակ, Մելիսենդեն չկարողացավ հավուր պատշաճի արձագանքել ժամանակի մարտահրավերներին: Երուսաղեմի թագավորությունը կորցրեց խաչակրաց մյուս պետությունների հովանավորի իր նախկին դերը, ի վիճակի չէր արդյունավետ օգնություն ցույց տալու կործանվող եդեսիայի կոմսությանը, եւ վերջապես, Մելիսենդեի եւ Երուսաղեմի բարոնների անհետատես ֆաղափականության պատճառով խզվեց ֆրանկո-դամասկյան դաշինքը: Առաջին հարվածն այդ դաշինքին հասցվեց 1147 թվականին, երբ Երուսաղեմի ուժերը թափանցեցին Դամասկոսի էմիրությանը պատկանող Հաուրանի գավառը, փորձելով տիրել Սալֆադ եւ Բուրա ֆաղափներին: Մուսուլմանները ինքնուրույն հարկադրված օգնության կանչեց իր ռիսերիմ թշնամուն՝ Հալեպի էմիր Նուրեդդին իբն-Ջանգիին, եւ Երուսաղեմի բանակը հազիվ խուսափեց իսպառ ոչնչացումից: Իսկ հաջորդ, ավելի նակատագրական սխալը գործվեց 1148 թվականի ամռանը, երբ Երուսաղեմի ուժերը, գերմանական կայսր Կոնրադ III-ի եւ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս VII-ի գլխավորած երկրորդ խաչակրաց արշավանքին մասնակցող զորաբանակների հետ միասին, պաշարեցին Դամասկոսը: Ունուրն այս անգամ եւս դիմեց Նուրեդդինի օգնությանը, եւ խաչակիրները նորից, որեւէ արդյունքի չհասնելով, ետ ֆաշվեցին:

1152 թ. մարտի 30-ին, չափահասության տարիքի հասած Բաղդուին III-ը, Մելիսենդեի ֆաղափականությունից դժգոհ բարոնների օգնությամբ կրկին

քազադրվեց Երուսաղեմում եւ իր մորը զրկեց իշխանության բոլոր լծակներից: Ազատվելով նաեւ ամենագոր Մանասե Գունդստաբլից, նա վերջապէս դարձավ Երուսաղեմի թագավորության միահեծան տերը: Շուտով Բաղդուին III-ը հանգամանքների բերմամբ ստանձնեց նաեւ Տրիպոլիի կոմսության եւ Անտիոքի իշխանապետության խնամակալությունը, այդպիսով որոշ առումով վերականգնելով Երուսաղեմի թագավորության սասանված հեղինակությունը խաչակրաց մյուս պետությունների աշխում: 1153 թ. օգոստոսին նա հասավ նոր հաջողության, գրավելով Ասկալոն նավահանգիստը, որը Ֆաթիմյան Եգիպտոսի վերջին հենակետն էր Պաղեստինում: Այս նշանակալից հաղթանակը, ամրապնդելով Երուսաղեմի թագավորի դիրքերը, հետագայում հիմք հանդիսացավ ավելի ակտիվ ֆաղափականություն վարելու Եգիպտոսի նկատմամբ: Բաղդուին III-ը փորձեց նաեւ վերականգնել ֆրանկո-դամասկյան խզված դաշինքը, բայց արդեն ուշ էր: Անապահովությունից ու մշտական ցնցումներից հոգնած Դամասկոսի բնակիչները 1154 թ. ապրիլին իրենց ֆաղաբ հանձնեցին Նուրեդդինին, որն այսպիսով իր տրամաբանական ավարտին հասցրեց Սիրիայի միավորման եւ խաչակրության դեմ ընդհանուր մահմեդական հակառի ձեւավորման գործը: 1157 թվականից սկսած Երուսաղեմի թագավորությունը եւ միավորված Սիրիան թեւակոխեցին երկարատեւ դիմակայության մի շրջան, որը բնորոշվում էր համարյա չդադարող սահմանային բախումներով եւ փոխադարձ հրոսակային հարձակումներով: Զանգիդյան Սիրիայի ահագնացող վտանգի առջեւ Բաղդուին III-ը շանաց նոր դաշնակիցներ գտնել, եւ նրա ընտրությունը կանգ առավ Բյուզանդիայի վրա: Այդ դաշինքն ամուր հիմքերի վրա դնելու նպատակով նա նույնիսկ ամուսնացավ Մանուէլ Կոմնենոսի զարմուհու՝ Թեոդորայի հետ: Կայսեր արեւելյան արշավանքի ժամանակ (1158-1159 թթ.) Բաղդուին III-ը կարեւոր դիվանագիտական առաքելություն իրականացրեց՝ Մանուէլին հաշտեցնելով Անտիոքի պրինց Ռեյնալդ Շատիյոնցու եւ Կիլիկիո իշխան Թորոս Բ-ի հետ: Սակայն Մանուէլի միջոցով Նուրեդդինին ջախջախելու նրա փայփայած հիմնական հույսը չարդարացավ, քանի որ կայսրը հեռահար ֆաղափական հաշվարկներով լեզու գտավ Սիրիայի աթաբեկի հետ: Բաղդուին III-ի կյանքի վերջին տարիներին Երուսաղեմի թագավորությունում լուրջ իրադարձություններ տեղի չունեցան, եւ նա մահացավ Բելրուքում 1162 թ. փետրվարի 10-ին:

Երուսաղեմի գահն անցավ նրա կրտսեր եղբորը՝ Ամորի I-ին, որը թագադրվեց նույն թվականի փետրվարի 18-ին: Նրա գահակալության օրոք Երուսաղեմի թագավորությունը, Սիրիայի հակատում դատապարտված լինելով կրավորական դերակատարության, իր արտաքին ֆաղափարության գլխավոր խնդիրը դարձրեց Եգիպտոսի նվաճումը, ձգտելով օգտվել խոր իշխանական եզնաժամ ապրող Ֆաթիմյան հարստության կաթվածահար վիճակից: Բազմաթիվ պալատական դավերից հետո, որոնց ընթացքում սպանվել էին խալիֆ ալ-Ջաֆիրը (1154 թ.), վեզիր Աբասը (1154 թ.), հայազգի վեզիր Իբն-Ռուզիկը (1161 թ.), նրա որդի ալ-Ադիլը (1162 թ.) և ուրիշներ, 1163 թվականին Եգիպտոսի վեզիր էր դարձել Դիրդամը, արտաքին լինելով իր նախորդին՝ Շավարին, որն ապաստան էր գտել Նուբեդիանի արհմիջոցով: Եգիպտոսի զուտ ներհաղափական պայքարը շուտով վերածվեց տարածաշրջանային հակամարտության, որովհետև վեզիրի պաշտոնը վիճարկող կողմերը այդ պայքարի մեջ ներհաղեցին նաև Երուսաղեմի թագավորությանը և Սիրիային, դիմելով մերթ մեկի, մերթ մյուսի օգնությանը: Հաջորդ տարիները դարձան Եգիպտոսին տիրելու շուրջ այդ երկու երկրների միջև ընթացող կատաղի մրցակցության ժամանակաշրջան: 1163-1168 թվականների ընթացքում Երուսաղեմի ֆրանկները, Ամորի թագավորի գլխավորությամբ, չորս անգամ արշավեցին Եգիպտոս (1163, 1164, 1167, 1168 թթ.), որոշ ժամանակով նույնիսկ հարկատու դարձնելով այդ երկիրը և Կահիրեում ֆրանկ կայսզոր տեղակայելով: Նույն ժամանակահատվածում երեք անգամ Եգիպտոս ներխուժեցին նաև սիրիական զորքերը, փուրդ զորահրամանատար Ասադեդդին Շիրկունի հրամանատարության ներքո (1164, 1167, 1168/9 թթ.): Ֆրանկ-սիրիական այս հակամարտությունն ի վերջո ավարտվեց Սիրիայի հաղթանակով, և 1169 թ. հունվարի 18-ին Շիրկունը, բռնազավթելով իշխանությունը, հռչակվեց Եգիպտոսի վեզիր: Վերջինիս մահից հետո (1169 թ. մարտի 23) վեզիրի պաշտոնն անցավ նրա եղբորորդի Սալահեդդին Յուսուֆ իբն-Այուբին, որը 1171 թվականին վերացնելով նաև Ֆաթիմյան խալիֆայությունը, դարձավ նշանավոր Այուբյան հարստության հիմնադիրը: Ամորիի կյանքի վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձություններից հիշատակության արժանի են Նուբեդիանի և Սալահեդդինի դեմ նրա վարած սահմանային կռիվները, ֆրանկ-բյուզանդական դաշինքի ամրապնդման ուղղությամբ նրա կողմից թափված ջանքեր:

րը, Կիլիկիո իշխան Մլեհի ունեցություններից Անտիոքի իշխանապետության պաշտպանության նպատակով ձեռնարկված ֆայլերը, Տանարականների ռազմակրոնական միաբանության հետ նրա ունեցած լուրջ բախումը եւ այլն: Ամորիի ծառայությունների շարժում թերեւս չպետք է մոռացության տրվի նաեւ այն փաստը, որ նրա ներշնչանքով է գրվել խաչակրաց արշավանքների պատմության լավագույն աղբյուրը՝ Վիլհելմ Տյուրացու անփոխարինելի աշխատությունը: Ամորի I-ը, որը, ինչպես ապագան պիտի ցույց տար, եղավ Երուսաղեմի թագավորության վերջին մեծ միապետը, մահացավ երեսունութ տարեկան հասակում, 1174 թ. հուլիսի 11-ին:

1174 թ. հուլիսի 15-ին Երուսաղեմի թագավորության գահին բազմեց Ամորիի տասներեֆամյա բորոտ որդին՝ Բալդուին IV-ը: Թեեւ տաղանդավոր ու ֆաչասիրտ, բայց հաշմանդամ այդ թագավորի գահակալությունը համընկավ մի ժամանակաշրջանի, երբ հատկապես անհրաժեշտ էր ուժեղ ձեռքի եւ եռանդուն պետական գործչի առկայությունը, քանի որ խաչակրաց Արեւելքը հայտնվել էր միանգամայն նոր եւ չափազանց վտանգավոր ֆաղափական իրադրության մեջ: Նուրեդդինի մահից հետո (1174 թ. մայիսի 15) Սալահեդդինը գրավել էր նաեւ Դամասկոսը, եւ այդպիսով միավորելով Սիրիան ու Եգիպտոսը, փաստորեն լիակատար ցամաքային շրջափակման մեջ էր առել Երուսաղեմի թագավորությունը: Բայց որոշ ժամանակ, քանի դեռ Սալահեդդինը զբաղված էր Հալեպի եւ Մոսուլի Զանգիդյանների դեմ ընթացող դժվարին պայքարով, նա դեռեւս մահացու վտանգ չէր ներկայացնում խաչակրաց պետությունների համար, եւ վերջիններս հնարավորություն ունեին համախմբելու իրենց ուժերն ու նույնիսկ ակտիվ գործողություններ ծավալելու Այուբյան կայսրության սահմանամերձ շրջաններում: Այսպես, 1175 թվականի ամռանը Բալդուին IV-ն ասպատակեց Դամասկոսի երկրամասը, եւ հասնելով մինչեւ մայրաքաղաքի արվարձանները, հսկայական ավար ձեռք բերեց: 1176 թվականին Երուսաղեմի թագավորն ու Տրիպոլիի կոմսը արշավեցին դեպի Բեֆաայի հովտի կողմերը եւ Այնջարում պարտության մատնեցին Սալահեդդինի եղբայր Թուրանշահին: 1177-1180 թվականներին Բալդուին IV-ն արդեն ստիպված էր պաշտպանական պատերազմներ մղել Սալահեդդինի դեմ, թեեւ այդ ընթացքում եւս մի քանի փայլուն հաղթանակներ տանելով նրա նկատմամբ: Սակայն Մարջ-Այունում տեղի ունեցած վնասական հակառակմամբ (1179 թ. հունիս) ֆրանկները ծանր

պարտություն կրեցին, եւ Բաղդիւնը ստիպված եղավ զինադադար առաջարկել Սալահեդդինին, ինչն ընդունվեց վերջինիս կողմից (1180 թ. մայիս):

Սակայն Բաղդիւն IV-ի խորացող հիվանդությունը նրան թույլ չտվեց վերահսկել զինադադարի ապահովումը, եւ նրա վասալներից ոմանք, մասնավորապէս 1176 թվականին գերությունից ազատված ու Անդրհորդանանի տիրուհու հետ ամուսնացած Անտիոքի նախկին պրինց Ռեյնալդ Շատիյոնցին, բազմիցս խախտեցին այն, առիթ տալով Սալահեդդինին վերսկսելու պատերազմական գործողությունները: 1183 թվականին Բաղդիւն IV-ի առողջական վիճակն այնքան վատացավ, որ նա գահի ժառանգականությունն ապահովելու համար թագադրեց իր մանկահասակ ֆեոդոն՝ Բաղդիւն V-ին, նրա խնամակալ կարգելով Տրիպոլիի կոմս Ռայմոնդ III-ին: Բաղդիւն IV-ը մահացավ 1185 թ. մարտի կեսերին: Հաջորդ տարվա ամռանը մահացավ նաեւ Բաղդիւն V-ը, եւ Երուսաղեմի գահն անցավ վերջինիս մորը՝ Սիբիլին ու նրա ամուսնուն՝ Գի Լուսինյանին, ինչը խոր դժգոհություն առաջացրեց Ռայմոնդ III-ի ու նրա կողմնակիցների մոտ եւ պատճառ դարձավ լուրջ երկպառակությունների, որոնք շուտով ճակատագրական դեր պիտի խաղային թագավորության կյանքում:

1187 թվականի սկզբին Ռեյնալդ Շատիյոնցին նորից խախտեց Երուսաղեմի թագավորության եւ Այուբյան կայսրության միջեւ կնքված զինադադարը, կողոպտելով Կահիրեից Դամասկոս ուղեւորվող մի հարուստ ֆարավան: Սալահեդդինը պահանջեց ետ վերադարձնել առգրավված հարստություններն ու ազատ արձակել այդ հրոսակային հարձակման ժամանակ բռնված գերիներին: Ստանալով Ռեյնալդի մերժումը, նա նույն խնդրանքով դիմեց Գի Լուսինյանին: Եվ միայն այն բանից հետո, երբ վերջինս նույնպէս չկարողացավ ազդել անհնազանդ իշխանի վրա, Սալահեդդինը պատերազմ հայտարարեց Երուսաղեմի թագավորությանը, միաժամանակ երդվելով՝ անձամբ վրեժ լուծել Ռեյնալդից: Սալահեդդինի հայտարարած սրբազան պատերազմի դրոշի ներքո հավաքվեցին Դամասկոսի, Եգիպտոսի, Հալեպի եւ Ջազիրայի բոլոր մահմեդական ուժերը, որոնք մարտ ամսին շարժվեցին դեպի Անդրհորդանանի կողմերը: Մոտալուս աղետի գիտակցությունը ստիպեց խաչակիրներին մի կողմ դնել իրենց ներքին տարաձայնությունները եւ նույնպէս ընդհանուր զորահավաք կազմակերպել: Գի Լուսինյանի շուրջ, Գալիլեայի գավառում, հավաքվեց մոտավորապէս 1500 ասպետներ

րից ու 20.000 հետեւակայիններից կազմված մի պատկառելի բանակ, որը նիշտ մարտավարություն ընտրելու դեպքում միանգամայն ընդունակ էր դիմակայելու Սալահեդդինի ուժերին: Սակայն միանձնյա ղեկավարության բացակայության եւ սխալ հաշվարկների պատճառով խաչակրաց բանակը մահմեդականներին նակատամարտ տվեց իր համար չափազանց աննպաստ մի վայրում, Հաթինի մոտ, եւ 1187 թ. հուլիսի 4-ին շախշախիչ պարտություն կրեց Սալահեդդինի զորքերից: Խաչակրաց համարյա բոլոր առաջնորդները, այդ թվում՝ Գի Լուսինյանը, Ռեյնալդ Շատիյոնցին եւ Տանարականների մագիստրոս Ջերարդ Ռիդֆորտացին, գերի ընկան Սալահեդդինի ձեռքը: Հավատարիմ իր երդմանը, վերջինս անձամբ սպանեց Ռեյնալդ Շատիյոնցուն: Հաթինի նակատամարտը, որի ընթացքում համարյա ամբողջությամբ ոչնչացավ խաչակրաց բանակը, կտրուկ փոխեց ուժերի հարաբերակցությունը, եւ մահմեդականները մեկը մյուսի ետեւից գրավեցին ֆրանկների անպաշտպան մնացած ֆաղաֆներն ու բերդերը:

Երուսաղեմը գրավվեց 1187 թ. հոկտեմբերի 2-ին: Ի տարբերություն խաչակիրների, որոնք ինչպես հիշում ենք, ութսունութ տարի առաջ անխնա կոտորել էին ֆաղաֆի մահմեդական եւ հրեա բնակիչներին, Սալահեդդինը մեծահոգաբար խնայեց քրիստոնյաների կյանքը: Երուսաղեմի անկումից հետո Սալահեդդինը, համարյա առանց դիմադրության հանդիպելու, շարունակեց Երուսաղեմի թագավորության, Տրիպոլիի կոմսության եւ Անտիոքի իշխանապետության տարածքների նվաճումը, ֆրանկներին մեկուսացնելով մի ֆանի առանձին կղզյակներում: Երրորդ խաչակրաց արշավանքի նախօրյակին ֆրանկների ձեռքում էին մնացել միայն հատուկեմտ ֆաղաֆներ ու բերդեր՝ Երուսաղեմի թագավորությունում Տյուրոսը, Տրիպոլիի կոմսությունում՝ Տրիպոլին, Տարտուսը, Քրաֆ դե Շվալիենն եւ մի ֆանի փոքր ամրոցներ, Անտիոքի իշխանապետությունում՝ Անտիոքը, Մարկաբը եւ Որոնտեսի գետաբերանը: Թվում էր, թե Սալահեդդինը մահացու հարված էր հասցրել Արեւելքում հաստատված խաչակրաց պետություններին, եւ նրանք այլևս վերակենդանանալու որեւէ հույս չունեին: Սակայն երրորդ խաչակրաց արշավանքը, որը Ֆրիդրիխ Շիկամորուսի մահից հետո գլխավորում էին Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասիրտը եւ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ II-ը, կրկին թե՛եց կշեռքի նժարը՝ եւս հարյուր տարվա կյանք պարգեւելով խաչակրաց պետությունների մնացորդներին:

Ինչպես հետագայում պարզվեց, խաչակրաց պետությունների դեմ մղած վերջնական պայքարի այս հանգրվանում Սալահեդդինը նակատագրական սխալ էր թույլ տվել՝ չգրավելով Տյուրոս ֆաղաֆը: Այս ֆաղաֆում էին կուտակվել պաղեստինյան մյուս բնակավայրերից տեղահանված ֆրանկները, եւ դեռեւս 1187 թ. հուլիսին Կոստանդնուպոլսից այստեղ էր ժամանել եռանդուն մի զորահրամանատար՝ մարֆիզ Կոնրադ Մոնֆերատցին, որը եւ հմտորեն կազմակերպեց ֆաղաֆի պաշտպանությունը Սալահեդդինի հարձակումների դեմ: Տյուրոսն, այսպիսով, դարձավ Պաղեստինի վերանվանման գլխավոր հենակետը խաչակիրների համար: Երուսաղեմի թագավոր Գի Լուսինյանը, ազատվելով գերությունից, փորձեց հաստատվել այդ ֆաղաֆում, սակայն Կոնրադ Մոնֆերատցին փակեց դարպասները նրա առջեւ: Այնժամ Գին, որոշ օգնություն ստանալով Տրիպոլիում եւ Անտիոքում, մի փոփոխ գործախմբով գնաց պաշարեց մահմեդականների ձեռքում գտնվող Աֆֆա ֆաղաֆը (1189 թ. օգոստոս): Առաջին հայացքից խելահեղություն թվացող այդ ձեռնարկը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, շրջադարձային հանդիսացավ Լեւանտի նակատագրի համար: Շուտով Երուսաղեմի աներկիր թագավորը լուրջ համալրումներ ստացավ հանձինս երրորդ խաչակրաց արշավանքի մասնակիցների, որոնք 1189 թ. սեպտեմբերից ի վեր մեկը մյուսի ետեւից սկսեցին ժամանել Սուրբ Երկիր: 1190 թ. հուլիսին սեփական զորախմբով նրան ընկերացավ կոմս Հենրի Շամպայնացին՝ Երուսաղեմի ապագա թագավորներից մեկը: 1191 թ. ապրիլին Աֆֆա հասավ Ֆրանսիայի Ֆիլիպ II թագավորը, իսկ հուլիսին՝ նաեւ Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասիրտը, որը նանապարհին իմիջիայլոց հասցրել էր բյուզանդացիներից խլել Կիպրոս կղզին: 1191 թ. հուլիսի 12-ին խաչակիրների միավորված ուժերը գրավեցին Աֆֆան, որն այնուհետեւ դարձավ Երուսաղեմի վերականգնված թագավորության մայրաքաղաքը: Հաջորդ մեկ տարվա ընթացքում գլխավորաբար Ռիչարդ Առյուծասրտի ջանքերով ազատագրվեցին նաեւ Կայֆան, Կեսարիան, Արսուֆը, Յաֆայի, Լիդդայի ու Ռամլայի տարածքների մոտ կեսը, ինչի շնորհիվ Երուսաղեմի թագավորությունը բնականոն կենսագործունեության որոշակի հնարավորություններ ձեռք բերեց:

Սակայն այս հաջողություններն ուղեկցվեցին ֆրանկների նամբարում առաջացած լուրջ ներքին տարածայնություններով, որոնց պատճառը Երու-

սաղեմի գահի ժառանգության հարցն էր: 1190 թ. հոկտեմբերին մահացել էին Սիբիլ թագուհին ու նրա երկու դուստրերը: Գի Լուսինյանը, որը Երուսաղեմի թագը կրում էր միայն Սիբիլի ամուսինը լինելու հանգամանքով, անսպասելիորեն հայտնվել էր գահագործի լինելու վտանգի առջև, որովհետև ըստ ֆեոդալական իրավունքի՝ գահի օրինական ժառանգորդ էր դարձել Ամորի թագավորի երկրորդ դուստր Իզաբելը: Կոնրադ Մոնֆերատցին անմիջապես ամուսնացել էր վերջինիս հետ և միանգամից ներկայացրել Երուսաղեմի գահին տիրելու իր հայցը: Երրորդ խաչակրաց արշավանքի մասնակիցների ժամանումից հետո այդ պայքարի մեջ էին ներգրավվել նաև Անգլիայի և Ֆրանսիայի թագավորները՝ առաջինը բռնելով Գի Լուսինյանի, իսկ երկրորդը՝ Կոնրադ Մոնֆերատցու կողմը: 1191 թ. հուլիսի 27-28-ին Ալֆալյում գումարված բարոնների և խաչակրաց արշավանքի առաջնորդների ժողովը կայացրեց հետևյալ փոխզիջումային որոշումը. Գի Լուսինյանը որպես օձյալ թագավոր պահպանում է Երուսաղեմի գահը մինչև իր մահը, որից հետո այն անցնում է Կոնրադ Մոնֆերատցուն: Այդուհանդերձ խնդիրը դրանով ամենելին էլ չլուծվեց, և 1192 թ. ապրիլին Ասկալոնում տեղի ունեցած նույնատիպ ժողովը համարյա միաձայնությամբ թագավոր ճանաչեց Կոնրադին: Սակայն բախտի փմհանույֆով վերջինս ապրիլի 28-ին Տյուրոտում սպանվեց իսմայելիտների ձեռքով, և Երուսաղեմի գահի հարցը նորից բաց մնաց: Մայիսի 5-ին, ամուսնանալով այրիացած Իզաբելի հետ, Երուսաղեմի նոր թագավոր հռչակվեց Հենրի Շամպայնացին: Գի Լուսինյանը մեկնեց Կիպրոս, և գնելով այդ կղզին, հիմնեց Արեւելի հինգերորդ խաչակրաց պետությունը: Երրորդ խաչակրաց արշավանքն ավարտվեց 1192 թ. սեպտեմբերի 3-ին Ռիչարդ Առյուծասրտի և Սալահեդդինի միջև կնքված զինադադարով: Ռիչարդը Եվրոպա մեկնեց 1192 թ. հոկտեմբերի 9-ին, իսկ մինչ այդ, դեռևս նախորդ տարվա ամռանը մեկնել էր նաև Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ II-ը: Երրորդ խաչակրաց արշավանքն, այսպիսով, ունեցավ երկու շոշափելի արդյունք. նախ՝ թեկուզ մասամբ վերականգնվեց Երուսաղեմի թագավորությունը, և երկրորդ՝ հիմնադրվեց Կիպրոսի խաչակրաց պետությունը:

Հենրի Շամպայնացու գահակալության շրջանը, որը տևեց հինգ տարի, համեմատաբար խաղաղ անցավ, եթե չհաշվենք 1193 թվականին նրա և Գի Լուսինյանի միջև ծագած բավականին լուրջ միջադեպը: Վերջինս, հեն-

վելով պիզացիների աշակցության վրա, փորձեց գրավել Տյուրոսը, բայց Հենրին, ժամանակին բացահայտելով դավադրությունը, խստորեն պատժեց պիզացիներին, նրանց արտաֆետով Աֆայից եւ առգրավելով նրանց պատկանող սեփականությունները: Երբ Գիի եղբայրը՝ Ամորի Լուսինյանը, որը Երուսաղեմի թագավորության սպարապետն էր, միջամտեց պիզացիների օգտին, Հենրին բանտարկեց նրան, սպա վտարեց թագավորության սահմաններից: Ամորին ապաստան գտավ Կիպրոսում, իսկ հաջորդ տարի այդ երկրի գահին փոխարինեց իր եղբորը: Հենրի Շամպայնացու գահակալության սկզբում տեղի ունեցավ եւս մի կարեւոր իրադարձություն. 1193 թ. մարտի 4-ին մահացավ Սալահեդդինը, եւ նրա հիմնադրած Այուբյան կայսրությունը մասնատվեց: Այնուամենայնիվ, Հենրին փորձ չարեց օգտվելու այդ հանգամանքից, այլ ընդհակառակը, հավատարիմ իր խաղաղասիրական ֆաղափականությանը, երկարաձգեց Այուբյանների հետ կնված զինադադարի ժամկետը: 1194 թվականին Հենրին կատարեց այդ ֆաղափականությունից բխող եւս երեք կարեւոր ֆայլ. նախ դաշինք կնքեց լեռնային Սիրիայում հաստատված իսմայելիտների հետ, սպա այցելելով Կիլիկիա, հաշտություն կայացրեց Հայոց իշխան Լեոն Բ-ի եւ Անտիոքի արինց Բոհեմունդ III-ի միջեւ, իսկ այնտեղից ուղևորվելով Կիպրոս, հարթեց Ամորի Լուսինյանի հետ ունեցած ֆենը: Այդ իմաստուն թագավորը, սակայն, շուտով ցավալի պատահարի զոհ դարձավ Աֆայում (1197 թ. սեպտեմբերի 10):

Հենրիի մահից հետո, 1197 թվականի աշնանը Այուբյանները գրավեցին Յաֆան: Դրա փոխարեն, Սուրբ Երկիր ժամանած գերմանացի խաչակիրները, Կիպրոսի թագավոր Ամորի Լուսինյանի օգնությամբ, գրավեցին Բեյրութը: 1198 թ. հունվարին Ամորին ամուսնացավ Հենրի Շամպայնացու այրու՝ Իզաբելի հետ եւ ստացավ արֆայական երկրորդ թագը: Բայց ինչպես նա, այնպես էլ հետագայում Երուսաղեմի գահին բազմած Կիպրոսի մյուս թագավորները, չմիանալեցին երկու պետությունները: 1198 թ. հուլիսի 1-ին Ամորին նորոգեց խաղաղությունը Սալահեդդինի եղբայր Մելիֆ ալ-Ադիլի հետ, որն այդ ժամանակ կատաղի պայքար էր մղում իր եղբորորդիների դեմ՝ Այուբյան կայսրության լիիրավ տերը դառնալու համար, պայքար, որը նա հաջողությամբ պիտի ավարտեր 1200 թվականին: 1204 թվականին Ամորին կրկին, վեց տարվա ժամկետով, երկարաձգեց զինադադարը Մելիֆ ալ-Ադիլի հետ: Վերջինիս համար այդ զինադադարն, ըստ երեսույթին, այն-

ֆան կարեւոր էր, որ նա Ամորիին զիջեց նաեւ Սիդոն, Յաֆա, Լիդդա եւ Ռամլա ֆաղաֆները: Ամորիի գահակալության օրոք, նույն 1204 թվականին տեղի ունեցավ նաեւ չորրորդ խաչակրաց արշավանքը: Բայց այդ խաչակրությունը, ինչպես հայտնի է, Սուրբ Երկրին օգնության գալու փոխարեն, շրջվեց դեպի Բյուզանդիայի մայրաքաղաքը, եւ գրավելով այն, հիմնեց Կոստանդնուպոլսի լատին կայսրությունը: Արեւելիի ֆրիստոնյաներին պատած հիասթափության այս մթնոլորտում էլ Ամորի Լուսինյանը մահացավ 1205 թ. ապրիլի 1-ին: Քիչ անց կյանքից հեռացավ նաեւ Իզաբելը, եւ Երուսաղեմի գահի օրինական ժառանգորդ դարձավ վերջինիս ու Կոնրադ Մոնֆերատցու դուստր Մարիան: Բայց ֆանի որ Մարիան ընդամենը 13-14 տարեկան էր, նրա խնամակալ կարգվեց թագավորության ամենանշանավոր իշխանական տոհմի ներկայացուցիչ Հովհաննես Իբելինացին՝ Բեյրութի տերը:

Հովհաննես Իբելինացու խնամակալության հինգ տարի տեսած ժամանակաշրջանում (1205-1210 թթ.) թագավորության կյանքում ֆիչ թե շատ նշանակալից իրադարձություններ տեղի չունեցան: Գիտակցելով ուժեղ միապետական իշխանության անհրաժեշտությունը, Իբելինացին եւ Աֆայի բարոնները գահի ժառանգորդուհու համար ամուսին փնտրելու խնդրանքով դիմեցին Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ-Օգյուստին: Վերջինս ընտրեց վաթսունամյա Հովհաննես Բրիենացուն, որը 1210 թվականին ժամանելով Սուրբ Երկիր եւ ամուսնանալով տասնինամյա Մարիա Մոնֆերատցու հետ, հոկտեմբերի 3-ին թագադրվեց Տյուրոսի Մայր տաճարում: 1211 թ. հուլիսին Երուսաղեմի նոր թագավորը եւ Մելիֆ ալ-Ադիլը եւս վեց տարով երկարաձգեցին նախկին զինադադարը: 1212 թվականին Մարիան մահացավ, թողնելով մի դուստր՝ Իզաբել կամ Յոլանդա անունով, որին եւ իրավականորեն անցավ Երուսաղեմի գահի ժառանգությունը: Ըստ այդմ, մինչեւ իր դստեր չափահասությունը Հովհաննես Բրիենացին երկիրը պիտի կառավարեր արդեն խնամակալի իրավունքով: 1214 թվականին, ձգտելով դաշինք կնքել իր հզորության գագաթնակետին գտնվող Կիլիկիո հայկական թագավորության հետ, Հովհաննեսն ամուսնացավ Լետոն Բ-ի դուստր Ստեֆանիի հետ: Բրիենացու գահակալության ութերորդ տարում, 1217 թվականին, Սուրբ Երկիր ժամանեց, այսպես կոչված, հունգարական խաչակրությունը՝ Անդրաշ II թագավորի գլխավորությամբ: Սակայն դեպի Գալիլեա կատարած մի ֆանի անհաջող արշավանքներից հետո հունգար խաչակիր-

ները ետ դարձան: Տունդարձի հանապարհին, անցնելով Կիլիկիայով, Անդրաշ թագավորն իր երրորդ որդուն նշանեց Լեոն Բ-ի դուստր Զապելի հետ:

1217 թվականին սկսվեց հինգերորդ խաչակրաց արշավանքը: Հունգարական խաչակրությունից հետո եվրոպական տարբեր երկրներից աստիճանաբար Աֆայում կուտակված խաչակիրները 1218 թ. մայիսի վերջերին, Հովհաննես Բրիենացու գլխավորությամբ, նավարկեցին դեպի Նեղոսի դելտայի ափերը և պաշարեցին կարետր ռազմավարական նշանակության ունեցող եգիպտական Դամիատ նավահանգստային ֆաղաբը: Սեպտեմբերին եգիպտոս ժամանեց պապական նվիրակ, կարդինալ Պելագիոսը, և մեկուսացնելով Երուսաղեմի թագավորին, խաչակրության հրամանատարությունը վերցրեց իր ձեռքը: Թվում էր, թե ամեն ինչ հաջող է դասավորվում խաչակիրների համար: Այդ տարվա օգոստոս ամսին մահացել է Մելիֆ ալ-Ադիլը, և նրան փոխարինած Մելիֆ ալ-Քամիլը դեռևս չէր հասցրել ամրապնդել իր իշխանությունը: Զգալով իր դիրքերի թուլությունը, 1219 թվականի գարնանը Մելիֆ ալ-Քամիլը ֆրանկներին առաջարկեց՝ Դամիատի պաշարումը վերացնելու դիմաց նրանց վերադարձնել Երուսաղեմը և խաչակրաց թագավորության ողջ նախկին տարածքը, բացի Անդրհորդանանից: Թեև Հովհաննես Բրիենացին և Երուսաղեմի բարոնների մեծ մասը համաձայն էին ընդունելու ալ-Քամիլի առաջարկը, սակայն Պելագիոսը կորականապես մերժեց այն, տրամադրված լինելով ծնկի բերել եգիպտոսի սուլթանությունը, որից հետո Երուսաղեմն ինֆնրստինյան կանցներ ֆրանկների ձեռքը:

1219 թ. նոյեմբերի 5-ին, շուրջ մեկուկեսամյա պաշարումից հետո, խաչակիրները վերջապես գրավեցին Դամիատը: Իմիջիայլոց, հաջորդ տարվա ամռանը այդ ֆաղաբ այցելեց Ռայմոնդ-Ռուբենը, սակայն ոչ թե խաչակրությանը միանալու մտքով, այլ փորձելով Պելագիոսից օգնություն ստանալ՝ Կիլիկիո գահին տիրելու համար: Այդ հարցը թողնելով ապագային, Պելագիոսն առայժմ ամբողջությամբ կլանված էր եգիպտոսը նվաճելու գաղափարով և պատրաստվում էր դեպի Կահիրե ուղղված վճռական արշավանքին: Սակայն Մելիֆ ալ-Քամիլը, որն այդ ընթացքում կարողացել էր համախմբել Այուբյան ուժերը, 1221 թ. օգոստոսին Նեղոսի դելտայում շրջապատեց խաչակրաց բանակները և ստորացուցիչ պայմաններ պարտադրեց նրանց: Հակառակորդ կողմերի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ ութամյա զինադադար հաստատվեց, և խաչակիրները, լինե-

լով այնքան թանկ գնով ձեռքբերված Դամիատ ֆաղաբը, ձեռնունայն տուն վերադարձան:

1225 թվականին գերմանական կայսր Ֆրիդրիխ II-ը, որը Արեւելի նկատմամբ վաղուց ի վեր լուրջ ծրագրեր էր փայփայում, ամուսնացավ Հովհաննես Բրիենացու տասնչորսամյա դստեր՝ Իզաբելի հետ և ստացավ Երուսաղեմի թագը կրելու իրավունքը: Հովհաննես Բրիենացին, այսպիսով, գրկվեց գահից և հետագայում պապական կուրիայի ջանքերով հայտնվեց Կոստանդնուպոլսի լատինական կայսրության ղեկին: 1228 թ. հունիսին Ֆրիդրիխ II-ը, Հռոմի պապերին տված բազմաթիվ խոստումներից հետո, վերջապես գլխավորեց վեցերորդ խաչակրաց արշավանքը և Իտալիայից նավարկեց դեպի Արեւելք: Որոշ ժամանակ Կիպրոսում մնալուց և կղզու գործերը իր ուզած ձեով կարգավորելուց հետո, սեպտեմբերին նա ժամանեց Աֆֆա և անմիջապես լուրջ խնդիրներ ունեցավ տեղի բարոնների հետ, որոնց գլխավորում էր Հովհաննես Իբելինացին: Բանն այն էր, որ խաչակրության առաջնորդի կարգավիճակում առաջացել էր երկու անպատեհություն. նախ՝ Ֆրիդրիխը Վատիկանի բանադրանքի տակ էր, և երկրորդ՝ այդ տարվա ապրիլին մահացել էր նրա կինը՝ Իզաբելը, թողնելով մի արու գավակ՝ Կոնրադին, ուստի կայսրը ժամանել էր ոչ թե օրինական թագակրի, այլ ընդամենը իր որդու խնամակալի հանգամանքով: Սակայն չնայած այդ բարդություններին, Ֆրիդրիխին հաջողվեց ինչ-որ կերպ համախմբել խաչակիրների ու տեղի բարոնների ստորաբաժանումները և ուժի սոսկական ցուցադրմամբ հարկադրել մահմեդականներին՝ լուրջ զիջումներ կատարելու: 1229 թ. փետրվարին գերմանական կայսեր և Մելիք ալ-Քամիլի միջև կնքված պայմանագրով Այուբյանները ֆրանկներին վերադարձրին Երուսաղեմը, Բեթղեհեմը, Նազարեթը, Տորոնը և Սիդոնի շրջակա տարածքները, միաժամանակ պարտավորվելով տաս տարվա զինադադար ապահովել: 1229 թ. մարտի 17-ին Ֆրիդրիխը հանդիսավորությամբ մուտք գործեց Երուսաղեմ և մյուս օրը խորհրդանշական կերպով ինքն իրեն թագադրեց Սուրբ Գերեզմանի եկեղեցում: Գերմանական կայսեր տպավորիչ ձեռքբերումները, սակայն, ամենեւին չմեղմեցին տեղի բարոնների դժգոհությունները նրա նկատմամբ, և Ֆրիդրիխը 1229 թ. մայիսի 1-ին ամբոխի նզովքների ուղեկցությամբ մեկնեց Աֆֆայից:

Մինչև 1268 թվականը Երուսաղեմի գահին իրավականորեն մնաց Հոհենշտաուֆենների հարստության երեք ներկայացուցիչների ձեռքում՝ Ֆրիդրիխ II (1225-1250 թթ.), Կոնրադ IV (1228-1254 թթ.) և Կոնրադին (1254-1268 թթ.), սակայն նրանցից ոչ մեկը երբևէ չբարեհաճեց թեկուզ կարճ ժամանակով հաստատվել Սուրբ Երկրում: Գործոն միապետական կառավարման բացակայության հետեանմով Երուսաղեմի թագավորությունը թեալոյսեց անիշխանության և ֆաղաֆացիական պատերազմների երկարատև մի ժամանակաշրջան, որի ընթացքում երկրի բախտը փաստացիորեն տնօրինում էին ազդեցիկ իշխանական ընտանիքները, ռազմա-կրոնական միաբանությունները և իտալական առևտրային համայնքները: Բարոնների կենտրոնախույս տրամադրությունները զսպելու և իր իշխանությունը ցուցադրելու նպատակով Ֆրիդրիխ II-ը 1231 թվականին Արեւելք ուղարկեց մի ուժեղ զորաբանակ՝ մարշալ Ռիկարդո Ֆիլանգիերիի հրամանատարության ներքո: Վերջինս հեշտությամբ գրավեց Բեյրութ, Սիդոն և Տյուրոս ֆաղաֆները, ապա Աֆֆայում Գերագույն ատյանի նիստ հրավիրելով, առգրավված հայտարարեց Իբելիններին պատկանող բոլոր սեփականությունները: Այս ապօրինությունը հարուցեց թագավորության բոլոր բարոնների զայրույթը, որոնք ինքնապաշտպանական բնագոյով համախմբվեցին Հովհաննես Իբելինացու շուրջ և վճռական պայքարի դուրս եկան կայսերական ուժերի դեմ: Իբելինացին ընտրվեց Աֆֆայի ֆաղաֆապետ և գլխավորեց երկրում ծայր առած հակագերմանական շարժումը, որը շուտով վերածվեց իսկական պատերազմի: Ի դեպ, պատերազմը միաժամանակ ծավալվեց թե՛ Երուսաղեմի թագավորության, թե՛ Կիպրոսի խաչակրաց պետության տարածքում: 1233 թվականին կայսերական ուժերը երկու երկրում էլ պարտություն կրեցին, և Ֆիլանգիերին իր գործերի մնացորդների հետ ֆաղվեց Տյուրոս: Պատերազմի արդյունքում Հովհաննես Իբելինացին դարձավ Երուսաղեմի թագավորության անվիճելի հեղինակությունն ու իրական ղեկավարը: Սակայն նա մահացավ 1236 թվականին, և նրան հաջորդեց իր որդին՝ Բալիան III Իբելինացին, որն էլ ավարտելով հոր սկսած գործը, 1243 թվականին կայսերականներին վերջնականապես վտարեց Տյուրոսից: Քաղաֆացիական պատերազմից թուլացած թագավորությունը չկարողացավ օգտվել Մելիֆ ալ-Քամիլի մահից հետո (1238 թ.) Ալյուբյան սուլթանությունում ստեղծված խառնակ իրավիճակից: Թեև ֆրանկներին հաջողվեց դաշինք կնքել Սիրիայի

Այուրյանների հետ, սակայն եգիպտա-խորեզմյան միացյալ ուժերը 1244 թվականի հուլիսին գրավեցին Երուսաղեմը, իսկ հոկտեմբերին Գազայի մոտ ջախջախիչ պարտության մատնեցին ֆրանկո-սիրիական զորքերին: Երուսաղեմի թագավորությունը դրանից հետո նորից ամփոփվեց Յաֆայից մինչև Բեյրութ ընկած ծովեզերյա նեղ տարածքում:

1248 թվականին սկսված յոթերորդ խաչակրաց արշավանքը, որը գլխավորում էր Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ը, թե՛ իր ընթացքով, թե՛ իր արդյունքներով հանդիսացավ հինգերորդի բացարձակ կրկնությունը: 1248-1249 թվականների ձմեռն անցկացնելով Կիպրոսում, Լյուդովիկոսը համախմբեց Եվրոպայից ու Սուրբ Երկրից ժամանած խաչակրաց ուժերը եւ մայիսի վերջերին նավարկեց դեպի Եգիպտոս: Հունիսի 6-ին առանց գրոհի գրավելով հակառակորդի կողմից լվված Դամիատ ֆաղաքը, նա միառժամանակ դադարեցրեց զորքերի առաջխաղացումը, սպասելով Նեղոսի ջրերի ցածրացմանը: Եգիպտոսի սուլթան Նաջմեդդին Այուբը, իր հոր նման, որոշեց սակարկել Լյուդովիկոսի հետ, առաջարկելով փոխանակել Դամիատ եւ Երուսաղեմ ֆաղաքները: Սակայն Ֆրանսիայի թագավորն, իր հերթին, ընդօրինակելով Պելագիոս կարդինալին, մերժեց այդ առաջարկը: 1249 թ. նոյեմբերին խաչակրաց բանակը շարժվեց դեպի Նեղոսի դելտայում գտնվող Մանսուրա ֆաղաքը, որտեղ նամբար էին խփել եգիպտական զորքերը՝ կազմված հիմնականում մամլյուքյան ստորաբաժանումներից: Մի ֆանի մարտավարական սխալների եւ հակառակորդի հմուտ խուսանավումների պատճառով խաչակրաց բանակը նորից խնճվեց դելտայի ջրանցքների ցանցում, եւ լիովին շրջապատվելով, անձնատուր եղավ: Տասնյակ հազարավոր զինվորների հետ գերի ընկավ նաեւ բանակի ողջ հրամանատարական կազմը՝ Լյուդովիկոս թագավորի գլխավորությամբ: 1250 թ. մայիսին, վերադարձնելով Դամիատը եւ վճարելով սահմանված փրկագնի մոտավորապես կեսը, Լյուդովիկոսը եւ նրան ընկերակցող բարձրաստիճան ազնվականներն ազատ արձակվեցին եւ անմիջապես մեկնեցին Աֆա: Տեղին է նշել, որ այդ օրերին պետական հեղաշրջման հետեւանով Եգիպտոսում Այուբյան հարստությանն արդեն փոխարինել էր մամլյուքյան իշխանությունը: Լինելով թերեւս խաչակրաց պատմության միակ բարոյական կերպարը, Լյուդովիկոսը Սուրբ Երկրում մնաց այնքան ժամանակ, մինչեւ որ ազատեց

իր պատճառով գերի ընկած բոլոր մարդկանց, որից հետո միայն, 1254 թ. ապրիլին, հանգիստ խղճով հրաժեշտ ավեց Արեւելին:

Լյուդովիկոսի մեկնումից հետո անիշխանությունը Երուսաղեմի թագավորությունում ավելի խորացավ, ինչը բացասաբար անդրադարձավ մասնավորապես երկրի ներքին կյանքի վրա: Արտաքին ֆաղափականության ոլորտում առաջիկա տասնամյակը համեմատաբար խաղաղ ընթացք ունեցավ: Դամասկոսի Այուբյանները եւ Եգիպտոսի մամլյուֆները, մտահոգված մոնղոլական առաջխաղացմամբ, 1256 թվականին տաս տարվա զինադադար կնքեցին Երուսաղեմի թագավորության հետ: Սակայն նույն թվականին Աֆայում ծագած մի արյունալի հակամարտություն ցնցեց ոչ միայն թագավորության, այլև ողջ խաչակրաց Արեւելի կյանքը: Խոսքը վերաբերում է, այսպես կոչված, Սուրբ Սաբայի պատերազմին, որը պայթեց վենետիկցիների ու ճենովացիների միջև՝ Աֆայում գտնվող նույնանուն վանքի պատկանելության խնդրի շուրջ: Պատերազմը, որն իրականում իտալական ծովային հանրապետությունների հարատև գաղութատիրական մրցակցության արտահայտությունն էր, շուտով տարածվեց լատինական Արեւելի հասարակական բոլոր խավերի վրա եւ մակընթացություններով ու տեղատվություններով շարունակվեց մի քանի տարի: Խաչակրաց հասարակության ներքին ճգնաժամը կործանարար հետեւանքներ ունեցավ Երուսաղեմի թագավորության համար, որն այնուհետև անընդունակ գտնվեց դիմագրավելու Մերձավոր Արեւելիում ստեղծված միանգամայն նոր ֆաղափական իրադրության մարտահրավերները:

1258 թվականին մոնղոլական հորդաները, Հուլավու խանի գլխավորությամբ, գրավելով Բաղդադը, վերացրին հինգհարյուրամյա Աբասյան խալիֆայությունը, իսկ 1260 թվականին ձեռնարկեցին սիրիական արշավանքը: Եվ մինչ Կիլիկիո հայկական թագավորությունն ու Անտիոքի իշխանապետությունը դաշնակցեցին մոնղոլների հետ, Աֆայի բարոնները որոշեցին մոնղոլա-մահմեդական հակամարտության մեջ չեզոքություն պահպանել: Իրականում, սակայն, նրանք չեզոքությունից ավելի մեծ ծառայություն մատուցեցին մամլյուֆներին, նրանց թույլ տալով ազատորեն անցնել իրենց տարածքով եւ պարենավորելով նրանց զորքերը: Բայց Գալիլեայի Այն-Ջալուղ բնակավայրում մոնղոլներին ջախջախելուց հետո, մամլյուֆներն ամենեւին էլ երախտահատույց չեղան ֆրանկներին: Ընդհակառակը, 1265

թվականին սուրբան Բայբարսը նրանցից խլեց Կեսարիա, Հայֆա եւ Արուֆ ֆաղաֆները, իսկ հաջորդ տարի՝ նաեւ Սաֆեդ եւ Տորոն բերդերը: Դրանից հետո մամլյուֆների հարձակումներն արդեն գործնականում անկասելի էին: Աստիհանաբար կրճատելով խաչակրաց պետությունների տարածքները, վերջին հարվածը Երուսաղեմի թագավորությանը նրանք հասցրին 1291 թվականին, գրավելով Աֆֆան, Տյուրոսը, Սիդոնը, Բեյրութը եւ ծովեզերյա մյուս ֆաղաֆներն ու բերդերը: Այդ ֆաղաֆների բնակչության մի մասը կարողացավ ապաստանել Կիպրոսում, իսկ շատերը կոտորվեցին կամ ստրկության ֆշվեցին:

6. ՏՐԻՊՈԼԻԻ ԿՈՄՍՈՒԹՅՈՒՆԸ^a

Տրիպոլիի կոմսությունը, որի տարածքը մոտավորապես համընկնում էր ներկայիս հյուսիսային Լիբանանի տարածքին, սկսեց ձեւավորվել շուրջ 1104 թվականին, երբ արդեն Ռայմոնդ Սենժիլցու ձեռքում էին գտնվում Տարտուս եւ Ջիբեյլ նավահանգիստները, ինչպես նաեւ մի շարք բերդեր, որոնց թվում էին հանրահայտ Քրաֆ դե Շվալիեն եւ Ուլստավորների լեռը: Առաջին խաչակրաց արշավանքի նախօրյակին այդ ոչ այնքան ընդարձակ երկրամասը՝ Տրիպոլի կենտրոնով, պատկանում էր արաբական բանու-Ամմար ընտանիքին, որի նահապետը կամ կադիին այդ ժամանակ Ֆախր ալ-Մուլք Աբու Ալի Ամմարն էր (1099-1108 թթ.): Սկզբնական շրջանում վերջինս փորձեց բարեկամական հարաբերություններ հաստատել ֆրանկների հետ, մասնավորապես ուղեկիցներ տրամադրելով եւ պարեն մատակարարելով դեպի Երուսաղեմ արշավող խաչակրաց բանակներին: Սակայն երբ Ռայմոնդ Սենժիլցին բացահայտեց իր զավթողական ծրագրերը, Ֆախր ալ-Մուլքը հարկադրված դիմեց Դամասկոսի եւ Հոմսի էմիրների օգնությանը: Դրանով էր պայմանավորված Ռայմոնդի կողմից Ուլստավորների լեռան բերդի կառուցումը, որի նպատակն էր ցամաքային շրջափակման ենթարկել Տրիպոլին, նրան զրկելով հարեան մահմեդական էմիրությունների հետ կապի մեջ մտնելու որեւէ հնարավորությունից: Թեեւ հաջողությամբ լուծելով այդ

^a *Ինչպես եղեսիայի կոմսության եւ Անտիոքի իշխանապետության պարագայում, Տրիպոլիի կոմսությանը նույնպես նվիրված է մեկ մենագրություն. տե՛ս Jean Richard, Le Compté de Tripoli sous la dynastie Toulousaine (1102-1187), Paris, 1945.*

խնդիրը, Ռայմոնդ Սենժիլցին այդպես էլ չհասցրեց իրականացնել Տրիպոլին գրավելու եւ նրա շուրջ մի ուժեղ լատինական պետություն ստեղծելու իր երազանքը՝ մահանալով 1105 թ. փետրվարի 28-ին Ուլստավորների լեռան ամրոցում:

Ռայմոնդի լիբանանյան տիրույթները ժառանգեց նրա զարմիկ Գիյոմ Ժուրդենը (Վիլյամ Ջորդան): Շարունակելով իր նշանավոր ազգականի որդեգրած ֆաղափականությունը, նա ամրապնդեց բարեկամական հարաբերությունները Բյուզանդիայի հետ եւ ավելի եւս խստացրեց Տրիպոլիի շրջափակումը: Ֆախր ալ-Մուլլ Իբն-Ամմարը հարկադրված էր փնտրել նոր դաշնակիցներ: Այդ նպատակով 1108 թվականին նա գնաց Բաղդադ՝ հայցելու Աբասյան խալիֆի եւ Սելջուկյան սուլթանի օգնությունը: Օգտվելով նրա բացակայությունից, Տրիպոլիի բնակիչներն իրենց ֆաղափը հանձնեցին Եգիպտոսի Ֆաթիմյաններին, հույս դնելով նրանց հզոր նավատորմի աջակցության վրա: Ֆախր ալ-Մուլլն ապաստանեց Լաթաֆիայի եւ Մարկաբի միջև գտնվող Ջաբալա ֆաղափում: Նույն թվականի մարտ-ապրիլ ամիսներին Գիյոմ Ժուրդենը գրավեց Տրիպոլիից հյուսիս գտնվող Արկա ֆաղափը եւ Ջեբել-Աֆֆարի բերդերը, այդպիսով լիակատար դարձնելով Լիբանանի մայրաֆաղափի ցամաֆային շրջափակումը: Սակայն այն պահին, երբ թվում էր, թե ամեն ինչ իր համար հաշող է դասավորվում, Գիյոմ Ժուրդենը հայտնվեց մի լուրջ խնդրի առջև: Չորսհազարանոց զորաբանակով Արեւելք ժամանեց Ռայմոնդ Սենժիլցու որդի Բերտրանը, եւ հաստատվելով Տարտուսում, Գիյոմից պահանջեց իրեն հանձնել իր հայրական ժառանգությունը: Գիյոմը բնականաբար մերժեց եւ օգնության կանչեց Անտիոքի խնամակալ Տանկրեդին: Բերտրանն, իր հերթին, օգնության խնդրանքով դիմեց Երուսաղեմի թագավոր Բալդուին I-ին, իրեն հանաչելով վերջինիս վասալը: 1109 թ. հունիսին Տրիպոլիի մոտ գումարված ժողովում, որին մասնակցում էին խաչակրաց բոլոր առաջնորդները, Բալդուինը հաշտություն կայացրեց նրանց միջև, իսկ Սենժիլցու տիրույթները բաժանեց երկու մասի՝ հյուսիսայինը հանձնելով Գիյոմ Ժուրդենին, հարավայինը՝ Բերտրանին: Հուլիսի 12-ին խաչակրաց միացյալ ուժերը, ձենովայի եւ Պրովանսի նավատորմների օգնությամբ, գրավեցին Տրիպոլի ֆաղափը եւ նախնական պայմանավորվածության համաձայն այն հանձնեցին Բերտրանին: Վերջինս ստանձնեց Տրիպոլիի կոմսի տիտղոսը եւ վերահավաստեց իր վասալությունը Բալդուին I

թագավորին: Իրենց ծառայության դիմաց նենովացիներն ստացան Տրիպոլիի մի թաղամասը և Զիբեյլ ֆաղաֆը, որը որպես ժառանգություն հանձնվեց ադմիրալ Հուգո Էմբրիակոյին: Շուտով ինֆընտինյան լուծվեց նաև նորաստեղծ պետության միասնության վերականգնման հարցը: Պատահական միջադեպի ժամանակ սպանվեց Գիյոմ Ժուրդենը, և կոմսության լիիրավ տեր դարձավ Բերտրանը:

Հանաչելով Երուսաղեմի թագավորության գերիշխանությունը, Բերտրանը խզեց հարաբերությունները Բյուզանդիայի հետ և այնուհետև բացառապես գործեց Բալդուին I թագավորի գծած ֆաղաֆականության շրջանակում, մասնակցելով վերջինիս ձեռնարկած բոլոր արշավանքներին ու ռազմական գործողություններին, ինչպես, օրինակ, Բեյրութի և Սիդոնի գրավմանը (1110 թ.) կամ Շայգար ֆաղաֆի վրա կատարված հարձակմանը (1111 թ.): Բերտրանը նաև բարեկամեց հարաբերությունները Անտիոքի իշխանապետության հետ, վերջ դնելով պրովանսական և նորմանական ընտանիքների միջև խաչակրության սկզբնավորումից ի վեր առաջացած սուր թշնամանքին: Ի նշան հաշտության նա նույնիսկ իր որդի Պոնսին հանձնեց Տանկրեդի խնամակալությանը: Պոնսը դաստիարակվեց Անտիոքի արհմեկոն և Տանկրեդի մահից հետո (1112 թ. դեկտեմբեր) ամուսնացավ նրա այրու՝ Սեսիլի հետ, որն, ի դեպ, Երուսաղեմի ապագա թագավոր Ֆուկի ֆույրն էր: Շուտով մահացավ նաև Բերտրանը (1112/1113 թ.), և Պոնսը ժառանգեց Տրիպոլիի կոմսությունը:

Երուսաղեմի թագավորության և Անտիոքի իշխանապետության հետ հարաբերությունների կարգավորումը Տրիպոլիի կոմսությանը հնարավորություն տվեց իր ողջ ուշադրությունը կենտրոնացնել մահմեդականների դեմ ուղղված պայքարի վրա և ընդարձակել իր տարածքները հարեան Հոմսի էմիրության հաշվին: 1115 թվականին Պոնսը գրավեց Ռաֆանիա ֆաղաֆը, բայց շատ չանցած մահմեդականները ետ խլեցին այն: Հավանաբար նույն թվականին այդ ֆաղաֆից ոչ շատ հեռու Տրիպոլիի կոմսը կառուցեց Բարին (Մոնֆերան) ամրոցը: Ու թեև այն նույնպես շուտով գրավվեց մահմեդականների կողմից, բայց բոլոր դեպքերում Պոնսը, իր դիրքերն ամրապնդված համարելով, 1122 թվականին փորձեց դուրս գալ Երուսաղեմի նոր թագավոր Բալդուին II-ի գերիշխանության տակից: Սակայն երբ վերջինս, մի ուժեղ զորավարի գլուխ անցած, մոտեցավ կոմսության սահմաններին,

Տրիպոլիի ասպետներն իրենք ստիպեցին Պոնսին հնազանդություն հայտնել նրան, այդպիսով վերականգնելով իրերի նախկին վիճակը: 1126 թվականին Պոնսը Բալդուինի օգնությամբ վերջնականապես գրավեց Ռաֆանիա ֆաղաֆն ու Բարին բերդը, դրանք դարձնելով կոմսության արևելյան սահմանի առաջապահ մարտկոցները: Բալդուին II-ի մահից հետո (1131 թ.) Պոնսը նորից փորձեց ազատվել Երուսաղեմի թագավորության գերիշխանությունից: Անտիոքի գահի ժառանգության շուրջ ծագած կռիվների ժամանակ նա բռնեց իշխանուհի Ալիսի կողմը, եւ երբ Անտիոքի բարոնները օգնության կանչեցին Երուսաղեմի նոր թագավոր Ֆուկին, Պոնսը նրան թույլ չտվեց անցնել Տրիպոլի կոմսության տարածքով: Սակայն Ֆուկը վճռական գործողություններով կարողացավ հնազանդեցնել ապստամբ կոմսին եւ վերականգնել Երուսաղեմի թագավորության ժամանակավորապես սասանված հեղինակությունը: Հաշտությունը չափազանց օգտակար եղավ Պոնսի համար, որովհետեւ երբ վերջինս 1133 թվականին կոմսության տարածք ներխուժած թուրքմենների կողմից պաշարվեց Բարինի ամրոցում, Ֆուկն էր, որ օգնության փութալով, փրկեց նրան: Պոնսի գահակալության վերջին տարիներին Տրիպոլի կոմսության հյուսիսային սահմանների մերձակալում, Նուսայրի լեռան վրա, ձեւավորվեց սիրիական իսմայելիտների փոքրիկ պետությունը, որը հետագայում զգալի դեր պիտի խաղար երկրամասի ֆաղաֆական կյանքում: Պոնսն սպանվեց 1137 թ. մարտին, Դամասկոսի մահմեդականների կողմից Տրիպոլի կոմսության դեմ ձեռնարկված մի անակնկալ հարձակման ժամանակ: Ընդ որում, ըստ որոշ աղբյուրների, նրա սպանությունը հնարավոր էր դարձել Լեոնալիբանանի բնիկ ֆրիստոնյաների դավաճանության պատճառով:

Տրիպոլիի գահին Պոնսին հաջորդեց նրա որդին՝ Ռայմոնդ II-ը, որի առաջին իսկ գործը եղավ դաժան հաշվեհարդար տեսնել իր հորը դավաճանած ֆրիստոնյաների հետ: 1137 թ. ամռանը Իմադեդդին Ջանգին ասպատակեց Տրիպոլի կոմսության տարածքը եւ պաշարեց Բարին (Մոնֆերան) ամրոցը: Տրիպոլիի եւ Երուսաղեմի բանակները Ռայմոնդի եւ Ֆուկի գլխավորությամբ օգնության փութացին պաշարված կայազորին: Սակայն դեռ տեղ չհասած, նրանք ջախջախիչ պարտություն կրեցին թուրքական զորքերից: Ռայմոնդը գերի ընկավ, իսկ Ֆուկը հագիվ կարողացավ ապաստանել Բարինի ամրոցում: Ջանգին ավելի եւս սեղմեց պաշարման օղակը, չափա-

զանց նեղ դրության մեջ դնելով ֆրանկներին, որոնք մասնավորապես տա-
նապում էին պարենի պակասից: Ֆուլկին հաջողվեց սուրհանդակների մի-
ջոցով օգնություն խնդրել Երուսաղեմի պատրիարքից, Անտիոքի պրինցից եւ
Նդեսիայի կոմսից: Խաչակրաց բանակները հավաքվեցին Տրիպոլիում եւ
շարժվեցին դեպի Բարին: Այդ պատճառով կամ թերեւս բոլորովին այլ նկա-
տառումներով Ջանգին բանակցությունների մեջ մտավ Ֆուլկի հետ, որոնց
արդյունքում ամրոցը հանձնվեց թուրքերին, իսկ ֆրանկները հանգիստ ու
անվնաս հեռացան այնտեղից (1137 թ. օգոստոսի 10-20): Ջանգին ազատ
արձակեց նաեւ վերջին նակատամարտում գերված բոլոր ֆրանկներին, այդ
թվում՝ Ռայմոնդ II-ին: Ջգալով կոմսության արեւելյան սահմանների խոցե-
լիությունը, Ռայմոնդը 1142 թվականին Հիվանդախնամների միաբանու-
թյանը հանձնեց իր երկրի մյուս նշանավոր բերդը՝ Քրաֆ դե Շվալիեն: 1148
թվականի գարնանը, երկրորդ խաչակրաց արշավանքի մասնակիցների
կազմում, Սուրբ Երկիր ժամանեց Թուլուզի կոմս Ալֆոնս Ժուրդենը՝ Ռայ-
մոնդ Սենժիցու որդին: Կարծելով, թե վերջինս եկել է տեղ կանգնելու իր
հայրական ժառանգությանը, Ռայմոնդ II-ը թունավորել տվեց նրան Պա-
ղեստինի Կեսարիա ֆաղաֆում: Ալֆոնս Ժուրդենի որդին՝ Բերտրանը, իսկա-
պես փորձեց Ռայմոնդի ձեռքից խլել Տրիպոլիի կոմսությունը, եւ որպես այդ
նպատակին ուղղված առաջին փայլ, գրավեց Տրիպոլիի ու Տարտուսի միջեւ
ընկած Արայմա ամրոցը: Սակայն Ռայմոնդը Դամասկոսի աթաբեկ Ունուրի
եւ Հալեպի էմիր Նուրեդդինի զինական աջակցությամբ ետ խլեց այն (1149
թ.): Նուրեդդինը գերեց Արայմայում գտնվող բոլոր ֆրանկներին, այդ թվում
Բերտրանին, որը տասներկու տարի մնաց Հալեպի բանտերում:

1152 թվականին Ռայմոնդ II-ն սպանվեց իսմայելիտների կողմից, եւ
երկրի գահին անցավ նրա տասներկուամյա որդուն՝ Ռայմոնդ III-ին: Թեեւ
վերջինիս ձեռական խնամակալ կարգվեց նրա մայրը՝ Հոդիերնան, սակայն
կոմսության իրական ղեկավար հանաչվեց Երուսաղեմի թագավոր Բալ-
դուին III-ը: Օգտվելով Տրիպոլիում տիրող խառնակ իրավիճակից, Նուրեդ-
դինը ասպատակեց կոմսության հյուսիսային տարածքները եւ գրավեց
Տարտուս ֆաղաֆը: Ֆրանկները, սակայն, շուտով մահմեդականներին վա-
նեցին այնտեղից, եւ Բալդուինը թագավորը Տարտուսը հանձնեց Տանհա-
կան ասպետներին: 1160 թվականին Մանուել Կոմնենոս կայսրը, ստանա-
լով Բալդուին III-ի հավանությունը, որոշեց ամուսնանալ Ռայմոնդ III-ի

հրոջ՝ Մելիսենդեի հետ: Ոգետրված այդպիսի հզոր դաշնակից ունենալու հեռանկարից, Ռայմոնդը հրոջ համար հսկայական գումարի օժիտ պատրաստեց: Սակայն երբ մեկ տարի անց Մանուելը հրաժարվեց այդ ամուսնությունից, զայրացած կոմսը ավարի մատնեց Կիպրոսի առափնյա շրջանները: 1163 թվականին Նուրեդդինը նորից ներխուժեց կոմսության տարածքը եւ համբար խփեց Քրաֆ դե Շվալիե բերդի մոտակայքում: Նրա բանակը, սակայն, անակնկալ հարձակման ենթարկվեց ֆրանկների կողմից եւ գլխավին ջախջախվեց, իսկ Նուրեդդինը հագիվ կարողացավ հողոպրել ռազմի դաշտից: Հաջորդ տարի Հալեպի էմիրը լուծեց իր վրեժը ֆրանկներից, Հարիմի հայտնի հակատամարտում ծանր պարտության մատնելով նրանց եւ գերելով նրանց բոլոր առաջնորդներին, որոնց թվում էր նաեւ Ռայմոնդ III-ը: Վերջինս գերության մեջ մնաց ութ տարի (1164-1172 թթ.):

Տրիպոլիի կոմսության խնամակալությունն ստանձնեց Երուսաղեմի թագավոր Ամորի I-ը, որը, սակայն, նույնպես անկարող եղավ կասեցնել Հալեպի էմիրի առաջխաղացումը, քանի որ, ինչպես տեսանք, առավելապես զբաղված էր Եգիպտոսի գործերով: 1166 թվականին Նուրեդդինն, անձամբ գլխավորելով իր զորքերը, ֆրանկներից իլեց կոմսության հարավ-արեւելյան սահմանը պաշտպանող Մունեյտրա կարետոս ամրոցը: Դրանից առաջ, մի անոռոջ թվականի, մահմեդականների ձեռքն էր անցել նաեւ ավելի հյուսիսում գտնվող Աֆֆար ամրոցը: 1171 թվականին Տրիպոլիի ասպետները, մի հանդուգն հարձակում ձեռնարկելով, վերագրավեցին այն եւ Ամորի I-ի հրահանգով հանձնեցին Հիվանդախնամներին: Վերջիններս Ամորիից ստացան նաեւ Արկա բերդաբաղաբը եւ Քրաֆ դե Շվալիեի հետ միասին մի ուժեղ պաշտպանական գոտի ստեղծեցին Տրիպոլիի կոմսությունում: Տարվա վերջին Նուրեդդինը հարձակվեց Արկայի վրա, բայց չկարողանալով այն գրավել, ավերեց նրա շրջակայքն ու ետ վերադարձավ: Ընդհանուր առմամբ բարեխղճորեն կատարելով խնամակալի իր պարտականությունները, Ամորի I-ը 1172 թվականին Տրիպոլիի կոմսության դեկը փոխանցեց նրա օրինական տիրոջը՝ Ռայմոնդ III-ին, որը 80.000 բյուզանդի փրկագին վճարելով վերջապես ազատվեց գերությունից:

Ամորիի մահից հետո (1174 թ.) դերերը փոխվեցին, եւ այս անգամ արդեն Ռայմոնդ III-ն էր, որ ստանձնեց Երուսաղեմի տասներեֆամյա թագավոր Բալդուին IV-ի խնամակալությունը՝ վերջինիս մերձավորագույն ազգա-

կանը լինելու իրավունքով: Շուտով Ռայմոնդի դիրքերն ավելի ես ամրապնդվեցին Երուսաղեմի թագավորությունում, քանի որ ամուսնանալով Գալիլեայի իշխանության այրիացած տիրուհու հետ, նա դարձավ պաղեստինյան այդ կարեւոր գավառի օրինական տերը: Ռայմոնդը կողմնակից էր բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարեան մահմեդական պետությունների հետ, միաժամանակ թույլ շտալով Սիրիայի միավորումը Սալահեդդինի տիրապետության ներքո: Այդ նպատակով 1175 թվականին նա դաշնակցեց Հալեպի Զանգիդյանների հետ, որոնք հուսահատական պայքար էին մղում Այուբյան անեղ սուլթանի դեմ՝ իրենց անկախությունը պահպանելու համար: Ռայմոնդը հարձակվեց Հոմա քաղաքի վրա, եւ այդ վտանգը չեզոքացնելու համար Սալահեդդինն ստիպված վերացրեց Հալեպի պաշարումը: Հաջորդ տարվա ամռանը, նորից Սալահեդդինի կողմից Հալեպի դեմ ձեռնարկված հարձակումը խափանելու նպատակով, Ռայմոնդ III-ը եւ Բալդուին IV-ն արշավեցին դեպի Բեմաայի հովտի կողմերը եւ Այնջարում հաղթեցին Այուբյան զորքերին, որոնց գլխավորում էր սուլթանի եղբայր Թուրանշահը: 1177 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ռայմոնդը համոզեց ուխտագնացության եկած Ֆլանդրիայի կոմս Ֆիլիպ էլզասցուն՝ համատեղ արշավանք կազմակերպել Հոմսի եւ Համայի ուղղությամբ: Ֆրանկներին թեւեւ հաջողվեց պաշարել Համա քաղաքը, սակայն հանդիպելով Այուբյանների լուրջ դիմադրությանը, նրանք ստիպված ետ քաշվեցին: Մարշ-Այունում Բալդուին IV-ի դեմ տարած հաղթանակից եւ Երուսաղեմի թագավորության հետ կնքած զինադադարից հետո (1180 թ.) Սալահեդդինը հարձակվեց Տրիպոլիի կոմսության վրա, բայց շոշափելի արդյունքների չհասնելով, զինադադար կնքեց նաեւ Ռայմոնդ III-ի հետ:

1180 թվականին Բալդուին IV-ն ավելորդ կասկածների հիման վրա գժտվեց Ռայմոնդ III-ի հետ եւ նրան մեկուսացրեց Երուսաղեմի թագավորության գործերից: Երուսաղեմի արհունիքում Տրիպոլիի կոմսի հակառակորդների մի խումբ ձեռավորվեց՝ հանձինս արքայամայր Ագնես Կուրտենեցու եւ նրա եղբայր, Եդեսիայի տիտղոսակիր կոմս Ժոսլին III-ի: Սակայն Երուսաղեմի բարոնների շարքում Ռայմոնդն ուներ նաեւ թունդ կողմնակիցներ, որոնք ջանք չէին խնայում նրան հաշտեցնելու Բալդուինի հետ: Հաշտությունը տեղի ունեցավ 1183 թվականին, երբ վերջինս, ի հեճուկս Գի Լուսինյանի թագադրելով իր մանկահասակ ֆեոդոսն՝ Բալդուին V-ին, նրա

խնամակալ կարգեց Ռայմոնդ III-ին: Ի դեպ, թագավորի կարգադրությամբ նրա խնամակալությունը պետք է տեւեր տաս տարի, անկախ այն բանից, թե Բաղդին V-ը մինչ այդ կմեռներ, թե ոչ: Դրանից հետո Երուսաղեմի գահի հարցը պիտի միասնաբար լուծեին Հռոմի պապը, գերմանական կայսրը եւ Ֆրանսիայի ու Անգլիայի թագավորները: Անելով այս կարգադրությունները, Բաղդին IV-ը մահացավ 1185 թվականին, եւ Ռայմոնդ III-ն ստանձնեց պետության կառավարումը: Նրա առաջին իսկ գործը եղավ Սալահեդդինի հետ կնքված նախկին զինադադարի նորոգումը, ինչը բխում էր ոչ միայն մահմեդական հարեանների հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանելու նրա ընդհանուր դիրքորոշումից, այլեւ թագավորությունում ստեղծված կոնկրետ իրավիճակից: Թվում էր, թե թագավորության ղեկը հայտնվել է իմաստուն պետական գործչի հուսալի ձեռքերում: Սակայն Բաղդին V-ի անժամանակ մահից հետո (1186 թ.) Երուսաղեմի գահին խարդավանքով տիրեց Գի Լուսինյանը, եւ Ռայմոնդ III-ը վշտացած վերադարձավ իր երկիրը:

Իր խարխված դիրքերն ամրապնդելու նպատակով Ռայմոնդը սերտ հարաբերություններ հաստատեց Սալահեդդինի հետ, ինչը ժամանակակիցների կողմից անմիջապես դավանանքություն որակվեց: Եվ չնայած այն բանին, որ Լատինական Արեւելքին սպառնացող ընդհանուր վտանգի ժամին Ռայմոնդը հաշտվեց Գի Լուսինյանի հետ, իր ողջ ուժերը դնելով վերջինիս տրամադրության տակ (1187 թ. մայիս), միեւնույն է, դավանանքի խարանդ այլեւ երբեք չընջվեց նրա վրայից: Կինելով Երուսաղեմի թագավորի շրջապատի ամենաողջամիտ մարդը, Ռայմոնդն ամեն ինչ արեց թույլ չտալու համար Հաթինի աղետը, սակայն նրա հակառակորդները համոզեցին Գի Լուսինյանին՝ չանսալ նրա խորհուրդներին: Տրիպոլիի կոմսը խաչակրաց առաջնորդների շարքում ֆլերից մեկն էր, որ Հաթինի հակատամարտից հետո շքնկալ Սալահեդդինի ձեռքը եւ ազատելով գլուխը, վերադարձավ իր մայրաքաղաքը: Զգալով իր մոտալուտ մահը, Ռայմոնդը, ֆանի որ անգավակ էր, Տրիպոլիի գահի ժառանգորդ կարգեց Անտիոքի պրինց Բոհեմունդ III-ի որդիներից մեկին՝ Բոհեմունդ IV-ին եւ 1187 թվականի ավարտին հրաժեշտ ավեց աշխարհին: Այսպիսով, կոմսության գահը պրովանսական հարստությունից սահուն կերպով անցավ Անտիոքի նորմանա-պուստովիական հարստության ձեռքը:

Բոհեմունդ IV-ը Տրիպոլիի գահն ստանձնեց 1187-1189 թվականների միջև ընկած ժամանակամիջոցում: Ինչպես ողջ Լատինական Արեւելքը, այնպես էլ Տրիպոլիի կոմսությունն այդ ժամանակ վերածվել էր Սալահեդդինի հաղթական ասպատակությունների թատերաբեմի: Դրանց հետեւանալով երրորդ խաչակրաց արշավանքի նախօրյակին կոմսության տարածքն ընդգրկում էր ընդամենը Տրիպոլի եւ Տարտուս ֆաղաֆները, Քրաֆ դե Շվալիե բերդը եւ մի ֆանի երկրորդական ամրոցներ: Տարածքային կորուստների համեմատ առավել վտանգավոր էր այն հանգամանքը, որ մահմեդականների ձեռքն էին անցել՝ հյուսիսում Լաթաֆիա նավահանգիստը, իսկ հարավում՝ Ջիբեյլ եւ Բեյրութ ֆաղաֆները, ինչի հետեւանալով կոմսությունը փաստորեն հայտնվել էր կղզիացած վիճակում, անջատված լինելով մի կողմից՝ Անտիոքի իշխանապետությունից, մյուս կողմից՝ Երուսաղեմի թագավորությունից: Սակայն երրորդ խաչակրաց արշավանքից (1189-1192 թթ.) եւ Սալահեդդինի մահից հետո (1193 թ.) իրադրությունը որոշ չափով փոխվեց: 1197 թվականին Ջիբեյլում վերահաստատվեց ճենովական էմիրիակո ընտանիքի իշխանությունը, իսկ գերմանական խաչակիրները, Կիպրոսի Ամորի թագավորի օգնությամբ, գրավեցին Բեյրութը, այդպիսով վերականգնելով Տրիպոլիի կոմսության եւ Երուսաղեմի (Աֆֆայի) թագավորության ցամաքային կապը:

Ինչպես տեսանք, 1201 թվականին Տրիպոլիի կոմս Բոհեմունդ IV-ը ժառանգական իրավունքով տիրեց նաեւ Անտիոքի իշխանապետության գահին: Այս հանգամանքը, սակայն, իրավական առումով ամենեւին էլ երկու պետությունների միաձուլում չէր նշանակում: Թե՛ Անտիոքի իշխանապետությունը, թե՛ Տրիպոլիի կոմսությունը այնուհետեւ եւս իրենց գոյությունը շարունակեցին պահպանել որպես միմյանցից միանգամայն անկախ պետություններ, իրենց սեփական սահմաններով, արժույթներով, օրենսդրությամբ եւ վարչական կառուցվածքով: Բոհեմունդ IV-ի գործունեությանը Անտիոքի պրինցի դերում մենք անհրաժեշտ չափով անդրադարձանք իշխանապետության պատմությանը նվիրված ենթագլխում, ուստի ստորեւ կանգ կառնենք միայն Տրիպոլիի կոմսությանը վերաբերող իրադարձությունների վրա: Մինչ Բոհեմունդն զբաղված էր Անտիոքի իշխանապետության գործերի կարգավորմամբ, մասնավորապես Կիլիկիո Հայոց թագավորության ծավալապաշտական նկրտումները դիմակայելու խնդրով, Տրիպոլիի կոմսու-

թյունում հակամահմեդական պայքարի նախաձեռնությունն իրենց ձեռքն էին վերցրել Հիվանդախնամ ասպետները: 1203-1205 թվականներին նրանք իրենց Մարկար եւ Քրաբ դե Շվալիե հզոր բերդերից հարձակողական գործողություններ ձեռնարկեցին Բարինի (Մոնֆերան), Համայի, Լաթաֆիայի եւ Ջաբալայի ուղղությամբ, մի շարք հաղթանակներ տանելով հակառակորդի նկատմամբ: Հիվանդախնամներն իրենց ռազմական գործողությունները կրկնեցին 1206-1209 թվականներին, այս անգամ արդեն Հոմսի ուղղությամբ, ավերելով այդ ֆաղափ մատույցներն ու մինչև իսկ պաշարելով այն: Ու թեև նշված հարձակումները չհանգեցրին տարածֆային ձեռքբերումների, սակայն նրանք անտարակույս բարձրացրին Հիվանդախնամների միաբանության մարտական ոգին եւ վերականգնեցին նրա սասանված հեղինակությունը:

1204-1205 թվականներին Տրիպոլիի կոմսության գլխավոր բարոններից մեկը՝ Նեֆինի տեռ Ռենուարը, ապստամբեց Բոհեմունդ IV-ի դեմ, ստանալով Կիլիկիո թագավոր Լեոն Բ-ի եւ Կիպրոսի ու Երուսաղեմի թագավոր Ամորիի աջակցությունը: Տրիպոլիի դարպասների մոտ տեղի ունեցած մի հակատամարտի ընթացքում Բոհեմունդը կորցրեց իր աչքը, որտեղից էլ նրա Միակնանի մականունը: Սակայն Ամորիի մահից հետո (1205 թ.) Ռենուարի դիրքերը թուլացան, եւ Բոհեմունդ IV-ը ճենովացիների օգնությամբ կարողացավ ճնշել ապստամբությունը, առգրավել անհնազանդ վասալի սեփականությունները եւ նրան արտաֆսել իր երկրից: Իրենց մատուցած ծառայության դիմաց ճենովացիները առեւտրական գործունեության բացարձակ ազատություն ստացան Տրիպոլիի կոմսության եւ Անտիոքի իշխանապետության ողջ տարածքում: 1213 թվականին Բոհեմունդ IV-ը եւս մի փորձության ենթարկվեց Տրիպոլիի իր կոմսությունում: Տարառսի Մայր տաճարում իսմայելիտներն սպանեցին նրա ավագ որդուն՝ տասնութամյա Ռայմոնդին: Վերջինիս վրեժը լուծելու նպատակով Բոհեմունդը ներխուժեց իսմայելիտների զբաղեցրած տարածքները եւ պաշարեց Խավաթի բերդը, գերելով բազմաթիվ մահմեդականների: Իսմայելիտները օգնության կանչեցին Հալեպի սուլթան Մելիք ալ-Չահիրին: Չկամենալով խորացնել հակասությունը, Բոհեմունդ IV-ը վերադարձեց գերիներին:

1216-1219 թվականների ժամանակահատվածում, երբ Անտիոքի գահին տիրել էր Ռայմոնդ-Ռուբենը, Բոհեմունդ IV-ը կրկին ամփոփվեց Տրի-

պոլի իր կոմսությունում: Երեք տարվա ընդմիջումից հետո վերահաստատվելով Անտիոքում, նա առաջին հերթին որոշեց վրեժ լուծել Հիվանդախնամներից, որոնք հայ-անտիոքյան հակամարտության ողջ ընթացքում աշակցել էին իր ռիսերիմ հակառակորդին: Բռնեմունդը առգրավեց ինչպես Անտիոքի իշխանապետությունում, այնպես էլ Տրիպոլիի կոմսությունում նրանց պատկանող ողջ ունեցվածքը: Հիվանդախնամները դիմեցին Գրիգոր IX պապին, և վերջինս եռանդուն կերպով միջամտեց նրանց օգտին: Ոչ մի կերպ չկարողանալով համոզել անհնազանդ պրինցին, պապը 1230 թվականին հարկադրված էր բանադրանքի ենթարկել նրան: Ի վերջո, 1231 թվականին Բռնեմունդը, Երուսաղեմի պատրիարք Ջերոլդ Լոզանցու ջանքերի շնորհիվ, հաշտվեց Հիվանդախնամների հետ և ազատվեց եկեղեցական բանադրանքից: Բռնեմունդ IV-ը մեռավ 1233 թվականին, և նրան, թե՛ Անտիոքի պրինցի, և թե՛ Տրիպոլիի կոմսի հանգամանքում, փոխարինեց իր որդին՝ Բռնեմունդ V-ը:

Բռնեմունդ V-ի գործունեության՝ Անտիոքի իշխանապետությանը վերաբերող իրադարձությունները ես ներկայացրած լինելով համապատասխան տեղում, այստեղ մեզ մնում է անդրադառնալ միայն Տրիպոլիի կոմսության հետ կապված անցուդարձերին: Ինչպես նշեցինք, նա որպես իր հիմնական նստավայր էր ընտրել Տրիպոլի ֆաղաֆը, Անտիոքը կառավարելով հատուկ նշանակված խնամակալի և ֆաղաֆային ինֆնավարության միջոցով: Իր ուշադրությունը կենտրոնացնելով գլխավորապես կոմսության գործերի վրա, Բռնեմունդ V-ը 1233 թ. հոկտեմբերին գործոն աշակցություն ցույց տվեց Հիվանդախնամներին, որոնք նորից ռազմական գործողություններ էին ծավալել Համայի էմիրության դեմ: Ի դեպ, հակամահմեդական այդ պայքարին միացել էին նաև Տանարական ասպետները և Երուսաղեմի ու Կիպրոսի թագավորությունների օժանդակ ուժերը: Սակայն ֆրանկների համատեղ արշավանքը վերածվեց ընդամենը ուժի ցուցադրության, քանի որ ութ օր տևած ավարառություններից ու ավերումներից հետո խաչակրաց զորախմբերը, չհասնելով որեւէ շոշափելի արդյունքի, վերադարձան Քրաֆ դե Շվալիե: Տրիպոլիի կոմսության հետ կապված հաջորդ ուշագրավ իրադարձությունը Բռնեմունդ V-ի ամուսնությունն էր հռոմեական ազդեցիկ տոհմերից մեկի դուստր Լյուսիեն դե Կոնտիի հետ (1235 թ.), որը Իննոկենտիոս III պապի զարմուհին էր: Այդ իրադարձությունն ուշագրավ էր ոչ այն-

ֆան ամուսնության բուն փաստի, որքան նրա հետեւանքների առումով, որոնք իրենց զգացնել պիտի տային մի ֆանի տասնամյակ շարունակ: Կոմսուհու բացահայտ հովանավորությամբ թե՛ Անտիոֆի իշխանապետությունում, եւ թե՛ մանավանդ Տրիպոլիի կոմսությունում անհամեմատ մեծացավ իտալական տարրի ազդեցությունը, ինչը հասկանալիորեն խոր դժգոհություններ առաջացրեց տեղի ֆրանկ ազնվականության շրջանում, հետագայում հանգեցնելով լուրջ հակասությունների ու ֆաղափական բախումների: Իսկ ընդհանուր առմամբ Բոհեմունդ V-ի գահակալության տարիները թե՛ Անտիոֆի իշխանապետության, թե՛ Տրիպոլիի կոմսության համար կարելի է գնահատել որպես կարեւոր պատմական իրադարձություններով աչֆի շրնկնող եւ լնացման ու ինֆամեկուսացման միտումներով բնութագրվող ժամանակաշրջան: Լինելով չնախաձեռնող եւ բնավորությամբ անգործունյա անձնավորություն, Բոհեմունդ V-ը ոչ միայն ակտիվ հարաբերություններ չհաստատեց հարեւան պետությունների հետ, այլեւ որոշակի առումով բարձիթողի մատնեց նաեւ սեփական երկրի, մասնավորապես Անտիոֆի իշխանապետության գործերը:

Այս իմաստով նրա ուղղակի հակադրությունը հանդիսացավ նրա որդին՝ Բոհեմունդ VI-ը, որն իր հոր մահից հետո, 1251 թվականին ժառանգեց Անտիոֆի իշխանապետության եւ Տրիպոլիի կոմսության կրկնակ գահերը: Ինչպես տեսանք, նրա առաջին խնդիրը եղավ իր մոր՝ Լյուսիեն դե Կոնտիի խնամակալությունից ազատվելը, ինչը նա հաջողությամբ իրականացրեց Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ի միջնորդության շնորհիվ: Տեսանք նաեւ, որ 1254 թվականին ամուսնանալով Հեթում Ա թագավորի դստեր հետ, Բոհեմունդ VI-ը հրաշալի հարաբերություններ հաստատեց Կիլիկիո հայկական թագավորության հետ, դառնալով իր աներհոր հավատարիմ դաշնակիցն ու մասնակցելով վերջինիս ձեռնարկած բոլոր ֆաղափական եւ ռազմական նախաձեռնություններին: Հրաժարվելով իր հոր վարած ինֆամեկուսացման ֆաղափականությունից, Բոհեմունդ VI-ը դաշնակցեց նաեւ մոնղոլների հետ, դրանով եզակի բացառություն հանդիսանալով Արեւելիի խաչակրաց առաջնորդների շարքում: Ինչ վերաբերում է բուն Տրիպոլիի կոմսությունում Բոհեմունդ VI-ի ծավալած գործունեությանը, ապա այս առումով հիշատակության արժանի են մասնավորապես հետեւյալ իրադարձությունները:

1250-ական թվականների կեսերին Աֆայում ծագած Սուրբ Սաբայի պատերազմի արձագանքները հասան նաև Տրիպոլիի կոմսություն, որտեղ Ջիբեյլի տերը՝ հենովական էմբրիակո ընտանիքի ներկայացուցիչ Բերտրանը, ի հեճուկս վենետիկցիների կողմը բռնած Բոհեմունդ VI-ի, օգնական ուժեր ուղարկեց Աֆայում մարտնչող իր հայրենակիցներին: Բոհեմունդը ամբողջությամբ միաբերվեց ծավալվող ֆաղափացիական պատերազմի մեջ և ստիպված եղավ միջնորդի դերում խառնվել նաև Երուսաղեմի թագավորության ներքին գործերին, ապարդյուն կերպով փորձելով վերջ տալ այնտեղ տիրող անիշխանությանը: 1258 թվականին Բերտրանը, ապստամբ տարրերի գլուխ անցած, նույնիսկ պաշարեց Տրիպոլի ֆաղափը և նրա դարպասների մոտ տեղի ունեցած ճակատամարտում անձամբ վիրավորեց Բոհեմունդին: Որոշ ժամանակ անց, սակայն, Տրիպոլիի կոմսը դարանակալեց Բերտրանին և սպանել տվեց նրան: Տրիպոլիի կոմսի և նրա վասալը հանդիսացող էմբրիակո ընտանիքի միջև ծայր առած գժտությունը որոշ ընդհատումներով շարունակվեց տասնամյակներ, ընդհուպ մինչև Լատինական Արեւելքի վերջնական կործանումը:

1268 թվականին, ինչպես տեսանք, մամլյուֆները վերացրին Անտիոքի իշխանապետությունը, և Բոհեմունդ VI-ի ձեռքում մնաց միայն Տրիպոլիի կոմսությունը, որը սակայն նույնպես շուտով ենթարկվեց Եգիպտոսի սուլթան Բայբարսի ասպատակություններին: 1271 թվականի գարնանը ներխուժելով կոմսության տարածքը, Բայբարսը մեկը մյուսի ետեւից գրավեց Շաստեղ-Բլան (Սաֆիտա), Քրաֆ դե Շվալիե և Աֆար բերդերը, որից հետո սկսեց սպառնալ բուն Տրիպոլի ֆաղափին: Սակայն ինչ-ինչ պատճառներով սուլթանը միառժամանակ հետանգեց ֆաղափ գրավումը և նույն թվականի մայիսին տաս տարվա ժամկետով զինադադար կնքեց Բոհեմունդ VI-ի հետ: Բայբարսի այդ անսպասելի որոշումը թերեւս բխում էր այն հանգամանքից, որ մայիսի 9-ին Աֆա էր ժամանել էդուարդ արհայագնի (ապագա էդուարդ I թագավորի) գլխավորած անգլիական խաչակրությունը: Ֆրանկների ուժերը համախմբելու նպատակով էդուարդը ժողով գումարեց Աֆայում, որին, ի թիվս այլոց, մասնակցեց նաև Բոհեմունդ VI-ը: Ժողովը որոշեց կապի մեջ մտնել մոնղոլների հետ և փոխհամաձայնեցված ռազմական գործողություններ ձեռնարկել մամլյուֆների դեմ: Սակայն այդ ծրագիրը հաջողություն չունեցավ, և հաջորդ տարվա սեպտեմբերին էդուարդը

վերադարձավ իր երկիրը: Բոհեմունդ VI-ը՝ Լատինական Արեւելքի վերջին բանիմաց ու հեղինակավոր առաջնորդը, մահացավ 1275 թ. մայիսին, կոմսության տնօրինությունը հանձնելով իր որդուն՝ Բոհեմունդ VII-ին:

Սակայն քանի որ Բոհեմունդ VII-ը դեռեւս անչափահաս էր, պետության կառավարումն ստանձնեց նրա մայրը՝ Սիբիլը, որն ինչպես հիշում ենք, Հայոց թագավոր Հեթում Ա-ի դուստրն էր: Սիբիլը Բոհեմունդին ուղարկեց իր եղբոր՝ Կիլիկիո թագավոր Լեոն Գ-ի արժունիքը, եւ վերջինս իր զարմիկին ասպետ կարգեց, դրանով ընդգծելով Տրիպոլիի կոմսության որոշակի կախվածությունը Հայոց թագավորությունից: Սիբիլը Տրիպոլի հրավիրեց Տարաուսի եպիսկոպոս Բարթողիմեոսին եւ նրա աշակցությամբ լծվեց կոմսության գործերի կարգավորմանը: Օգտվելով իշխանափոխության առիթից, Բայբարսը պահանջեց իրեն հանձնել Լաթաֆիա ֆաղաֆի կեսը: Այդ կարեւոր նավահանգիստն, ի դեպ, միակ տարածքն էր, որ Անտիոքի իշխանապետության անկումից հետո անցել էր Տրիպոլիի կոմսությանը: Քաղաքի բնակչության խնդրանքով խնդրին միջամտեց Կիպրոսի ու Երուսաղեմի թագավոր Հուգո III-ը, եւ Բայբարսը, հրաժարվելով իր պահանջից, բավարարվեց տարեկան 20.000 դիմարի հարկով:

Հաստատվելով Տրիպոլիում, Բարթողիմեոս եպիսկոպոսը գլխավորեց տեղի բարոնների շարժումը ընդդեմ իտալական կուսակցության, որի պարագլուխն էր Պաուլո դե Կոնտին՝ վերը հիշատակված կոմսուհի Լյուսիեն դե Կոնտիի եղբայրը: Չդիմանալով Բարթողիմեոսի հալածանքներին, Պաուլոն ապաստանեց ֆաղաֆի Տանարականների մոտ եւ նրանց աշակցությամբ շարունակեց իր պայքարը Տարաուսի եպիսկոպոսի եւ նրան հովանավորող Բոհեմունդ VII-ի դեմ, որը 1277 թվականին Կիլիկիայից վերադարձել էր իր հայրենի կոմսությունը: Շուտով այդ պայքարն ընդգրկեց կոմսության հասարակության նորանոր շերտեր: Ջիբեյլի տեր Գի II Էմբրիակոն, որն սկզբում զորակցում էր Բոհեմունդ VII-ին ու Բարթողիմեոս եպիսկոպոսին, գժտվելով վերջիններիս հետ, միացավ Տանարականներին: Աստիճանաբար հակամարտության մեջ ներգաղթեցին նաեւ Աֆայի Տանարականները, որոնք ներխուժելով կոմսության տարածք, փորձեցին գրավել Բատրուն եւ Նեֆին ամրոցները, ինչպես նաեւ պաշարել Տրիպոլի ֆաղաֆը: Վանելով այդ արշավանքը, Բոհեմունդ VII-ն, իր հերթին, հարձակվեց Ջիբեյլի վրա, սակայն տեղի ունեցած հակառակմարտում նրա ուժերը ծանր պարտություն

կրեցին: 1278 թ. սեպտեմբերին, Հիվանդախնամների միաբանության մագիստրոսի միջնորդությամբ, հակամարտող կողմերի միջև վերջապես հաշտություն կնքվեց, որը սակայն կարճ կյանք ունեցավ: 1282 թ. հունվարին Գի Ջիբեյլացին անակնկալ կերպով հարձակվեց Տրիպոլիի վրա և Տանարականների աջակցությամբ թափանցեց քաղաք: Բռնեմունդ VII-ը, համախմբելով իր ուժերը, ջախջախեց նրա կողմնակիցներին և դաժանագոյն հաշվեհարդար տեսավ նրանց հետ: Գին ու նրա եղբայրները ողջ-ողջ թաղվեցին Նեֆին բերդաֆաղափի մոտակայքում: Այս բարբարոսական արարքից հետո Տրիպոլիի կոմսը հեշտությամբ գրավեց Ջիբեյլ քաղաքը, հուրախություն նենովական կուսակցության հակառակորդների:

Տրիպոլիի կոմսությունում ընթացող ֆաղաֆացիական հակամարտությունները շարունակվեցին նաև Բռնեմունդ VII-ի մահից հետո (1187 թ. հոկտեմբեր): Գահի իրավական ժառանգորդը նրա ֆույրն էր՝ Լյուսին, սակայն ֆանի որ վերջինս բնակվում էր Իտալիայում, իշխանությունը նորից անցավ Հեթում Ա. թագավորի դուստր Սիբիլի ձեռքը: Այս անգամ ես Սիբիլը որոշեց կոմսության խնամակալ կարգել իր վաղեմի բարեկամ Բարթոլոմեոս եպիսկոպոսին, սակայն Տրիպոլիի երեւելիները, ընդդիմանալով դրան, համայնֆային խորհուրդ ձեւավորեցին, որի ղեկավար ընտրվեց Ջիբեյլի տեր Բարթոլոմեոս էմբրիակոն: Սիբիլը հեռացավ Տրիպոլիից և սպաստան գտավ Կիլիկիայում, իր եղբոր՝ Լեոն Գ թագավորի մոտ: Այդ ընթացքում Իտալիայից ժամանեցին Լյուսին ու իր ամուսինը և փորձեցին տեր կանգնել իրենց օրինական ժառանգությանը: Սակայն Տրիպոլիի համայնֆային խորհուրդը հրաժարվեց ենթարկվել նրանց և ցանկություն հայտնեց դառնալ ձենովայի հանրապետության պրոտեկտորատը: Այդ խնդիրն իրականացնելու նպատակով Տրիպոլի ժամանեց ճենովական ժովակալ Բենեդետո Զաֆարիան, որը օգտվելով առիթից, ճենովացիների համար բազմաթիվ արտոնություններ կորցեց ֆաղաֆային համայնքից: Ի վերջո, 1288 թ. ղեկտեմբերին ժովակալի և Լյուսիի միջև հաշտություն կնքվեց, և վերջինս պաշտոնապես ճանաչվեց Տրիպոլիի կոմսուհի:

Այս ամենը տեղի էր ունենում մամլյոֆյան ասպատակությունների մշտական սպառնալիքների ներքո: Գեռես 1285 թվականին Եգիպտոսի սուլթան Կալավոնը գրավել էր Տրիպոլիի կոմսության հյուսիսում գտնվող Մարկաբ բերդը, իսկ 1287 թվականին՝ նաև Լաթափա նավահանգիստը:

1289 թվականի գարնանը մամլյոմները վնոական արշավանքի դուրս եկան Լատինական Արեւելքի դեմ: Ապրիլի 24-ին, կարճատե պաշարումից հետո, Կալավունը գրավեց Տրիպոլին եւ սուկայի կոտորածի ենթարկեց նրա բնակչությանը: Դրանից հետո հեշտությամբ գրավելով նաեւ Լիբանանի մյուս ֆրիստոնեական կղզյակները, Եգիպտոսի սուլթանը վերջ տվեց Տրիպոլիի կոմսության գոյությանը: Խաչակիրների վերջին հանգրվանն Արեւելքում Տարտոս ֆաղաֆն էր, որը մամլյոմների ձեռքն անցավ 1291 թ. օգոստոսին: Իսկ 1303 թվականին Տանարական ասպետները վերջնականապես լքեցին Տարտոսից հարավ գտնվող Ռուադ կղզյակը:

7. ԿԻՊՐՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ^a

Նշվեց արդեն, որ երրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ, դեպի Սուրբ Երկիր նավարկելու հանապարհին, Ռիչարդ Առյուծասիրտը գրավեց Կիպրոս կղզին (1191 թ.): Այդ պահին Կիպրոսը փաստորեն Բյուզանդիայից անկախ մի պետություն էր, որին տիրում էր ինքնահռչակ կայսր Իսահակ Կոմնենոսը՝ Մանուել Կոմնենոսի զարմիկներից մեկը: Իր անկախությունը նա պահպանում էր՝ դաշնակցելով մերթ Սիցիլիայի, մերթ Կիլիկիո հայերի, մերթ Սալահեդդինի հետ: Ներքին ֆաղափականության մեջ նրա տիրապետությունը բնութագրվում էր դաժան հարստահարություններով եւ ծանր հարկահանությամբ: Ուստի այդ պատճառով չկարողանալով շահել իր հպատակների համակրանքն ու հավատարմությունը, Իսահակը երրորդ խաչակրաց արշավանքի նախօրյակին հայտնվել էր խոցելի դրության մեջ, որից էլ, արդ, չուշացավ օգտվել Անգլիայի թագավորը:

^a Հատուկ Կիպրոսի թագավորությանը նվիրված աշխատությունների ցանկում առանձնանում են. **Louis de Mas Latrie**, Histoire de l'île de Chypre sous le règne des princes de la maison Lusignan, vol. 1-3, Paris, 1852-1861. – **George Hill**, A History of Cyprus, vol. 1-4, Cambridge, 1940-1952. – **René Grousset**, L'Empire du Levant, Paris, 1949, p. 333-384. – **Elizabeth Chapin-Furber**, The Kingdom of Cyprus (1191-1291), in: "Kenneth M. Setton, A History of the Crusades", Madison, v. II, 1969, p. 599-629. – **Harry Luke**, The Kingdom of Cyprus (1291-1369, 1369-1489), in "Kenneth M. Setton, A History of the Crusades", Madison, v. III, 1975, p. 340-395. – **Peter W. Edbury**, The Kingdom of Cyprus and the Crusades, 1191-1374, Cambridge, 1994.- **С. В. Близнюк**, Крестоносцы позднего средневековья: Король Кипра Пьер I Лузиньян, Москва, 1999.

Առյուծասիրտը Կիպրոս հասավ 1191 թ. մայիսին, եւ պատրվակ բռնելով Իսահակի ցուցաբերած անհյուրընկալ վերաբերմունքը ավելի վաղ ժամանած իր մարդկանց նկատմամբ, անմիջապես թշնամական գործողություններ սկսեց նրա դեմ: Լսելով այդ լուրը, փութով Կիպրոս ժամանեցին Երուսաղեմի թագավոր Գի Լուսինյանը, Անտիոքի պրինց Բոհեմունդ III-ը եւ Կիլիկիո իշխան Լեոն Բ-ն՝ իրենց հավատարմությունը հայտնելու խաչակրաց առաջնորդին: Բոհեմունդն ու Լեոնը շուտով վերադարձան իրենց երկրները, իսկ Գի Լուսինյանը, իր գորախմբով միանալով Ռիչարդի բանակին, փութաջանորեն մասնակցեց Իսահակի դեմ մղվող բոլոր մարտական գործողություններին: Մի ֆանի շաբաթվա ընթացքում գրավելով կղզու բոլոր կարետր ֆաղաֆներն ու բերդերը, լատինները գերեցին Իսահակին, եւ ուղարկելով Սիրիա, արգելափակեցին Հիվանդախնամ ասպետներին պատկանող Մարկաբ ամրոցում, որտեղ էլ նա մեռավ 1194 թվականին: Ավարտելով Կիպրոսի նվաճման գործը եւ փոքրիկ կայագրներ թողնելով որոշ ֆաղաֆներում ու բերդերում, խաչակրաց բանակը հունիսի սկզբին շարժվեց դեպի Սուրբ Երկիր: Այնուհետեւ Ռիչարդը Կիպրոսը վաճառեց Տաճարականներին եւ ամբողջությամբ նվիրվեց Երուսաղեմի թագավորության վերականգնման գործին:

1192 թվականին կղզու հույն բնակիչները ապստամբեցին Տաճարականների դեմ, ու թեւեւ վերջիններս ճնշեցին ապստամբությունը, բայց բավարար նյութական ու մարդկային ռեսուրսների բացակայության պատճառով թեւաթափ եղած երկիրը կառավարելու դժվարին հեռանկարից, այն վերադարձրին Ռիչարդին: Այնժամ Ռիչարդը Կիպրոսը 100.000 բյուզանդով վաճառեց Գի Լուսինյանին, որը զբկվել էր Երուսաղեմի թագավորության գահից: Գին հաշվի առավ Տաճարականների կառավարման դառը փորձը, եւ կղզում հուսալի հեճարան ունենալու նպատակով, որոշեց մեծացնել ոչ հունական տարրի կշիռը: Նա կոչով դիմեց Կիլիկյան Հայաստանի, Անտիոքի եւ Աֆայի բնակիչներին՝ հրավիրելով վերաբնակվել Կիպրոսում, դրա դիմաց առատ պարգևներ խոստանալով նրանց: Նրա կոչին արձագանքեցին շուրջ 500 ասպետներ ու վարձկաններ, որոնք մահմեդական նվաճումների պատճառով զրկվել էին իրենց կալվածքներից: Բոլոր նորաբնակները Կիպրոսում խոշոր կալվածքներ ստացան տեղացի հողատերերի հաշվին: Դրանից հետո որեւէ այլ նշանակալից գործ չիրականացնելով, Գին մեռավ 1194

թվականին: Կենդանության օրոք նա գահաժառանգ էր կարգել իր Գոդֆրուա անունով եղբորը, բայց քանի որ վերջինս, հրաժարվելով այդ պատվից, վերադարձել էր Ֆրանսիա, Կիպրոսի բարոնները գահը հանձնեցին նրա մյուս եղբորը՝ Ամորի Լուսինյանին:

Ամորին, ինչպես հիշում ենք, եղել էր Երուսաղեմի թագավորության սպարապետը, եւ 1193 թվականին գժտվելով Հենրի Շամպայնացի թագավորի հետ, վերջինիս կողմից արտաքսվել էր Կիպրոս, որտեղ անմիջապես արժանացել էր արդեն այդ երկրի սպարապետի պաշտոնին: Ստանձնելով պետության ղեկը, Ամորին իր գահակալության սկզբնական շրջանում ձեռնարկեց երեք կարեւորագույն խնդիրների իրականացման: Առաջին՝ վերաբաշխեց իր եղբոր կողմից անխոհեմ առատաձեռնությամբ շնորհված կալվածքները՝ մեծացնելու համար արժունի սեփականության մասնաբաժինը: Երկրորդ՝ ստեղծեց Կիպրոսի եկեղեցական կազմակերպությունը, Նիկոսիայում հաստատելով լատինական արքեպիսկոպոսություն՝ երեք ենթակա եպիսկոպոսություններով (Պաֆոս, Ֆամագուստա, Լիմասոլ): Եվ երրորդ՝ բարձրացրեց Կիպրոսի պետական կարգավիճակը, սովորական բարոնությունից այն վերածելով թագավորության: Արքայական թագը նա ստացավ Արեւմուտքի կայսր Հենրի VI-ից եւ թագադրվեց 1197 թ. աշնանը կայսերական դիվանապետ Կոնրադ Հիլդեսհայմ եպիսկոպոսի ձեռքով: Արտաքին ֆաղափականության մեջ Ամորին հիմնականում առաջնորդվեց դաշնակիցներ ձեռքբերելու գիտակցությամբ, հրաշալի հարաբերություններ հաստատեց Կիլիկիո Հայոց թագավորության հետ, հարթեց Երուսաղեմի թագավոր Հենրի Շամպայնացու եւ իր միջեւ գոյություն ունեցող ֆենը, իսկ վերջինիս մահից հետո, ամուսնանալով նրա այրու՝ Իզաբելի հետ, ստացավ նաեւ Երուսաղեմի թագավորության թագը: Այս հանգամանքով, սակայն, ինչպես արդեն նշվեց, երկու թագավորությունները չմիաձուլվեցին՝ ոչ գահաժառանգական իրավունքի տեսակետից, ոչ էլ պետական հաստատությունների գործունեության առումով: Ամորիի՝ Երուսաղեմի թագավորությանը վերաբերող գործունեության մասին մենք արդեն խոսել ենք համապատասխան ենթագլխում, ուստի այստեղ ավելորդ ենք համարում կրկնել բերված փաստերը, մանավանդ որ դրանք ուղղակիորեն չեն առնչվում Կիպրոսի թագավորության պատմությանը: Ամորին մահացավ 1205 թվականին: Զնայած իր կարճատեւ գահակալությանը, նա փաստորեն հանդիսացավ Կիպրոսի թա-

գավորության իրական հիմնադիրը, սերունդներին թողնելով լիովին ձեռավորված եւ ամուս մի կազմավորում, որն, ինչպես հետագայում պիտի պարզվեր, Արեւելքում հիմնված ամենակենսունակ եւ ամենատերկարակյաց լատինական պետությունը եղավ:

Ամորիին հաջորդեց նրա տասնամյա որդին՝ Հուգո I-ը (1205-1218 թթ.): Նրա խնամակալ կարգվեց Սուրբ Երկրի բարոններից մեկը՝ Վալտեր Մոնթելիարցին, որը Հուգոյի ֆրոշ ամուսինն էր: Խնամակալի միակ հիշարժան գործը եղավ Ատալիայի ուղղությամբ սելջուկների դեմ ձեռնարկած մի արշավանք (1206/7 թ.), որը սակայն ապարդյուն անցավ: 1210 թվականին Հուգոն, չափահաս դառնալով, երկրի կառավարման ղեկը վերցրեց իր ձեռքը եւ Վալտերին արտաֆեց Աֆֆա: Շարունակելով հոր վարած ֆաղափականությունը, նա ոչ միայն պահպանեց լավ հարաբերությունները Կիլիկիո Հայոց թագավորության հետ, այլեւ ավելի եւս ամրապնդեց դրանք: Իր երկու ֆուրերին՝ Սիբիլին եւ Հելվիսին նա կնության տվեց համապատասխանաբար Լեոն Բ Հայոց թագավորին եւ Անտիոքի գահի ժառանգորդ Ռայմոնդ-Ռուբենին, այդպիսով հայ-անտիոքյան հակամարտության մեջ ակնհայտորեն բռնելով հայերի կողմը, ինչը թերեւս մասամբ բացատրվում է նաեւ նրանով, որ Վալտեր Մոնթելիարցին ապաստան էր գտել Անտիոքում եւ հայտնվել պրինց Բոհեմունդ IV-ի եւ Տանարականների ճամբարում: Հուգոն համերաշխություն ցուցաբերեց նաեւ Սուրբ Երկրի իր հայրենակիցների նկատմամբ. 1214 թվականին նրա ուղարկած կիպրական ստորաբաժանումները մասնակցեցին Համայի եւ Հոմսի դեմ ֆրանկների կազմակերպած ուժի ցուցադրմանը, իսկ 1217-ին նա անձամբ գլխավորեց կիպրական գործարարը, որը ժամանեց Աֆֆա՝ մասնակցելու հինգերորդ խաչակրաց արշավանքի սկզբնական փուլին: Հուգոն մահացավ 1218 թվականին, թագավորության գահը թողնելով իր իննամյա որդուն՝ Հենրիին:

Հենրի I-ի կամ Հենրի Մեծի գահակալության տարիները (1218-1253 թթ.) եղան Կիպրոսի պատմության ամենափոթորկուն շրջանը, երբ թագավորությունը ներքաշվեց ֆաղափացիական պատերազմի, ապա նաեւ վեցերորդ եւ յոթերորդ խաչակրաց արշավանքների հորձանուտի մեջ: Մանուկ թագավորի խնամակալությունը ստանձնեց նրա մայրը՝ Ալիս Շամպայնացին, որը, սակայն, անտարբեր լինելով պետական գործերի նկատմամբ, երկրի կառավարումը հանձնեց իր մորեղբայր Ֆիլիպ Իբելինացուն: Վերջի-

նիս մահից հետո (1227/8 թ.) Կիպրոսի կառավարման պատասխանատվությունը դրվեց նրա եղբոր՝ Հովհաննես Իբելինացու վրա, որը տիրում էր Բեյրութին: Այսպիսով, Սուրբ Երկրի այդ հզոր գերդաստանի ազդեցությունը զգալիորեն տարածվեց նաև Կիպրոսի թագավորության սահմաններում: Բավական է նշել, որ հետագայում Իբելինները շարունակաբար իրենց ձեռքում պահեցին Կիպրոսի սպարապետի (1240-1290-ական թթ.) եւ սենեկապետի (մինչև 1360-ական թթ.) պաշտոնները:

1228 թվականին, վեցերորդ խաչակրաց արշավանքի ժամանակ, Արեւմուտքի կայսր Ֆրիդրիխ II-ը ժամանեց Կիպրոս, եւ բանեցնելով թագավորության վեհապետի իր իրավունքը (հիշեցնենք, որ Ամորին իր թագը ստացել էր Ֆրիդրիխի հորից), հեռացրեց Հովհաննես Իբելինացուն եւ անձամբ ինքն ստանձնեց խնամակալի պաշտոնը: Իսկ Սուրբ Երկրում իր առաքելությունն ավարտելուց եւ Արեւելք լքելուց առաջ (1229 թ.) Ֆրիդրիխը, Իբելինների գերդաստանի ազդեցությունը լիովին չեզոքացնելու նպատակով, հինգ հավատարիմ բարոններից կազմված խնամակալական խորհուրդ ստեղծեց, նրանց հանձնելով անչափահաս թագավորի նակատագիրը: Կայսեր մեկնումից հետո Հովհաննես Իբելինացին պարտության մատնեց այդ խնամակալներին եւ վերականգնեց իր իրավունքները: Սակայն Ֆրիդրիխը չհանգստացավ: 1231 թվականին, ինչպես արդեն նշվեց, նա Արեւելք ուղարկեց մի ուժեղ զորաբանակ, կայսրության մարշալ Ռիկարդո Ֆիլանգիերիի հրամանատարության ներքո: 1232 թվականին այդ բանակը գրավեց Կիպրոսը, բայց մի ֆանի ամիս անց, Հովհաննես Իբելինացու եռանդուն ջանքերի հետեւանով, պարտություն կրեց եւ դուրս էլվեց կղզուց: Այդ պարտությունը Ռիկարդոն փոխհատուցեց, գրավելով Բեյրութ, Սիդոն եւ Տյուրոս ֆաղաֆները, ինչպես նաև առգրավված հայտարարելով Սուրբ Երկրում Իբելինացիներին պատկանող սեփականությունները: Սակայն ֆանի որ այդ իրադարձությունների մասին մանրամասն խոսվել է Երուսաղեմի թագավորությանը նվիրված ենթագլխում, այստեղ հարկ չենք համարում կանգ առնել դրանց վրա:

Հենրի I-ը չափահաս դարձավ, հետեւաբար պետության ղեկն իր ձեռքը վերցրեց, 1232 թվականին, եւ անմիջապես երկրից արտաքսեց իր բոլոր հակառակորդներին, որոնց թվում էին նաև Ֆրիդրիխի նշանակած խնամակալները: Առաջին կնոջ մահից հետո, 1237 թվականին, նա ամուսնացավ

Հերոս Ա թագավորի ֆրոջ՝ Ստեֆանիի հետ, այդպիսով հավատարիմ մնալով Կիպրոսի եւ Հայոց թագավորությունների միջեւ հաստատված ամուսնական դիվանագիտության ավանդույթին^a: 1247-ին նա թոթափեց վասալական կախվածությունը Սրբազան Հռոմեական կայսրությունից, քանի որ Իննոկենտիոս IV պապը նրան ազատեց Ֆրիդրիխին տված երդումների կապանից: 1248 թվականին Հենրի մեծ սիրալիրությամբ Կիպրոսում հյուրընկալեց յոթերորդ խաչակրության առաջնորդ Լյուդովիկոս IX-ին, ապա իր գորախմբով միացավ նրա եգիպտական արշավանքին, սակայն ժամանակից շուտ վերադառնալով իր երկիրը, խուսափեց այդ խաչակրությանը վրա հասած աղետից: Հենրի մահացավ 1253 թվականին, եւ թագն անցավ նրա նորածին որդուն՝ Հուգո II-ին (1253-1267 թթ.): Նա սկզբում դրվեց իր մոր՝ Պլեզանս Անտիոքացու (1253-1261 թթ.), իսկ այնուհետեւ մորեղբոր՝ Հուգո Անտիոքացու (1261-1267 թթ.) խնամակալության ներքո: Բայց այդպես էլ ինֆնտուրյն իշխանություն չվայելած, Հուգոն մահացավ 1267 թվականին, առանց որեւէ հիշարժան գործ կատարելու:

Հուգո II-ով սպառվեց Լուսինյան հարստության ուղիղ ճյուղը, եւ Կիպրոսի թագի օրինական ժառանգորդը դարձավ վերոհիշյալ Հուգո Անտիոքացին (1267-1284 թթ.), որը Հենրի I-ի ֆրոջ՝ Իզաբել Լուսինյանի որդին էր: 1268 թվականին ստանալով նաեւ Երուսաղեմի թագը, Հուգո III-ը, հանգամանքների բերմամբ, ավելի շատ մխրճված եղավ Սուրբ Երկրի, քան սեփական թագավորության գործերի մեջ, փորձելով փրկել խաչակրաց պետության վերջին մնացորդները, որոնք օրհասական պայքար էին մղում մամլյուկյան ներխուժումների դեմ: Թեեւ նույն տարում նրան հաջողվեց հաշտություն կնքել Եգիպտոսի սուլթան Բայբարսի հետ, սակայն մամլյուկները չհարգեցին հաշտության պայմանները եւ 1269 թվականին վերսկսեցին

^a Հայ-կիպրական հարաբերությունների առաձեռնհատուկ ջերմության արտահայտությունը պետք է համարել թերեւս այն, որ Հեթումի եղբոր՝ Սմբատ Գունդստաբլի հայտնի նամակը (1248 թ. փետրվար), որը գրվել էր Սամարղանդում, Կարակորումից հայրենիք վերադառնալու ճանապարհին, հասցեագրված էր հենց Հենրի I-ին: Այդ նամակը, որում Սմբատը շարադրել էր մոնղոլների հետ իր հանդիպումներից ստացած տպավորությունները, պահպանվել է եւ համարվում է ժամանակաշրջանի ամենահետաքրքիր վավերագրերից մեկը, տե՛ս **Richard**, La lettre de Connétable Smbat.

իրենց հարձակումները: Շուրջ 1271 թվականին, շեղելու համար Հուգոյի ուշադրությունը սիրիական նակատից, Բայբարսը մի նավատորմ ուղարկեց Կիպրոսի դեմ, սակայն եգիպտական նավերի մեծ մասը վատ եղանակի պատճառով խորտակվեց Լիմասոլի մոտակայքում, եւ այդ արշավանքը ձախողությամբ ավարտվեց: Բացի մամլյուֆներին դիմակայելու հոգսից, Հուգո III-ը լուրջ բախումներ ունեցավ նաեւ Աֆրայի երեւելիների ու Տանարական ասպետների հետ: Նրա վիճակն ավելի ծանրացավ, երբ իր սեփական թագավորության՝ Կիպրոսի ավատատերերն ու գորահրամանատարները հրաժարվեցին մասնակցել կղզու սահմաններից դուրս ընթացող ուսումնական գործողություններին: Չդիմանալով այդ բազմապիսի դժվարություններին, Հուգոն ստիպված եղավ հեռանալ Աֆրայից եւ ապաստան գտնել Տյուրոսում, որտեղ էլ կնքեց իր մահկանացուն 1284 թ. մարտ ամսին:

Նրա ավագ որդին՝ Հովհաննես I-ը, թագավորեց ընդամենը մեկ տարի (1284-1285 թթ.), որից հետո Կիպրոսի թագը ժառանգեց վերջինիս կրտսեր եղբայր Հենրի II-ը (1285-1324 թթ.), հիվանդոտ եւ ոչ պատերազմիկ մի անձնավորություն, որի երկարատեւ գահակալության շրջանում մեծ պեղծություններ տեղի ունեցան: Իր հոր նման կրելով նաեւ երուսաղեմի թագավորի տիտղոսը, նա բարեխղճորեն կատարեց Սուրբ Երկրի պաշտպանության պարտականությունը, ինչը սակայն բավարար չէր մամլյուֆյան նվաճումներից փրկելու Աֆրան (1291 թ.) եւ խաչակիրների ձեռքում մնացած մյուս ֆաղաֆներն ու բերդերը: Լեւանտի լատինական պետությունների վերջնական կործանումից հետո մամլյուֆներից մագապործ եղած ֆրանկների մի զգալի մասը, ինչպես նաեւ որոշ թվով բնիկ ֆրիստոնյաներ ապաստան գտան Կիպրոսում: Այստեղ հաստատվեցին նաեւ Տանարական ու Հիվանդախնամ ասպետների ուսումնական միաբանությունները: 1300 թվականին, օգտվելով այն հանգամանքից, որ մոնղոլները գրավել էին Դամասկոսը, եւ դրա հետեւանքով մամլյուֆները բավականին թուլացել էին, Հենրին, նավատորմներ ուղարկելով, փորձեց ցամաքահանումներ կատարել Միջերկրական ծովի սիրիական ափին եւ այնտեղ հենակետեր ստեղծել՝ Սուրբ Երկիրը վերագրավելու նպատակով, սակայն նրա ջանքերն ի դերեւ ելան: Երկրի ներսում Հենրի II-ը լուրջ խնդիրներ ունեցավ ձեռնվայի վահառականների, ինչպես նաեւ Տանարական եւ Հիվանդախնամ ասպետների հետ:

1306 թվականին թագավորի եղբայր Ամորին՝ Տյուրուսի տիադոսակիր իշխանը, մեկուսացնելով Հենրի II-ին, իրեն հռչակեց Կիպրոսի կառավարիչ: Հեղաշրջման ընթացքում բռնություն չկիրառվեց, քանի որ դրա կարիք չկար. կիպրական ազնվականության մեծ մասը, այդ թվում Իբելինյան գերդաստանը, բռնել էին Ամորիի կողմը: Հենրին մեղադրվում էր իր թագավորական պարտքը չկատարելու, երկրի բարօրությունն ու անվտանգությունը չապահովելու և նմանատիպ այլ մեղքերի մեջ: Ի դեպ, դրանց թվում նշվում էր նաև այն, որ նա որևէ օգնություն չէր ցուցաբերել մամլյուֆյան հարձակումներից մեծապես տուժած Կիլիկիո Հայոց թագավորությանը: Այս վերջին մեղադրանքն, ըստ երեսույթին, բոլորովին հիմնազուրկ չէր, մանավանդ, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Ամորին հատուկ ուշադրություն էր դարձնում Կիլիկիայի գործերին: Սրանում թերևս որոշ դեր պետք է հատկացնել այն հանգամանքին, որ նա ամուսնացած էր Հայոց Լետն Գ թագավորի դստեր՝ Իգաբելի հետ (1293 թ.), իսկ Ամորիի դուստրն, իր հերթին, ամուսնացել էր Լետն Գ թագավորի հետ (1300/5 թթ.): Որոշ հետազոտողներ, ավելի հեռուն գնալով, Ամորիի հեղաշրջման ետևում հայկական հետք են ենթադրում, նկատի ունենալով թե՛ նրա կնոջ հնարավոր ազդեցությունը, թե՛ Կոռիկոսի իշխան Հեթումի և Ամորիի մտերմությունը: Կինելով վերջինիս ամենավստահելի անձը, Հեթում Կոռիկոսցին (հայտնի Հայթոն պատմիչը), հեղաշրջումից անմիջապես հետո Ամորիի կողմից գործուղվեց Արեւմուտք, խնդիր դնելով՝ Հոռուի պապի օրհնությամբ օրինականացնելու իշխանության բռնազավթումը: Հենվելով կիպրական ժամանակագրությունների վրա, պատմաբանները մինչև վերջերս կարծում էին, թե Հեթումն այս առումով հաջողության չհասավ: Սակայն ինչպես ցույց է տվել Կլոդ Մուրաֆյանը, հղելով Կղեմես V պապի մի նամակը, Ամորին այնուամենայնիվ վերջինիս կողմից ճանաչվել է որպես «Կիպրոսի թագավորության կառավարիչ»^a: Հեթումի դեսպանագնացությունն ունեցավ նաև մի ուրիշ նշանակալից արդյունք. 1307 թվականին Ավինյոնում նա թելադրեց և Կղեմես V-ին հանձնեց իր «Արևելքի պատմության ծաղկաբաղ» աշխատությունը, որը հետա-

^a *St' u Mutafian*, Recherches, p. 106.

գայում լայն տարածում գտավ միջնադարյան Եվրոպայում^ա: Հեթումը Կիպրոս վերադարձավ 1308 թ. մայիսին, իր հետ բերելով պապի նամակներն՝ ուղղված Ամորիին, որոնցում պահանջվում էր դադարեցնել Կիպրոսի Տանարականների գործունեությունը և դատի կանչել նրանց:

Այդ ընթացքում լուրջ խմորումներ սկսվեցին կիպրական ազնվականության շարքերում: 1308 թվականին որոշ բարոններ, հանդես գալով ի պաշտպանություն օրինական թագավորի, ընդվզեցին Ամորիի դեմ: Վերջինս խստորեն ճնշեց այդ ըմբոստությունը, ձերբակալելով և Կիլիկիա ափերում նրա պարագլուխներին՝ Ֆիլիպ սենեկապետին և Բալդուին Իբելինացուն: Հաջորդ տարի նա այնտեղ ափսոսեց Հենրի II-ի ևս մի ֆանի հավատարիմ ասպետների: Իսկ 1310 թ. փետրվարին հերթը հասավ նաև Հենրի II-ին, որին անձամբ ուղեկցելով Կիլիկիա, Ամորին հանձնեց իր աներորդու՝ Օշին թագավորի հսկողությանը^բ: Դժվար է պատկերացնել, թե ինչ ընթացք կունենար Կիպրոսի հետագա պատմությունը, եթե մի ֆանի ամիս անց, 1310 թ. հունիսի 5-ին, Ամորին չսպանվեր Նիկոսիայում Հենրի II-ի հավատարիմ մարդկանց, իսկ ըստ ոմանց՝ պատահական մարդասպանի ձեռքով:

Հայոց թագավոր Օշինի հարուցած բազմաթիվ խոչընդոտներից և երկարատև բանակցություններից հետո Հենրին Կիպրոս վերադարձավ 1310 թ. օգոստոսին, դրա դիմաց պարտավորություն ստանձնելով իր հերթին ազատ արձակելու Ամորիի ընտանիքը: Մեկ տարի անց Իզաբելն իր վեց երեխաների հետ տեղափոխվեց Կիլիկիա: Այդ ընտանիքից էր, որ հետագայում Կիլիկիայում գահ պիտի բարձրանային Լուսինյան երկու թագավորները: Հենրին մեծ հանդիսավորությամբ ընդունվեց իր երկրում, և ընդհանուր խանդավառության մթնոլորտում վերաբազմեց իր կորցրած գահին: Այնուհետև նա դաժան հաշվեհարդար տեսավ Ամորիի կողմնակիցների նկատմամբ, մասնավորապես չեզոքացնելով Իբելինների գերդաստանի ազդեցու-

^ա Հեթումը *Կոռիկոսցի պատմիչի մասին մանրամասն տե՛ս Mutafian, Héthoum de Korykos, p. 157-176; Զուլպյան, Պատմության հարցերը, էջ 77-82:*

^բ Այն փաստը, որ Ամորին, վախենալով իր վտանգավոր արտյաններին պահել Կիպրոսում, նրանց աքսորում էր Կիլիկիա, կարող է լրացուցիչ կռվան հանդիսանալ նրա դավադրության մեջ հայկական հետք որոնողների համար: Թեև դրանով հայերի դրդիչ լինելու հանգամանքը ամենեւին չի ապացուցվում, սակայն առնվազն պարզվում է նրանց մեղսակցությունը:

թյունը: Ամորիի մարդկանցից ոմանք, այդ թվում նրա եղբայր Էմերին եւ Ֆիլիպ Իբելինացին, փորձեցին փախչել Կիլիկիա, բայց բռնվեցին ու բանտ նետվեցին: Հենրին նաեւ առգրավեց Կիպրոսի տարածքում Ամորիի արտաքին ընտանիքին պատկանող բոլոր տիրույթները, ինչը երկարատեւ դատական ֆաշշուկների առարկա պիտի դառնար հետագայում: Հենրիի գահակալության այս երկրորդ շրջանում բնականաբար լիովին փչացան հայ-կիպրական երբեմնի ջերմ հարաբերությունները: 1318 թվականին նույնիսկ որոշ բախումներ տեղի ունեցան երկու թագավորությունների միջեւ, որոնք դադարեցին միայն Հոմբի պապի եռանդուն միջամտության շնորհիվ: Հենրին կարողացավ հաղթահարել իր նախկին թշնամանքը եւ 1322 թվականին, երբ մամլյուֆներն առաջին անգամ գրավեցին Այասը, օգնություն ուղարկեց հայերին, ֆաղափ բնակչության մնացորդներին տեղափոխելով Կիպրոս: Մեծահոգության այդ ցույցն, ըստ երեւոյթին, նրա համար այլեւս դժվարություն չպիտի ներկայացներ, քանի որ նրա անձնական թշնամին՝ Օշին թագավորը, արդեն մեռել էր: Իսկ 1324 թվականին մահացավ նաեւ ինքը Հենրի II թագավորը, եւ այսպիսով հայ-կիպրական դիմակայության բոլոր դերակատարները հեռացան ասպարեզից:

Քանի որ Հենրին անժառանգ էր, նրան հաջորդեց իր զարմիկը՝ Հուզո IV-ը (1324-1359 թթ.), որն ի հակադրություն իր նախորդի, հմուտ ու եռանդուն միապետի հատկություններ ցուցաբերեց: Նրա գահակալության շրջանը, շնորհիվ մամլյուֆյան Եգիպտոսի հետ հաստատված կայուն խաղաղության եւ միջերկրածովյան առետուրի աշխուժացման, Կիպրոսի թագավորության տնտեսական բարգավաճման գագաթնակետը հանդիսացավ: Խաղաղության գործոնից բացի Կիպրոսի տնտեսական վերելին թերեւս նպաստեց նաեւ այն հանգամանքը, որ 1337 թվականին մամլյուֆները գրավեցին Կիլիկիայի Այաս նավահանգիստը, որում ծավալվող առետուրային գործունեությունը բնականաբար տեղափոխվեց Ֆամագուստա: Թեեւ 1348 թվականի ժանտախտի համաճարակը սոսկալի վնաս պատճառեց Կիպրոսին, զգալիորեն նվազեցնելով նրա բնակչության թիվը եւ կրճատելով ապրանքաշրջանառությունը, սակայն նույնիսկ դա աղետալի հետեւանքներ չունեցավ երկրի տնտեսության համար, եւ Հուզոն իր հաջորդին թողեց դեռեւս բավականին կենսունակ եւ բարգավաճ մի պետություն: Թագավորության տնտեսական հզորությունը Հուզո IV-ին հնարավորություն տվեց ակտիվ

դեր խաղալ նաեւ արտաքին ֆաղափականության բնագավառում: Մասնավորապես, 1343 թվականին նա եղավ այսպես կոչված «սրբազան դաշինք» նախաձեռնողներից մեկը՝ դաշինք, որի կայացման արդյունքում Կիպրոսի թագավորության, Սուրբ Աթոռի, Վենետիկի հանրապետության եւ Հոռոսի Հիվանդախնամ ասպետների համատեղ ուժերը հաջորդ տարի ծանր հարված հասցրին անատոլիական թուրքերին, նրանցից խլելով Զմյուռնիա ֆաղափք, որը դրվեց Հիվանդախնամների անօրինության տակ եւ նրանց ձեռքում մնաց մինչեւ 1402 թ.: Որ Զմյուռնիայի գրավումը արտաքին ճակատում Հուգոյի ձեռքբերած միակ հաջողությունը չէր, ապացուցվում է աղբյուրներից մեկի այն վկայությամբ, որ 1340-ական թվականներին թուրքերին պատկանող փոքրասիական Այալա, Անամուր, Սիկ եւ Ատալիա ֆաղափները հարկ էին վճարում նրան: Իսկ 1346 թվականին, Հայոց թագավոր Կոստանդին Բ-ի խնդրանքով, Հուգոն որոշ զինական օգնություն ուղարկեց Կիլիկիա, որի շնորհիվ հայերը կարողացան վանել մամլյուրներին եւ նույնիսկ վերագրավել Այասը, բայց մեկ տարի անց վերջնականապես կորցրին այն: Հուգո IV-ը մահացավ 1359 թվականին, եւ նրան փոխարինեց իր որդի Պետրոսը, որին Հուգոն թագադրել էր իր կենդանության օրոք, 1358 թվականին:

Թեեւ Պետրոս I-ի գահակալությունը տեւեց ընդամենը տաս տարի (1359-1369 թթ.), նա այնուամենայնիվ համարվում է Կիպրոսի ամենագործունյա եւ հերոսական թագավորը: Եթե Հուգո IV-ի պարագայում Զմյուռնիայի գրավումը եզակի դրվագ էր, ապա Պետրոսի համար նվաճողական ձեռնարկները դարձան հիմնական ֆաղափականություն: 1360 թվականին հայերի հրավերով նա գրավեց եւ իր թագավորությանը կցեց Կոռիկոս նավահանգիստը, որը մինչեւ 1448 թվականը մնաց Կիպրոսի կազմում: Ոգետրված այդ հաջողությունից եւ օգտվելով Կոռիկոսի հարմար ուժավարական դիրքից, հաջորդ երկու տարիների ընթացքում նա, ճեմովացիների եւ Հիվանդախնամ ասպետների աջակցությամբ, ասպատակեց Կարամանի եւ Թեկկեի էմիրությունների ծովեզերյա շրջանները, ավարի մատնելով ու հրո հարակ դարձնելով մի շարք ֆաղափներ ու բերդեր, եւ գրավելով Ատալիա նավահանգիստը: Եթե այս նվաճողական ձեռնարկները դեռեւս ինչ-որ բացատրություն ունեին՝ միաված լինելով հյուսիսային կողմից Կիպրոսի թագավորության անվտանգության եւ առետարային շահերի ապահովմանը, ապա Պետրոս I-ի հաջորդ գործողությունը, այս անգամ արդեն ուղղված

Եգիպտոսի դեմ, զուտ արկածախնդրություն է հիշեցնում, որը ծանր հետևանքներ պիտի ունենար թագավորության համար:

1362 թվականին Պետրոսն այցելեց Արեւմուտք, եւ ոգեկոչելով խաչակրության գաղափարը, Եվրոպական տիրակալների՝ մասնավորապես Ֆրանսիայի եւ Անգլիայի թագավորների աջակցությամբ, բավականին ուժեղ մի բանակ հավաքագրեց: 1365 թվականին, շուրջ 10.000-անոց այդ բանակը, ավելի քան հարյուր նավերով, հարձակվեց Ալեքսանդրիա քաղաքի վրա ու մեկ հարվածով գրավեց այն՝ մի բան, որ երբեւէ խաչակիրներին չէր հաջողվել: Մի քանի օր շարունակ նվաճողները սուկայի ավարի մատնեցին այդ բարգավաճ քաղաքը, շինայելով ո՛չ մահմեդականներին, ո՛չ քրիստոնյաներին, ո՛չ իսկ Եվրոպացի վաճառականներին: Այսպիսով, խաչակրության «արբազան» գաղափարը վերածվեց պարզ ավազակության, եւ զորքերը, հագեցնելով իրենց ընչափաղցությունը, հակառակ Պետրոսի թախանձանքներին, բարձրացան իրենց նավերն ու մեկնեցին: Մամլյուքները վերագրավեցին քաղաքը եւ կտրուկ միջոցներ ձեռք առան՝ խափանելու Եվրոպացիների առևտրական գործունեությունը Եգիպտոսի ու Սիրիայի նավահանգիստներում: Հետագոտողները դժվարանում են բացատրել Կիպրոսի թագավորի այս խելահեղ արարքի շարժառիթները: Ոմանց կարծիքով՝ գրավելով Ալեքսանդրիան, Պետրոսը մտադիր էր այն փոխանակել Երուսաղեմի հետ, այսինքն նա առաջնորդվում էր խաչակրության բուն գաղափարով, որի էությունը Սուրբ Գերեզմանի ազատագրումն էր մահմեդականների ձեռքից: Ըստ ուրիշների՝ պատերազմի պատճառը Ալեքսանդրիայի եւ Ֆամագուստայի մրցակցությունն էր առևտրի բնագավառում: Ինչեւիցէ, ստացվեց բոլորովին հակառակ արդյունքը. արկածախնդրությունը ծանր հարված հասցրեց թե՛ ընդհանրապես Արեւմուտքի, թե՛ բուն Կիպրոսի տնտեսությանը:

Սակայն չնայած իր ապրած հուսախաբությանն ու երկրի կրած ակնհայտ տնտեսական վնասներին, Պետրոսը շարունակեց իր բուռն հակամահմեդական քաղաքականությունը: 1367 թվականին նրա զորքերը օգնության գնացին Կոռնիկոսին՝ Կարամանի թուրքերի հարձակումներից այն պաշտպանելու համար: Նույն թվականին Պետրոսն անձամբ ցամաքահանումներ կատարեց Տրիպոլիի, Տարսուսի, Լաթաքիայի եւ Այասի մոտակայքում, սակայն ավարից բացի ուրիշ ոչինչ չշահեց, ետ դարձավ: 1367 թ. հոկտեմբերին նա նորից հանապարհվեց Եվրոպա՝ խաչակրաց մի նոր ար-

շավանք կազմակերպելու նպատակով, բայց այս անգամ հանդիպեց սառը ընդունելության: Ֆրանսիան եւ Անգլիան, ներհաշված լինելով հարյուրամյա պատերազմի մեջ, տրամադրություն չունեին շեղվելու իրենց գլխավոր հոգսից, իսկ իտալական ծովային հանրապետություններին, ինչպես միշտ, իաշակրությունից ավելի հետաքրքրում էին իրենց առևտրային շահերը: Պետրոսը ձեռնունայն վերադարձավ իր երկիրը, եւ 1368 թվականին համաձայնեց ընդունել Հայաստանի թագը, որը նրան առաջարկել էին Կիլիկիո թառոնները: Բայց այս գործը այդպես էլ գլուխ չեկավ, քանի որ Պետրոսի արկածախնդրական ֆաղափականությունից դժգոհ կիպրացի տարրերը 1369 թ. հունվարին սպանեցին նրան իր անկողնում:

Կիպրոսի թագավորության գահին բազմեց նրա տասներեքամյա որդին՝ Պետրոս II-ը (1369-1382 թթ.): Թագավորության Գերագույն ատյանը խնամակալ ճանաչեց նրա հորեղբորը՝ Անտիոքի տիտղոսակիր պրինց Հովհաննեսին, որի մատն, ի դեպ, խառն էր Պետրոս I-ի սպանության գործում: Պետրոս I-ի այրին՝ էլեոնորա Արագոնացին, զրկվեց խնամակալի իրավունքից, քանի որ իշխանությունը փաստորեն անցել էր արքայասպանների ձեռքը: Նախորդ միապետի վարած հախտուն ֆաղափականությունը, այդ հողի վրա առաջացած դժգոհությունները, եւ վերջապես նրա դավադիր սպանությունը, ծանր մթնոլորտ էին ստեղծել Կիպրոսի թագավորությունում, որը շուտով պիտի խորանար նաեւ արտաքին վտանգների սաստկացման պատճառով, թեեւ 1370 թվականին, բազմաթիվ խոչընդոտների հաղթահարումից հետո, հաշտություն էր կնքվել մամլյուքյան Եգիպտոսի հետ: Այդ դժվարին օրերին երկրի կառավարման դեկն իր ձեռքում էր պահում Հովհաննես խնամակալը: Սակայն շուտով չափահաս դառնալով եւ թագադրվելով, Պետրոս II-ն ազատվեց վերջինիս խնամակալությունից, թեեւ ամենեւին ոչ նրա ազդեցությունից: Որպես Կիպրոսի թագավոր նա օծվեց 1371 թվականին Նիկոսիայում, իսկ որպես Երուսաղեմի թագավոր՝ 1372 թվականին Ֆամագուստայում: Ի դեպ, այս երկու տարբեր ֆաղափներում երկու տարբեր թագադրությունների ավանդույթը հաստատվել էր դեռեւս նրա պապի՝ Հուգո IV-ի օրոք: Երկրորդ թագադրության ժամանակ էր, անհա, որ արտաֆոսս ծիծաղելի քվացող մի առիթով, սուկալի վեճ ծագեց վենետիկցիների ու նեոնովացիների միջեւ, որը շուտով վերածվեց լուրջ պատերազմի եւ տակնուվրա արեց Կիպրոսի ողջ հետագա կյանքը: Վեճի առարկան այն էր, թե թա-

գաղութային հետո տեղի ունեցած հանդիսավոր շքերթի ժամանակ ով պիտի աչ կողմից բռնեք թագավորի նժույգի սանձը: Ինչեւէ, լուրջ բախումներից հետո նենովացիները դուրս մղվեցին կղզուց եւ, դրանում մեղադրելով Լուսինյաններին, որոշեցին վրեժ լուծել նրանցից: Կիպրացիք, վախենալով, որ Փոքր Ասիայի Ատալիա նավահանգիստը կարող է ընկնել նենովացիների ձեռքը, այն վերադարձրին նրա նախկին թուրք տերերին: Վիճակն ավելի բարդացավ, երբ էլեոնորա թագուհին, ամուսնու սպանության պատճառով ատելությամբ լցված իր սկեսորդիների դեմ, օգնության խնդրանքով դիմեց նենովացիներին: Վերջիններս հանույժով օգտագործեցին այդ պատրվակը եւ, Սուրբ Աթոռի օրհնությամբ, գործելու լիակատար ազատություն ստացան: 1373 թ. հոկտեմբերին նենովական նավատորմը, 14.000-անոց անձնակազմով գրավեց Ֆամագուստան եւ խաբեությամբ գերեց Պետրոս II թագավորին: 1374 թ. հոկտեմբերի պայմանագրով վերջինս հաշտվեց Ֆամագուստայի նենովական նվաճման փաստի հետ, բացի դրանից՝ պարտավորվելով հսկայական ռազմատուգանք վճարել: Պետրոս II-ի հորեղբայր Հակոբը, որը թագավորության սպարապետն էր, որպես պատանդ տարվեց ձենովա: Մյուս հորեղբայրը՝ Հովհաննեսը, որն ինչպես տեսանք, անմիջական մասնակցություն էր ունեցել Պետրոս I-ի սպանության գործում, դաժան մահապատժի ենթարկվեց էլեոնորա թագուհու աչի առջև: Կիպրական ազնվականության բազմաթիվ գերդաստաններ արտաքուլեցին երկրի սահմաններից: Կիպրոսում, ըստ էության, նենովական պրոտեկտորատ հաստատվեց: Ձենովացիներից ազատվելու համար Պետրոս II-ը փորձեց դաշնակցել վենետիկցիների եւ միլանցիների հետ, մասնավորապես այդ նպատակով ամուսնանալով Միլանի դուքսի դստեր՝ Վալենտինա Վիսկոնտիի հետ: Բայց այդ ջանքերն ապարդյուն անցան, եւ այդպես էլ չհասնելով իր նպատակին, Պետրոս II-ը մեռավ 1382 թվականին:

Կիպրոսի թագը բաժին ընկավ նրա հորեղբայր Հակոբ I-ին (1382-1398 թթ.), որն, ինչպես նշվեց, թագավորության սպարապետն էր եւ որպես պատանդ պահվում էր ձենովայում: Իր երկիրը վերադառնալու համար նա 1383 թ. փետրվարի պայմանագրով վերջնականապես նենովացիներին զիջեց Ֆամագուստան, բացի այդ՝ նրանց հանձնելով նաեւ կղզու հյուսիսում գտնվող Կիրենիա նավահանգիստը: Այս զիջումները կատարելուց հետո էր միայն, որ Հակոբ I-ն իրավունք ստացավ թագադրվելու 1385 թվականին:

Ճենովացիների ռազմատուգանքը վճարելու և երկրի առևտրին հասցված վնասը փոխհատուցելու նպատակով նա ստիպված էր ծանրացնել իր հպատակների հարկային բեռը, մանավանդ որ Ճենովան մենաշնորհի էր վերածել կղզու առևտուրը, հարկադրելով, որ բոլոր ապրանքներն անցնեն Ֆամագուստայի մահաստանով: Ըստ էության, Կիպրոսի տնտեսությունն ամբողջությամբ ընկել էր ճենովացիների ձեռքը, իսկ երբեմնի ծաղկուն թագավորությունը հայտնվել էր աղքատ հարկատուի վիճակում: Ահա այսպիսի տխուր իրադրության մեջ էր, որ թագավորությունը տոնեց իր հերթական «բարոյական հաղթանակը»: Հակոբ I-ից սկսած՝ Կիպրոսի Լուսինյաններն սկսեցին կրել նաև Հայոց թագավորի տիտղոսը: Ռուպես Հայաստանի թագավոր Հակոբն օծվեց 1394 թվականին, Կիլիկիո վերջին թագավոր Լեոն Լուսինյանի մահից (1393 թ.) հետո: Հակոբ I-ը մեռավ 1398 թվականին, և նրան փոխարինեց իր որդի Յանուսը, որն իր հոր նման երկար տարիներ պատանդ էր պահվել Ճենովայում:

Ինչպես կարելի էր նկատել, Ֆամագուստան կորցնելուց հետո Կիպրոսը հայտնվել էր նույնպիսի վիճակում, ինչպիսի վիճակում հայտնվել էր Կիլիկիան Այսաը կորցնելուց հետո, այսինքն գրկվել էր իր եկամտի հիմնական աղբյուրից: Այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ Յանուս թագավորը (1398-1432 թթ.) նախ և առաջ փորձեց թոթափել ճենովացիների լուծը և վերագրավել Ֆամագուստան (1402 թ.): Բայց այդ փորձը հաջողությամբ չպսակվեց, և Յանուսն ստիպված էր վերահաստատել ճենովացիների իրավունքներն ու առևտրային մենաշնորհը: 1425 թվականին Կիպրոսի ներքին ծանր վիճակին գումարվեց արտաքին սպառնալիք: Եգիպտոսի սուլթան Բարսբայը, կիպրական ծովահենների գործողություններին վերջ դնելու նպատակով, պատժիչ մի արշավախումբ ուղարկեց, որը ավարի մատնեց Լիմասոլը: Հաջորդ տարի եգիպտական մի ուրիշ նավատորմ ցամաքահանում կատարեց կղզու հարավում: Այս անգամ արդեն գլխավոր ջախջախելով կիպրական բանակն ու գերելով Յանուսին, մամլյուֆները թափով առաջացան դեպի հյուսիս և ավարի մատնեցին թագավորության մայրաքաղաք Նիկոսիան: Այնուհետև, հարուստ ավարով և ավելի քան 3000 գերիներով, որոնց թվում էր նաև Յանուս թագավորը, մամլյուֆները վերադարձան Կահիրե: Արտաքին թշնամուն դիմակայելու գործում ճենովացիները ոչնչով չօգնեցին իրենց կողմից անխնա հարստահարվող երկրին: Տեղի հույները,

որոնք բնակչության մեծամասնությունն էին կազմում, օգտվելով լատինների պարտությունից, անմիջապես ապստամբություն բարձրացրին եւ փորձեցին թոթափել խաչակրաց լուծը: Բայց ապստամբությունը դաժանորեն ճնշվեց Յանուս թագավորի եղբոր՝ կարդինալ Հուգոյի կողմից, որը Նիկոսիայի արքեպիսկոպոսն էր: 1427 թ. մայիսին հույների ինֆնահոչակ կայսր (վասիլես) Ալեքսիոսը կախաղան հանվեց Նիկոսիայում: Նույն թվականին Յանուս թագավորը, նանաչելով Եգիպտոսի սուլթանի գերիշխանությունը, ազատ արձակվեց եւ վերադարձավ իր երկիրը: Կիպրոսն, այսպիսով, միաժամանակ հարկատու դարձավ թե՛ Եգիպտոսին, թե՛ Ճենովային: Յանուսը մեռավ 1432 թվականին:

Նրա որդու՝ Հովհաննես II-ի գահակալության շրջանի համար (1432-1458 թթ.) բնորոշ է երկու հիմնական իրողություն. առաջին՝ Կիպրոսի լիակատար վասալական կախվածությունը Եգիպտոսից, եւ երկրորդ՝ երկրի ներսում հունական տարրի ազդեցության ուժեղացումը: Վերջին հանգամանքին նպաստեց մանավանդ այն, որ 1441 թվականին Հովհաննեսն ամուսնացավ Մորեայի դեսպոտ Թեոդորոս II-ի դստեր՝ Հելեն Պալեոլոգի հետ: Վերջինս անմիջապես իր ազդեցության տակ զցեց իր ամուսնուն եւ սկսեց եռանդուն կերպով հովանավորել ուղղափառ եկեղեցուն, իսկ Կոստանդնուպոլսի անկումից հետո (1453 թ.) երկրում ապաստան տվեց մեծ թվով բյուզանդացի տարագիրների: Նկատի ունենալով, որ թագունու այդ հյուրընկալության շնորհիվ Կիպրոս էր տեղափոխվել Բյուզանդիայի մայրաքաղաքի ընտրանին, դա միանգամից բարձրացրեց կղզու հունական տարրի սոցիալական մակարդակն ու ազդեցությունը: Սկսվեց երկրի հունականացման վերելից նախաձեռնված մի շարժում, որը լատինների համար շատ ավելի վտանգավոր էր, քան 1426 թվականի ապստամբությունը: Հովհաննես II-ը մահացավ 1458 թվականին, անորոշության մեջ թողնելով գահի ժառանգության հարցը:

Մինչեւ Հելեն Պալեոլոգի հետ ամուսնանալը Հովհաննես II-ն արտամուսնական կապից ունեցել էր մի որդի, Հակոբ անունով, որը թագավորի մահվան պահին Նիկոսիայի արքեպիսկոպոսն էր: Թեեւ թագավորության գահը ժառանգեց Հովհաննես II-ի եւ Հելեն Պալեոլոգի դուստր Շառլոտը (1458-1460 թթ.), սակայն վերջինս, վախենալով Հակոբի հնարավոր մրցակցությունից, հալածանքներ սկսեց նրա դեմ: Արքեպիսկոպոսն այնժամ

փախավ Կիպրոսից և ապաստան գտավ Եգիպտոսում (1459 թ.), մամլյուֆներից խնդրելով իրեն հանձնել Կիպրոսի թագը, և դրա դիմաց խոստանալով ավելացնել Եգիպտոսին վճարվող հարկը: Խաչակրաց պատկերացումներում շտեղավորվող մի իրողություն, երբ ֆրիստոնյա տիրակալը ինվեստիտուրա է խնդրում մահմեդականներից: Ինչեւէ, մամլյուֆները բնականաբար սիրով համաձայնեցին այդ առաջարկին, և Հակոբին մի ուժեղ գորախումբ տրամադրելով, նանապարհեցին Կիպրոս: 1460 թվականին, այդ գորախմբի օգնությամբ, նա հաղթականորեն մտավ Նիկոսիա, և դուրս էլեղով Շառլոտին, իրեն թագավոր հռչակեց: Կիպրոսի ազնվականները, հավատարիմ մնալով իրենց թագուհուն, մերժեցին նանաչել Հակոբի թագավորությունը և պատասպարվեցին Կիրենիա ֆաղաֆում: Մերժվելով լատին բարոններից, Հակոբը, մամլյուֆներից բացի, ստիպված էր հենվել սիցիլիացի, արագոնացի և կատալոնացի բախտախնդիրների, ինչպես նաև բնիկ հունական տարրի վրա: Բայց մի նշանավոր սխրանք, որը չէր հաջողվել նախկին թագավորներին, կտրուկ կերպով փոխեց լատին ազնվականության վերաբերմունքը նրա նկատմամբ: 1464 թվականին Հակոբ II-ը դուրս էլեց ճենովացիներին Ֆամագուստայից, և օտարների լուծը լիովին թոթափելու համար, ազատվեց նաև իր մամլյուֆ պահակագորից, առանց, սակայն, փչացնելու հարաբերությունները Եգիպտոսի հետ: Հակոբն, այսպիսով, ոչ միայն վերականգնեց թագավորության տարածքային ամբողջականությունը, այլև ապահովեց նրա տնտեսական անկախությունը, արժանանալով երկրի թե՛ լատինական, թե՛ հունական տարրի հարգանքին ու հավատարմությանը: Այնուամենայնիվ, երկրի վիճակը վտանգված համարելով և զգալով մի հզոր դաշնակցի պահանջը, 1472 թվականին նա ամուսնացավ Վենետիկի ամենաազդեցիկ գերդաստաններից մեկի շառավղի՝ Կատարինա Կորնարոյի հետ: Սակայն մեկ տարի անց նա անսպասելիորեն մահացավ, և նրան հաջորդեց իր մահից հետո ծնված որդին՝ Հակոբ III-ը: Իսկ երբ վերջինս էլ, իր հերթին, մահացավ 1474 թվականին, Կիպրոսի փաստացի տիրակալը դարձավ Կատարինա թագուհին:

Այս իրողության շնորհիվ Կիպրոսի թագավորությունում, ըստ էության, վենետիկյան պրոտեկտորատ հաստատվեց: Երկրի կառավարման գործը հանձնարարվեց Կատարինայի հորեղբորը՝ Անդրեաս Կորնարոյին, որը թեև պաշտոնապես գործում էր թագուհու անունից, բայց իրականում առաջ-

նորովում էր Վենետիկի թելադրանքով: Երկրի դժգոհ տարրերը, մասնավորապես սիցիլիացիները, արագոնացիները եւ կատալոնացիները, ըմբոստանալով այս իրականության դեմ, որոշեցին Կիպրոսի թագը հանձնել Նեապոլի թագավոր Ֆերդինանդ I-ին եւ այդ նպատակով սպանեցին Անդրեաս Կորնարոյին ու մի քանի երեսելի վենետիկցիների: Վենետիկն արձագանքեց շատ կտրուկ կերպով. 1474 թվականին, մի ուժեղ նավատորմ ուղարկելով, նա վերացրեց իր բոլոր հակառակորդներին եւ կղզում լիակատար կարգուկանոն հաստատեց: Իսկ 1489 թվականին, չբավարարվելով նաեւ այդֆանով, Վենետիկի ծերակույտը հրաժարական պարտադրեց Կատարինային եւ Կիպրոսն ուղղակի կցեց վենետիկյան կայսրությանը: Մինչեւ իր մահը (1510 թ.) Կատարինան խիստ հսկողության տակ պահվեց Վենետիկում: Այսպիսով, 1489 թվականին իր գոյությունը դադարեցրեց նաեւ Արեւելքում հիմնված վերջին խաչակրաց պետությունը՝ Կիպրոսի թագավորությունը: Որստուններու տարի վենետիկցիների ձեռքում մնալուց հետո, 1571 թվականին, Կիպրոսը գրավվեց Օսմանյան կայսրության կողմից:

Հետագոտողների մեծամասնության կարծիքով՝ Կիպրոսի թագավորությունը ուրույն տեղ է զբաղեցնում Արեւելքում հիմնված խաչակրաց պետությունների պատմության մեջ: Ընդ որում, այդ ուրույնությունն ի հայտ է գալիս թագավորության հիմնադրման առաջին իսկ պահից: Եթե Սիրիայի խաչակրաց պետությունները ստեղծվել էին մահմեդականներից զավթված տարածքների վրա (բացի, թերեւս, Եդեսիայի կոմսության մի մասից), ապա Կիպրոսը խլվել էր քրիստոնյաներից: Այդ փաստն ինքնին հակասում էր խաչակրության գաղափարին, որի էությունն, ինչպես ասվեց, Սուրբ Երկրի ազատագրումն էր «անհավատների» ձեռքից: Սակայն ինչպես շուտով պիտի պարզվեր, դա ցավալի թյուրիմացությունն չէր, քանի որ չորրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ (1204 թ.) նույն բախտին պիտի արժանանար նաեւ ողջ Բյուզանդական կայսրությունը: Ոչ մի այլ փաստարկ ի գորու չէ ավելի ցցուն կերպով բացահայտելու խաչակրության գաղափարի սնանկությունը, որքան Կիպրոսի թագավորության եւ Կոստանդնուպոլսի Լատինական կայսրության հիմնադրման պարագան:

Կիպրոսի ուրույնության մյուս դրսետրումն այն էր, որ նրա կղզյակային դիրքը բացառիկ պատեհություն էր պարունակում զերծ մնալու մայրցամաքային տերությունների հարձակումներից եւ դրա շնորհիվ հրաշալի մատա-

կարարման հենակետ հանդիսանալու Սիրիայի լատինական պետությունների համար: Համատարած է այն տեսակետը, ըստ որի՝ Կիպրոսի թագավորության գոյությունը զգալիորեն երկարացրեց մայրցամաքի լատինական պետությունների կյանքը: Սակայն այդ պատեհությունն ուներ նաև իր հակառակ երեսը: Լինելով ապահով եւ բարգավաճ հանգրվան, Կիպրոսը շարունակաբար ֆամում էր այդ պետությունների կենսական հյուրը, դեպի իրեն ձգելով նրանց բոլոր կարող ուժերը: Սուրբ Երկրի բազմաթիվ բարոններ, ասպետներ ու վաճառականներ վտանգի առաջին իսկ պահին լքում էին իրենց բնակության վայրերը եւ ապաստան գտնում Կիպրոսում: Ուստի եթե մի կողմից միանգամայն հիմնավորված պետք է համարել վերը նշված տեսակետը, ապա մյուս կողմից նույնքան արդարացի կարող է դիտվել այն, որ Կիպրոսը ինչ-որ չափով նպաստեց խաչակրաց պետությունների կործանմանը: Սա մի հրաշալի օրինակ է գործոնների բազմանշանակության խորհուրդը ըմբռնելու առումով:

Որպես հաջորդ բնորոշ հատկանիշ պետք է նշել այն, որ Կիպրոսի թագավորությունն, ըստ էության, Երուսաղեմի թագավորության շարունակությունն է՝ թե՛ պետական հաստատությունների կրկնօրինակման, թե՛ ֆաղափական ավանդույթի փոխառման իմաստով: Դա արտահայտվում էր հետեյալ կարեւոր իրողություններում: Կիպրոսի ազնվականության ընտրանին կազմում էին Երուսաղեմի թագավորության նախկին բարոնները: Կիպրոսի թագավորությունում չնչին լրացումներով գործածվում էր Երուսաղեմի թագավորության օրենսդրությունը՝ այսպես կոչված Երուսաղեմի ասիզները: Թագավորության պետական գործակալությունները համարյա բացարձակապես պատեհնում էին Երուսաղեմի թագավորության համապատասխան հաստատությունները, ընդ որում ոչ միայն տիտղոսների, այլև բուն գործառությունների առումով: Եվ վերջապես, Կիպրոսի թագավորներից մի ֆանիսը, ինչպես տեսանք, միաժամանակ կրում էին նաև Երուսաղեմի թագը, իսկ Երուսաղեմի թագավորության անկումից հետո (1291 թ.), մինչև Կիպրոսի թագավորության վախճանը (1489 թ.), Կիպրոսի թագավորները շարունակում էին մնալ Երուսաղեմի տիտղոսակիր թագավորները: Ի դեպ սա, ինչպես նաև հետագայում Կիպրոսի միապետերի կողմից Հայոց թագավորի տիտղոսի յուրացումը, զուտ պատվո տիտղոսակրության արտահայտություն չպետք է դիտել: Դրանով, ըստ երեւոյթին, Կիպրոսի թագավորները

նաեւ որոշակի հեռահար նպատակ էին հետապնդում, հույս փայփայելով՝ Սուրբ Երկրի եւ Կիլիկիայի ազատագրումից հետո տիրել այդ երկրներին: Զպետք է մոռանալ, որ XIV-XV դարերում նոր խաչակրաց արշավանքներ կազմակերպելու հույսը դեռեւս վերջնականապէս չէր մարել:

Եվ վերջապէս, Կիպրոսի թագավորության չորրորդ կարեւոր յուրահաւկությունը նրա եւ Կիլիկիո Հայոց թագավորության փոխկախվածությունն էր: Նախ եւ առաջ, երկու թագավորություններն էլ իրենց թագը ստացել էին Սրբազան Հռոմեական կայսրությունից, հետեւաբար իրավական առումով միեւնոյն վեհապետի հովանավորյալներն էին: Երկրորդ՝ Արեւելի խաչակրաց պետությունների կործանումից հետո (1291 թ.) նրանք կապված էին ընդհանուր նակատագրով, քանի որ հայտնվելով Մերձավոր Արեւելի վերջին ֆրիստոնյա պետությունների վիճակում, հարկադրված էին միասնաբար դիմակայել բազմապիսի արտաքին վտանգներին: Երրորդ՝ հիմնականում համընկնում էին նաեւ Կիպրոսի ու Կիլիկիայի տնտեսական շահերը, եթե նկատի ենք ունենում մանավանդ Այաս եւ Ֆամագոստա նավահանգիստների համագործակցությունը միջազգային տարանցիկ առեւտրի բնագավառում, թեւ այդ համագործակցությունը պարունակում էր նաեւ որոշակի մրցակցության տարր: Այդուամենայնիվ, փոխկախվածության ամենացայտուն արտահայտությունը երկու թագավորությունների ազնվական դասի ազգակցական կապերն էին՝ առաջացած բազմաթիվ դիվանագիտական ամուսնությունների հետեւանքով: Դրանք այնքան սերտ էին, որ այդ երկրները, ժառանգական իրավունքի գործողությամբ, երբեմն ականա ներհաշվում էին միմյանց ներքին խնդիրների մեջ: Մենք արձանագրեցինք հայերի որոշակի դերակատարությունը Ամորի Տյուրացու իրականացրած պետական հեղաշրջման գործում, հիշեցինք նաեւ կիպրական Լուսինյանների կողմից Հայոց թագավորության գահին բազմելու հայտնի փաստերը: Եվս մի հանգամանք ընդգծում էր երկու թագավորությունների ընդհանրությունը. XIV դարում Կիպրոսը եւ Կիլիկիան հնարավոր հենակետեր էին համարվում ապագա խաչակրաց արշավանքների համար, չնայած այդ հարցում վեճ գո-

յություն ունեւ, թե նրանցից որն է ավելի հարմար այդ նպատակին ծառայելու տեսակետից^a:

8. ԽԱՉԱԿՐԱՅ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ^b

Հարկ ենք համարում մի քանի խոսքով անդրադառնալ նաեւ այն հարցին, թե անհամար զոհեր ու խեղված կյանքեր արժեցած, ատելություն ու անհանդուրժողականություն սերմանած, Արեւմուտքում եւ Արեւելքում տեսական ակեղծություններ առաջացրած խաչակրաց շարժումը ինչ արդյունքներ է ունեցել պատմա-մշակութային եւ քաղաքական տեսակետից: Հետազոտողների մեծամասնության կարծիքով՝ խաչակրությունն այս առումով եղել է թերեւս մարդկության պատմության ամենաանպտուղ, ամենախոցիղնալ եւ ամենաարկածախնդրական ձեռնարկը: Լուսավորության շրջանի մեծ մտածողներից սկսած, մինչեւ մեր օրերի նշանավոր պատմաբանները, քիչ բացառությամբ, չեն զլացել ամենախիստ որակումներով բնութագրելու Ուրբանոս պապի մտքի արտառոց ծնունդը: Արդի պատմագիտության հիմնադիր Էդուարդ Գիբոնի (1737-1794 թթ.) գնահատմամբ՝ խաչակրաց արշավանքները «ավելի շուտ կաշկանդել, քան թե խթանել են Եվրոպայի հասունացումը. Արեւելքում թաղված միլիոնավոր մարդկանց կյանքն ու վաստակը կարող էին շատ ավելի արդյունավետ օգտագործվել իրենց հայրենի երկրում»^c: Ավելի խիստ է շտախանդացի փիլիսոփա Դավիթ Հյումը (1711-1776 թթ.), որը խաչակրությունը համարում է «մարդկային խելագարության ամենանշանակալից եւ ամենամնայուն հուշարձանը»^d: Իսկ XX դ. պատմաբան Ս. Ռանսիմենի բնորոշումներով՝ «պատմական հեռանկարի տեսակետից խաչակրաց ողջ շարժումը կատարյալ ձախողում

^a Կիրիկյան շրջանում հայ-կիպրական հարաբերությունների պատմության սեղմ, բայց չափազանց բովանդակալից ու ճշգրիտ մի շարադրանք տե՛ս Mutafian, Recherches, p. 105-109.

^b Խաչակրության արդյունքների թեեւ համառոտ, բայց լավագույն ամփոփումը պատկանում է Ս. Ռանսիմենին. տե՛ս Runciman, A History of the Crusades, III, p. 469-480. Տե՛ս նաեւ` Заборов, Крестоносцы, с. 296-314.

^c Gibbon, The Roman Empire, p. 452.

^d Ըստ Riley-Smith, The Crusades, p. 256.

էր», կամ՝ «ողբերգական ու ավերիչ դրվագ»^a: Նմանատիպ գնահատականների թվարկումը կարելի է շարունակել, բայց դրանից ընդհանուր պատկերն էսպես չի փոխվի:

Ինչպես ցանկացած ֆաղափական ծրագրի դեպքում, խաչակրության արդյունքների գնահատման չափանիշը պետք է լինի այն, թե որքանով իրականություն դարձան այդ ծրագրի հիմքում դրված խնդիրները: Հիշեցնենք, որ խաչակրությունը ձեռնարկելիս Ուրբանոս պապի հայտնի եւ ծածուկ խնդիրներն էին՝ արեւելյան քրիստոնյաների ազատագրումը սելջուկյան լծից, Երուսաղեմի եւ Սուրբ Գերեզմանի վերանվանումը մահմեդականների ձեռքից, Եվրոպային սպառնացող թուրքական առաջխաղացման խափանումը եւ Արեւմուտքում Հռոմեական եկեղեցու հեղինակության բարձրացումը: Արդ, առանձին-առանձին անդրադառնալով այս ծրագրի բաղադրամասերից յուրաքանչյուրին, ստիպված ենք արձանագրել, որ նրանցից ոչ մեկն էլ, բացառությամբ թերեւս վերջինի^b, ոչ միայն չհասավ իր հետապնդած նպատակին, այլեւ ունեցավ ճիշտ հակառակ արդյունքը: Ս. Ռանսիմենի պատկերավոր դիտարկմամբ՝ «խաչակրաց արշավանքները ձեռնարկվեցին արեւելյան քրիստոնեությունը փրկելու համար. – երբ նրանք ավարտվեցին, ողջ արեւելյան քրիստոնեությունը գտնվում էր մահմեդական տիրապետության տակ: Երբ Ուրբանոս պապն արտասանում էր իր հիաստանջ ֆարոզը Կլերմոնտում, թվում էր, թե թուրքերն սպառնում են Բոսփորին. – իսկ երբ Պիոս II պապն (1458-1464 թթ. Լ. Տ.-Պ.) էր ֆարոզում վերջին խաչակրաց արշավանքը, թուրքերը կտրում-անցնում էին Գանուբը»^c:

Ուսումնասիրողների համարյա միահամուտ կարծիքով՝ խաչակրաց արշավանքների գլխավոր գոհերը եղան արեւելաֆրիստոնեական ժողովուրդները: Ընդ որում նրանց վիճակը ծանրացավ ոչ միայն խաչակիրների անհե-

^a Runciman, A History of the Crusades, III, p. 469 and 480.

^b Ավելորդ չենք համարում մեջբերել, սակայն, գերմանացի միջնադարագետ Բ. Կուզլերի դիպուկ գնահատականը. «Իր թեոկրատիան ամբողջացնելու համար եկեղեցու կիրառած միջոցներից ոչ մեկը, թերեւս, վերջիվերջո այնքան վնաս չպատճառեց իրեն, որքան խաչակրության քարոզարշավի շարաշահումը, որով նա վանեց մտքերը թե՛ Սուրբ Գերեզմանից, թե՛ Հռոմի աթոռից»։ Куглер, История, с. 503.

^c Runciman, A History of the Crusades, III, p. 469.

տանալուց հետո (1291 թ.), այլև Արեւելում ֆրանկների տիրապետության շուրջ երկու հարյուր տարիների ընթացքում: Ինչպես ասվեց, որքան էլ այլապիսիան ցույցերով բողոքված, Արեւմտաֆի վերաբերմունքը արեւելյան ֆրիստոնյաների նկատմամբ ի սկզբանե բացասական էր, քանի որ վերջիններս համարվում էին հերետիկոսներ: Այս առումով խիստ հատկանշական է Անտիոքի նվաճումից հետո առաջին խաչակրաց արշավանքի առաջնորդների գրած նամակը Ուրբանոսին (1198 թ. սեպտեմբերի 11), որում նրանք հարցնում են պապի խորհուրդը, թե ինչպես վարվեն արեւելյան ֆրիստոնյաների հետ: Նամակում մասնավորապես ասված է. «Մենք հաղթեցինք թուրքերին ու հեթանոսներին, բայց չկարողացանք պարտության մատնել հերետիկոսներին՝ հույներին ու հայերին, ասորիներին ու հակոբիկներին»^a: Եթե մահմեդական տիրապետության տակ ֆրիստոնյաները դատապարտված էին **Զիմֆի** կամ հովանավորյալ փոքրամասնության կարգավիճակի, որը սահմանափակում էր նրանց բաղաձայն իրավունքները, բայց ապահովում նրանց ներհամայնօրին ու ներեկեղեցական ինֆորմացիայությունը, ապա ֆրանկներն սկսեցին միջամտել նաև արեւելաֆրիստոնեական եկեղեցիների ներքին գործերին: Նրանց բանեցրած ճնշումների հետևանքով Մարոնիտյան եկեղեցին ի վերջո միություն հաստատեց լատինական եկեղեցու հետ և նանաչեց Հռոմի պապի գերիշխանությունը (1182 թ.): Նույնպիսի ճնշումներ եղան նաև հայերի նկատմամբ. մասնավորապես, Հայոց թագավորների կողմից Արեւմտաֆի օգնությունը հայցող դիմումների բավարարումը պապերը մշտապես պայմանավորում էին եկեղեցիների միության և Հռոմի գերիշխանության նանաչման պահանջներով: Սակայն չնայած այդ պահանջների վերաբերյալ դիվանագիտական նպատակներով արված առերես հավաստիացումներին և անգամ եկեղեցական ժողովների կայացրած ձեռական որոշումներին, հայերն այնուամենայնիվ կարողացան պահպանել իրենց եկեղեցու անկախությունը: Հայերի հանդեպ ֆրանկների արգահատելի վերաբերմունքի մի ուշագրավ փաստ է նաև հետեյալը: Թորոս Բ Հայոց իշխանը (1145-1168 թթ.) Երուսաղեմի թագավոր Ամորի I-ին (1162-1174 թթ.) առաջարկել էր, վերջինիս երկիրը շենացնելու համար, երեսուն հազար հայ ընտանիք ուղարկել՝ վերաբնակեցնելու Պաղեստինում:

^a Հմմտ. Prawer, The Crusaders' Kingdom, էջ 214:

Տեղի լատինական կղերականությունը, սակայն, դրա դիմաց պայման էր դրել եկվոր հայերից հատուկ եկեղեցական տասանորդ գանձել, ինչից վիրավորված Թորոսն արժանապատվորեն պատասխանել էր. «Մտրուկ դառնալու համար չէ, որ հայերը ուրիշ երկիր պիտի գնան»⁴: Իսկ թե խաչակիրների խարդավանքների ու բռնությունների հետեւանքով ինչպիսի բախտի արժանացան Ուոհայի եւ մերձեփրատյան երկրամասի հայկական իշխանությունները, մենք արդեն տեսանք Եդեսիայի կոմսության պատմությանը նվիրված բաժնում:

Արեւելաֆրիստոնեական ժողովուրդների վիճակը, բնականաբար, ավելի ծանրացավ Սիրիայում հիմնված լատինական պետությունների վերջնական կործանումից հետո (1291 թ.): Ֆրանկների նկատմամբ մահմեդականների մոտ կուտակված ողջ մաղձը թափվեց տեղի ֆրիստոնյաների վրա, որոնք էլ դարձան հաղթանակած մամլյուֆների վրեժխնդրության գլխավոր թիրախը: Եվ նորից հիմնական տուժողները եղան մարոնիտները եւ հայերը: Ծովեզերյա մարոնիտյան գավառների բնակիչները զանգվածային տեղահանության ենթարկվեցին, որպեսզի խաչակրաց հնարավոր ցամաքահանումների ժամանակ չկարողանան օգնել նրանց: Իսկ 1375 թվականին, մամլյուֆյան հարվածների ներքո, կործանվեց Կիլիկիո Հայոց թագավորությունը, թեեւ այս դեպքում, հակաֆրիստոնեական մոլեռանդությունից բացի, մամլյուֆների մոտիվների շարքում կարեւոր տեղ էին զբաղեցնում նաեւ երկու այլ գործոններ՝ հակաեգիպտական ուղղվածություն ունեցող հայմոնղոլական դաշինքը եւ միջազգային առետրի բնագավառում Այաս եւ Ալեքսանդրիա նավահանգիստների մրցակցությունը:

Բացի արեւելաֆրիստոնեական ժողովուրդներին պատճառած ահավոր վնասներից, խաչակրաց արշավանքները մահացու հարված հասցրին նաեւ Բյուզանդական կայսրությանը, որից նա այլեւս չկարողացավ ուշֆի գալ: Մենք արդեն տեսանք, որ 1191 թվականին խաչակիրները հույներից խլեցին Կիպրոս կղզին, որտեղ հիմնված լատինական թագավորությունը գոյատևեց մինչև 1489 թվականը: Չորրորդ խաչակրաց արշավանքի հետեւանքով (1204 թ.) Բյուզանդիան կորցրեց նաեւ կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը եւ իր Բալկանյան ու Էգեյան տիրույթները: Կոստանդնու-

⁴ Grousset, Histoire des Croisades, II, p. 604.

պոլիսը՝ ժամանակի ամենաբազմամարդ, վանառաչահ ու փառահեղ ֆաղափը, օրեր շարունակ ենթարկվեց բարբարոսական կոտորածների, կողոպտաի, հրկիզումների ու ավերների: Հիմնահատակ կործանվեցին բազմաթիվ շէնդ հարտարապետական հուշարձաններ, ոչնչացվեցին տասնյակ հազարավոր արվեստի նմուշներ՝ ֆանդակներ, սրբապատկերներ, մասնատուփեր եւ ձեռագրեր: Կայսրության փլատակների վրա ստեղծվեցին մի շարք լատինական պետություններ՝ Կոստանդնուպոլսի լատինական կայսրությունը (1204-1261 թթ.), Թեսալոնիկեի թագավորությունը (1204-1222 թթ.), Մորեայի կամ Աֆայայի իշխանապետությունը (1205-1428 թթ.), Աթենի դքսությունը (1205-1456 թթ.) եւ այլն: Զրկվելով իր եվրոպական տարածքներից, Բյուզանդական կայսրությունն ամփոփվեց փոքրասիական Նիկիա եւ Տրապիզոն ֆաղափների շրջակայքում, մինչեւ որ 1261 թվականին կարողացավ ետ նվաճել Կոստանդնուպոլիսը եւ ջանքեր գործադրել վերականգնելու իր երբեմնի փառքն ու հզորությունը: Սակայն չնայած Պալեոլոգյան դինաստիայի տիրապետության օրոք Կոստանդնուպոլսում արձանագրված ապշեցուցիչ մշակութային վերելին ու առեստրի ծաղկմանը, կայսրությանն այդպես էլ չհաջողվեց դառնալ մի այնպիսի ռազմա-ֆաղափական գործոն, որն ի վիճակի լիներ դիմակայելու Օսմանյան սուլթանների ահագնացող ննչմանը: 1453 թվականին, Կոստանդնուպոլսի վերջնական անկմամբ, հազարամյա կայսրությունը գտավ իր վախճանը, որովհետեւ դրանից 250 տարի առաջ խաչակրությունը շարդել էր նրա ողնաշարը: Շատ շանցած, շարաշար հատուցելով իր կարեւատեսության համար, Եվրոպան ստիպված էր լինելու թուրքական հեղեղը կասեցնել Վիեննայի դարպասների մոտ (1529 թ.):

Խաչակրության արդյունքների վերլուծաբանների մոտ տարածված է նաեւ այն կարծիքը, թե խաչակրաց արշավանքները նպաստեցին մասնատված մահմեդական պետությունների միավորման գործընթացին: Առաջին հայացքից համոզիչ թվացող այս կարծիքի հիմք է հանդիսանում այն ակնհայտ իրողությունը, որ ի հակազդեցություն խաչակրության, մահմեդական աշխարհում վերածնվեց շիհադի՝ իսլամական սրբազան պատերազմի գաղափարը, որը կարեւոր ֆարոզական դեր խաղաց ֆրանկների դեմ մղվող պայքարում: Սակայն մյուս կողմից, փաստերը խոսում են այն մասին, որ ֆրանկների ներկայությունն ամենեւին չզսպեց զանազան սուլթանությունների, էմիրությունների եւ աթաբեկությունների երկպառակություններն ու

եղբայրասպան պատերազմները: Այն շխանգարեց, որպեսզի Ռուսի սուլթանությունը կոչ տա Դանիշմենդյան էմիրությունը, Մոսուլի աթաբեկները նվաճեն Սիրիան, Սալահեդդինը գրավի Եգիպտոսը եւ այլն: Ավելին, միմյանց դեմ մղված պատերազմներում մահմեդական էմիրությունները հաճախ անգամ դաշնակցում էին խաչակրաց պետությունների հետ, ինչը մեծագույն սրբապղծություն էր ջիհադի գաղափարի հանդեպ: Չնայած առանձին տիրակալների թափած անուելի ջանքերին, մահմեդական պետություններն այդպես էլ երբեւէ չկարողացան միասնական ճակատ ստեղծել Բիստոնեության դեմ:

Քանի դեռ մահմեդական պետություններն իրարից անջատ էին, նրանք չէին կարողանում լուրջ դիմադրություն ցույց տալ խաչակիրներին: Իսկ երբ նրանցից մեկին, ինչպես, օրինակ, Ջանգիդներին, Այուբյաններին եւ մամլյուֆներին, ժամանակ առ ժամանակ հաջողվում էր կոչ տալ մյուսներին, ապա խաչակիրների դեմ պայքարն ավելի արդյունավետ էր ստացվում: Այս երեսույթն է, ահա, որ հետագոտողների մոտ տպավորություն է ստեղծել մահմեդականների միավորման գործընթացի վրա խաչակրության ունեցած ազդեցության մասին: Այդպիսի «միավորման» հետ խաչակրությունն իրականում բնավ կապ չունեւ: Նույնիսկ ընդհակառակը, եթե ֆրանկների ներկայությունը չշեղեր մահմեդականներին, այդ գործընթացը թերեւս ավելի արագ զարգանար: Մեզ չպետք է մոլորեցնի այն հանգամանքը, որ իրենց հավատակիցների երկրները նվաճող գորահրամանատարները՝ Ջանգին, Նուրեդդինը, Սալահեդդինը, Բայբարսը եւ այլք, հանդես էին գալիս որպես ջիհադի դրոշակակիրներ եւ խաչակրության դեմ պայքարի առաջամարտիկներ: Այդ ֆայերը հետապնդում էին զուտ ֆարոզական նպատակներ՝ մահմեդականների աշխում բարձրացնելով նրանց հեղինակությունը եւ որոշ լեգիտիմություն հաղորդելով հավատակիցների հաշվին կատարած նրանց բռնագավթումներին: Ուստի մահմեդական պետությունների միավորման պատճառները, մեր կարծիքով, պետք է փնտրել բոլորովին այլ տեղ, այն է՝ նրանց ներքին զարգացման օրինաչափություններում: Անկախ ֆրանկների ներկայության հանգամանքից, միեւնույն է, մահմեդական պառակտված պետությունների մեջ վաղ թե ուշ հայտնվելու էր մեկը, որը զենքի ուժով պիտի վերացներ մյուսների անկախությունը եւ միավորեր նրանց: Դա, ինչպես տեսանք, մասամբ հաջողվեց Ջանգիդներին, Այուբյաններին եւ մամլյուֆներին:

րին, բայց ավելի լայնածավալ դրսևորում ունեցավ Օսմանյան Թուրքիայում, Սեֆյան Իրանում եւ Մեծ Մողոլների ժամանակաշրջանի Հնդկաստանում:

Բավականին հանաչում է գտել նաեւ այն տեսակետը, որի համաձայն՝ խաչակրաց արշավանքները նպաստել են միջազգային առևտրի զարգացմանը: Որոշ հետազոտողներ, սակայն, պնդում են, որ դա այնքան էլ չի համապատասխանում իրականությանը, քանի որ միջազգային առևտրի կենտրոնը Ալեքսանդրիան էր եւ ոչ թե Ֆրանկների ձեռքում գտնվող սիրիական նավահանգիստները^a: Այնուամենայնիվ, նկատի ունենալով իտալական ծովային հանրապետությունների ակտիվ մասնակցությունը խաչակրաց արշավանքներին, ճենովացի, վենետիկցի եւ պիզացի վաճառականների մշտական ներկայությունը լատինական Արևելքի բոլոր նավահանգստային ֆաղաֆներում, պետք է ընդունել, որ վերջիններս համենայն դեպս որոշակի դեր խաղացել են միջազգային առևտրի բնագավառում: Անշուշտ, նշված գործունեությունը նպաստել է իտալական ֆաղաֆ-պետությունների բարգավաճմանն ու հզորացմանը, եւ այդ իմաստով խաչակրությունը կողմնակիորեն ազդել է Վերածննդի նախադրյալների առաջացման գործընթացի վրա^b:

Խաչակրաց արշավանքները անպտուղ են համարվում ոչ միայն ֆաղաֆական տեսակետից, այլև մշակութային առումով: Որքան էլ զարմանալի է, Արևելքում հիմնված լատինական պետությունները շատեղծեցին մնայուն արժեք ներկայացնող մշակույթ: Քիչ թե շատ ծաղկում ապրեցին միայն հարտարապետությունը՝ մասնավորապես բերդաշինությունը, պատմագրությունը, որի գլուխգործոցը հանդիսացավ Վիլհելմ Տյուրացու «Պատմությունը», եւ իրավագիտությունը, որի գագաթը Երուսաղեմի ասիզներն էին: Հավանաբար թույլ էին զարգացած մանրանկարչությունը եւ գրչության արվեստը, քանի որ լատինական Արևելքից մեզ հասած ձեռագրերի թիվը չի անցնում երկու տասնյակից: Այս ամենը զարմանալի է մանավանդ, երբ համեմատության մեջ է դրվում խաչակրաց պետությունների վիճակի մեջ գտնվող Կիլիկիո Հայոց թագավորության բարձրակարգ մշակույթի հետ: Խաչակրությունը համարյա ոչինչ չտվեց նաեւ Արևելքի եւ Արևմուտքի մշակութային

^a Հմմտ. Cahen, Crusades, p. 65.

^b Հմմտ. Куглер, История, с. 507–508.

փոխազդեցությունների առումով: Շուրջ երկու հարյուր տարվա համակեցության ընթացքում ոչ մի գրավոր հուշարձան արաբերենից չթարգմանվեց լատիներենի, կամ հակառակը: Այս իմաստով լատինական Արեւելք էսպես տարբերվում է Իսպանիայից եւ Սիցիլիայից, որոնցում ծավալված թարգմանական շարժումը կարեւորագույն նշանակություն ունեցավ մահմեդական մտքի նվաճումները եվրոպային փոխանցելու գործում:

Այսպիսով, խաչակրաց արշավանքները, հակառակ իրենց վրա հրավիրած հսկայական ուշադրությանը, պատմական հեռանկարի տեսակետից լուսանցային դեր խաղացին թե՛ եվրոպայի, թե՛ Արեւելքի հակատագրում, չխախտելով եւ ոչնչով չկանխորոշելով նրանց մայրուղային զարգացման միտումները: